



ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆ

ԳԱԲՐԻԵԼ ԲԱԼԱՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՈՒ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենագրություն

Երևան
«Լինգվա» հրատ.
2011

ՀՏԴ 378 : 349
ԳՄԴ 74.58 + 67
Բ 200

Տպագրվում է Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ

Գիտական խորհրդատու՝
Գագիկ Հարությունյան, ի. գ. դ., պրոֆեսոր
Խմբագիր՝ *Վրեժ Գասպարյան*

Բալայան Գ. Կ.
Բ 200 Բարձրագույն կրթության իրավունքի երաշխավոր-
ման ու ապահովման հիմնախնդիրները /Գ.
Բալայան, խմբ. Վ. Գասպարյան.- Եր.: Լինգվա, 2011.
194 էջ:

ՀՏԴ 378 : 349
ԳՄԴ 74.58 + 67

ISBN 978-9939-56-071-7

© Բալայան Գ., 2011թ.
© «Լինգվա», 2011թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	9
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	9
§1. Կրթության իրավունքի հասկացությունը և միջազգային իրավական կարգավորումը	9
§ 2. Բարձրագույն կրթության իրավունքի ծագումն ու զարգացումը Հայաստանում	19
§ 3. Բարձրագույն կրթության իրավունքի տեղը մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգում	36
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	52
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	52
§ 1. Բարձրագույն կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը	53
§ 2. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը. պետական և մասնավոր բուհերի իրավական կարգավիճակը....	70
§ 3. Բարձրագույն կրթության բնագավառում միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների իրացման երաշխիքները ՀՀ-ում	86
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	105
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	105
§ 1. Բարձրագույն կրթության իրավունքի ապահովման համակարգային զարգացման միտումները եվրոպական երկրներում	105
§ 2. ՀՀ անդամակցումը Բոլոնիայի գործընթացին: Բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները և հեռանկարային զարգացումները Հայաստանի Հանրապետությունում	123
§ 3. Բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ միջազգային գործակցության ակտիվացման հիմնախնդիրները	140
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	176

ՆԱԽԱԲԱՆ

Սույն աշխատության նպատակն է հետազոտել և ներկայացնել բարձրագույն կրթության իրավունքի ծագումն ու զարգացումը, դրա ամրագրումը միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում, ներկայացնել այդ իրավունքի արդի հիմնախնդիրները և առաջարկել լուծումներ դրանց վերացման և հաղթահարման համար:

Մենագրության նպատակ է՝ ներկայացնել և վերլուծել բարձրագույն կրթության ոլորտում գործող սահմանադրաիրավական սկզբունքների համակարգը և դրանց իրավական ձևակերպումը ՀՀ օրենսդրության մեջ:

Կրթությունը մարդու կենսագործունեության կարևորագույն արժեքներից մեկն է: Այն գիտելիքների, ունակությունների և հմտությունների յուրացման համակարգված գործընթաց և արդյունք է, որն անհրաժեշտ է մարդուն, առաջին հերթին, աշխատանքային արդյունավետ գործունեության համար: Միևնույն ժամանակ, կրթություն ստանալու ձգտումը պատմականորեն ձևավորված հասարակական արժեք է, որի նպատակը ոչ միայն գիտելիքների ձեռքբերումն է՝ նյութական որոշակի շահերից ելնելով, այլ նաև հոգևոր և մշակութային արժեքներին տիրապետելը, տվյալ հասարակության բարոյական չափանիշները պահպանելը և յուրացնելը:

Մեր օրերում կրթությունն արժևորվում է նաև որպես ապագային միտված երկարաժամկետ ներդրում, որի արդյունքն ու արդյունավետությունը՝ ազգային և համամարդկային առումով, նկատելի կարող է դառնալ առնվազն մեկ սերունդ հետո: Այս տեսանկյունից, կրթության հիմնական նպատակը «մարդկային ներուժի» (կապիտալի) և «մրցունակ քաղաքացու» ձևավորումն է՝ անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, փորձ և հմտություններ ունեցող աշխատողների, հասարակայնորեն ակտիվ քաղաքացիների դաստիարակումը:

Մարդկային ներուժի զարգացման նշանակությունը մեծապես կարևորում են ինչպես առանձին պետություններ, այնպես էլ միջազգային կառույցներ: «Մենք ընդունում ենք, որ մարդկային ռեսուրսների զարգացումը հանդիսանում է աղքատության վերացման գործընթացի հիմնարար ասպեկտը, կենսական նշանակություն ունի կայուն զարգացում ապահովելու գործընթացում և նպաստում է տնտեսական առաջընթացի աճին, սոցիալական զարգացմանը և շրջակա միջավայրի պահպանմանը», - ասվում է 2002թ. հուլիսի 1-3-ը կայա-

ցած ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդի նստաշրջանի մասնակիցների տարածած հայտարարության մեջ¹:

Մարդկային ներուժի ձևավորման խնդրում ներկայումս աշխարհի զարգացած երկրներում նախապատվությունը տրվում է կրթությանը, մասնավորապես՝ բարձրագույն մասնագիտական կրթությանը: Այսօր արդեն շատ երկրներում կրթության իրավունքն ամրագրված է սահմանադրական մակարդակով, ինչը, իրավամբ, կարելի է դասել մարդկության կարևորագույն նվաճումների շարքին:

Կրթության դերն ու նշանակությունը տարեցտարի գնալով մեծանում են: Այն կարևոր նշանակություն է ձեռք բերում ոչ միայն պետության մտավոր ներուժի ձևավորման, այլ նաև քաղաքացու կենսական պահանջունքների բավարարման գործում: Դրա օրինակը բնական սակավ ռեսուրսներ, սակայն բարձր զարգացած տնտեսություն ունեցող երկրներն են, ինչպես ճապոնիան: Այս առումով, ցանկացած երկրի իշխանություններն իրենց օրինաստեղծ գործունեության ընթացքում պետք է հաշվի առնեն, որ կրթության ազդեցությունն աճում է հասարակության ընդհանուր մշակութային և գիտատեխնիկական կարողությունների աճին զուգահեռ: Այսինքն՝ կրթության գնալով աճող դերը հասարակության և անհատի կյանքում հանդիսանում է երկրի զարգացման ընդհանուր, հիմնարար գործոններից մեկը:

Ցանկացած երկրի կրթության համակարգի վիճակը և կենսագործունեությունը պայմանավորված են զարգացման սոցիալ-տնտեսական և քաղաքական որոշակի գործոններով, որոնք ներգործում են ինչպես ազգային, այնպես էլ վերազգային մակարդակներում: Ժամանակակից, արագորեն փոփոխվող աշխարհում կրթությունն ինքնին գտնվում է ակտիվ վերափոխումների գործընթացում, ինչը վճռորոշ նշանակություն կարող է ունենալ մարդկության համակողմանի զարգացման համար: Սակայն սոցիալ-տնտեսական միջավայրը, որում կատարվում են այդ վերափոխումները, տարբերակվում է երկրից երկիր: Հայաստանում կրթության բարեփոխումն իրականացվում է նոր հասարակության ձևավորման բավական բարդ պայմաններում, ինչը որոշակի ազդեցություն է ունենում բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման գործընթացի վրա: Հայաստանի Հանրապետության պարագայում շատ ավելի կարևոր է կրթության համակարգի որակյալ կայացումը, քանի որ տվյալ հարցի կարևորությունը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է ոչ միայն առաջնային ուղղություն այլև ազգային-

¹ Տես՝ <http://www.un.org/ecosoc/docs/newslet.shtml> A/57/3 (Part I) 19:

պետական քաղաքականության ուղղություն է՝ քանզի ավելի զորեղ ներուժ քան մարդկային ներուժն է, Հայաստանը չունի: Կրթված և մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող հասարակության գոյությունը կենսական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար:

Շուտով Հայաստանի Հանրապետությունը կբոլորի իր անկախության երկրորդ տասնամյակը: Գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ խաչվում են աշխարհաքաղաքական տարբեր ուժերի շահերը, Հայաստանը որդեգրել է միջազգային կառույցներին ակտիվ ներգրավվելու ռազմավարությունը: Բնականաբար, սա ենթադրում է նաև կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտի ակտիվ ներգրավումը համաաշխարհային և տարածաշրջանային գիտակրթական գործընթացներին: Այդ նպատակով 2005թ. Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց Բոլոնիայի գործընթացին: Բոլոնիայի գործընթացի նպատակն է մինչև 2010թ. ստեղծել բարձրագույն կրթության համաեվրոպական տարածք և եվրոպական համալսարանական կրթությունը աշխարհում դարձնել գրավիչ:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության համար հրամայական անհրաժեշտություն է կրթության ոլորտում արձատական այնպիսի բարեփոխումներ իրականացնելը, որոնք կարագացնեն եվրոպական և համաաշխարհային ընդհանուր կրթական տարածքին ինտեգրումը և հնարավորություն կընձեռեն Հայաստանի քաղաքացիներին ստանալու միջազգային և տեղական աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթություն:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը բազմաստիճան կառույց է: Տվյալ աշխատանքի մեջ անդրադարձ է կատարվում այդ աստիճաններից միայն մեկի՝ բարձրագույն մասնագիտական կրթության սահմանադրաիրավական հիմունքներին: Կրթության ընդհանուր համակարգից կրթության տվյալ աստիճանի առանձնացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, հանդիսանալով կրթության իրավունքի կառուցվածքային տարրերից մեկը՝ բարձրագույն կրթությունն ունի մյուս աստիճաններից տարբերվող որոշակի առանձնահատկություն կրթական իրավունքի կատեգորիաների և հասկացությունների սահմանման առումով, օրինակ՝ կրթության ընդհանուր մատչելիությունը՝ մրցութային հիմունքներով, կամ՝ կրթության անվճար բնույթը և վճարովի կրթական ծառայությունները: Երկրորդ, բարձրագույն մասնագիտական կրթության իրավունքի իրականացման կառուցվածքը, որը հիմնվում է կոնկրետ սահմանադրական- իրավական նորմերի վրա, գործնականում ունի առանձնահատկություններ, որպիսիք չեն հանդիպում կրթության մյուս աստիճաններում:

Բացի դրանից, աշխարհում ընթացող գլոբալացման ու ինտեգրման միտումների արագացումը և բարձրագույն մասնագիտական կրթության գնալով աճող նշանակությունը պահանջում են ավելի խոր և բազմակողմանի գիտական վերլուծության ենթարկել բարձրագույն կրթության իրավունքի բովանդակությունը և դրա իրավական կարգավիճակն ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև համակողմանիորեն հետազոտել բարձրագույն կրթության իրավունքի իրականացման սկզբունքները և երաշխիքները:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Հայաստանի անկախացումից հետո անցած ժամանակահատվածում բարձրագույն մասնագիտական կրթությունը ենթարկվել է լուրջ բարեփոխումների: Օրենսդրորեն ամրագրվել են բարձրագույն կրթության հաջորդական մակարդակները, մշակվել և հաջորդաբար կիրառության մեջ են դրվել պետական կրթական չափորոշիչների մի քանի սերունդ, կիրառվում է կրթական հաստատությունների և կրթության որակի պետական վերահսկողություն՝ լիցենզավորման, ատեստավորման և հավատարմագրման միջոցով, աճել և ձևավորվել է բարձրագույն մասնագիտական կրթության ոչ պետական հատվածը և այլն: Այս ամենը խիստ արդիական են դարձնում նման նոր երևույթների վերլուծությունը և սահմանադրական-իրավական նորմերին դրանց համապատասխանության ճշգրտումը: Բարձրագույն մասնագիտական կրթության սահմանադրական իրավունքի ինստիտուտի ուսումնասիրությունն ու վերլուծությունն առավել ևս անհրաժեշտ են այսօր՝ այդ իրավունքի իրականացման համար միջազգային կրթական չափանիշների կիրառման պայմաններում:

Գրականության մեջ այսօր տարբեր մոտեցումներ կան քննարկվող հարցի վերաբերյալ:

Չնայած կրթության ոլորտի իրավական մեկնաբանությանը նվիրված զգալի թվով ուսումնասիրությունների առկայությանը, բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի էությանը ընթերցման համար կարևոր են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են կրթության իրավունքի իրավաբանական կառուցվածքը և բովանդակությունը, բարձրագույն մասնագիտական կրթության սահմանադրական-իրավական սկզբունքների համապատասխանությունն ընթացիկ օրենսդրության նորմերի բովանդակությանը, ինչպես նաև տվյալ իրավունքի իրականացման սահմանադրական իրավական երաշխիքների կառուցակարգերն անհրաժեշտ գիտական պարզաբանում չեն ստացել: Ուստի, մարդու և քաղաքացու կրթության իրավունքի սահմանադրական ինստիտուտի բովանդակության ու զարգացման հիմնախնդիրները հետագա համակարգային ուսումնասի-

րության կարիք ունեն: Մասնավորապես, տվյալ իրավունքին նվիրված գիտական գրականության մեջ կատարված վերլուծությունը վկայում է, որ դրա մի զգալի մասը նպատակաուղղված է միայն կրթական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության զարգացման հարցերին:

Բոլոնիայի գործընթացին Հայաստանի անդամակցելու տեսանկյունից կարևոր են այդ խնդրի վերաբերյալ վերջին տարիներին Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի կատարած հետազոտությունները:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության նոր համակարգի ներդրման խնդիրներին են անդրադարձել մի շարք այլ հեղինակներ² և կազմակերպություններ³:

Ներկայացվող գրքում հնարավորություն է տրված կրթության իրավունքը դիտարկել, մի կողմից որպես ամբողջական երևույթ, մյուս կողմից, որպես բարդ, բազմաստիճան կառուցվածք:

Մենագրության մեջ տրվում է ՀՀ Սահմանադրության հոդված 39-ի դրույթների մանրամասն վերլուծությունը՝ սահմանադրական այլ սկզբունքների հետ փոխկապակցվածության մեջ, ինչպես նաև հետազոտվում են «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների նորմերը՝ սահմանադրական կոնկրետ դրույթների զարգացման և ընթացիկ օրենսդրության՝ նորմերի սահմանադրական սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից:

Հուսով ենք սույն հետազոտությունը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում կրթության բնագավառի հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծմանը և ժամանակակից մարտահրավերներին ներդաշնակ լուծումներ գտնելուն, որի պայմաններում միայն հնարավոր կլինի երաշխավորել մեր առաջընթացի հիմնական գործոնը՝ մարդկային ներուժի արդյունավետ իրացումը:

² Տես՝ Ա. Ճուղուրյան, Ս. Երիցյան, Բոլոնիայի գործընթացը և կրթության որակի հիմնախնդիրները, Երևան, 2008:

³ Տես՝ 1997թ. Լիսաբոնի՝ Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին կոնվենցիայի հիմնադրույթներին Հարավային Կովկասի երկրների ինտեգրման և ներդաշնակության մակարդակի գնահատում, Երևան, 2005: Կրթական քաղաքականությունը և Lifelong Learning-ը Հայաստանում ռազմավարության հիմնադրույթների և շարունակական քննարկումների ձևակերպում, Երևան, 2005:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

§1. Կրթության իրավունքի հասկացությունը և միջազգային իրավական կարգավորումը

Մարդու ազատ միտքը մշտապես ձգտում է ճանաչել և հասկանալ շրջապատող աշխարհը: Այդ իսկ պատճառով «գիտելիքը» և այն ձեռք բերելուն միտված նպատակաուղղված գործընթացը՝ կրթությունը, բոլոր ժամանակներում դիտարկվել են որպես մեծագույն հասարակական արժեք: Կրթված, գիտելիքների տիրապետող մարդն իր հասարակական դիրքով և ազդեցությամբ միշտ էլ եապես բարձր է դիտվել մյուս մարդկանցից:

Դարեր շարունակ գիտելիք ձեռք բերելու, այսինքն՝ կրթություն ստանալու հնարավորությունը հանդիսացել է մենաշնորհ, որի իրավունքը վերապահվել է միայն հասարակության ընտրյալ խավերին: Առաջին անգամ Հին Հունաստանում, ապա և՛ Հին Հռոմում կրթություն ստանալու հնարավորությունն սկսեց ընկալվել որպես քաղաքացիական իրավունք, որը հասանելի էր բոլոր ազատ քաղաքացիներին և որի իրականացումն ապահովվում էր պետության կողմից¹: Գիշտ է, այս դարաշրջանում մարդու իրավունքների հստակ ձեվակերպում չկար և կրթության իրավունքը դեռևս չէր ընկալվում որպես մարդու իրավունքների անխզելի մաս:

Կրթության իրավունքն իր բովանդակությամբ հանդիսանում է ավելի ընդհանուր իրավունքի՝ մարդու ազատ զարգացման իրավունքի բաղադրիչ մաս: Այդ իմաստով այն հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը և այդպիսին սկսել է ընկալվել միայն սահմանադրական ամրագրում ստանալուց հետո:

«Մարդու իրավունքներ» հասկացությունը քաղաքական տեսության և գործելակերպի մեջ մտավ 17-րդ դարում, Եվրոպայում՝ լուսավորության դարաշրջանում: Ջոն Լոկի «Կառավարության մասին երկրորդ տրակտատը» (հրատարակվել է 1688թ.) մարդու բնական իրավունքներին վերաբերող առաջին տեսական հիմնավորումն էր: Ձևավորվող բուրժուազիան առաջ էր քաշում մարդկանց հավասարության և անկապտելի իրավունքների վրա հիմնված քաղաքա-

¹ Տես՝ Հին Հունաստանի պատմություն, Երևանի համալսարանի հրատ., 1982, էջ 409: Մաշկին Ն. Ա., Հին Հռոմի պատմություն, Երևանի համալսարանի հրատ., 1951, էջ 520:

կան պահանջներ՝ որպես հակակշիռ միջնադարյան հասարակության մեջ գերիշխող ազնվականական ծագման գերակայության և դրանից բխող ավանդական արտոնությունների:

Մարդու բնական իրավունքների ճանաչման առաջին դրսևորումները հանդիսացան 18-րդ դարի վերջի բուրժուական հեղափոխությունների արդյունքում ընդունված իրավական փաստաթղթերը՝ ԱՄՆ-ի «Անկախության հռչակագիրը» (1776թ.) և Ֆրանսիայի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը» (1789թ.): Այս փաստաթղթերում մարդու իրավունքները և ազատությունները ձևակերպված էին դեռևս շատ ընդհանուր գծերով: Ճանաչվում էին կյանքի, ազատության, հավասարության, ունեցվածքի և երջանկության ձգտելու իրավունքները: Այսօր համընդհանուր ճանաչում ստացած շատ իրավունքներ անգամ հիշատակված չէին, մասնավորապես, դեռևս – խոսք չկար կրթության իրավունքի մասին:

Սակայն մարդու բնական իրավունքների նմանօրինակ ամրագրումն այն հեղափոխական գաղափարն էր, որը մեկնակետ հանդիսացավ մարդու իրավունքների ճանաչման գործընթացի անընդհատ ընդլայնման համար: Բուրժուական այս առաջին հեղափոխություններից հետո անցած երկու հարյուրամյակների ընթացքում մարդու ճանաչված սուբյեկտիվ իրավունքների շրջանակներն ընդլայնելու շուրջ պայքարն անընդհատ շարունակվել է: Աստիճանաբար ճանաչվեցին ընտրական իրավունքը, խոսքի, ժողովների, մանուլի ազատության իրավունքները, կանանց ընտրական իրավունքը, աշխատանքի, արդարացի վարձատրության, միություններ ստեղծելու և այլ իրավունքներ:

Ժամանակի ընթացքում մարդու իրավունքների և ժողովրդավարական ազատությունների ընթռնումն էլ ավելի ընդլայնվեց: Անցած դարի ընթացքում աստիճանաբար վերացվեցին նաև մարդու իրավունքների՝ ռասայի և սեռի (գեներացիայի) հատկանիշներով բոլոր իրավական սահմանափակումները:

Առաջին անգամ մարդու իրավունքները, միջպետական իրավական այլ խնդիրների շարքում, միջազգային իրավահարաբերությունների քննարկման հարց դարձան առաջին աշխարհամարտի ավարտին հրավիրված՝ 1919թ. Փարիզի հաշտության վեհաժողովում²: Փարիզի վեհաժողովում ընդունված փաստաթղթերում, թե՛ միջազգային հանրությունը և թե՛ առանձին պետություններն ստանձնում էին մարդու իրավունքների ճանաչումն ապահովող որոշակի միջազ-

² Stu` Margaret MacMillan, Paris, 1919: six months that changed the world, New York, 2003, էջեր 482-493:

գային իրավական պարտավորություններ, թե և այդ համաձայնագրերում «նարդու իրավունքներ» արտահայտությունը, որպես ադափսին, չէր հիշատակվում:

Երկրորդ աշխարհամարտի ժանր փորձությունը նպաստեց համաշխարհային հանրության համախմբմանը և հանգեցրեց Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ստեղծմանը: Միավորված ազգերի կազմակերպությունում էր, որ նարդու իրավունքների հարցն առաջին անգամ ձևակերպվեց որպես միջազգային իրավահարաբերությունների խնդիր:

Մարդու իրավունքների հարցն արդեն իսկ արժարծվեց 1945թ. ընդունված ՄԱԿ-ի կանոնադրության մեջ: «Միավորված ազգերի ժողովուրդները հավատում են նարդու հիմնական իրավունքներին, նարդկային անձի արժանապատվությանը և արժեքավորությանը, տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը»³, - ասված է կանոնադրության մեջ: ՄԱԿ-ի անդամ պետությունները պարտավորվում էին ամեն կերպ օժանդակել նարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանմանը և դրանց նկատմամբ համընդհանուր հարգանքին: 1946թ. ՄԱԿ-ի կառույցում ստեղծվեց Մարդու իրավունքների հատուկ հանձնաժողովը:

Առավել ամբողջական ձևով նարդու իրավունքների հարցն իր արտահայտությունն ստացավ խնդրին վերաբերող հատուկ մշակված փաստաթղթում: 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան (վեհաժողովն) ընդունեց *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը*: Պարզ և հստակ արտահայտություններով համընդհանուր հռչակագիրը սահմանում էր այն իրավունքները, որոնք հավասարապես պատկանում են բոլոր մարդկանց: Հատուկ ընդգծվում էր այն միտքը, որ պետությունների վերաբերմունքը սեփական քաղաքացիների նկատմամբ ոչ միայն ներպետական խնդիր է, այլև միջազգային իրավական կարևորություն ունի, և որ բոլոր ժողովուրդները և պետությունները պետք է ձգտեն *լուսավորության և կրթության միջոցով* օժանդակել այդ իրավունքներն ու ազատությունները հարգելուն և երաշխավորել դրանք⁴:

30 հոդվածից բաղկացած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է նարդու կրթության իրավունքի սահմանմանը.

³ Տես՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը, <http://www.un.am/?laid=2&com=module&module=menu&id=60>

⁴ Տես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, <http://www.un.am/?laid=2&laid=2&com=module&module=static&id=257>

«1. Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթությունը պետք է լինի անվճար, առնվազն այն չափով, որքանով դա առն չվում է տարրական և ընդհանուր կրթությանը: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է լինի հանրամատչելի և բարձրագույն կրթությունը պետք է լինի հավասարապես մատչելի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների:

2. Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի մարդու անհատականության լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է տանի դեպի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնման, հանդուրժողականության և բարեկամության ամրապնդմանը և նպաստի Միավորված ազգերի գործունեությանը խաղաղության հաստատման գործում:

3. Ծնողներն առաջնահերթ իրավունք ունեն ընտրելու կրթության տեսակը, որն իրենց երեխաները պետք է ստանան»⁵:

Թեև այս փաստաթղթի ընդունումը խիստ կարևոր էր մարդու իրավունքների միջազգային ճանաչման առումով, սակայն մարդու իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ այն չէր կարող ապահովել, քանի որ չունեի դրա համար անհրաժեշտ կառուցակարգեր: Շարունակվող սառը պատերազմի պայմաններում չէր կարող խոսք լինել անգամ առանձին պետություններում մարդու իրավունքների խախտման փաստերն արձանագրելու և դրանք միջազգային հանրության ուշադրությանը ներկայացնելու մասին:

Մարդու իրավունքների միջազգային ճանաչման ընդլայնման հարցում որոշակի աշխուժություն նկատվեց անցած դարի 60-ական թվականներին: Դա պայմանավորված էր գաղութային լուծը թոթափած Ասիայի և Աֆրիկայի նորանկախ երկրների ժողովուրդների՝ իրենց իրավունքները պաշտպանելու ձգտումով: Նրանց ջանքերով ընդունվեցին մի շարք կարևոր միջազգային փաստաթղթեր:

1960թ. դեկտեմբերի 14-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունեց **«Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիան»**: Հիմնվելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի և մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի վրա՝ այն երաշխավորում էր կրթության հավասարությունը և մատչելիությունը բոլորի համար: Կոնվենցիայով արգելվում էր կրթության ոլորտում ամեն տեսակի խտրականությունը՝ ըստ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազ-

⁵ Տես՝ նույն տեղում, հոդվ. 26:

գային կամ սոցիալական ծագման, ծննդյան և տնտեսական դրության: Կոնվենցիան վավերացրեցին աշխարհի 92 պետություններ և այն դարձավ միջազգային իրավունքի առաջին փաստաթուղթը, որը պարտադիր ուժ ուներ: Կոնվենցիան ստորագրող պետություններն ստանձնում էին որոշակի իրավական պարտավորություններ՝ մշակել, զարգացնել և կենսագործել այնպիսի կրթական քաղաքականություն, որն իր մեթոդներով համապատասխանի իրավիճակին և ազգային հնարավորություններին, նպաստի հավասար հնարավորությունների և վերաբերմունքի հաստատմանը կրթության ոլորտում⁶: Կոնվենցիան արգելում էր ռասայական կամ էթնիկ խմբերի առանձնացված ուսուցումը, կրթության ձևի, տեսակի և աստիճանի սահմանափակումն ըստ որևիցե հատկանշի, բացի գիտելիքների մակարդակից⁷:

Կոնվենցիայի դրույթների իրականացման կառուցակարգերը մշակելու և դրանց կենսագործումը վերահսկելու նպատակով նույն 1960թ. ընդունվեց նաև «Երաշխավորություններ կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին» փաստաթուղթը, և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կառույցում ստեղծվեց Կոնվենցիայի կատարումը վերահսկող կոմիտե: Կոմիտեն պետք է իրավական աջակցություն ցուցաբերեր Կոնվենցիային միացած պետություններին, որոնք տարբեր պատճառներով դժվարությունների էին հանդիպում ստանձնած պարտավորությունների իրականացման հարցում: Մասնակից պետությունները պարտավոր էին զեկույցներ ներկայացնել ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին:

Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի հաջորդ կարևոր քայլը 1965թ. ՄԱԿ-ի կողմից *Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի* ընդունումն էր: Կոնվենցիան ստորագրող պետություններին առաջարկում էր «շուտափույթ և արդյունավետ քայլեր ձեռնարկել, մասնավորապես ուսուցման, կրթության, մշակույթի և տեղեկատվության ոլորտներում, պայքարելու ռասայական խտրականության նախապաշարմունքների դեմ և նպաստել ազգերի, ռասայական և էթնիկ խմբերի միջև փոխըմբռնման, հանդուրժողականության և բարեկամության հաստատմանը..... »⁸: Այս փաստաթղթի ընդունումն արդյունք էր

⁶ Տես՝ Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիա, հոդվ. 4, http://untreaty.un.org/unts/1_60000/26/10/00050476.pdf

⁷ Նույն տեղում, հոդված 3:

⁸ Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, հոդված 7, http://www.unhchr.ch/html/menu3/b/d_c_educ.htm

ԱՄՆ-ում իրենց իրավունքների պաշտպանության համար սևամորթ քաղաքացիների ծավալած պայքարի:

Մարդու իրավունքների միջազգային ճանաչման բնագավառում շատ կարևոր քայլ էր 1966թ. դեկտեմբերի 16-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի կողմից *Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի* ընդունումը: Համընդհանուր հռչակագրի հետ մեկտեղ, այն հանդիսանում է մարդու իրավունքների ճանաչման միջազգային ամենահեղինակավոր փաստաթղթերից մեկը: Դաշնագրի համաձայն «Դաշնագրին միացած պետությունները հայտարարում են, որ ճանաչում են յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը: Նրանք համաձայն են, որ կրթությունը պետք է նպատակաուղղված լինի մարդու անհատականության և արժանապատվության զգացումի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Նրանք նաև համաձայն են, որ կրթությունը պետք է հնարավորություն տա բոլորին արդյունավետ կերպով մասնակցելու ազատ հասարակությանը, զարգացնելու փոխըմբռնում, հանդուրժողականություն և բարեկամություն բոլոր ազգերի և բոլոր ռասաների, էթնիկական և կրոնական խմբերի միջև..... »⁹: Այսպիսով, Դաշնագրին միացած պետությունները պարտավորվում էին պարբերաբար զեկույցներ ներկայացնել դրա դրույթների կատարման վերաբերյալ: Վերահսկող հանձնաժողովները զեկույցի շուրջ կարող էին հարցեր տալ պետությունների ներկայացուցիչներին, վեր հանել թերություններն ու խախտումները, սակայն լիազորված չէին պահանջելու փոփոխությունների պետությունների գործելակերպում կամ ապահովելու դատական պաշտպանություն տուժածների համար: Նման սահմանափակ ներգործության պատճառն այն է, որ միջազգային իրավունքն այսօր էլ դեռևս շարունակում է գործել առավելապես պայմանագրային հիմունքով, և միջազգային իրավական պարտավորությունները, ըստ էության, միջպետական պաշտոնական համաձայնություններ են: Միջազգային որևէ համաձայնագրի միանալով՝ պետությունները կամովին ստանձնում են միջազգային պարտավորություններ, որոնք այլ կերպ միջազգային առումով չեն կարող իրացվել: Այնուամենայնիվ, մարդու իրավունքների ոտնահարման նման սահմանափակ դատապարտումն անգամ որոշակի դրական ազդեցություն է ունենում տուժածների շահերի պաշտպանության հարցում:

⁹ Տես՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդվ. 13, <http://www2.ohchr.org/english/law/cescr.htm>

Մարդու իրավունքների ճանաչման հարցում նոր առաջընթաց գրանցվեց անցած դարի 70-ական թվականներին: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը լիազորվեց՝ քննարկել մարդու իրավունքների խախտման դեպքերն առանձին երկրներում: 1975թ. ՅԵԼՍԻՆԿԻՈՒՄ գումարված *Եվրոպայի անվտանգության և համագործակցության հանաժողովը* ձևակերպեց և ընդունեց միջազգային հարաբերությունների կարգավորման 10 առանձնահատուկ սկզբունքները.

- ա) ինքնիշխանության հարգում.
- բ) խուսափում ուժի կամ դրա կիրառման սպառնալիքից.
- գ) սահմանների անխախտելիություն.
- դ) պետությունների տարածքային ամբողջականության պահպանում.
- ե) վիճելի խնդիրների խաղաղ կարգավորում.
- զ) չմիջամտություն ներքին գործերին.
- է) մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, ներառյալ մտքի, խղճի, կրոնի ու հանգմունքի ազատությունների հարգում.
- ը) ժողովուրդների հավասարության և ինքնորոշման իրավունք.
- թ) պետությունների համագործակցություն.
- ժ) միջազգային իրավական պարտավորությունների բարեխիղճ կատարում¹⁰:

Համաժողովի եզրափակիչ ակտում հռչակվեց միջազգային նոր կազմակերպության՝ *Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)* ստեղծումը¹¹: ՅԵԼՍԻՆԿՅԱՆ այս համաձայնագրի հիման վրա 1978թ. ստեղծվեց «Մարդու իրավունքների վերահսկողության» կառույցը, որի մասնաճյուղերն այսօր արդեն գործում են ավելի քան 70 երկրներում: Այն պետք է վերահսկեր համաձայնագիրն ստորագրած երկրներում մարդու իրավունքների սկզբունքների իրագործումը, ինչն արվում է կազմակերպության կողմից ամեն տարի հրապարակվող «Մարդու իրավունքների վերահսկողության համաշխարհային հաշվետվության» միջոցով:

Հետագա տարիներին ՄԱԿ-ը մշակեց և ընդունեց մարդու իրավունքներին վերաբերող մի շարք նոր համաձայնագրեր:

Կրթության ոլորտին առնչվող կարևոր փաստաթուղթ էր Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին

¹⁰ Տես՝ 1975թ. ՅԵԼՍԻՆԿՅԱՆ համաձայնագիրը. Եզրափակիչ ակտ,

<http://www.osce.org/item/4046.html?lc=HY>

¹¹ Տես՝ նույն տեղում:

կոնվենցիան (1979թ.), որով կանանց համար երաշխավորվում էին «կրթության և ուսումնառության բոլոր ձևերը՝ կանոնակարգված և ոչ կանոնակարգված, ներառյալ անգրագիտության վերացումը, ինչպես նաև համայնքային և լրացուցիչ ծառայություններից օգտվելու մատչելիությունը՝ նրանց տեխնիկական որակավորումը բարձրացնելու համար»¹²: Մասնակից պետությունները պարտավորվում էին միջոցներ ձեռք առնել վերացնելու կանանց նկատմամբ խտրականության բոլոր դրսևորումները և նրանց համար տղամարդկանց հավասար իրավունքներ ապահովել որակյալ մասնագիտական կրթություն ստանալու, վերապատրաստումներ անցնելու, կրթաթոշակներ և դրամաշնորհներ ստանալու, սպորտի և ֆիզիկական կրթության բնագավառում¹³:

Այդ շրջանում միջազգային հանրության ուշադրության կենտրոնում էին նաև երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրները: Այն իր ձևակերպումն ստացավ ՄԱԿ-ի կողմից ընդունված *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում* (1989թ.), որը ոչ միայն դատապարտում և արգելում էր երեխաների աշխատանքի շահագործման բոլոր ձևերը, այլև ընդգծում էր պետությունների պատասխանատվությունը երաշխավորելու և ապահովելու բոլոր երեխաների անգրագիտության վերացումը, տարբեր աստիճանի և տարբեր ձևի կրթություն ստանալու հնարավորությունը՝ անկախ նրանից, թե աշխարհի որ մասում են նրանք բնակվում, դաստիարակելու երեխաներին ազատ հասարակության մեջ ապրելու, խաղաղության, հանդուրժողականության, հավասարության և բարեկամության ոգով¹⁴:

Օրեցօր մարդու իրավունքներին և, մասնավորապես, կրթության իրավունքին վերաբերող իրենց գործերի համար պետություններն ավելի ու ավելի մեծ թափով են պատասխանատու դառնում միջազգային հանրությանը: ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված համաձայնագրերն անդամ պետությունների առջև միջազգային իրավական պարտավորություններ են դնում ապահովել յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ ստանալու մատչելի և որակյալ կրթություն՝ առանց խտրականության կամ բացառության:

Այն միջոցները, որոնց շնորհիվ միջազգային կազմակերպությունները ներգործում են պետությունների վրա՝ որդեգրելու որոշակի

¹² Տես՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա հոդվ. 14, <http://www2.ohchr.org/english/law/cedaw.htm>

¹³ Տես՝ նույն տեղում, հոդվ. 10:

¹⁴ Տես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989թ.), հոդվ. 28 և 29, <http://www2.ohchr.org/english/law/crc.htm>

վարքագիծ, հետևելու որոշակի միջազգային չափորաչիչների, կարելի է բաժանել երկու խմբի՝ պարտադրող և չպարտադրող: Առաջին խմբի մեջ մտնում են միջազգային կոնվենցիաները, որոնք պարտադիր, ուժ ունեցող կանոնակարգված փաստաթղթեր են՝ մշակված և հաստատված միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից: Գործող և կիրառվող իրավական ակտ դառնալու համար կոնվենցիան պետք է վավերացվի պետության կողմից: Անհրաժեշտ թվով պետությունների կողմից վավերացվելուց հետո կոնվենցիան ուժի մեջ է մտնում, և անդամ պետությունները պարտավոր են դրա սկզբունքները ներառել իրենց ներպետական օրենսդրության մեջ:

Երկրորդ խումբը *հռչակագրերը, երաշխավորագրերը և խարտիաներն են*: Այս միջազգային փաստաթղթերը չեն վավերացվում և պարտադիր ուժ չունեն: Սակայն, այնուամենայնիվ, դրանք ունեն որոշակի քաղաքական և բարոյական հեղինակություն, ինչից ելնելով պետությունները հարկադրված են լինում դրանք հաշվի առնել:

Վերջին տասնամյակներում միջազգային կառույցների կողմից մարդու իրավունքների իրականացման և վերահսկողության նորանոր կառուցակարգեր են ստեղծվում: Այսպես, 1994թ. ստեղծվեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերի Գերագույն հանձնակատարի /կոմիսարի/ պաշտոնը: ՄԱԿ-ի կառույցում, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային համաձայնագրերի հիման վրա, ստեղծվել և գործում են նաև մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովներ, որոնց հիմնական պարտականությունն է ստուգել պետությունների կողմից իրենց տարածքում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ներկայացված պարբերական հաշվետվությունները: Ակնհայտ է, որ այս հաշվետվությունները չեն կարող ստիպել որևէ պետության փոխել իր գործելակերպը մարդկանց իրավունքների հարցում: Սակայն միջազգային հանրությանը նման հաշվետվություններ ներկայացնելու պրակտիկան այս կամ այն չափով պարտավորեցնում է կառավարություններին վերանայելու իրենց երկրի օրենսդրությունը, կատարել գոնե արտաքին որոշ բարեփոխումներ մարդու իրավունքների ամրապնդման և պաշտպանության հարցում: Թեև Մարդու իրավունքների հանձնաժողովի եզրակացությունները պարտադիր ուժ չունեն, սակայն որոշ պետու-

յուններ հետևելով դրանց՝ համապատասխան փոփոխություններ են կատարել իրենց օրենսդրության մեջ¹⁵:

Միջազգային ավելի մեծ դերակատարում ունի Եվրոպայի խորհրդի համակարգում գործող Մարդու իրավունքների հանձնաժողովը: Թեև այս հանձնաժողովի որոշումները ևս իրավական առումով պարտադիր չեն, սակայն սովորաբար դրանք ընդունվում են այն պետությունների կողմից, որոնք որոշակի ակնկալիքներ ունեն համաեվրոպական այս կառույցի հետ համագործակցելու կամ դրան անդամակցելու հարցում:

Եվրոպայի խորհրդի ջանքերով, միջազգային իրավական պրակտիկայում առաջին անգամ ստեղծվել է *Մարդու իրավունքների եվրոպական դատարանը*, որի վճիռներն իրավական առումով պարտադիր են Եվրախորհրդի անդամ պետությունների համար: Սա համաշխարհային մասշտաբով կարևոր փոփոխություն է՝ մարդու իրավունքների իրացման լիազորություններն առանձին պետությունների իրավասությունից բացի հանձնվել են միջազգային կառույցի իրավասությանը:

Անցած դարի վերջին տասնամյակների ընթացքում Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովն զգալի ջանքեր է գործադրել ներազդելու կառավարությունների վրա և մարդու իրավունքների խնդիրը դարձնելու պետությունների արտաքին քաղաքականության առաջնահերթ հարցերից մեկը: Պետք է փաստել, որ միջազգային հանրության գործադրած այս ջանքերի արդյունքում, երկրների մեծ մասի սահմանադրությունների մեջ անրագրվել են մարդու իրավունքների ճանաչումն ու դրանց պաշտպանությունը: Եվ, իհարկե, այդ իրավունքների թվում ամրագրված է նաև մարդու *կրթություն ստանալու իրավունքը*:

Ինչպես և մյուս իրավունքները, մարդու կրթություն ստանալու իրավունքը պետության վրա դնում է երեք մակարդակի պարտավորություն՝ *հարգել, պաշտպանել և բավարարել* կրթության իրավունքի ամեն մի կարևոր հատկանիշը՝ հնարավորությունը, մատչելիությունը, ընդունելի և համապատասխան լինելը:

Իրավամբ կարելի է պնդել, որ մարդու կրթություն ստանալու իրավունքը վերջնականապես սահմանադրական իրավունքի նորմի վերածվեց միայն 20-րդ դարի վերջին տասնամյակների ընթացքում,

¹⁵ Օրինակ՝ Մավրիկիա պետությունն իր երկրի օրենսդրության մեջ փոփոխեց կանանց իրավունքներին վերաբերող հոդվածները:
[http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/0/29fa368c23666011c12572b20038b10a/\\$FILE/NO268725.pdf](http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/0/29fa368c23666011c12572b20038b10a/$FILE/NO268725.pdf)

երբ այն ի վերջո ամրագրվեց պետություններից շատերի սահմանադրություններում:

§ 2. Բարձրագույն կրթության իրավունքի ծագումն ու զարգացումը Յայաստանում

Աշխարհում ընդունված առաջին սահմանադրություններն արդեն իսկ ամրագրեցին մարդու բնական անկապտելի իրավունքներն ու ազատությունները՝ կյանքի, ազատության, անձի անձեռնմխելիության, անձի արժանապատվության և այլն: Սակայն, ի տարբերություն այլ բնական իրավունքների՝ մարդու կրթություն ստանալու իրավունքը միանգամից ճանաչում չստացավ: Կրթության իրավունքի ճանաչումը տեղի ունեցավ հասարակության զարգացման որոշակի ավելի բարձր փուլում, այն բանից հետո, երբ հասարակության մեջ կուտակվեց գիտելիքների զգալի պաշար, ձևավորվեց կրթության և կրթական հաստատությունների կանոնակարգված համակարգ: Այս առումով, բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի ծագումն ու զարգացումը Յայաստանում, ինչպես և այլ երկրներում, անքակտելի կերպով կապված են բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմավորման և զարգացման գործընթացի հետ:

Յայաստանի կրթության համակարգը հարյուրամյակների պատմություն ունի: Դա իր սրնթաց զարգացումը սկսեց ապրել 1600 տարի առաջ, երբ Յայոց գրերի ստեղծումից անմիջապես հետո Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ եղավ Յայաստանի ողջ տարածքում կրթարաններ բացելու գործին: Յայոց այբուբենի ստեղծումը լայն հնարավորություններ ստեղծեց հայ գրականության, պատմագրության, գիտության, ինչպես և կրթության ողջ համակարգի զարգացման համար:

Ամենուր բացվեցին դպրոցներ, իսկ խոշոր վանքերին կից հիմնվեցին նաև բարձրագույն կրթական կենտրոններ՝ վարժարաններ /ուսումնարաններ/: Բացի հոգևորականներ պատրաստելուց, այստեղ պատրաստում էին ուսուցիչներ, դպիրներ, քերականներ, գրիչներ, թարգմանիչներ և այլն:

Աստվածաշնչի հայերեն դասական թարգմանությունը և անտիկ գիտնականների աշխատությունների թարգմանություններն զգալիորեն հարստացրին հայոց լեզվի ընդհանուր և գիտական բառապաշարը, նպաստեցին գիտական մտքի հետագա վերելքին:

X-XI դարերում Յայաստանի խոշոր քաղաքներում և վանական համալիրներում գործում էին վարդապետարաններ (բարձրագույն կրթական հաստատություններ), որտեղ ուսանողները սովոր-

րում էին գիտությունների «եռյակը և քառյակը» (trivium & quadrivium): Այն ներառում էր քերականության, հռետորության, դիալեկտիկայի, բնագիտության, բարոյագիտության, մաթեմատիկայի, երաժշտության, տնտեսագիտության, աստղագիտության, երկրաչափության և այլնի ուսումնասիրությունը: Հինգ կամ վեց տարի ուսանելուց հետո սովորողներն ստանում էին վարդապետի (բակալավրի) աստիճան և ինքնուրույն գործունեություն իրականացնելու իրավունք, ինչպես, օրինակ՝ քարոզչությամբ զբաղվել, դպրոց բացել և ուսուցանել, պետական ծառայության անցնել և այլն: Այս կարգի առավել նշանավոր կրթօջախներից էին Սանահինի, Գոշավանքի, Մեծոփավանքի, Անիի, Հաղարծնի, Հաղպատի, Տաթևի և Գլաձորի վարդապետարանները¹⁶:

XIII դարում որոշ վարդապետարաններ, որոնցում ուսուցանում էին ժամանակի առավել բանիմաց, հեղինակավոր և անվանի գիտնականները, վերածվեցին համալսարանների: Առաջինը Գլաձորի համալսարանն էր, որը համալսարան դարձավ արդեն 1288թ.՝ իր Աստվածաբանական, Ներքին և արտաքին գրագրության (միջազգային), Գեղագրության (գրքի գրում և նկարագրում), Երաժշտագիտության ֆակուլտետներով: Համալսարան կարող էին ընդունվել արդեն վարդապետի աստիճան ունեցողները: Ուսումնառությունը շարունակվում էր 7 – 8 տարի: Համալսարանն ուներ իր կանոնադրությունը, և շրջանավարտներն ստանում էին ծայրագույն վարդապետի (մագիստրոս), ռաբունապետի գիտական աստիճան¹⁷:

Կիլիկիայի հայկական թագավորությունում համալսարան էր բացվել Սիս մայրաքաղաքում: Տաթևի համալսարանը, Գլաձորի համալսարանի փակվելուց հետո, Հայաստանի առաջատար ուսումնական կենտրոնն էր հանդիսանում XIV դ. վերջին XV դ. ընթացքում: Ժամանակի շատ աչքի ընկնող գործիչներ՝ գիտնականներ, բանաստեղծներ, պատմաբաններ, փիլիսոփաներ, հոգևորականներ և պետական գործիչներ, այս համալսարանների շրջանավարտներն են հանդիսացել: Այս փաստերը հիմք են տալիս ասելու, որ Հայաստա-

¹⁶ Տես՝ Աբրահամյան Ա., Գլաձորի համալսարանը, Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան, 1983թ. էջ 19-21, տես նաև՝ Report on management of educational reforms in Armenia for the period of 2003-2004. Conference of Ministers of Education of Armenia, Azerbaijan and Georgia. Prepared by Nerses Gevorgyan, Adviser to the Minister of Education and Science of the Republic of Armenia, see: Introduction.

¹⁷ Տես՝ Աբրահամյան Ա, Գլաձորի համալսարանը, Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան, 1983թ. էջ 77-79:

նում բարձրագույն կրթության համակարգն ունի մոտ 700 տարվա պատմություն¹⁸:

Մի քանի դար շարունակվող մշակույթի ընդհանուր անկումից հետո ստեղծվեցին հայկական նոր բարձրագույն կրթօջախներ՝ 1815թ. Մոսկվայում բացվեց Լազարյան ճեմարանը, 1840թ. Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը, 1874թ. Էջմիածնում սկսեց գործել Գևորգյան ճեմարանը՝ իր քաղաքացիական և աստվածաբանական բաժիններով¹⁹: Թեև այս դպրոցները տալիս էին միջնակարգ դպրոցականից բարձր կրթություն, ցավոք, դրանք համալսարանների չվերածվեցին: Ավանդաբար հայ ուսանող երիտասարդությունը բարձրագույն կրթություն էր ստանում Եվրոպայի և Ռուսաստանի համալսարաններում:

Հայաստանի ժամանակակից կրթական համակարգի կազմավորումն սկսվեց 20-րդ դարի սկզբին՝ առաջին Հանրապետության կարճատև գոյության ընթացքում: Երկրում գործում էին տարրական դպրոցներ, գիմնազիաներ և ուսումնարաններ: Իր գոյության առաջին իսկ ամիսներին կառավարությունն ընդունեց օրենք «Դպրոցների կառավարման մասին», որով սահմանվում էին կրթության ոլորտում պետության որդեգրած քաղաքականության սկզբունքները. դրանք էին.

Դպրոցը Հայաստանի Հանրապետության մեջ պետության մենաշնորհը չէ: Յուրաքանչյուր հասարակական կամ համայնական կազմակերպություն, խմբակցություն, ընկերակցություն, ինչպես և առանձին անհատ իրավունք ունեն անարգել դպրոց բանալու և անկախորեն վարելու սեփական միջոցներով:

Պետական գանձարանի նպաստատվությունը չպետք է նկատվի որպես հիմք և նշան դպրոցները պետական կամ կառավարական համարելու կամ դարձնելու:

Մերժելի է դպրոցի պետականացման կարգը և գերադասելի է ազատ հասարակական, դպրոցական սիստեմը²⁰:

Հակառակ դպրոցական կրթության հարցում նման մոտեցմանը, կառավարության դիրքորոշումն արմատապես տարբեր էր բարձրագույն կրթության հարցում: Նորաստեղծ հանրապետությունը չունեի բարձրագույն կրթական ոչ մի հաստատություն և համալսարանի

¹⁸ Տես՝ Աբրահամյան Ա, Գլածորի համալսարանը, Երևանի համալսարանի հրատարակություն, Երևան, 1983թ. էջ 20:

¹⁹ Տես՝ Хачикян А. Э., История Армении, издательство “Филин”, Ереван 2004г. էջ 91

²⁰ ՀՀ Պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998, փ. 8, էջ 4:

հիմնադրումը հանրապետության կառավարության հատուկ հոգածության խնդիրը դարձավ:

1919թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը քննարկեց և հավանություն տվեց համալսարանի հիմնելու օրինագծին: Ընդունվեց օրենք «Հայաստանում համալսարան բանալու և նրա նախնական ծախսերը հոգալու համար 300. 000 ռ. հատկացնելու մասին»²¹: Նախատեսվում էր՝

«Համալսարանը հիմնել էրևանում՝ հետևյալ չորս բաժիններով. ա/ պատմա-լեզվաբանական, բ/ տնտեսա-իրավաբանական, գ/ բժշկական և դ/ ֆիզիկա-մաթեմատիկական՝ տեխնիկական ստորաբաժանումով:

1. Համալսարանը բանալ 1919/20 ճեմարանական տարում:

2. Առաջին հերթին բանալ պատմա-լեզվաբանական բաժինը:

3. Մնացած բաժինները բանալու ժամանակը և հերթը սահմանում է մինիստրների խորհուրդը՝ ըստ հանրային կրթության մինիստրի առաջարկության:

4. Համալսարանը բանալու նախնական ծախսերը հոգալու համար հատկացնել երեք հարյուր հազար ռուբլի՝ հանձնարարելով ֆինանսների մինիստրությանը բանալ համապատասխան վարկ հանրային կրթության մինիստրությանը»²²:

Համալսարանի կազմակերպման համար հիմք ծառայեց Թիֆլիսում գործող Անդրկովկասյան մասնավոր համալսարանը (Թիֆլիսի նախկին՝ կանանց բարձրագույն կուրսերը), որի հիմնադիրների մեծ մասը հայեր էին, և որում հայ տարրը գերիշխող էր: Համալսարանը թեև ռուսական էր, «բայց զգալի չափով հայկական գունավորում ուներ»²³: Այն ուներ բժշկական, ֆիզիկա-մաթեմատիկական և պատմա-լեզվաբանական ֆակուլտետներ: Ուսանողների թիվը 2000-ից ավելի էր, որոնց կեսը հայեր էին:

Հայ բուհական կրթության գործի մեծ նվիրյալ, Հայաստանի համալսարանի փաստացի կազմակերպիչ Դ. Ջավրյանի ջանքերով Հայաստանի կառավարության հետ տարվող բանակցություններն ավարտվեցին հաջողությամբ, միջոցներ հատկացվեցին Անդրկովկասյան մասնավոր համալսարանի գույքը, դասախոսներին և ուսանողներին Հայաստան տեղափոխելու համար²⁴:

²¹ ՀՀ Պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998, փ. 190, էջ 77:

²² Տես՝ նույն տեղում:

²³ Երևանի համալսարան 1918-1920թթ.: Վավերագրերի ժողովածու կազմողներ՝ Մամիկոնյան Ֆ. Հ, Սիրզոյան Ս. Ս., Երևան 1995, էջ 19:

²⁴ Տես՝ նույն տեղում էջեր 17-20:

Հայաստանի կառավարությունը հատուկ օրենքով սահմանեց Երևանի համալսարանի դասախոսների և վարչական աշխատակազմի ռոճիկները, հատկացրեց 2.259.200 ռուբլի վարկ՝ առաջիկա 1919/20 ճեմարանական տարվա համար, հաստատեց համալսարանի կառավարման ժամանակավոր կանոնները: «*Համալսարանը պետք է լինի մի գիտական և ուսումնական հիմնարկություն հունանիտար, բնագիտական և բժշկական տեսական և գործնական գիտություններ մշակելու և տարածելու համար*», ասված էր ժամանակավոր կանոններում²⁵: 1919թ. աշնանից պետք է բացվեին համալսարանի պատմալեզվաբանական և իրավաբանական ֆակուլտետները:

Շատ կարևոր էր, որ ի սկզբանե որևէ խտրականություն չէր դրվում համալսարանի ուսանողության ընդունելության հարցում. «Իբրև իսկական ուսանող, համալսարանում ընդունվում են միջնակարգ ուսումն ստացած անհատներ, առանց սեռի խտրականության: Միջնակարգ կրթություն չստացած անհատները կարող են ընդհանուր ժողովի թույլտվությամբ ընդունվել համապատասխան որպես ազատ ունկնդիր»: Համալսարանին թույլատրվում էր արտասահմանից աշխատանքի հրավիրել հայտնի գիտնականների, որոնց ծախսերը հոգալու էր կառավարությունը: Ուսումը համալսարանում լինելու էր հայերեն և ռուսերեն, վճարովի հիմունքներով²⁶:

Սակայն փոխադրման համար միջոցների պակասը մի կողմից, և համալսարանի համար համապատասխան շենքի խնդիրը՝ մյուս կողմից, խոչընդոտում էին Երևանում համալսարանի բացմանը: Ուստի կառավարությունը 1919թ. դեկտեմբերի 5-ին որոշում ընդունեց «Համալսարանը ժամանակավորապես Ալեքսանդրապոլում բանալու և մինչև 1919/20 ուսումնական տարվա վերջը պարապմունքները այնտեղ անցկացնելու մասին»²⁷: Դասերն անցկացվելու էին Ալեքսանդրապոլի առևտրական դպրոցի շենքում:

Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1920թ. հունվարի 31-ին, որին իր հովվապետական օրհնությունն էր ուղարկել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Հինգերորդը²⁸:

²⁵ ՀՀ Պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998, փ. 325, էջեր 130-131:

²⁶ Տես՝ նույն տեղում:

²⁷ Երևանի համալսարան 1918-1920թթ.: Վավերագրերի ժողովածու: Հ. 81, էջ 135:

²⁸ Բացման արարողության մանրամասները տես՝ Երևանի համալսարան 1918-1920թթ.: Վավերագրերի ժողովածու, էջեր 157-162:

1920թ. ամռանը ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց համալսարանը Ալեքսանդրապոլից Երևան տեղափոխելու մասին, որն իրականացվեց 1920թ.:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի խորհրդայնացումից հետո համալսարանի գործունեությունը ժամանակավորապես դադարեց: Այն վերաբացվեց միայն քաղաքացիական կռիվների ավարտից հետո 1921թ. աշնանը: Դասախոսական հիմնական կազմը պահպանվեց՝ համալրվելով կոմունիստական գաղափարախոսության նոր մասնագետներով:

Հանդիսանալով Հայաստանի բարձրագույն կրթական հաստատությունների առաջնեկը՝ Երևանի պետական համալսարանը կարճ ժամանակում իրապես դարձավ «գիտության բարձրագույն տնկարան» և կարևոր դեր կատարեց Հայաստանում բարձրագույն կրթության համակարգի ստեղծման ու զարգացման գործում: Հետագա տարիներին Երևանի պետական համալսարանի բազայի վրա հիմնվեցին մի շարք գիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո Հայաստանում բոլոր կրթական, լուսավորական, հրատարակչական, մշակութային հաստատությունները պետականացվեցին: Կրթության և լուսավորության տարածման գործը լայն ծավալում ստացավ: Կառավարության հատուկ դեկրետով 16-50 տարեկան բոլոր անգրագետ և կիսագրագետ մարդիկ պարտավոր էին գրագիտություն սովորել: Գյուղերում և քաղաքներում կազմակերպվեցին անգրագիտության վերացման կենտրոններ: Սա մեծ առաջընթաց էր մարդու կրթության իրավունքի իրականացման գործում:

Հայաստանի Լուսժողկոմի 1921թ. ապրիլի՝ «Ուսուցման լեզվի և լեզուների ուսուցման մասին» հրամանագրով հայերենը հաստատվեց որպես դպրոցական դասավանդման հիմնական լեզու, իսկ ազգային փոքրամասնությունների համար (հույներ, ասորիներ, ռուսներ, ադրբեջանցիներ) դպրոցներում մտցվեց նաև ազգային լեզուների դասավանդումը²⁹:

Սկսվեց գյուղերում դպրոցական շենքերի շինարարությունը, իրականացվում էր դպրոցական դասագրքերի հայերեն թարգմանությունը և հրատարակումը: Ուսուցչական կադրերի պատրաստման նպատակով Երևանում և այլ քաղաքներում բացվեցին մանկա-

²⁹ Տես՝ Очерки истории школы и педагогической мысли народов СССР. 1917-1941 гг., глава 5 “Становление и развитие советской национальной школы”. М., 1980, т. 248:

վարժական տեխնիկումներ, իսկ 1922թ. Երևանի պետական համալսարանում սկսեց գործել մանկավարժական ֆակուլտետը: Բանվորների միջավայրից մասնագետներ պատրաստելու նպատակով համալսարանին կից կազմակերպվեց բանվորական ֆակուլտետ:

1922թ. փետրվարի 2-ին Հայկական ԽՍՀ խորհուրդների առաջին համագումարն ընդունեց Հայաստանի առաջին սահմանադրությունը: Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված էր. *«Եկեղեցին անջատվում է պետությունից՝ վերածվելով հավատացյալների մասնավոր համայնքի, իսկ դպրոցը՝ եկեղեցուց:..... Դպրոցը դառնում է սոցիալիստական դաստիարակության օրգան՝ կիրառելով արտադրական աշխատանքը որպես կրթության միջոց..... Հ. Ս. Խ. Հ. աշխատավորներին իրապես գիտություն ստանալու գործը ապահովելու համար բանվոր դասակարգին և գյուղացիությանը տրվում են լիակատար, բազմակողմանի և ձրի կրթության բոլոր հնարավորությունները»³⁰:*

Իհարկե, սահմանադրության սույն հոդվածում կրթության իրավունքը ներկայացված էր ամենաընդհանուր գծերով: Բացակայում էր կրթության տեսակների սահմանումը՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, բարձրագույն և այլն: Մյուս կողմից, կրթության իրավունքն ի սկզբանե սահմանափակված էր: Հատուկ մատնանշվում էին իրավունքի այն սուբյեկտները, որոնց էր միայն վերաբերում անվճար կրթության իրավունքը: Դրանք էին՝ բանվոր դասակարգը և գյուղացիությունը:

Կրթության և լուսավորության ոլորտում պետության մենաշնորհը հաստատելն էապես նպաստեց վերացնելու անգրագիտությունը, ապահովելու երկրի տնտեսական և տեխնիկական առաջընթացը: 1920-1930-ական թվականներին «Կուլտուրական հեղափոխության» արդյունքում հաջողվեց հիմնականում հաղթահարել անգրագիտությունը: 1940թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում գրագետների ընդհանուր թվաքանակն արդեն կազմում էր բնակչության 80%-ը³¹: Անգրագիտության բարձր տոկոս պահպանվում էր մասնավորապես Հայաստանում բնակվող քրդերի և ադրբեջանցիների շրջանում:

Կարելի է փաստել, որ Հայաստանում, հասարակության զարգացման տվյալ փուլում, կրթության իրավունքի իրականացման ոլորտում տեղի ունեցան արմատական վերափոխումներ: Կրթու-

³⁰ Տես՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 1922, էջ 2:

³¹ Տես՝ Перепись населения СССР, Госстатиздат. Москва 1940, статья Армения. էջ 463:

յունն զգալիորեն ժողովրդավարացվեց, ուսուցման բոլոր մակարդակներում այն դարձավ անվճար, սովորողներն անվճար ապահովվում էին դասագրքերով և կրթաթոշակով:

Բարձրագույն դպրոցի հիմնական նպատակ էր հռչակվում նոր մարդու դաստիարակությունը: Իրականում խնդիրն ավելի նեղ ուղղվածություն ուներ՝ հնարավորինս ավելի մեծ թվով աշխատավորների ներգրավել բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում, պատրաստել սեփական, պրոլետարական ծագում ունեցող մասնագետներ: Սա էր բանֆակների ստեղծման հիմնական պատճառը, որոնք միջնակարգ կրթություն չունեցող բանվորների և գյուղացիների երեխաներին արագացված կերպով պատրաստում էին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար: Բանֆակների շրջանավարտներն առավելություն էին ստանում բուհ ընդունվելու ժամանակ:

Անցած դարի 30-ական թվականներին ԽՍՀՄ-ում հաստատված ամբողջատիրական (տոտալիտար) ռեժիմը իր որոշակի ազդեցությունն ունեցավ նաև բուհական կրթության վրա: Բուհական կրթության ոլորտում ձևավորվեց կենտրոնացված կառավարում և վերահսկողություն: Բուհերի գործունեությունը, նախ և առաջ կրթության բովանդակությունը միասնականացվում էին և միօրինակացվում: Մտցվում էին միասնական ուսումնական ծրագրեր և միասնական դասագրքեր: Խրախուսվում էին կարգապահությունը և ենթարկվածությունը, իսկ ստեղծագործական որոնումները և գիտական կասկածանքը՝ արգելվում: Բարձրագույն կրթության բովանդակությունն ինտենսիվ կերպով գաղափարայնացվում էր:

Այսուհանդերձ, 1936թ. ընդունված ԽՍՀՄ երկրորդ Սահմանադրության մեջ ամրագրվեց ԽՍՀՄ քաղաքացիների կրթության իրավունքը: «Այդ իրավունքը ապահովվում է ընդհանուր-պարտադիր ութամյա կրթությամբ, ընդհանուր միջնակարգ պոլիտեխնիկական կրթության լայն զարգացմամբ, մասնագիտական-տեխնիկական կրթությամբ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթությամբ՝ ուսուցումը կյանքի, արտադրության հետ կապի հիմքի վրա, ամեն կերպ զարգացվող երեկոյան և հեռակա կրթությամբ, կրթության բոլոր ձևերի անվճար լինելով, պետական կրթաթոշակների համակարգով, դպրոցներում մայրենի լեզվով տարվող կրթությամբ, գործարաններում, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում աշխատավորների անվճար արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով»³²:

³² Конституция СССР, М., 1937, статья 121.

Չի կարելի չնկատել բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի ամրագրման արդյունքում կատարված մի շարք դրական տեղաշարժեր.

1. կրթության իրավունքը երաշխավորվում էր ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց սոցիալական ծագումից,

2. կրթության իրավունքը երաշխավորվում էր անխտիր բոլորի համար և բացառապես անվճար հիմունքներով,

3. սահմանվում էին կրթության տարբեր ձևեր՝ առկա, երեկոյան, հեռակա, ինչն ընդլայնում էր բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը,

4. կրթաթոշակներ էին տրվում, հատկացվում բոլոր ուսանողներին, ինչն ուժեղացնում էր նրանց սոցիալական պաշտպանվածությունը:

ԽՍՀՄ Սահմանադրության հիման վրա ընդունված միութենական հանրապետությունների սահմանադրությունները նույնպես բովանդակում էին կրթության վերաբերյալ նորմեր: Այսպես, Չայաստանի 1937թ. Սահմանադրությունն ամրագրում էր.

«Չայկական ԽՍՀ քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, անվճար կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով»³³:

Նոր Սահմանադրության ընդունումից հետո նկատվում են որոշ դրական տեղաշարժեր բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման տեսանկյունից: Սահմանադրության պահանջներից ելնելով՝ բուհերի ընդունելությունից վերացվեցին սոցիալական ծագման հետ կապված սահմանափակումները: Բարձրագույն կրթության ուղղվածությունը զուտ կիրառականից փոխվեց դեպի գիտականը և մանկավարժականը, որոշ չափով վերականգնվեց բուհերի ինքնավարությունը՝ ռեկտորների, դեկանների, գիտական խորհուրդների ընտրովիությունը:

Ընդհանուր առմամբ անցած դարի 30-40-ական թվականներին ԽՍՀՄ հանրապետություններում հսկայական գործ արվեց կրթութ-

³³ Չայկական Խորհրդային Սոցիալիստական Չանրապետության Սահմանադրություն, Երևան, 1937:

յան ցանցի ընդլայնման ուղղությամբ: Այդ ամենի արդյունքում հնարավոր եղավ արդեն 1934թ. ապահովել երկրում ընդհանուր, պարտադիր տարրական կրթությունը, իսկ 1949թ. ԽՍՀՄ ողջ տարածքում անցնել պարտադիր յոթնամյա կրթությանը: Ուստի պատահական չէ, որ կրթության սահմանադրական իրավունքի ձևակերպումը ենթարկվեց որոշակի փոփոխության և լրամշակման: Մասնավորապես ՀՍՍՀ սահմանադրության մեջ կրթության ոլորտում անցած դարի 60-70-ական թվականներին կատարված փոփոխությունների արդյունքում դրա 96-րդ հոդվածը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ.

«Հայկական ՍՍՀ քաղաքացիներն ունեն կրթության իրավունք:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր պարտադիր ութամյա կրթությամբ, միջնակարգ ընդհանուր պոլիտեխնիկական կրթության, պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության լայն զարգացմամբ՝ ուսուցումը կյանքի հետ, արտադրության հետ կապելու, երեկոյան և հեռակա կրթությունն ամեն կերպ զարգացնելու հիման վրա, ձրի կրթության բոլոր տեսակներով, պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցմամբ, գործարաններում, սովխոզներում ու կոլտնտեսություններում աշխատավորների արտադրական, տեխնիկական և ագրոնոմիական ձրի ուսուցման կազմակերպմամբ»³⁴:

Հայրենական պատերազմի տարիներին թե գյուղերում և թե քաղաքներում կազմակերպվեցին երեկոյան ուսուցման դպրոցներ³⁵: Հայաստանում երեկոյան և հեռակա ուսուցման համակարգն էլ ավելի ընդլայնվեց հետպատերազմյան շրջանում: Դա կապված էր ոչ միայն բանակից զորացրվածների՝ կիսատ թողած ուսումը շարունակելու անհրաժեշտության, այլև աշխարհի տարբեր երկրներից մայր հայրենիք հայերի զանգվածային ներգաղթի հետ: 1946-1948թթ. ընթացքում Հայաստանում բնակություն հաստատեցին մոտ կես միլիոն հայեր³⁶: Նրանցից շատերը լիարժեք կրթություն չունեին, մեծ թիվ էին կազմում ընդհանրապես գրագիտություն չունեցողները:

³⁴ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 1975, էջ 67 (Գլուխ 8, հոդված 96):

³⁵ “Об обучении подростков, работающих на предприятиях”. Постановление СНК СССР, 15 июля 1943. “Об организации вечерних школ сельской молодежи”. Постановление СНК СССР, 6 июля 1944. См. В книге: народное образование в СССР. Общеобразовательная школа. М., 1974, с. 147-149, 391-393.

³⁶ Հայ ժողովրդի պատմություն, Լույս, Երևան, 1970, հատ. 4, էջեր 382-384:

Հայրենադարձ երիտասարդներից շատերն աշխատանքը համատեղում էին երեկոյան ուսուցման հետ: Բավական է նշել այն փաստը, որ 1941-1975թթ. ընթացքում Հայաստանում երեկոյան և հեռակա դպրոցներում միջնակարգ կրթություն են ստացել 97363, իսկ թերի միջնակարգ կրթություն՝ 83500 աշխատող երիտասարդներ³⁷:

Խորհրդային կրթության համակարգը որոշակի առաջընթաց ապրեց 70-ական թվականներին և 80-ական թվականների առաջին կեսին: Ավարտին մոտեցավ տասնամյակների ձգձգվող ընդհանուր միջնակարգ կրթությանն անցնելու գործընթացը: 1972թ. հունիսի 20-ի ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի ընդունած՝ «Ավարտել անցումը երիտասարդության ընդհանուր միջնակարգ կրթությանը և հանրակրթական դպրոցի հետագա զարգացման մասին»³⁸ որոշմամբ խնդիր դրվեց մինչև 9-րդ հնգամյակի վերջը (1975թ.) ընդհանուր միջնակարգ կրթությունը պարտադիր դարձնել ԽՍՀՄ ողջ տարածքում: Պետական և կուսակցական բոլոր մարմինների համատեղ ջանքերի շնորհիվ հնգամյակի վերջին այդ անցումը հիմնականում ավարտվեց: Երիտասարդության ավելի քան 96%-ն արդեն սովորում էր միջնակարգ կրթություն ապահովող ուսումնական հաստատություններում:

Հանրակրթության ոլորտի զարգացման այս ընդհանուր քաղաքականության տրամաբանական շարունակությունը պետք է հանդիսանար բուհական կրթության ոլորտի բարելավումը: Դրան էին նպատակաուղղված ԽՍՀՄ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի 1972թ. հուլիսի 18-ի «Երկրում բարձրագույն կրթության հետագա կատարելագործման միջոցառումների մասին»³⁹, 1978թ. ապրիլի 6-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական աշխատանքի արդյունավետության բարձրացման մասին»⁴⁰, 1979թ. հունիսի 29-ի «Բարձրագույն դպրոցի հետագա զարգացման և մասնագետների պատրաստման որակը բարձրացնելու մասին»⁴¹ ընդունած որոշումները:

³⁷ Хачикян Э. Г., Обучение Трудящейся молодежи общеобразовательным знаниям в Армении (1941-1975), Автореферат канд. дисс. Ереван 1984, с. 20.

³⁸ Стu՝ КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК. 8-ое издание. М., 1978, т. 11, էջեր 94-102:

³⁹ Стu՝ նույն տեղում էջեր 126-134:

⁴⁰ КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК. 8-ое издание. М., 1981, т. 13 էջեր 67-74:

⁴¹ Стu՝ նույն տեղում, М., 1981, т. 13, էջեր 395-403:

Կրթության իրավունքի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ուներ 1973թ. հունիսի 19-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված «ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների ժողովրդական կրթության օրենսդրության հիմունքները» օրենքը⁴²: Նրանցում ամրագրվում էր, որ ԽՍՀՄ-ում ստեղծված է կրթության նոր՝ ավելի առաջադիմական և ժողովրդավարական համակարգ: Այն դիտարկվում էր որպես լուրջ նվաճում ԽՍՀՄ բարձրագույն և միջնակարգ դպրոցի և ընդհանրապես կրթության ողջ համակարգի զարգացման համար:

Օրենսդրության հիմունքներում շարադրված էին ԽՍՀՄ ժողովրդական կրթության գլխավոր սկզբունքները. բոլոր քաղաքացիների հավասարությունը կրթություն ստանալու հարցում, ուսումնական բոլոր հաստատությունների պետական և հասարակական բնույթը, ուսումնառության լեզվի ընտրության ազատության հարցը, կրթության բոլոր ձևերի անվճար լինելը, ժողովրդական կրթության համակարգի միասնականությունը:

Օրենքը սահմանում էր կրթության բոլոր աստիճանների և ոլորտների հաստատությունների գործունեության կարգը, տարբեր ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող ուսուցման տեսակները և ձևերը, ԽՍՀՄ և միութենական հանրապետությունների իրավասությունների շրջանակը ժողովրդական կրթության կառավարման ոլորտում:

Հիմունքներում առանձին՝ VIII բաժինը նվիրված էր բարձրագույն կրթությանը: Բարձրագույն դպրոցի գործունեության հիմնական նպատակը բարձրորակ մասնագետների պատրաստման ապահովումն էր: Նրանց գիտական պատրաստվածության և քաղաքական հասունության մակարդակից են կախված ողջ երկրի ժողովրդական կրթության, գիտության և մշակույթի զարգացման հաջողությունները: Մասնավորապես, 40-րդ հոդվածը սահմանում էր կրթության իրականացման ձևերը՝ առկա, հեռակա, երեկոյան, իսկ 41-րդ - հոդվածը՝ բարձրագույն կրթության գլխավոր խնդիրները.

ա) բարձրորակ մասնագետների պատրաստումը, որոնք տիրապետում են մարքս-լենինյան տեսությանը, ունեն խոր տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ընտրված մասնագիտության գծով, ինչպես նաև մասսայական-քաղաքական ու դաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ.

⁴² Стu` Высшая школа. Сборник основных постановлений, приказов и инструкций. /Под ред. В. И. Войленко. М., 1978, էջեր. 11-13:

բ) ուսանողների մոտ բարոյական բարձր որակների, կոմունիստական գիտակցականության, կուլտուրայի, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ձևավորումը, և այլն:

Բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի ոլորտում խորհրդային իշխանության 60 տարիների ընթացքում տեղի ունեցած զարգացումների արդյունքներն ամրագրվեցին նոր՝ 1977թ. ԽՍՀՄ երրորդ Սահմանադրության մեջ⁴³:

Սահմանադրության 25-րդ հոդվածն ամրագրում էր, որ ԽՍՀՄ-ում գոյություն ունի կրթության միասնական համակարգ: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի և զարգացած, հասուն սոցիալիստական հասարակարգի կառուցման արդյունքում այն վերածվել է հզոր, աշխարհում ամենաառաջադիմական կրթության համակարգի:

Սահմանադրության 45-րդ հոդվածն արձանագրում էր, որ ԽՍՀՄ բոլոր քաղաքացիներն ունեն կրթության իրավունք: «Այդ իրավունքն ապահովվում է կրթության բոլոր տեսակների անվճարությամբ, երիտասարդության ընդհանուր պարտադիր միջնակարգ կրթության իրականացմամբ, կյանքի, արտադրության հետ ուսուցման կապի հիման վրա պրոֆեսիոնալ-տեխնիկական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության լայն զարգացմամբ, հեռակա և երեկոյան կրթության զարգացմամբ, սովորողներին և ուսանողներին պետական կրթաթոշակներ և արտոնություններ տալով, դպրոցական դասագրքերի անվճար տրամադրմամբ, դպրոցում մայրենի լեզվով ուսուցման հնարավորությամբ, ինքնակրթության պայմանների ստեղծմամբ»:

Կրթության իրավունքն ամրագրող սահմանադրական դրույթների վերլուծությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ 1936թ. ԽՍՀՄ Սահմանադրության համեմատ 1977թ. ԽՍՀՄ Սահմանադրության մեջ կրթության իրավունքի իրականացման երաշխիքները որոշ չափով ավելացել էին. ուսանողների համար նախատեսվում էր ոչ միայն կրթաթոշակ, այլև որոշ արտոնություններ, իրականացվում էր դասագրքերի անվճար բաշխում և այլն:

Հայկական ԽՍՀ 1978թ. Սահմանադրության 25-րդ հոդվածն արտացոլում էր ԽՍՀՄ Սահմանադրության 45-րդ հոդվածի բովանդակությունը⁴⁴: Մասնավորապես, 25-րդ հոդվածն ամրագրում էր. «Հայկական ԽՍՀ-ում գոյություն ունի և կատարելագործվում է ժո-

⁴³ Конституция (Основной Закон) Союза Советских Социалистических Республик. М., 1977.

⁴⁴ Հայկական խորհրդային սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), Երևան, 1978, հոդված 43:

ղովրդական կրթության միասնական սիստեմ, որն ապահովում է քաղաքացիների հանրակրթական ու պրոֆեսիոնալ պատրաստությունը, ծառայում երիտասարդության կոմունիստական դաստիարակությանը, նրա հոգևոր ու ֆիզիկական զարգացմանը, նրան պատրաստում է աշխատանքի և հասարակական գործունեության համար»⁴⁵:

Սահմանադրության մեջ ամրագրված կրթության ոլորտի ձեռքբերումները պայմանավորված էին արմատավորված այնպիսի դրվածքով, որ տարեցտարի անընդհատ պետք է ավելանա բուհերի և դրանցում սովորողների թվաքանակը, հատկապես տեխնիկական մասնագիտությունների մասով: Դրանով ընդգծվում էր սոցիալիստական կրթակարգի առավելությունը կապիտալիստական երկրների համեմատ: «ԽՍՀՄ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են չորս անգամ ավելի ուսանողներ, քան Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում և Իտալիայում միասին վերցրած, որտեղ սովորում է մոտ 600 հազար ուսանող: Ինժեներների պատրաստման գծով ԽՍՀՄ-ը վաղուց արդեն առաջ է անցել ԱՄՆ-ից: 1958թ. ԽՍՀՄ-ում պատրաստվել են 94 հազար ինժեներներ, իսկ ԱՄՆ-ում՝ ընդամենը 35 հազար ինժեներներ»⁴⁶: Նման ուղին, իհարկե, անխուսափելիորեն տանում էր տնտեսության տարբեր ճյուղերում մասնագետների թվաքանակի անհամամասնությանը: Այսպես, ԽՍՀՄ-ում ինժեներներ պատրաստում էին մի քանի անգամ ավելի քան ԱՄՆ-ում, իսկ հոգեբաններ և սոցիոլոգներ՝ մի քանի անգամ պակաս: Արդյունաբերության և գյուղատնտեսության գծով դիպլոմավորված մասնագետների թվաքանակը պահանջվող թվաքանակից ավելին էր⁴⁷:

Խորհրդային կրթական համակարգի գոյության վերջին փուլի առավել նշանակալից երևույթներից էին հանրակրթական և մասնագիտական դպրոցի գործունեության արմատական բարեփոխմանն ուղղված միջոցառումներն ու իրավական փաստաթղթերը, որոնց նպատակն էր դպրոցի գործունեությունը բարձրացնել որակապես նոր մակարդակի՝ հասարակական կյանքի զարգացման խնդիրներին և պահանջներին համապատասխան: 1984թ. ապրիլի 12-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն ընդունեց «Հանրակրթական և մասնագիտական դպրոցի բարեփոխման հիմնական ուղղությունները»

⁴⁵ Նույն տեղում, հոդված 25:

⁴⁶ Известия, 1960, 4 февраля.

⁴⁷ Стu՝ Народное образование, наука и культура в СССР. Статистический сборник ЦСУ. М., 1977, էջ 56:

փաստաթուղթը⁴⁸: Արդեն նկատելի դարձած սոցիալ-քաղաքական և տնտեսական ճգնաժամի նշաններն ստիպում էին լուրջ քայլեր ձեռնարկել խորհրդային համակարգի ամրապնդման և այն ավելի ճկուն դարձնելու ուղղությամբ:

80-ական թվականների կեսերից սկսված Վերակառուցման քաղաքականությունն անդրադարձավ նաև կրթության ոլորտին: 1988թ. դեկտեմբերին մշակվեցին և Կրթության բնագավառի աշխատակիցների համամիութենական համագումարի կողմից հավանություն ստացան կրթության համակարգի նոր հիմնական սկզբունքները՝ ժողովրդավարացումը, կրթության մեջ բազմակարծությունը, բազմատեսակությունը, տարբերակվածությունը և այլընտրանքայնությունը, կրթության անընդհատությունը: Այս ամենն իր նույնաման դրսևորումն ունեցավ նաև Հայաստանում:

Բարձրագույն կրթության ոլորտում ձեռնարկվող բարեփոխումների հիմնական բովանդակությունը պետք է հանդիսանար կրթական ծրագրերի հումանիզացումը և գիտականությունը, բուհերի կառավարման ռացիոնալիզացիան և ապակենտրոնացումը, կրթության բազմազանեցումը (դիվերսիֆիկացումը) և բազմակարգակության ներածումը, բուհերի ինքնավարության և դեմոկրատացման հետագա զարգացումը: Սակայն փաստաթղթի դրույթների և գաղափարների մեծ մասն այդպես էլ մնաց թղթի վրա, քանի որ սկսված Վերակառուցման քաղաքականությունն իր առաջադրած նպատակներին չձառայեց: Վրա հասած անկառավարելիության, վարչատնտեսական տարածայնությունների, ազգային խնդիրների սրման, գաղափարաքաղաքական ներքին և արտաքին ճգնաժամի իրավիճակը հանգեցրեց 1991թ. ԽՍՀՄ փլուզմանը: Փլուզվեց և խորհրդային միասնական կրթական համակարգը:

Խորհրդային կրթական համակարգի 70-ամյա անցած ուղու վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզորոշ տեսնել այդ համակարգի ինչպես թույլ, այնպես էլ ուժեղ կողմերը, դիտարկել դրան բնորոշ և՛ թերությունները, և՛ առավելությունները:

Խորհրդային Հայաստանում գործող միասնական կրթական համակարգն ուներ կառավարման ավելի նպաստավոր հնարավորություններ և դրանից բխող որոշակի առավելություններ: Այն հնարավորություն էր տալիս՝

ա) դյուրորեն ղեկավարել և վերահսկել բարձրագույն կրթության ողջ համակարգը,

⁴⁸ О реформе общеобразовательной и профессиональной школы. Сб. Документов и материалов. М., 1984, էջեր 37-63:

բ) վերահսկել բարձրագույն կրթության ոլորտի ցանկացած առանձին օղակի գործունեությունը,

գ) կենտրոնացնել պետական ֆինանսական միջոցների ծախսը և ապահովել բարձրագույն կրթության ոլորտի ավելի լայն ֆինանսավորումը,

դ) կիրառել գիտելիքների մատուցման միասնական համակարգ,

ե) սահմանել դասավանդման և գնահատման միասնական չափորոշիչներ, ձևեր և մեթոդներ,

զ) ապահովել բոլոր սովորողներին միատեսակ ծրագրերով և դասագրքերով,

է) պլանավորել երկրի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ մասնագետների թվաքանակը,

ը) պատրաստված բոլոր մասնագետներին ապահովել համապատասխան մասնագիտական աշխատանքով,

թ) ուսանողության 90%-ին ապահովել կրթաթոշակներով:

Խորհրդային Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում ամեն ինչ լավ պլանավորված էր, հիմնավորված և փաստարկված՝ կային հարկային արտոնություններ, սահմանված չափորոշիչներ և ֆինանսավորման կառուցակարգեր: Բոլոր տիպի կրթական հաստատություններն օգտագործում էին կրթության տվյալ տեսակին և մակարդակին համապատասխան նույն կրթական ծրագրերը: Պլանավորված էին ուսումնական հաստատությունների կողմից կատարվող բոլոր ֆինանսական ծախսերը: Ֆինանսավորումը կատարվում էր կենտրոնացված կարգով՝ միայն բյուջեից, կրթությունն ընդհանուր էր և անվճար բոլորի համար:

1991թ. սեպտեմբերի 21-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում հռչակված անկախ Հայաստանի (երրորդ) Հանրապետությունը ժառանգեց խորհրդային Հայաստանի կրթության համակարգը՝ իր դրական և բացասական կողմերով հանդերձ: Անկախության առաջին տարիներին, նոր կարգերին համապատասխան իրավական – սահմանադրական ակտերի բացակայության պայմաններում անգամ կառավարությունը որոշակի գործնական քայլեր ձեռնարկեց բարձրագույն կրթության իրավունքի ընդլայնման ուղղությամբ: Մասնավորապես, հնարավորություն տրվեց դրական գնահատականներ ստացած դիմորդներին ընդունվել բուհ. սրահով, սակայն, ընդունելության քննությունների մրցույթը կորցրեց իր իրական դերը, և դա չէր կարող չազդել ուսանողների որակի վրա:

1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվեց անկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը նոր մոտեցում որդեգրեց բարձրագույն կրթու-

թյան սահմանադրական իրավունքի հարցում: Սահմանադրության 35-րդ հոդվածում ամրագրվեց. «Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք»: Սահմանադրության այս նորմն ավելի մանրամասն արտացոլվեց 1999թ. ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքում: Սահմանադրական նշված նորմը որոշակի փոփոխության ենթարկվեց 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով կատարված սահմանադրական փոփոխությունների համատեքստում: ՀՀ Սահմանադրության փոփոխված տեքստում բարձրագույն կրթության իրավունքի դրույթներն այժմ արդեն ամրագրված են 39-րդ հոդվածում⁴⁹ և հնչում են այլ ձևակերպմամբ՝ ավելի համահունչ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներին: Ամփոփելով Հայաստանում բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի վերլուծությունը, կարելի է փաստել հետևյալը.

Հայաստանում բարձրագույն կրթության համակարգն ունի ավելի քան 700 տարվա պատմություն: Դեռ XVIII դարում Շահամիր Շահամիրյանի կազմած ապագա անկախ Հայաստանի Սահմանադրության նախագծում հիմնավորվում էր պետության պարտականությունը հոգալու կրթության և գիտության խնդիրները⁵⁰: Սակայն բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքն իրավականորեն ձևակերպում ստացավ միայն XX դարի սկզբներին՝ Հայաստանի պետական անկախության վերականգնումից և Հայաստանի համալսարանի հիմնադրումից հետո: Դա պայմանավորված էր այն իրողությամբ, որ, ի տարբերություն մարդու մյուս իրավունքների, կրթության և, մասնավորապես, բարձրագույն կրթության իրավունքը, որպես այդպիսին, ցանկացած երկրի կողմից ճանաչվում է հասարակության զարգացման ավելի բարձր աստիճանում:

Հայաստանում խորհրդային իշխանության գոյության առաջին տասնամյակները կարելի է համարել բարձրագույն կրթության իրավունքի ձևավորման ժամանակաշրջանը: Այդ իրավունքը թեև ամրագրված չէր երկրի Սահմանադրությամբ, սակայն իրականացվում էր ԽՍՀՄ Սահմանադրության մեջ ամրագրված դրույթներով, որոնք գերակա ուժ ունեին Հայաստանի տարածքում:

⁴⁹ Այս մասին ավելի մանրամասն տես աշխատանքի երկրորդ գլխում:

⁵⁰ Տես՝ Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, «Որոգայթ փառաց», հոդվածներ 127, 158, 382: Երևան, 2002:

Հայաստանում բարձրագույն կրթության իրավունքն ամրագրվեց 1937թ. ՀԽՍՀ Սահմանադրության մեջ: Վերացվեցին նախկինում տեղ գտած սոցիալական սահմանափակումները, բարձրագույն կրթությունը դարձավ անվճար և մատչելի բոլորի համար:

60-80-ական թվականներին անվճար բարձրագույն կրթությունն իրապես հասանելի դարձավ հասարակության բոլոր խավերի համար: Ուսանողական կրթաթոշակների և սոցիալական լայն արտոնությունների համակարգն զգալիորեն մեծացրեց բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները և ուսանողության թվաքանակը:

Վերակառուցման կարճատև ժամանակամիջոցը որոշ նորամուծություններ բերեց կրթության ոլորտում: Առաջին անգամ իրավական փաստաթղթերում ամրագրվեց կրթության կազմակերպման այլընտրանքայնության սկզբունքը՝ վճարովի կրթության և ոչ պետական բարձրագույն կրթական հաստատությունների գոյությունը:

Հայաստանի պետական անկախության վերականգնումից հետո, Սահմանադրության մեջ ամրագրվեցին վաղուց արդեն միջազգային ճանաչում ստացած բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի պայմաններն ու չափանիշները:

§ 3. Բարձրագույն կրթության իրավունքի տեղը մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգում

Անկախություն ձեռք բերելուց ի վեր Հայաստանում ընթացող արմատական վերափոխումներն առաջին պլան են մղում համամարդկային արժեքների գերակայության խնդիրը՝ մարդու անկապտելի իրավունքների և ազատությունների ճանաչումը: Ներկա պայմաններում մարդու համակողմանի զարգացումը դառնում է ոչ միայն բարձրագույն նպատակ, այլև հասարակության մեջ նոր իրավակարգի ձևավորման հիմնական աղբյուրը: Գնալով աճում են կրթության դերն ու նշանակությունը: Ժամանակակից չափանիշներին համապատասխան, որակյալ մասնագիտական կրթությունը նոր հեռանկարներ է բացում մարդու բազմակողմանի զարգացման համար: Այդ առումով, մարդու իրավունքների խնդրի համակողմանի ուսումնասիրությունն ստանում է ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն:

Կրթության իրավունքը, ինչպես արդեն նշել ենք, իր բովանդակությամբ հանդիսանում է ավելի ընդհանուր իրավունքի՝ մարդու զարգացման իրավունքի բաղկացուցիչ մասը: Այս առումով, հանդիսանալով մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ կրթության իրա-

վունքը որոշակի իրավական ձևակերպում է ստացել ՀՀ Սահմանադրությունում և հանդիսանում է անձի իրավական կարգավիճակի կառուցվածքային կարևոր բաղադրատարրը:

Կրթության սահմանադրական իրավունքն առանձին հնարավորությունների հանրագումար թէ, այլ սեփական գիտելիքներն ուսումնառության բոլոր մատչելի ձևերով մշտապես կատարելագործելու հնարավորություն: Ուսումնառության կոնկրետ ձևն ընտրում է ինքը՝ քաղաքացին, տարբեր գործոններից ելնելով՝ տարիք, կրթական մակարդակ, մասնագիտական պատրաստվածություն և այլն: Այսպիսով, եթե կրթության իրավունքի իրականացումը որոշակիորեն կախված է լրացուցիչ իրավական գործոններից, ապա *կրթության սահմանադրական իրավունքն ունի համընդհանուր բնույթ*: ՀՀ Սահմանադրությունը ճանաչում է յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը:

Կրթության սահմանադրական իրավունքի տարատեսակներից է բարձրագույն կրթության իրավունքը, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39-րդ հոդվածում. «Յուրաքանչյուր քաղաքացի ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք՝ օրենքով սահմանված կարգով: Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին»:

Բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի էությունը պարզաբանելու համար փորձենք վերլուծել այս սահմանադրական իրավական նորմի բովանդակությունը և վեր հանել դրա հարաբերակցությունը ՀՀ քաղաքացու այլ իրավունքների և ազատությունների հետ:

ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարդու բոլոր իրավունքներն ունեն ընդհանուր հատկանիշ՝ դրանք բոլորը սուբյեկտիվ իրավունքներ են, այսինքն՝ անհատական են, պատկանում են ոչ միայն բոլոր քաղաքացիներին, այլև ամեն մի առանձին մարդու: Սուբյեկտիվ իրավունքների այս հատկանիշն ընդգծել են տարբեր հետազոտողներ՝ նշելով, որ կրթության սահմանադրական իրավունքը «ամեն քաղաքացու սուբյեկտիվ իրավունքն է, որը նա օգտագոր-

ծում է պետության հաշվին ուսումնառություն ստանալու տարբեր ձևերով»⁵¹:

Բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի իրականացումը ՀՀ քաղաքացիների կողմից դրսևորվում է մի շարք իրավագործությունների ձևով, այդ թվում՝

1. *բարձրագույն ուսումնական հաստատությունն ընտրելու իրավունքը*, ինչը ենթադրում է դիմորդի լիակատար ինքնուրույնությունն իր ապագա մասնագիտության, բուհի տեսակի և դրա գտնվելու վայրի ընտրության, ինչպես նաև մի բուհից մեկ ուրիշը տեղափոխվելու հարցում,

2. *բուհ ընդունվելու մրցույթին այլ դիմորդների թվում հավասար պայմաններով մասնակցելու իրավունքը*, եթե, իհարկե, քաղաքացիների առանձին խմբերի համար պետության կողմից հատուկ արտոնություններ չեն սահմանվել (միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, զորացրված զինծառայողներ և այլն),

3. *ուսումնառության ձևի ընտրության իրավունքը*, երբ դիմորդն ինքն է որոշում, թե բուհում սովորելու որ տեսակն է ընտրում՝ առկա, հեռակա, երեկոյան, էքստեռն, ինչպես նաև ներկայումս արագ տարածվող հեռավար վճարովի, թե անվճար ձևերով,

4. *մի քանի բուհերում ուսումնառություն անցնելու իրավունքը*, երբ անձն իր ցանկությամբ կարող է գործերը հանձնել և սովորել միաժամանակ մեկից ավելի բուհերում՝ ուսումնառության իր ընտրած տարբեր ձևերի կիրառմամբ,

5. *ուսանողի կարգավիճակով բուհում սովորելու իրավունքը*, ինչը նշանակում է բուհ ընդունվելով՝ անձի անցումը որակապես նոր կարգավիճակի՝ յուրահատուկ իրավունքներով և պարտականություններով,

6. *բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ ստանալու իրավունքը*, ինչն առաջին հերթին ենթադրում է բուհի պարտականությունն ուսուցումը վարել որակյալ մասնագետների միջոցով և սահմանված պետական կրթական չափորոշիչներին համապատասխան,

7. *ուսումնառության տեսակը փոխելու իրավունքը*, երբ սովորողի անձնական կյանքում տեղի են ունենում իրավիճակային փոփոխություններ, ինչի արդյունքում նա ստիպված է լինում փոխել ուսումնառության ձևը (օրինակ՝ ուսումը համատեղում է աշխատանքի հետ),

⁵¹ Фарбер И. Е. Свобода и права человека в Советском государстве. Саратов, 1974, էջ 98:

8. *ցանկացած պահի ուսումնառությունը դադարեցնելու և հետագայում իր ուսանողական իրավունքները վերականգնելու հնարավորության իրավունքը*, քանի որ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելը իրավունք է և ոչ թե պարտականություն, և ոչ ոք իրավասու չէ ստիպելու մարդուն սովորել այն բուհում և այն մասնագիտությամբ, որն ինքը չի ցանկանում, ուստի տվյալ սովորողը կարող է ինչպես բուհից հեռանալ, այնպես էլ որոշ ժամանակ անց վերադառնալ,

9. *մի քանի տեսակ բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը*, քանի որ կյանքի ընթացքում մարդը կարող է կարիք ունենալ փոխելու մասնագիտությունը, ուստի պետք է հնարավորություն ունենա ստանալու երկրորդ, երրորդ, գուցե և չորրորդ բարձրագույն կրթությունը,

10. *բարձրագույն կրթության իր իրավունքը սահմանափակող գործողությունները և որոշումները դատարանում բողոքարկելու իրավունքը*, երբ մարդը հնարավորություն ունի պաշտպանելու Սահմանադրությամբ իրեն վերապահված բարձրագույն կրթության իրավունքը:

Նշված իրավագործությունների ամբողջությունը Հայաստանում բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի բովանդակությունն է, ինչ յուրաքանչյուր ոք կարող է իրականացնել ցանկացած կոնկրետ ձևով: Այդ իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների համակարգում դասակարգման համատեքստում զբաղեցնում է կարևոր տեղ:

Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների դասակարգման խնդիրը վերջին տարիներին նկատելի տեղ է զբաղեցնում հատկապես ռուսական իրավաբանական դպրոցի ներկայացուցիչների հետազոտություններում: Իրենց աշխատություններում այս խնդրին անդրադարձել են Ն. Ս. Բոնդարը, Լ. Դ. Ուոդինը, Ս. Ա. Գլոտովը, Լ. Ի. Գլուխարյովան, Գ. Ն. Կոմկովան, Ե. Ա. Լուկաշևան, Ն.

Ի. Մատուզովը, Ա. Ս. Մորդավեցը, Ռ. Ա. Մյուլլերսոնը, Ֆ. Ս. Ռուդինսկին, Ի. Ե. Նարբերը, Բ. Ս. Էբզեևը և այլոք⁵²:

Իրավաբանական գիտության մեջ ընդունված է մարդու իրավունքները երեք սերնդի բաժանելը: Նման դասակարգումն արդյունք է մշակված չափանիշների և վարքագծի կանոնների երկարատև պատմական զարգացման, որոնք ժամանակակից հասարակության համար համարվում են քաղաքակրթվածության ընդհանուր մակարդակի բարձրացման, մարդկանց բարեկեցության աճի և մշակույթի ու լորտում ձեռք բերված նվաճումների չափանիշներ⁵³:

Կրթության իրավունքը՝ ընդհանրապես, և բարձրագույն կրթության իրավունքը՝ մասնավորապես, հետազոտողների մեծ մասի համոզմամբ վերաբերում է մարդու երկրորդ սերնդի իրավունքներին, որոնք սկսեցին հռչակվել տարբեր երկրների սահմանադրություններում միայն 20-րդ դարի սկզբներից: Մարդու երկրորդ սերնդի իրավունքների բնորոշ գիծն այն է, որ դրանց իրականացման համար պահանջվում է պետության կոնկրետ գործողություններ: Լ. Ի. Գլուխարյովայի դիպուկ արտահայտությամբ՝ «Մարդու իրավունքների երկրորդ սերունդը մարմնավորեց սոցիալապես կողմնորոշված պետության արժեքները, կապեց մարդկանց պետության հետ, բարձրացնելով վերջինիս հովանավորչական դերակատարումը, հատկա-

⁵² Сту` Фарбер И. Е. Свобода и права человека в Советском государстве, Саратов, 1974; Гулиев В. Д., Рудинский Ф. М., Демократия и достоинство личности, М., 1983; Мюллерсон Р. А. Права человека: идеи, нормы, реальность, М., 1991; Его же: Права человека: итоги века, тенденции, перспективы, /Отв. ред. Е. А. Лукашева, М., 2002; Эбзеев Б. С. Конституция. Демократия. Права человека. Москва-Черкесск, 1992; Бондарь Н. С., Права человека и Конституция России: трудный путь к свободе. Ростов-на-Дону, 1996; Морадвец А. С. Социально-юридический механизм обеспечения прав человека и гражданина, Саратов, 1996; Воеводин Л. Д. Юридический статус личности в России. М., 1997; Глухарева Л. И. Современные проблемы теории прав человека, М., 2004; Комкова Г. Н. Конституционный принцип равенства прав и свобод человека в России, Саратов, 2002; Матузов Н. И. Актуальные проблемы теории права, Саратов, 2003; Эбзеев Б. С. Конституция. Демократия. Права человека. Москва-Черкасс, 1992.

⁵³ Эбзеев Б. С., Соблюдение и защита прав человека – обязанность государства // Теория государства и права. Саратов, 1995, էջեր 195-198.

պես նրանց նկատմամբ, ում սպառնում է վտանգ լիբերալ հասարակության ազատության օվկիանոսում»⁵⁴:

Դեռևս 1905թ. Յեյդելբերգի համալսարանի պրոֆեսոր Գեորգ Ելինեկն ուրվագծեց մարդու հիմնական իրավունքները որպես սուբյեկտիվ / անձնական իրավունքների համակարգ: Ելինեկն առաջարկում էր տարբերակել հիմնական իրավունքների կրողի երեք կարգավիճակ՝ բացասական (*status negativus*), ակտիվ (*status activus*) և դրական (*status positivus*): Ընդ որում, բացասական կարգավիճակի ներքո նա հասկանում էր պետության ոտնձգություններից մարդու ազատ լինելու իրավունքը, ակտիվ կարգավիճակի ներքո՝ մարդու իրավունքը մասնակցելու պետության կողմից որոշումներ ընդունելու գործընթացին, իսկ դրական կարգավիճակի ներքո՝ պետության կողմից որոշակի նյութական պարտավորությունների կատարումը⁵⁵:

Ի տարբերություն մարդու իրավունքների առաջին սերնդի, որոնք արտացոլում են անձի շահերին պետության միջամտության սահմանը, երկրորդ սերնդի մարդու իրավունքները պատկանում են դրական կարգավիճակի (*status positivus*) իրավունքներին, այսինքն՝ պարտադրում են պետությանը մասնակից դառնալ մարդկանց իրավունքների /կարգավիճակի/ կայացմանը՝ սահմանադրությամբ գծված շրջանակներում:

Երկրորդ սերնդի իրավունքներն արտացոլում են պետության և անհատի փոխհարաբերությունների պատմականորեն բոլորովին այլ աստիճան, որը բնութագրվում է քաղաքացիների նկատմամբ պետության սոցիալ-տնտեսական որոշակի պարտավորություններով: Այս մասին Ն. Վ. Կոլոտովան գրում է. «Մարդու առաջին սերնդի իրավունքները նպատակաուղղված են ազատության արժեքների ճանաչմանը և պաշտպանությանը ձևական հավասարության սկզբունքի իրականացման միջոցով: Իսկ սոցիալ-տնտեսական իրավունքների հիմքում ընկած է պետության կողմից բնակչության առանձին կատեգորիաների սոցիալական պաշտպանության իրականացման անհրաժեշտության ճանաչումը ազգային եկամտի վերաբաշխման, սոցիալական անհավասարության «հավասարեցման» միջոցով»⁵⁶: Մեր կարծիքով մեջբերված սահմանումը ամբողջական

⁵⁴ Глухарева Л. И. Современные проблемы теории прав человека, М., 2004, էջ 98:

⁵⁵ Сту` История политических и правовых учений XIX века, М., 1993, էջեր 30-32:

⁵⁶ Сту` Колотова Н. В. Права человека //Государство и право, 2001, с. 5, էջեր 99-100:

կերպով բնութագրում է բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի ներկայիս ընթացումը և հիմնավորում է դրա պատկանելությունը իրավունքների երկրորդ սերնդին:

Սակայն այս խնդրի վերաբերյալ գրականության մեջ առկա է նաև այլ տեսակետ: Գ. Յու. Կուրսկովան գտնում է, որ կրթության իրավունքը պատկանում է մարդու իրավունքների երրորդ սերնդին՝ մարդկանց համերաշխության իրավունքներին, քանի որ այն պետք է դիտարկվի ոչ միայն որպես անհատական իրավունք, այլ նաև որպես կոլեկտիվ իրավունք, որն իրականացվում է կոլեկտիվ ձևերով, միասնական շահերի շուրջ համախմբված տարբեր ուղղվածության ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումների մասնակցությամբ⁵⁷: Կարծում ենք, որ տվյալ դեպքում հեղինակը կատարել է իրավունքների և ազատությունների դասակարգման երկու տարբեր մոտեցումների միախառնում. դրանց հռչակման հաջորդականությունը (մարդու իրավունքների երեք սերունդները) և սուբյեկտի կողմից դրանց իրականացման հնարավորությունները (անհատական և կոլեկտիվ իրավունքներ)⁵⁸, ինչը, մեր կարծիքով, ճիշտ մոտեցում չէ:

Այսօր առավել ճանաչում է ստացել այն տեսակետը, որ իրավունքներն ու ազատությունները պետք է ենթակարգվեն այնպես, որ «մարդը և քաղաքացին կյանքի բոլոր ասպարեզներում գտնվեն իրավունքների, ազատությունների և պարտականությունների միասնության ու տարբերակման կենտրոնում»⁵⁹: Այս չափանիշներից ելնելով՝ Լ. Դ. Վոեվոդին առանձնացնում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հետևյալ հիմնական տեսակները.

1. անձնական անվտանգության և մասնավոր կյանքի ոլորտում,
2. պետական և հասարակական-քաղաքական կյանքի ոլորտում,
3. տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ոլորտում⁶⁰:

⁵⁷ Стu` Курскова Г. Ю. Право на образование //Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации: Учебник для вузов /Под ред. О. И. Тиунова, М., 2005, էջ 252:

⁵⁸ Մարդու իրավունքների առավել ամբողջական դասակարգման վերաբերյալ տես` Конституционное право России в вопросах и ответах: Учебно-методическое пособие / Под ред. А. В. Малько, Изд. 3-е, М., 2005, էջ 75:

⁵⁹ Стu` Воеводин Л. Д. Юридический статус личности в России, М., 1997, էջ 184:

⁶⁰ Стu` նույն տեղում:

Անկասկած է, որ բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը դասվում է իրավունքների երրորդ խմբի՝ տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի ոլորտին: Սակայն, անկասկած է նաև, որ տվյալ իրավունքը սերտորեն կապված է մարդու անձնական և քաղաքական իրավունքների հետ: Ինչպես դիպուկ նկատում է Բ. Ա. Կիստյակովսկին՝ «Քաղաքական և անձնական ազատությունները, ըստ էության, հանդիսանում են սուբյեկտիվ հանրային իրավունքներ, նրանց առավելապես բնորոշ այն անհատականացումը և անհատի հետ այնպիսի կապը, որոնք ամեն մի սուբյեկտիվ իրավունքի հիմնական բնորոշիչն են հանդիսանում»⁶¹:

Անձնական (քաղաքացիական) իրավունքները մարդու բնական, հիմնարար անկապտելի իրավունքներն են: Դրանք պատկանում են քաղաքացիներին որպես անհատներ, ովքեր գտնվում են պետության տարածքային կամ անհատական գերակայության տակ և ամենից առաջ սահմանում են անձնական ազատության հարաբերակցությունը պետական իշխանության հետ: Դրանք կոչված են երաշխավորելու անհատական ինքնուրույնությունը և ազատությունը, պաշտպանելու մարդուն պետության և այլոց կամայականություններից: Իրավունքների այս խմբին են դասվում սովորաբար կյանքի, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը, խղճի ազատության, ազատ տեղաշարժվելու և այլ իրավունքները:

Կրթությունը դեպի ապագան միտված որոշիչ գործոն է, որից կախված է կայուն զարգացող քաղաքացիական և քաղաքական հասարակության ձևավորումը: Առանց ինքնուրույն և գիտակցաբար հասարակական կարևորություն ունեցող որոշումներ ընդունելու ունակ, ազատ անձի դաստիարակության անհնարին է իրական ժողովրդավարությունը: Առանց աճող սերնդի զանգվածային հանրակրթական և մասնագիտական պատրաստվածության անհնարին է գիտության և բարձր տեխնոլոգիական ոլորտների զարգացումը, ուրեմն՝ և երկրի տնտեսական ինքնուրույնության պահպանումը: Առանց հայրենասիրության դաստիարակման, ազգային մշակութային արժեքների յուրացման անհնարին է Հայաստանի հոգևոր վերածնունդը: Իր հերթին, քաղաքական համակարգը կոչված է բարենպաստ պայմաններ ստեղծելու թվարկված բոլոր խնդիրների իրականացման համար, ապահովելու կրթության ոլորտի բարեհաջող զարգացումը:

⁶¹ Кистьяковский Б. А. Социальные науки и право, М., 1916, էջ 499:

Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքները մարդկային էության իրական, ճշմարիտ արտահայտությունն են, մարդու պաշտպանված ազատությունը⁶², և այդ առումով դրանք մոտ են կանգնած բարձրագույն կրթության իրավունքին, քանի որ միայն ինքնուրույն, ազատ մարդու ընտրությունից է կախված տվյալ իրավունքի իրականացումը: Ոչ ոք իրավունք չունի մարդուն ընդգրկելու բուհական կրթության մեջ, պարտադրելու նրան բարձրագույն կրթության տեսակը և ուղղվածությունը, ուսումնառության ձևը: Նա ազատ է իր ընտրության հարցում: Ն. Ս. Բոնդարը, խոսելով մասնավորապես տեղական ինքնակառավարման վրա տվյալ իրավունքի ազդեցության մասին, նշում է. «Բնակչության կրթական մակարդակը, նրա մշակութային արժեքային կողմնորոշիչներն ուղղակիորեն ազդում են ըստ բնակչության վայրի մարդկանց տարածքային ընդհանրության ձևավորման գործընթացի վրա, որտեղ որ ապահովվում է հանրային բարիքներից օգտվելու հնարավորությունը»⁶³:

Անհատը չի կարող իրականացնել բարձրագույն կրթության սահմանադրական իր իրավունքը՝ առանց օգտագործելու խոսքի ազատության իրավունքը, ներառյալ «տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը»⁶⁴: Ուսումնառության ընթացքում սովորողը, օգտագործելով «այլ անձանց հետ միավորումներ կազմելու» իրավունքը⁶⁵, կարող է անդամագրվել տարբեր հասարակական և քաղաքական կազմակերպությունների, այդ թվում անդամակցել ուսանողական միությանը: Բուհում սովորելու ընթացքում ունի իր «արժանապատվության հարգման իրավունք»⁶⁶, ինչպես նաև իրավունք՝ պահանջելու, որպեսզի հարգվի իր անձնական և ընտանեկան կյանքը»⁶⁷: Իրականացնելով ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և հանրապետությունից դուրս գալու իրավունքը՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ուսումնառության համար ընտրելու ցանկացած բուհ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Բացի դրանից, բարձրագույն կրթություն

⁶² Տես՝ Глухарева Л. И. Современные теории прав человека, М., 2004, էջ 93:

⁶³ Бондарь Н. С. Гражданин и публичная власть: Конституционное обеспечение прав и свобод в местном самоуправлении: Учебное пособие, М., 2004, էջ 260:

⁶⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր. 2007, 27-րդ հոդված:

⁶⁵ Տես՝ նույն տեղը, հոդված 28:

⁶⁶ Տես՝ նույն տեղը, հոդված 17:

⁶⁷ Տես՝ նույն տեղը, հոդված 23:

ստանալու ժամանակամիջոցում ուսանողը չի զրկվում մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքից⁶⁸: Իրենց իրավունքները պաշտպանելու համար բուհի ուսանողները կարող են անցկացնել խաղաղ հավաքներ⁶⁹, ինչպես նաև «անձնական կամ հասարակական շահերի նկատառումներով իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնել»⁷⁰: Բերված օրինակներն ակնառու փաստում են բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի սերտ կապը ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված անհատական և քաղաքական իրավունքների հետ:

Մասնագիտական գրականության մեջ որոշակի տարակարծություններ կան սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական, տնտեսական և սոցիալ-տնտեսական իրավունքների սահմանագծման խնդրում: Այդ առումով առաջանում է խնդիր, թե որ խմբին պետք է դասել մարդու բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը:

Համաշխարհային սահմանադրական իրավունքի պրակտիկայում կիրառվող սոցիալական իրավունքների ցանկում Գ. Շվարցը ներառում է աշխատանքի ընտրության, նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, նույն աշխատանքի համար հավասար վարձատրման, բավարար կենսամակարդակի, բնակարանի, կրթության, առողջապահության, հանգստի, երեխաների նկատմամբ հոգածության իրավունքները: Այդ իրավունքները նա մեկնաբանում է ոչ թե պարզապես կառավարությանն ուղղված որոշակի պահանջներ, այլ իշխանություններին ուղղված պահանջ՝ ստանալու ինչ որ նոր բան արդեն եղածից ավելի՝ գուցե թե լրացուցիչ միջոցներ /գումարներ/ կամ այլ ռեսուրսներ սոցիալական կարիքների համար, առաջնահերթությունների փոփոխություն⁷¹:

Մարդու սոցիալական իրավունքների թվին Ս. Վ. Տիմոֆեևը դասում է ընտանիքի, մայրության, մանկության պաշտպանությունը, սոցիալական ապահովությունը, բնակարանի և կենսապայմանների բարելավման, առողջության պահպանման և բժշկական սպասարկման, առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքները: Սրանցից բացի, Ս. Վ. Տիմոֆեևն առանձնացնում է նաև մշակութային իրավունքները, որոնց շարքին

⁶⁸ Տես՝ նույն տեղը, հոդված 26:

⁶⁹ Տես՝ նույն տեղը, հոդված 29:

⁷⁰ Տես՝ նույն տեղը, հոդված 27:

⁷¹ Шварц Г. Экономические и социальные права // Российский бюллетень по правам человека, 1995, N 6, էջ 25:

դասում է ստեղծագործության ազատության և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը: Ս. Վ. Տիմոֆեևի կողմից մարդու սոցիալական իրավունքների դասակարգման մեջ⁷² փաստորեն ներառված չէ կրթության իրավունքը:

Փոքրինչ այլ է սոցիալ-տնտեսական իրավունքների խնդիրը: Այստեղ արդեն պետությունը ենթադրում է իր ակտիվ մասնակցությունը, որպես տվյալ իրավունքների իրականացման պայման, ապահովելով պետության, որպես հասարակության մեջ նյութական արժեքների արդարացի վերաբաշխման համար պատասխանատու ինստիտուտի, տնտեսական պարտականությունների և սոցիալական ուղղվածության կապը: Ընդ որում, ինչպես նկատում է Ն. Ս. Բոնդարը, շուկայական տնտեսության բովանդակությունը տվյալ խմբի իրավունքների միայն մի կողմն է, մյուս ոչ պակաս կարևոր կողմը դրանց սոցիալական ուղղվածությունն է⁷³:

Այդ առնչությամբ իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ քաղաքացիների սոցիալ-տնտեսական սահմանադրական իրավունքներ կարելի է համարել այն իրավունքները, որոնց իրականացման հնարավորության համար պետությունն ստանձնում է որոշակի կազմակերպական-իրավական միջոցառումներ իրականացնելու պարտավորություն (օրենքների ընդունում, ծառայությունների կազմակերպում), որոնք առաջ են բերում պետության ֆինանսական միջոցների որոշ մասի վերաբաշխման միջոցով քաղաքացիների առանձին կատեգորիաների նյութական բարիքներով ապահովում⁷⁴:

Նկատի առնելով սոցիալ-տնտեսական իրավունքների վերոնշյալ մեկնաբանությունները, մեր կարծիքով, նպատակահարմար է բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը համարել հենց սոցիալ-տնտեսական, քանզի իր բովանդակությանը բնորոշ առանձնահատկություններով այն ավելի մոտ է սոցիալ-տնտեսական իրավունքներին:

⁷² Stu` Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации: / Под ред. О. И. Тиунова, М., 2005, էջ 261:

⁷³ Stu` Бондарь Н. С. Гражданин и публичная власть: Конституционное обеспечение прав и свобод в местном самоуправлении: Учебное пособие, М., 2004, էջ 261:

⁷⁴ Stu` Сангаджиева К. В. Судебная защита конституционных социально-экономических прав граждан Российской Федерации. Дисс. канд. юрид. наук. Саратов, 2002, էջ 51:

Սոցիալ-տնտեսական իրավունքները մարդու իրավունքների երկրորդ սերնդի իրավունքներ են, որոնց իրականացումը կապվում է սոցիալական քաղաքականության ոլորտում պետության որոշակի պարտականությունների կատարման հետ: Այսպես, բարձրագույն կրթության իրավունքի իրականացումը ենթադրում է, նախ և առաջ, պետության կողմից գործող կրթական համակարգի ստեղծում, ոլորտի պատշաճ ֆինանսավորում: Իրոք, պետությունը որքան ավելի շատ կարողանա ֆինանսավորել բարձրագույն կրթության համակարգը, այնքան ավելի մատչելի և գործնականում իրականանալի կլինի բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը: Նույնպես և հասարակության բարձր կենսամակարդակի պայմաններում մեծանում է ամեն մի անհատի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը⁷⁵:

Սոցիալ-տնտեսական իրավունքների հասկացության իրավական արտահայտման առանձնահատկությունն այն է, որ դրանց ձևակերպումները ոչ միշտ է, որ հստակ են ու որոշակի, քան քաղաքացիական և քաղաքական իրավունքներինը: «Դրանց սահմանագծման համար կիրառվում են ընդհանուր, լայն հասկացություններ, որոնք իրավական առումով շատ դժվար մեկնաբանելի են: Դրանց պրակտիկ կիրառումը պահանջում է գրեթե ամեն մի կոնկրետ դեպքում հատուկ չափանիշների, շրջանակների և՛ քննարկում, և՛ սահմանագծում»⁷⁶: Քանի որ իրավունքների տվյալ խումբը վերաբերում է պետության կոնկրետ պարտականությունների սահմանմանը, դրանց նորմատիվ արտահայտությունը կարիք ունի հստակեցման: ՀՀ Սահմանադրության մեջ սոցիալ-տնտեսական իրավունքների դրույթները նույնպես տրված են ոչ հստակ ու որոշակի: Այսպես, Սահմանադրության 2-րդ գլխի 48-րդ հոդվածում, որում ներկայացված են տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները, ասվում է, որ պետության հիմնական խնդիրներից է պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը⁷⁷: Այս նորմն իր բովանդակությամբ ունի ընդհանուր բնույթ, քանզի պետությանը չի պարտավորեցնում իրականացնել որևէ կոնկրետ սոցիալ-տնտեսական միջոցառում: Սակայն նման պարտավորություն նախատեսվում է ծնողների համար, ովքեր, համաձայն Սահմանադրության 36-րդ հոդվածի՝ «իրավունք

⁷⁵ Տես՝ Гордон Л. А. Социально-экономические права человека: своеобразие, особенности, значение для России // Общественные науки и современность, 1997, N 3, էջ 10:

⁷⁶ Տես՝ նույն աշխ: Տես՝ Гордон Л. А., էջեր 5-15:

⁷⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 48:

ուներն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար»: Ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) իրավունքներն ու պարտականությունները մասնավորապես երեխաների կրթության ոլորտում, սահմանված են «Նախադպրոցական կրթության մասին» և ՀՀ «Կրթության մասին» օրենքներում⁷⁸: Դրանցում ներառված են՝

- ա) կրթության ձևի ընտրությունը,
- բ) կրթական հաստատության ընտրությունը,
- գ) երեխայի օրինական իրավունքների և շահերի պաշտպանությունը,
- դ) հանրակրթական հաստատությունների կառավարմանը մասնակցությունը,

ե) կրթական հաստատության կանոնադրության կատարումը:

Ծնողների կողմից նշված պարտականությունները կարող են իրականացվել նաև երեխայի բարձրագույն կրթության իրավունքի իրականացման դեպքում, երբ դեռևս չի լրացել ուսանողի 18 տարին: Ընդ որում, ծնողների կողմից ուսումնական հաստատության ընտրությունը, ամեն դեպքում, պետք է կատարվի երեխայի կարծիքը հաշվի առնելով:

Ասվածից պարզորոշ հետևում է, որ մարդու բարձրագույն կրթություն ստանալու սոցիալ-տնտեսական իրավունքի և մարդու և քաղաքացու մյուս իրավունքների ու ազատությունների միջև առկա է սերտ կապ: Այսպես, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուր մարդու բնակարանի իրավունքը, որի իրականացման համար պետությունն անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն է կրում (հոդվ. 34.):

Վերլուծելով այդ իրավունքի փոխկապակցվածությունը մարդու բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի հետ, կարելի է նկատել, որ այն ենթադրում է ուսումնառության ընթացքում ուսանողի բնակվելը ինչոր բնակելի տարածքում: Դա, իր հերթին, ենթադրում է բնակելի տարածք ունենալու անհրաժեշտությունը կամ մշտական հիմունքներով (սեփականության կամ էլ վարձակալության իրավունքով), կամ էլ ժամանակավոր հիմունքներով (հանրակացարան, վարձու բնակարան): Շատ դժվար է պատկերացնել

⁷⁸ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի, (ընդունվել է 15.11.2005թ) 28 –րդ հոդված և «Կրթության մասին» ՀՀ օրենքի, (ընդունվել է 14.04.1999թ.) 15-րդ և 18 -րդ հոդվածներ, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 10.07.2009թ.) 28-րդ հոդվածը:

առանց բնակտարածություն ունենալու մարդու բարձրագույն կրթության իրավունքի իրականացումը:

Մարդու բարձրագույն կրթության իրավունքը սերտորեն կապված է նաև նրա առողջ ապրելու իրավունքի հետ, առանց որի ցանկացած արժեք կորցնում է իր նշանակությունը: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է յուրաքանչյուր մարդու առողջության պահպանման (հոդվ. 33.2) և բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու իրավունքը (հոդվ. 38.): Այս իրավունքը, բնականաբար, տարածվում է նաև բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների վրա: Ուսանողների առողջության և առողջությանը չվնասող ուսումնառության պայմանների ապահովման պարտականությունը դրված է բուհի ղեկավարության վրա:

Ուսումնառության և գիտելիքներ ձեռք բերելու ձգտումը պայմանավորված է ոչ միայն նյութական շահով, այլև մարդու՝ իր մշակութային մակարդակը բարձրացնելու գիտակցված ձգտումով: Բարձրագույն կրթություն ստանալով՝ մարդը կարող է ավելի խորիմաց և բովանդակալից օգտվել «գիտության նվաճումներից և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու» իրավունքից, որն անառարկելիորեն հիմնավորում է բարձրագույն կրթության իրավունքի կապը մարդու՝ հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի հետ:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքն այս կամ այն թափով կապված է սոցիալ-տնտեսական խնդիրն դասվող սահմանադրական մյուս բոլոր իրավունքների հետ, ինչը պայմանավորված է դրանց համալիր իրականացման անհրաժեշտությամբ: Դա, մեր կարծիքով, առավել ևս կարևոր է, քանի որ այդ իրավունքները իրար համահունչ են Հայաստանի Հանրապետության՝ տնտեսության, սոցիալական և մշակութային ոլորտներում ստանձնած հիմնական խնդիրներին⁷⁹: Ինչպես արդարացիորեն նկատում է Ե. Լուկաշևան⁸⁰՝ «շուկայական հարաբերություններին անցման ժամանակաշրջանում պետությունը պարտավոր է հաշվի նստել հասարակական գիտակցության սոցիալական ակնկալիքների հետ և ձգտել ձևավորելու այնպիսի հասարակական հարաբերություններ, որտեղ ինքը չի հանդիսանա պասիվ դիտորդ՝ անտարբեր իր իսկ քաղաքացիների դրությանը, որոնք հայտնվել են մինչ այդ իրենց անձանոթ շուկայական հարաբերությունների հորձանուտում»:

⁷⁹ Տես՝ ՀՀ Սահմանադրություն, հոդված 48:

⁸⁰ Лукашева Е., Защита прав человека в условиях перехода к рынку. Круглый стол // Государство и право, 1993, N 6, էջ. 17:

Մարդու սահմանադրական մյուս իրավունքների հետ ընդհանուր առնչություններից զատ՝ բարձրագույն կրթության իրավունքն էապես կարող է ազդել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու այլ իրավունքների և ազատությունների իրականացման վրա: Անտարակույս, որ բարձրագույն կրթություն ստացած անձն իր տնտեսական և քաղաքական իրավունքների իրականացման հարցում դառնում է ավելի մրցունակ: Բարձրագույն կրթություն ստացած անձը, օրինակ, ավելի գրագետ և արդյունավետ կերպով կարող է իրականացնել իր մասնավոր սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը կամ բարձրագույն կրթություն ունենալու իրավունքն էականորեն ազդում է Սահմանադրությամբ երաշխավորված աշխատանքի ընտրության ազատության վրա, քանի որ որոշակի պաշտոններ (դատավորներ, դատախազներ, բժիշկներ, բուհի դասախոսներ և այլն) զբաղեցնելու համար բարձրագույն կրթության առկայությունը պարտադիր պայման է:

Բարձրագույն կրթություն ունենալը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ իրականացնել նաև մարդու քաղաքական իրավունքները: Այսպես, թեև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ ներկայացուցչական մարմինների պատգամավորության թեկնածուների կամ այդ մարմիններում ընտրովի պաշտոններ զբաղեցնելու համար բարձրագույն կրթություն ունենալու պահանջը, սակայն անկասկած է, որ բարձրագույն կրթություն ունեցող թեկնածուի հաղթելու հնարավորությունն անհամեմատ բարձր է լինում:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածում ամրագրված բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը հանդիսանում է համալիր իրավունք՝ բաղկացած մի շարք իրավագործություններից: Այն հանդիսանում է մարդու իրավունքների երկրորդ սերնդի իրավունք, որի սահմանադրական ամրագրումը կապված էր պետության սոցիալական գործառույթի զարգացման հետ:

Բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը կարող է կենսագործվել ինչպես պետության աջակցությամբ՝ կրթության գործընթացի ֆինանսավորման միջոցով, այնպես էլ ուսանողի / սովորողի/ կողմից կրթության ծախսերի ամբողջական կամ մասնակի փոխհատուցման միջոցով:

Ըստ էության, բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը դասվում է սոցիալ-տնտեսական իրավունքների շարքին, որոնք ենթադրում են պետության՝ դրանց իրականացման համար միջոցներ ձեռնարկելու պարտականությունը: Տվյալ իրավունքն էական դեր է կատարում անձնական և քաղաքական իրավունքների և ազա-

տությունների իրականացման հարցում, ինչպես նաև սերտորեն կապված է սոցիալ-տնտեսական իրավունքների կենսագործման հետ: Բացի դրանից, բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը նպաստում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքների կենսագործմանը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բարձրագույն մասնագիտական կրթության օրըստօրե աճող հասարակական պահանջարկը, Հայաստանում գործող պետական և մասնավոր բուհերի մեծ քանակը, կրթական համակարգի բարեփոխումների շարունակվող գործընթացը, Հայաստանի անդամակցումը Բոլոնիայի գործընթացին և մուտքը Եվրոպական ընդհանուր կրթական տարածք առավել հրատապ են դարձնում բարձրագույն կրթության ոլորտի իրավահարաբերությունների արդյունավետ կարգավորումը:

Ներկայումս ՀՀ կրթության ոլորտը կանոնակարգող իրավական նորմերի ամբողջությունը պայմանականորեն կարելի է ստորաբաժանել հետևյալ երկու խմբերի.

ա/ «ներքին օրենսդրություն»՝ ՀՀ ներպետական օրենքներ և այլ իրավական ակտեր,

բ/ «արտաքին օրենսդրություն»՝ միջազգային իրավական ակտեր:

Նշված իրավական ակտերով մանրամասն կարգավորված են ինչպես հանրապետության կրթական համակարգը, այնպես էլ բարձրագույն կրթություն ստանալու ոլորտում ծագող հարաբերությունները՝ մասնավորապես, որն արդյունավետ միջոց է ՀՀ քաղաքացիների բարձրագույն կրթության իրավունքի իրացման համար:

Իրավունքի այս երկու աղբյուրների հարաբերակցությունը հստակ սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ. «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել» (ՀՀ - Սահմանադրության հոդվ. 6):

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատել, որ «ներքին օրենսդրությունը», այսինքն՝ կրթության ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը կազմում է երկրի կրթական համակարգը կարգավորող իրավական ակտերի առավել ծավալուն մասը, ինչը գործնականում կարգավորում է, մասնավորապես բարձրագույն կրթության բուն ոլորտը:

§ 1. Բարձրագույն կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրությունը

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը Հայաստանի կրթության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասն է: Այս առումով, բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի իրավահարաբերությունները կանոնակարգվում են ինչպես կրթության համակարգը կարգավորող ընդհանուր օրենսդրությամբ, այնպես էլ հատուկ օրենքներով և այլ նորմատիվ փաստաթղթերով, որոնք առանձնացնում են բարձրագույն մասնագիտական կրթությունը որպես կրթական գործունեության առանձին բնագավառ:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի ներքին օրենսդրությունը ներառում է. ա/ ՀՀ Սահմանադրությունը, բ/ ՀՀ օրենքները, գ/ ՀՀ ենթաօրենսդրական ակտերը:

ՀՀ Սահմանադրությունը կրթության ոլորտում պետական քաղաքականության և օրենսդրության հիմքերը սահմանող հիմնական իրավական ակտն է, որը հիմք է հանդիսանում այդ ոլորտի ընթացիկ օրենսդրության համար:

ՀՀ կրթության ոլորտը կարգավորող օրենքները կարելի է ստորաբաժանել երկու տեսակի՝ կոնկրետ կրթության ոլորտը կարգավորող /մասնագիտացված և ընդհանուր բնույթի օրենքներ: Դրանց ընդունման և փոփոխման իրավասությունը պատկանում է ՀՀ օրենսդիր իշխանության մարմնին՝ Ազգային ժողովին: Բազային են համարվում այն օրենքները, որոնք կանոնակարգում են ոլորտի ընդհանուր խնդիրները¹: Մասնավոր բնույթի օրենքները կարգավորում են կրթական ոլորտի գործունեության որևէ կոնկրետ խնդիր կամ բնագավառ²:

Ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են ՀՀ - գործադիր իշխանության մարմինների կողմից՝ կրթության ոլորտի վերաբերյալ ընդունված օրենքների կիրառման և կրթության ոլորտում իրավահարաբերությունների կարգավորման համար:

Որպես գործադիր իշխանության մարմին կառավարությունն իրավասու է որոշումներ ընդունել կրթության ոլորտը կանոնակարգող օրենքների գործադրումից բխող բոլոր հարցերով: Կառավարու-

¹ Նման մասնագիտացված օրենքներ են՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 14.04.1999), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 14.12.2004):

² Ընդհանուր բնույթի օրենքի օրինակներ են «Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ՀՕ-267 (ընդունվել է 24.11.1993), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք ՀՕ-248 (ընդունվել է 23.10.2001):

յունն է սահմանում կրթության ոլորտի մասնակիցների սոցիալական պաշտպանվածության միջոցառումների իրականացման, գիտական կոչումների և աստիճանների շնորհման, կրթության ոլորտի աշխատողների վարձատրման խնդիրները: Կառավարությունն իրավասու է հաստատել կրթության ոլորտի հեռանկարային զարգացումն ապահովող գործողությունների մարտավարական և ռազմավարական ծրագրերը, բուհական մասնագիտությունների ցանկերը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգերը և այլն:

Ենթաօրենսդրական ակտերի մեջ մեծ է ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվ իրավական ակտերի տեսակարար կշիռը: Դրանք ընդունվում են նախարարի հրամանների, կարգադրությունների և հանձնարարությունների ձևով: ՀՀ ԿԳ նախարարությունն է իրավասու հաստատելու բուհերի ընդունելության քննությունների, ասպիրանտուրայի ընդունելության կարգերը: Սեփական գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական իրավական ակտեր իրավասու են ընդունել նաև անմիջականորեն ուսումնական հաստատությունները: Դա անհրաժեշտ է կառավարության և նախարարության ընդունած նորմատիվ ակտերը տվյալ բուհի առանձնահատկություններին համապատասխանեցնելու, բուհի կանոնակարգերը ընդունելու, բուհի ուսումնական խնդիրները սահմանելու և կոլեկտիվի աշխատանքային գործունեությունը կարգավորելու համար:

Անհրաժեշտ է ընդգծել, որ բոլոր տեսակի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը չեն կարող հակասել ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին ու իրենցից բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո անհրաժեշտ էր ստեղծել բարձրագույն կրթության ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող անհրաժեշտ իրավական ակտեր, ինչն էլ իրականացվեց հատկապես վերջին տասնամյակի ընթացքում:

Անկախության առաջին տարիներին Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում էական փոփոխություններ չկատարվեցին: Երկրում իրականացվող բարեփոխումներն առավելապես նպատակաուղղված էին տնտեսական հրատապ խնդիրների լուծմանը: Մասնագիտական կրթության ոլորտը հիմնականում շարունակում էր գործել նախկին ԽՍՀՄ համապատասխան օրենքներով և կառավարության ընդունած որոշումներով: Անցումային շրջանում ոլորտի իրավական կարգավորվածության վիճակը մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության համար զգալի դժվարություններ էր հարուցում: Ամենաբարդ խնդիրը տարբեր իրավական համակարգերում ընդունված նորմատիվ իրավական ակտե-

րի միաժամանակյա կիրառումն էր: Այդ փաստաթղթերը երբեմն արտացոլում էին կրթության նկատմամբ տրամազծորեն հակառակ սոցիալ տնտեսական և քաղաքական մոտեցումներ, ուստի չէին կարող լիարժեք բավարարել կրթության ոլորտում ձևավորվող նոր հասարակական հարաբերությունների պահանջները:

Կրթության ոլորտում էական բարեփոխումներ սկսվեցին միայն 90-ական թվականների երկրորդ կեսին: Դրանք աստիճանաբար ներառեցին ոլորտի և՛ կառավարումը, և՛ կառուցվածքը, և՛ բովանդակությունը:

Կրթական համակարգի գործունեությունը կանոնակարգող պետական քաղաքականության և օրենսդրության հիմքերը դրվեցին **1995թ. հունիսի 5-ին** Հայաստանի Երրորդ Հանրապետության Սահմանադրության ընդունումով, որում ամրագրվեց յուրաքանչյուր քաղաքացու կրթության իրավունքը: Սահմանադրությունն ուրվագծեց Հայաստանում կրթության համակարգի գործունեության ընդհանուր օրենսդրական շրջանակները: Մասնավորապես, դրա 35-րդ հոդվածը հռչակում էր կրթության մատչելիությունը և անվճար լինելը, ընդ որում, բարձրագույն կրթության համար՝ մրցութային հիմունքներով: Ճանաչվում էր կրթության ոլորտում ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության իրավունքը: Վճարովի կրթության տրամադրման սկզբունքը թեև չէր սահմանվում, սակայն ենթադրվում էր, քանի որ օրենքով չէր արգելվում:

Անկասկած է, որ կրթության իրավունքն ամրագրող Սահմանադրության համապատասխան հոդվածը թեև կատարյալ չէր, հիմնականում համահունչ էր միջազգային չափանիշներին: Իրավական տեսանկյունից դրանում առկա էին էական թերություններ. ճանաչվում էր ոչ թե յուրաքանչյուր մարդու, այլ միայն քաղաքացիների կրթության իրավունքը, սահմանված չէր պետության կողմից պարտադիր երաշխավորվող կրթության նվազագույն մակարդակը և այլն:

Անցումային ժամանակաշրջանի արագընթաց զարգացումները, Սահմանադրության բազմաթիվ դրույթների ոչ անթերի շարադրանքը, այդ դրույթների՝ Եվրոպական օրենսդրությանը համապատասխանեցման անհրաժեշտությունը՝ Եվրոպական կառույցներին անդամագրվելու համար, անհրաժեշտություն դարձրին գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու պահանջը: Սահմանադրության փոփոխված տարբերակն ընդունվեց հանրաքվեով՝ **2005թ. նոյեմբերի 27-ին**: Փոփոխված տարբերակում կրթության իրավունքի լրանձակված ձևակերպումն ամրագրվեց Սահմանադրության 39-րդ հոդվածում: Ըստ այդ հոդվածի՝ կրթության իրավունքն այժմ վերապահվում է ոչ միայն քաղաքացիներին,

այլ յուրաքանչյուր մարդու (օտարերկրացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք), սահմանվում է պարտադիր կրթության որոշակի (հիմնական ընդհանուր) մակարդակ: Երկրի Հիմնական օրենքի փոփոխված տարբերակում ավելացվել է հատուկ հոդված (48-րդ), որը սահմանում է պետության հիմնական խնդիրները տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում, որում ընդգծվում է, որ պետությունը խնդիր է դնում «նպաստել անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը»: Իսկ դրա 39-րդ հոդվածում անրագրված դրույթը թույլ է տալիս կարծել, որը պետությունը նախատեսում է ֆինանսական օժանդակություն ցուցաբերել նաև ոչ պետական ուսումնական հաստատություններին. «Պետությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին»:

Կրթության ոլորտի օրենսդրության կայացման գործընթացում հաջորդ կարևոր քայլը 1999թ. ապրիլի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից «Կրթության մասին» ՀՀ օրենքի³ ընդունումն էր: Այն ներառում էր կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական մոտեցումները և սկզբունքները, կրթության համակարգի կազմակերպման ու կառավարման իրավական ու ֆինանսական հիմքերը, սահմանում էր կրթությանը վերաբերող հիմնական հասկացությունները և կրթական համակարգի տարրերը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը՝ հաստատելով ՀՀ Սահմանադրությամբ հռչակված անվճար կրթության բոլոր մակարդակների մատչելիության սկզբունքը (մասնագիտական կրթության դեպքում՝ միայն մրցութային կարգով), սահմանում էր պետական վերահսկողություն ուսուցման որակի նկատմամբ, թույլատրում պետական ուսումնական հաստատություններին, իրենց գործունեության նպատակին համապատասխան, իրականացնել վճարովի հիմունքներով ուսուցում, հետազոտական և գիտաարտադրական ծառայություններ՝ կառավարության սահմանած կարգով: Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակ էր հայտարարվում բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումը, անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը: Ըստ օրենքի՝ ՀՀ կառավարությունը սահմանում է կրթության անվճար տեղերի քանակը յուրաքանչյուր մասնագիտության գծով (պետական պատվեր), ինչպես նաև մասնագիտական կրթության

³ Տես՝ ՀՕ-297, ՀՀՊՏ 1999.05.14/12(78):

համար բյուջեից կատարվող հատկացումների չափը: Բուհերին իրավունք էր տրվում իրենց հատկացված ընդհանուր չափաքանակի շրջանակներում ինքնուրույն սահմանել վճարովի և անվճար տեղերի քանակը՝ յուրաքանչյուր մասնագիտության գծով պահպանելով անվճար ուսուցման տեղեր՝ առնվազն տասը տոկոսի չափով: Ելնելով իրական հնարավորություններից, բուհերին թույլատրվում էր վճարովի հիմունքներով հրամանագրել նաև ընդունելության մրցույթից դուրս մնացած լրացուցիչ դիմորդների⁴: Իհարկե, սա հնարավորություն տվեց բուհերին գոյատևելու դժվարին ֆինանսական պայմաններում, սակայն, մյուս կողմից, որոշ անհամամասնությունների տեղիք տվեց, մասնավորապես՝ ուսուցիչների պատրաստման բանագավառում: Այսպես, մինչ օրս հանրապետությունում առկա է մանկավարժական մասնագիտությունների գերարտադրություն (2003-04 ուս. տարում ուսուցչի որակավորում է ստացել 1543 մարդ, իսկ 2007-08՝ ուս. տարում՝ 3305⁵), բայց հանրապետության գյուղական համայնքներում զգացվում է ուսուցիչների պակաս: Այս հարցին ավելի մանրամասն կանդիդատական քննարկության առաջարկությունների բաժնում:

Բարձրագույն մասնագիտական կրթության զարգացման համար կարևոր նշանակություն ունեն թուհերի ինքնավարության և ակադեմիական ազատության օրենսդրական ամրագրումը, ուսումնական հաստատության հիմնադիրների իրավունքների սահմանումը, ինչը հնարավորություն էր տալիս էականորեն ընդլայնել բուհերի ֆինանսավորման աղբյուրների շրջանակը: Այսուհանդերձ, օրենքն անփոփոխ պահպանում էր կենտրոնացված վարչարարական մոտեցումը, բուհերի ընդունելության քննությունների կենտրոնացված մրցութային կարգը՝ որոշակիորեն սահմանափակելով մասնագիտական կրթության համակարգի ազատությունները⁶:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում իրավահավասարության հաստատման տեսանկյունից սկզբունքային կարևոր նշանակություն ունեն «Կրթության մասին» ՀՀ օրենքում ոչ պետական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծման, գործունեության և լուծարման կարգի օրենսդրական ամրագրումը: Օրենքը կրթական գործունեության իրականացման համար սահմանում էր ուսումնական հաստատությունների պարտադիր լիցենզավորում՝ որոշակի պահանջներով: Լիցենզավորումից

⁴ Տես՝ օրենքի 24, 27 և 28-րդ հոդվածները:

⁵ Տես՝ <http://www.armstat.am/file/doc/99456298.pdf>

⁶ Տես՝ օրենքի 28 և 29-րդ հոդվածներ:

բացի, ուսումնական հաստատությունները պարտավոր էին անցնել նաև հավատարմագրում, որը կոչված էր հաստատելու ուսումնական հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագրերի մակարդակը և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին⁷: Պետական բյուջեից ոչ պետական ուսումնական հաստատությունների որևէ չափով կամ ձևով ֆինանսավորման վերաբերյալ «Կրթության մասին» ՀՀ օրենքում հիշատակում չկար: Հետևաբար, պետությունը հրաժարվում էր ոչ պետական ուսումնական հաստատությունների բյուջետային ֆինանսավորումից:

Նշենք, որ նմանատիպ իրավիճակ է և Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ: Գնահատելով իրենց երկրի օրենսդրության նույն դրույթները՝ ռուսաստանցի հետազոտողներն իրավացիորեն նշում են, որ օրենսդրության այս դրույթները մեծացնում են ոչ պետական ուսումնական հաստատությունների կախվածությունը պետական կառույցներից, ծանրացնում են ոչ պետական բուհերի տնտեսական դրությունը՝ ստիպելով գնալ ուսման վարձի ավելացմանը, պակասեցնում են սովորողների սոցիալական և իրավական երաշխիքները՝ հեղինակագրվելով ոչ պետական կրթություն ստանալու հնարավորությունը⁸:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումը համապետական նշանակություն ունեցող քաղաքական քայլ էր, որով վերջ դրվեց նախկին ամբողջատիրական գաղափարախոսությանը և կրթական քաղաքականությանը: Այն իրավական նորմի վերածեց կրթության նոր փիլիսոփայությունը և բարեփոխումների գաղափարախոսությունը: «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումով դրվեցին բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության իրավական հիմքերը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո անցած տարիների ընթացքում դրանում կատարվել են ավելի քան երկու տասնյակ փոփոխություններ, ուղղումներ և լրացումներ: Եվ դա օրինաչափ է: Կրթության ոլորտը դինամիկ զարգացող օրգանիզմ է, որտեղ անընդհատ նորամուծություններ և տեղաշարժեր են լինում, այստեղից էլ առաջանում է օրենքում փոփոխություններ կատարելու

⁷ Տես՝ նույն տեղում, 29-35-րդ, 44 և 42-րդ հոդվածները:

⁸ Տես՝ Вениаминов А. Негосударственные вузы накануне третьего тысячелетия. <http://www.javascript:selflocation.ru>; Булат С. Н. В термине «негосударственный вуз» заложена дискриминация. // Право и образование, М. 2000, N 1, էջեր 7-11:

անհրաժեշտություն: Փոփոխություններն այնքան էլ մեծ քանակ և որակ չեն կազմում, որպեսզի նոր օրենքի ընդունման պահանջ առաջանա, բայց միևնույն ժամանակ այնքան արագընթաց են կատարվում, որ պարտադիր է դառնում դրանց արագ արձագանքելը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի առավել կարևոր լրացումներ և փոփոխություններ կատարվել են հետևյալ դեպքերում՝ «դիպլոմների իրավահավասար կարգավիճակի ապահովումը»⁹ 14 դեկտեմբերի 2004թ., 15 նոյեմբերի 2005թ. Կրթության պետական տեսչություն ստեղծելու մասին¹⁰, ՀՕ-137-Ն 25 մայիսի 2005թ. հատուկ կրթություն¹¹, 8 հուլիսի 2005թ.՝ քուլեջներ, արհեստագործական ուսումնարաններ¹², 13 ապրիլի 2006թ.՝ դպրոցում հայոց լեզվի և պատմության ավարտական պարտադիր քննություն¹³, 13 հունիսի 2006թ. 12-ամյա եռաստիճան դպրոցին անցնելու մասին¹⁴ և այլն:

2001թ. հոկտեմբերի 23-ին Հայաստանի Ազգային ժողովն ընդունեց «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը¹⁵: Այն կոչված էր կանոնակարգելու բարձրագույն ուսումնական հաստատությունների հիմնումը և վերակազմավորումը, կառավարումը և ֆինանսավորումը: Համաձայն այս օրենքի՝ յուրաքանչյուր բուհի կանոնադրություն պետք է ընդունվի իր հիմնադրի կողմից՝ կարգավորելու համար դասախոսների և ուսանողների իրավունքները, գործունեությունը և պարտականությունները: Կանոնադրությունը սահմանում է բուհի նպատակները, խնդիրները և գործունեության ոլորտը, ձեռնարկատիրական գործունեության տեսակները, դրա ստորաբաժանումների կառուցվածքը, ինչպես նաև դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորների և դասախոսների ընտրության կարգը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո անցած ժամանակաշրջանում ընդունվել են տարբեր օրենքներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են կրթության այս կամ այն բնագավառին և այդ առումով լրացնում ու խորացնում են «Կրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներն ու մոտեցումները. «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին», 5 դեկտեմ-

⁹ Տես՝ ՀՕ-63-Ն, www.laws.am

¹⁰ Տես՝ ՀՕ-234-Ն, www.laws.am

¹¹ Տես՝ ՀՕ-137-Ն, www.laws.am

¹² Տես՝ ՀՕ-165-Ն, www.laws.am

¹³ Տես՝ ՀՕ-48-Ն, www.laws.am

¹⁴ Տես՝ ՀՕ-139-Ն, www.laws.am

¹⁵ Տես՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ՀՕ-248, ընդունվել է 23. 10. 2001թ., ՀՀՊՏ 2001. 12. 03/37(169):

բերի 2000թ.¹⁶, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», 26 հունիսի 2001թ.¹⁷, «Տեղեկատվության ազատության մասին», 23 սեպտեմբերի 2003թ.¹⁸, «Մանկապատանեկան սպորտի մասին»¹⁹, 11 հունիսի 2004թ., «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» 25 մայիսի 2005թ.²⁰, «Յեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին», 15 հունիսի 2006թ.²¹, «Իրավական ակտերի մասին», 3 ապրիլի 2002թ.²² և այլն:

Օրենքներից բացի, կրթության ոլորտում վարչական և իրավական անհամապատասխանությունների վերացման, ընդունված օրենքների կիրարկման և կրթության ոլորտում հարաբերությունների իրավական կարգավորման և օրենքների գործադրման համար ընդունվեցին մի շարք ենթաօրենսդրական իրավական ակտեր՝ ՀՀ Նախագահի հրամանագրեր, ՀՀ կառավարության որոշումներ, ՀՀ վարչապետի որոշումներ, ՀՀ ԿԳ նախարարի հրամաններ, կրթության առանձին օղակների և բնագավառների գործունեության կարգեր և այլն:

Դեռևս 1997թ. մայիսի 29-ին ընդունվեց ՀՀ կառավարության N 154 որոշումը ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկի մասին: Սա առաջին փորձն էր կանոնակարգելու բուհական մասնագիտությունները, դասակարգելու դրանք ըստ ուղղվածության և բնագավառների²³: Հետագա տարիներին կառավարությունը բազմիցս անդրադարձավ մասնագիտությունների ցանկին՝ կատարելով ավելացումներ, ուղղումներ և ճշգրտումներ: Նախորդ որոշումները չեղյալ հայտարարվեցին և մասնագիտությունների նոր ցանկը հաստատվեց ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշմամբ²⁴: Այն իր հերթին չեղյալ հայտարարվեց և ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշմամբ հաստատվեց բարձ-

¹⁶ Տես՝ ՀՕ-119-Ն, www.laws.am

¹⁷ Տես՝ ՀՕ-196-Ն, www.laws.am

¹⁸ Տես՝ ՀՕ-11-Ն, www.laws.am

¹⁹ Տես՝ ՀՕ-109-Ն, www.laws.am

²⁰ Տես՝ ՀՕ-136-Ն, www.laws.am

²¹ Տես՝ ՀՕ-142-Ն, www.laws.am

²² Տես՝ ՀՕ-320-Ն, www.laws.am

²³ Տես՝ ՀՀ կառավարության 29 մայիսի 1997թ. N 154 որոշումը, ԲԿ 1, էջ 130:

²⁴ Տես՝ ՀՀ կառավարության 9 նոյեմբերի 2005թ. N 1933-Ն որոշումը, ԲԿ 2, էջ 69:

րագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկը, որը գործում է ներկայումս²⁵:

Մասնագիտական կրթությանը ներկայացվող հիմնական պահանջները՝ որպես բարձրագույն կրթության պետական չափորոշիչներ, հաստատվեցին ՀՀ կառավարության 16 հունվարի 2001թ. N 24 որոշմամբ: Այդ չափորոշիչները վերաբերում էին բուհական կրթության բոլոր ձևերին և մակարդակներին՝ անկախ հաստատության իրավական կարգավիճակից և սեփականության ձևից: Բարձրագույն կրթության չափորոշիչները միևնույն ժամանակ կարգավորում էին ուսումնական լիցենզիաների տրամադրումը և բուհերի ուսումնական ծրագրերի հավատարմագրումը: Ի լրումն դրանց 2003թ. օգոստոսի 14-ին ընդունվեց ՀՀ կառավարության N 1079-Ն որոշումը «Մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին»: Սակայն, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի ընդունումից հետո կարիք զգացվեց հիմնավորապես վերանայել կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման գործող կարգը: ՀՀ կառավարությունը 2005թ. ապրիլի 14-ի N 449-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչեց նախկինում ընդունված կարգը և հաստատեց «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման» նոր կարգը, որը և ներկայումս գործում է²⁶:

ՀՀ կառավարությունը 2000թ. մայիսի 18-ի N 242 որոշմամբ հաստատեց «Հեռակա ձևով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության, ինչպես նաև դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով ուսուցանվող մասնագիտությունների ցանկերը»: Այդ մասնագիտական ցանկերը վերանայվեցին և լրացվեցին ՀՀ կառավարության 2004թ. 21 հոկտեմբերի. N 1476-Ն որոշմամբ²⁷:

Կրթության ոլորտի առաջընթաց զարգացումն ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովը 2001թ. հունիսին հաստատեց «Կրթության զարգացման պետական ծրագիրը 2001 – 2005թթ. *համար*», որ նախատեսվում էր իրագործել երեք փուլով: Ծրագրի հիմնական նպատակներն էին.

²⁵ Տես՝ ՀՀ կառավարության 30 օգոստոսի 2007թ. N 1038-Ն որոշումը, ԲԿ 3, էջ 187:

²⁶ Տես՝ ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 14 N 449-Ն որոշումը, ԲԿ 2, էջ 61:

²⁷ Տես՝ ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 21 N 1476-Ն որոշումը, ԲԿ 1, էջ 171:

ա) անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմաններ ստեղծել քաղաքացիների կրթություն ստանալու սահմանադրական իրավունքն ապահովելու համար.

բ) զարգացնել կրթության ոլորտում պետական քաղաքականության նորմատիվ իրավական, սոցիալ-տնտեսական և կազմակերպական սկզբունքները և երաշխիքները.

գ) ապահովել կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների փոխհամագործակցությունը կրթության ոլորտում և համապատասխան նորմատիվ իրավական ակտերի միջոցով հստակեցնել նրանց իրավասությունը.

դ) նպատակաուղղել կրթության զարգացումը հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի, ազգային ու միջազգային արժեքային համակարգի զարգացմանը²⁸:

Կրթության զարգացման պետական ծրագիրը նշում էր Հայաստանի կրթության ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ: Մասնավորապես՝ կրթության ոլորտը անհրաժեշտ համարժեք ֆինանսավորում չի ստանում, կատարյալ չեն կրթության ոլորտի օրենսդրությունը և այդ օրենքների կիրառումը, կրթության համակարգի ժողովրդավարացումը դանդաղ է զարգանում պահպանվող պետական վերահսկողության հետևանքով, որ դեռևս չեն ստեղծվել կրթական հաստատությունների ինքնավարության իրական հիմքերը և ինքնակառավարման կառուցակարգերը, դանդաղ է ընթանում կրթության ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և ցածր է դրանց տիրապետելու մակարդակը ոլորտի մասնակիցների կողմից, ինչը խոչընդոտում է միջազգային կառույցներին և համակարգերին ինտեգրվելուն, ցածր է ուսուցիչների և դասախոսների մասնագիտական պատրաստվածության մակարդակը և բարձր է դասավանդողների միջին տարիքը, սոցիալական վատ պայմանների և ցածր աշխատավարձերի հետևանքով կրթության կառուցվածքը և բովանդակությունը չեն համապատասխանում շուկայական հարաբերությունների պահանջներին, և որ աշխատանք տրամադրող ձեռնարկությունների ներգրավվածությունը մասնագիտական ուսուցման գործընթացին խիստ ցածր է²⁹:

Կրթության զարգացման պետական ծրագրի վերլուծությունը թույլ է տալիս այն բնորոշել որպես մարտավարական փաստաթուղթ, քանի որ նպատակների սահմանմանը և խնդիրների առանձնացմա-

²⁸ Տես՝ 2001 – 2005 թթ. «կրթության զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-199, ընդունվել է 26.06.2001թ., www.laws.am

²⁹ Տես՝ նույն տեղում:

նը զուգընթաց այն առաջարկում էր դրանք իրականացնելու կոնկրետ կառուցակարգեր և կանխատեսում էր սպասվող արդյունքները: Կրթության զարգացման պետական ծրագիրն առաջարկում էր որոշակի ժամանակացույց կրթության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված կոնկրետ միջոցառումների իրականացման համար³⁰: Սակայն դրանց իրականացմանը վարչարարական մոտեցումը հանգեցրեց ձգձգումների, ինչի հետևանքով այդ միջոցառումների արդյունավետությունն զգալիորեն տուժեց: Նման մի օրինակ կարելի է համարել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ժամանակացույցի համաձայն պետք է առաջադրվեր 2001թ., և որը, սակայն Ազգային ժողով ներկայացվեց միայն 2003թ. վերջին:

Տևական քննարկումներից հետո ՀՀ կառավարությունը 21 նոյեմբերի 2003թ. N 46 որոշմամբ հավանության արժանացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից առաջարկված՝ *ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունը*: Ռազմավարությունը կոչված էր համապատասխանեցնելու ՀՀ բուհական կրթությունը եվրոպական զարգացումներին, իրականացնել կրթության ոլորտում ծրագրված բարեփոխումները և ներառում էր Հայաստանի բարձրագույն կրթությանը վերաբերող փոխկապակցված տարաբնույթ այլ խնդիրներ³¹:

Բարեփոխումների ռազմավարության ընդունումը պայմանավորված էր մի կողմից Կրթության զարգացման պետական ծրագրով նախատեսված միջոցառումների դանդաղ և թերի իրագործմամբ, մյուս կողմից բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող հատուկ օրենքի բացակայությամբ, ինչը թույլ չէր տալիս համակարգված ձևով կյանքի կոչել անհրաժեշտ բարեփոխումները: Թեև փաստաթղթում կոնկրետ ժամանակահատված չէր նշվում, բայց դատելով նրանում տեղ գտած աղյուսակների և թվարկված միջոցառումների ներդրման ժամկետներից՝ այն ծրագրված էր 3-4 տարվա համար՝ մինչև 2007/2008 ուսումնական տարվա վերջը:

Բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունը, Կրթության զարգացման պետական ծրագրի համեմատ, մանրակրկիտ և խնամքով մշակված ռազմավարական փաստաթուղթ էր, որում առաջին անգամ օրենսդիրների և հանրության ուշադրությանն էին ներկայացվում ամփոփ տեղեկատվություն անկախության տա-

³⁰ Տես՝ նույն տեղում:

³¹ Տես՝ ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունը, Երևան, 2003. www.laws.am

րիների ընթացքում ՀՀ կրթության ոլորտում կատարված տեղաշարժերի, դրանց ընթացքի, արդյունքների և հետևանքների մասին:

ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունը բաղկացած էր հետևյալ երեք բաժիններից և յոթ հավելվածից, որոնք ներառում էին կոնկրետ հաշվարկներ և աղյուսակներ: Այդ բաժիններն են՝

1. ՀՀ բարձրագույն կրթական համակարգի նպատակները և հիմնախնդիրները,

2. Բարձրագույն կրթության կառավարումը և կարգավորումը,

3. Պետական ֆինանսավորման ռազմավարությունը:

Առաջին բաժնում փաստացի տվյալներով ներկայացված էր ՀՀ բարձրագույն կրթության համակարգի անցյալ և ներկա վիճակի համառոտ նկարագրությունը, ոլորտի վերջին զարգացումները, կատարված էր առկա հիմնախնդիրների ընդհանուր վերլուծություն: Մանրամասն անդրադաժ էր կատարվում բուհական կրթության ոչ պետական ոլորտին, դրանում ընդգրկված ուսանողների թվաքանակի և ֆինանսական վիճակի վերլուծությանը: Սկզբունքորեն կարևոր էր, որ Ռազմավարության մեջ կային դրույթներ, որոնք կոնկրետացնում և զարգացնում էին Սահմանադրության 39-րդ հոդվածի դրույթները: Այսպես, օրինակ, նշվում էր, որ ներկայումս բարձրագույն կրթությունն իրականացվում է անվճար և վճարովի հիմունքներով, և որ «անվճար ուսուցման միջոցով պետությունն ապահովում է մրցութային կարգով անվճար բարձրագույն կրթություն ստանալու ՀՀ քաղաքացիների սահմանադրական իրավունքը»: Համակարգի ֆինանսավորման առումով փաստվում էր, որ «Հայաստանը էականորեն հետ է մնում կրթության և մասնավորապես մասնագիտական կրթության պետական ֆինանսավորման ծավալներով նույնիսկ ցածր եկամուտ ունեցող երկրներից», և որ «անվճար կրթության վրա ծախսերը բավական անհավասարաչափ են բաշխված բնակչության եկամտային խմբերի միջև»³²:

Ներկայացված վերլուծությունը վկայում էր, որ չնայած անցումային ժամանակաշրջանի բազմաթիվ հիմնահարցերին, բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը կարողացել էր հարմարվել զարգացման նոր պայմաններին և նույնիսկ ընդլայնել իր գործունեության սահմանները: Հաշվի առնելով մասնագիտական կրթության համակարգի արտակարգ կարևորությունը երկրի ապագա արդյունավետ զարգացման համար, առաջարկվում էին դրա համալիր և անհետաձգելի բարեփոխումների հետևյալ ուղղությունները.

³² Տես՝ նույն տեղում՝ 1.1, 1.3, 1.7-րդ կետեր:

ա) ընդգրկվածության բարձր մակարդակի ապահովում,
բ) պետական աջակցության առավել արդյունավետ և հասցեական եղանակների կիրառում՝ բարձրագույն կրթությունը հնարավորինս հասանելի և մատչելի դարձնելու հասարակության բոլոր խավերի համար,

գ) պետական բուհերի կառավարման համակարգի կատարելագործում՝ ապահովելով ներքին և արտաքին արդյունավետության աճը,

դ) աշխատանքային շուկայի հետ արդյունավետ կապերի ապահովում,

ե) համակարգի համապատասխանեցումը կրթության կազմակերպման և որակի միջազգային ստանդարտներին³³:

Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի՝ եվրոպական կրթական տարածք ինտեգրման գործընթացի նկարագրությունը և առանձնահատկությունները մանրամասն շարադրված են Ռազմավարության 3-րդ հավելվածում, որը նույնիսկ կարելի է դիտարկել որպես այս փաստաթղթի 4-րդ բաժինը: Այս «չորրորդ» բաժինը պարունակում է Հայաստանի բուհական կրթության համակարգը եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրման հետագա քայլերի և դրանից բխող խնդիրների մանրամասն վերլուծությունը և նախատեսում է մի շարք արմատական փոփոխություններ կրթության եվրոպական չափանիշների ներդրման ուղղությամբ.

1. ուսումնական ծրագրերի վերակառուցում, ներառելով կրթության բարձր որակի ապահովման և հավատարմագրման գործընթացները,

2. բուհերի աշխատակիցների թվաքանակի պակասեցում, ուսանողների լսարանային ծանրաբեռնվածության կրճատում, գրադարանային ֆոնդերի և համակարգչային տեխնիկայի ավելացում,

3. «պետական պատվերի» համակարգի փոխարինում՝ առավել ունակ ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրմամբ,

4. ուսանողական կրթաթոշակների վերացում և այդ գումարների ուղղում ուսումնական վարկերի տրամադրմանը,

5. բուհական կրթության ողջ համակարգի անցումը բակալավր-մագիստրոս երկաստիճան կրթակարգի:

Ռազմավարության հավելվածներում ներառված էին պետական և ոչ պետական բուհերի ընդունելության աճը հինգ տարվա կտրվածքով պատկերող արյուսակներ, ՀՀ բուհերի և դրանցում սովորողների թիվը, դրանց ֆինանսական մուտքերը, արդյունավետ-

³³ Տես՝ նույն տեղում՝ 1.8-րդ կետ:

տության ցուցանիշները, ուսանող-դասախոս հարաբերակցությունը, ուսման վարձավճարների չափը, մեկ ուսանողի հաշվարկով կատարվող ծախսերի չափը և այլն պատկերող աղյուսակներ: Բերված էին մանրամասն հաշվարկներ՝ հիմնավորելու ուսանողական կրթաթոշակների միջոցների հաշվին ուսանողական վարկերի հիմնադրամ ստեղծելու և «բոլոր տիպի բուհերում սովորողների շուրջ 8%-ին» երկարաժամկետ և արտոնյալ վարկեր տրամադրելու մոտեցումը³⁴: Հարկ է նշել, որ նման ամփոփ տեղեկատվություն բուհական կրթության ոլորտի վերաբերյալ պաշտոնապես հրապարակվում էր առաջին անգամ:

Նկատի առնելով բարձրագույն մասնագիտական կրթության բացառիկ հասարակական պահանջարկը, բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի յուրահատկությունները և կարևորությունը հասարակության առաջընթաց զարգացումն ու կրթության շարունակականությունն ապահովելու տեսանկյունից, առաջացավ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի իրավահարաբերությունները հատուկ օրենքով կանոնակարգելու անհրաժեշտություն:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծն Ազգային ժողովին ներկայացվեց և հասարակական քննարկման դրվեց 2003թ. վերջին: Այն ընդունվեց մեկ տարի անց՝ **2004թ. դեկտեմբերի 14-ին**:

Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները, սահմանում տվյալ բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և խնդիրները, որոշակի ինքնավարություն և ակադեմիական ազատություններ տալիս բարձրագույն ուսումնական հաստատություններին³⁵:

Օրենքում տրված է ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի բնորոշումը, հստակ սահմանված են մասնագիտական կրթության որակավորման աստիճանները, ուսուցման ժամկետները և ձևերը, կանոնակարգված է բուհերի ստեղծման, լուծարման, լիցենզավորման և հավատարմագրման կարգը³⁶:

³⁴ Տես՝ ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունը, Երևան, 2003, Հավելված 7:

³⁵ Տես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ՀՀ օրենքի (2004թ.), համապատասխանաբար 1-ին, 4-րդ, 5-րդ և 15-րդ հոդվածները:

³⁶ Տես՝ նույն տեղում՝ 7-13-րդ հոդվածներ:

Օրենքի 3-րդ գլխում իրավականորեն ամրագրվում են մասնագիտական կրթության համակարգում ուսումնական գործունեության սուբյեկտները, սահմանավում են տարբեր կուրսերի սովորողների, ինչպես նաև դասախոսների և մյուս աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ նշված օրենքի՝ «Պետությունը ՀՀ - քաղաքացիներին երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն ստանալու հնարավորություն, երկրում սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան համակարգ՝ սկսած 2005/2006թ. ուսումնական տարվանից, անցում է կատարվում պետպատվերից կրթաթոշակների և ուսանողական նպաստների համակարգին, և 2006/2007 ուսումնական տարվանից սկսվում է բարձրագույն կրթության ոլորտում կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը» (հոդված 5):

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ: Մինչև 2009/2010թ. ուսումնական տարին, սակայն, գործելու է նաև միաստիճան որակավորման համակարգը՝ դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ: Հետբուհական ուսուցումն իրականացվում է հետազոտողի հիմնական կրթական ծրագրով՝ առնվազն երեք տարվա ընթացքում:

Ըստ օրենքի՝ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի): Ներկայումս գործում են ընդամենը բուհական ուսուցման երկու ձև՝ առկա (լրիվ ժամանակացույցով) և հեռակա (կարճված ժամանակացույցով):

Իր համալիր բնույթով հանդերձ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը չէր բովանդակում բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտների ամբողջական նորմատիվ իրավական կարգավորումը: Օրենքում նկատելի էր կիրառվող որոշ դրույթների անհամապատասխանությունն այլ նորմատիվ փաստաթղթերի դրույթներին: Օրինակ, հատկանշական է, որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի տեքստում այլևս չի օգտագործվում «ոչ պետական ուսումնական հաստատություն» անվանումը, ձևականորեն կարծես թե հավասարեցված են պետական և ոչ պետական բուհերի իրավունքները: Բացի դրանից, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օ-

րենքներով լրացուցիչ մասնագիտական կրթության ձևակերպումը լիարժեք չէ, քանի որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասում տրված է լրացուցիչ մասնագիտական կրթության ընդամենը սահմանումը, իսկ ինչ է իրենից ներկայացնում որակավորման բարձրացումը և/կամ մասնագիտական վերապատրաստումը, ոչինչ չի ասված: Փաստորեն, օրենքներից և ոչ մեկում ներկայացված չեն այդ կրթական ծրագրերի տարբերությունները: Այս առումով, իրավական պրակտիկայում բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում իրավահարաբերությունները պետք է կանոնակարգվեն ինչպես «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ կրթական համակարգի ընդհանուր օրենսդրությամբ, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերով: Սակայն ենթաօրենսդրական ակտերի ընդունումը շատ հաճախ ձգձգվում է, ինչի հետևանքով օրենսդրությունը տևական ժամանակ մնում է անկիրառելի: Անհրաժեշտ ենք համարում օրենքում նախատեսել դրա կիրառումն ապահովող և ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի ընդունման ժամանակացույց և «ՀՀ բուհերում հեռակա ուսուցման կարգի»³⁷ նմանակով սահմանել ՀՀ-ում լրացուցիչ կրթություն ստանալու կարգը և պայմանները:

Ամեն դեպքում, չի կարելի թերագնահատել բարձրագույն կրթությունը կանոնակարգող օրենքի ընդունման կարևորությունը: Այն ոչ միայն հնարավորություն է տալիս գործնականում ակտիվորեն կիրառել բուհերին տրված ակադեմիական ազատությունները, այլև կատարելագործել կրթական հարաբերությունները և բարձրացնել ուսուցման որակը: Այս օրենքի ընդունումն իրավական հիմքեր ստեղծեց տրամաբանական ավարտին հասցնելու բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի իրավական կարգավորումը:

Օրենքի ընդունմանը հաջորդեցին գործադիր իշխանության կողմից հաջորդաբար ընդունված մի շարք կարևոր ենթաօրենսդրական ակտեր: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության **2004թ. հոկտեմբերի 21-ի N 1476-Ն** որոշմամբ հաստատվեց «Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ձևով ուսուցանվող մասնագիտությունների ցանկը», **2005թ. հոկտեմբերի 22-ին** ընդունվեց «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» **N 2307-Ն որոշումը**, **2005թ. ապրիլի 14-ին** ընդունվեց «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման

³⁷ Տես՝ ՀՀ ԿԳ նախարարի 06.12.2007թ. թիվ 1194-Ն հրամանը, <http://www.edu.am/index.php?id=1381&topMenu=1&menu1=85&menu2=117&arch=0>

կարգը հաստատելու մասին» *N 449* որոշումը, *2005թ. հունիսի 23-ին*՝ «Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» *N 975* որոշումը, *2005թ. մայիսի 25-ին*՝ «Յեռակա և առկա, դրսեկության /էքստեռնատի/, ինչպես նաև հեռավար /դիստանցիոն/ ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին» *N 692* որոշումը, *2005թ. հուլիսի 14-ին*՝ «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգի վերաբերյալ» *N 1112-Ն* որոշումը, *2006թ. հուլիսի 27-ին*՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի վերաբերյալ» *N 1183-Ն* որոշումը:

Ոլորտի կարգավորման վերաբերյալ ընդունվեցին ՀՀ կրթության և գիտության նախարարի մի շարք հրամաններ, այդ թվում՝

2006թ. ապրիլի 11-ի N 207-Ն հրամանը՝ «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգը հաստատելու մասին», *2006թ. սեպտեմբերի 29-ի N 671-Ն* հրամանը՝ «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը հաստատելու մասին», *2006թ. դեկտեմբերի 22-ի N 998-Ն* հրամանը՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգում ընդգրկված պետական ոչ առևտրային կազմակերպության /բարձրագույն ուսումնական հաստատության/ գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթի և այդ պաշտոնում նշանակված անձանց ատեստավորման անցկացման ընթացակարգերը և մրցութային ու ատեստավորման հանձնաժողովների ձևավորման կարգերը հաստատելու մասին», *2007թ. հուլիսի 6-ի N 629-Ն* հրամանը՝ «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոնները հաստատելու մասին»:

Հանրագումարի բերելով Հայաստանի բարձրագույն մասնագիտական կրթության կարգավորման վերաբերյալ օրենսդրության վերլուծությունը, կարող ենք եզրահանգել:

Մարդու և քաղաքացու կրթության սահմանադրական իրավունքին վերաբերող ՀՀ օրենսդրությունը վերջին տասնամյակի ընթացքում ստացել է համակարգված բնույթ՝ առանձին խնդիրներ կարգավորող օրենքների ընդունումից դեպի կրթության ողջ ոլորտը համակարգող հիմնարար, մարտավարական և ռազմավարական իրավական փաստաթղթերի ընդունում:

Բարձրագույն մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ - գործող բազմաբնույթ օրենսդրությունը բնութագրվում է ներքին

միասնությամբ և դրա հիմքում ընկած սահմանադրական ընդհանուր սկզբունքներով:

Այդ օրենսդրությունը երաշխավորում է ՀՀ քաղաքացիների բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը և կարգավորում դրա իրականացման ձևերը:

Այս դրական ձեռքբերումներով հանդերձ, օրենսդրական դաշտում ակնհայտ են որոշակի բացթողումներ, թերություններ և անհամապատասխանություններ: Օրենսդրության մանրամասն վերլուծությունը և բարելավման վերաբերյալ առաջարկություններ կներկայացվեն սույն աշխատության հաջորդ բաժիններում:

§ 2. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը. պետական և մասնավոր բուհերի իրավական կարգավիճակը

Քաղաքացիների կրթության իրավունքի իրականացումը երաշխավորելու համար պետությունը պարտավոր է ապահովել համապատասխան իրավական և սոցիալ-տնտեսական պայմաններ: Այդ պայմաններից կարևորագույնը կրթության համակարգն է, որի միջոցով իրականացվում է, մի կողմից, գիտելիքների կուտակումն ու փոխանցումը, մյուս կողմից՝ ազգային ու մշակութային արժեքների պահպանումը:

Սահմանադրությամբ երաշխավորված բարձրագույն կրթության իրավունքն իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի միջոցով և այդ համակարգի բոլոր օղակների փոխկապակցված ու համաձայնեցված գործունեության արդյունքում է հնարավոր ապահովել մասնագիտական կրթության որակը և արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական հաստատությունները խորհրդային տարիներին ապահովում էին հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի պահանջները, մշակութային և գիտական առաջընթացը: Խորհրդային շրջանի վերջին տարիներին Հայաստանում գործում էր 13 բուհ, որոնցում սովորում էին 42505 ուսանողներ, դասավանդում էին 5605 պրոֆեսորներ, դոցենտներ և դասախոսներ: Հայաստանում տարեկան պատրաստվում էին տարբեր բնագավառների մոտ 10000 մասնագետներ³⁸:

Խորհրդային Հայաստանի կրթության համակարգը պլանավորված էր: Բոլոր կրթական հաստատություններն օգտագործում էին իրենց տեսակին համապատասխան նույնատիպ կրթական

³⁸ Տես՝ Տարեկան վիճակագրություն. Խորհրդային Հայաստանը 1989թ. Երևան, 1991, էջեր 481-484:

ծրագրեր: Պլանավորված էին ոչ միայն անհրաժեշտ մասնագետների պատրաստման ամենամյա թվաքանակը, այլև աշխատանքով նրանց ապահովելու խնդիրները և դրա համար անհրաժեշտ բոլոր ֆինանսական ծախսերը: Կրթությունն անվճար էր բոլոր աստիճաններում:

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին արդեն Հայաստանի կրթական համակարգում սկիզբ առան որոշ փոփոխություններ՝ հիմնվեցին առաջին ոչ պետական ուսումնական հաստատությունները³⁹, որոնք զգալի ավանդ ունեցան երկրի մասնագիտական կրթության համակարգի զարգացման գործում:

Եթե մինչև 1990/1991 ուսումնական տարին մասնագիտական կրթությունն անվճար էր, ապա 1992 թվականից մասնագիտական կրթություն տվող պետական կրթական հաստատությունները, պետական պատվերով սովորող ուսանողներից բացի, սկսեցին ուսանողներ ընդունել նաև վճարովի հիմունքներով: Պետության կողմից վերահսկվող կրթության կենտրոնացված համակարգը և ֆինանսավորումը Հայաստանում պահպանվեցին նաև ԽՍՀՄ փլուզումից հետո: Գիշտ է, այդ ֆինանսավորումն այնքան աննշան էր, որ անկախության առաջին տարիներին ուսուցչի /դասախոսի/ աշխատավարձը համարժեք էր ամսական 5 – 10 ԱՄՆ դոլարի:

Անցած մեկուկես տասնամյակի ընթացքում բարձրագույն կրթության համակարգը զգալիորեն վերափոխվեց: 90-ական թվականների կեսերից կրթության ոլորտում սկսեցին իրականացվել կառուցվածքային բարեփոխումներ: Մինչև 1995թ. Հայաստանի կրթության ոլորտը ղեկավարվում էր երկու նախարարությունների կողմից: ՀՀ լուսավորության նախարարությունը ղեկավարում էր նախադպրոցական, միջնակարգ և միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատանքը և ուսումնական գործընթացը, իսկ ՀՀ բարձրագույն կրթության նախարարությունը ղեկավարում էր բուհական կրթության բնագավառը:

Կրթության ոլորտի այս 2 նախարարությունները իրար միավորելով, ձևավորվեց **ՀՀ կրթության և գիտության նախարարությունը**: Նախարարության կանոնադրությունը հաստատվեց 1996թ. փետրվարի 1-ի ՀՀ վարչապետի N 36 որոշմամբ⁴⁰: Այսպիսով, ներկայումս ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հանդիսանում է

³⁹ Առաջին ոչ պետական բուհերն ստեղծվեցին և գործում էին «Կոպերացիայի մասին» ԽՍՀՄ օրենքի հիման վրա: Դրանց առաջնեկը «ՄՅՈՒԴ» իրավաբանական ինստիտուտն էր, որն սկսեց գործել 1988/1989 ուս. տարվանից:

⁴⁰ ՀՀ պաշտոնական տեղեկագիր, Երևան 1996, N 2:

կրթության ոլորտում պետական կառավարման միակ լիազորված մարմինը, որի լիազորությունները սահմանված են ինչպես կանոնադրությամբ, այնպես էլ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և մյուս ՀՀ օրենքներով⁴¹:

1998թ. վերջին նախկին 4 գիտակրթական ինստիտուտների բազայի վրա Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց Կրթական բարեփոխումների կենտրոնը: Կենտրոնի ստեղծման նպատակն էր՝ կազմակերպել և վերահսկել կրթության ոլորտի բարեփոխումների ընթացքը, ուսումնական նոր ծրագրերի և դասագրքերի ստեղծումը, ուսուցիչների վերապատրաստումը և այլն: 2004թ. կենտրոնը վերակազմվեց «Կրթության Ազգային Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության⁴²:

1999թ. ապրիլի 14-ին «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումն իրավական հիմքեր ստեղծեց կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հետագա բարեփոխումների իրականացման համար: Օրենքը (հոդվ. 8) հստակ սահմանագծում էր Հայաստանի կրթության համակարգի կառուցվածքը, որը երեք հիմնական բաղկացուցիչների փոխկապակցված ամբողջություն է.

- 1) միասնական պետական կրթական չափորոշիչները,
- 2) կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերը,
- 3) ուսումնական հաստատությունները և կրթության կառավարման մարմինները:

Դրա հետ մեկտեղ, կրթության համակարգի այս հիմնական բաղկացուցիչների թվում ճիշտ կլիներ ներառել նաև կրթության սուբյեկտներին, քանի որ առաջին հերթին «մարդիկ, այլ ոչ թե պետությունն ու հասարակությունն են հանդիսանում կրթության համակարգի գլխավոր օղակը, մեկնակետը, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել և ողջ համակարգը»⁴³:

Ռուսաստանցի հետազոտող Վ. Վ. Ռիբակովան⁴⁴ առաջարկում է կրթության ոլորտի սուբյեկտներին դասակարգել ըստ կրթական իրա-

⁴¹ Տես՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը:

⁴² Տես՝ www.laws.am

⁴³ Комментарий к Закону об образовании /Отв. ред. В. И. Шкатулла. М., 1998. էջ17:

⁴⁴ Рыбакова В. В. Конституционное право на общее образование в Российской Федерации (проблемы теории и практики). Автореферат дисс. на канд. юрид. наук - Екатеринбург, 2005, с. 19.

վահարաբերություններում իրենց գործունեության: Ըստ այս չափանիշի՝ նա առանձնացնում է հետևյալ խմբերը.

1. կրթության սահմանադրական իրավունքի սուբյեկտներ (քաղաքացիներ, քաղաքացիություննեցող անձինք, օտարերկրացիներ և) և այդ իրավունքի իրականացմանը հետամուտ հասարակական միավորումներ,

2. սուբյեկտներ, որոնք կրթության գործընթացում իրականացնում են կրթության սահմանադրական իրավունքի իրացման գործառույթ՝ ուսումնական հաստատություններ, աշխատանքային կոլեկտիվներ, պրոֆեսորադասախոսական կազմ և այլն,

3. սուբյեկտներ, որոնք ապահովում են երաշխիքներ և վերահսկողություն կրթության իրավունքի իրականացման նկատմամբ:

Միանգամայն ընդունելի այս դասակարգման առավելությունն այն է, որ կրթական հարաբերությունների սուբյեկտները խմբավորվում են ոչ միայն ըստ իրենց կատարած գործառույթների, այլև ըստ իրենց ընդհանուր շահերի, ինչպես նաև ըստ իրենց ներխմաբային իրավունքների ու պարտականությունների:

Այսպիսով, ամփոփելով կրթական գործունեության սուբյեկտների իրավական կարգավիճակի վերլուծությունը, հնարավոր ենք համարում պնդել, որ ուսանողները և բուհերի աշխատողներն իրենցից ներկայացնում են կրթական համակարգի առանձին բաղկացուցիչը նաև այն պատճառով, որ հանդիսանում են կրթական ծառայությունների շահառուներ: Հենց այս բաղկացուցիչի առկայությունից է կախված բարձրագույն կրթության համակարգի որակական կողմը և կենսունակությունն ընդհանրապես: Իր հերթին, ուսուցման գործընթացի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները հանդես են գալիս որպես թույլատրելի և անհրաժեշտ վարքագծի իրավաբանական շրջանակներ և, իհարկե, որպես միջոց բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման համար:

Պետական կրթական չափորոշիչը նորմատիվ է, «որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները»⁴⁵: Յուրաքանչյուր մասնագիտության (մասնագիտացման) համար հաստատվում է մեկ չափորոշիչ, և «չափորոշ չի պահանջների ապահովումը պարտադիր է տվյալ մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) ուսուցում իրականացնող հաստատության համար»:

⁴⁵ Տես՝ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, հոդված 3.2:

Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 14-ի N 449-Ն որոշմամբ⁴⁶:

Բարձրագույն մասնագիտական կրթության մյուս հիմնական բաղկացուցիչը *կրթական ծրագրերն են*: «Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը»: «Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը»:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում առաջ է քաշված կրթության հաջորդայնության գաղափարը՝ որպես կրթության ոլորտում պետական քաղաքականության սկզբունք: Կրթության հաջորդայնությունը դիտարկվում է որպես գործընթաց, որն ապահովում է անձի առանց ընդհատումների զարգացումը: Այդ գործընթացը բաղկացած է փուլերից, որոնցից յուրաքանչյուրը հիմքեր է ստեղծում նոր՝ ավելի բարձր աստիճանին անցնելու համար: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի՝ հաջորդական կրթությունը Հայաստանում իրականացվում է հետևյալ կրթական ծրագրերի միջոցով՝

- 1) հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ),
- 2) մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը: Բարձրագույն մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատությունը, իսկ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը վերահսկում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին⁴⁷:

⁴⁶ Տես՝ ՀՀ կառավարության 14 ապրիլի 2005թ. N 449-Ն որոշման հավելված, www.aws.am

⁴⁷ «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 10 և 14-րդ հոդվածներ:

Բնորոշելով կրթական չափորոշիչների և կրթական ծրագրերի հարաբերակցությունը, պետք է ընդգծել, որ պետական կրթական չափորոշիչներն առաջնային և գերակա են կրթական ծրագրերի նկատմամբ:

Կրթության զարգացման հիմնական չափանիշը կրթական ծրագրերի և չափորոշիչների հաջորդայնության իրականացումն է: Սակայն հանրակրթությունից բարձրագույն մասնագիտական կրթությանը անցման փուլում այդ հաջորդականությունը, մեր կարծիքով, դեռևս լիարժեք չի ապահովվել: Դրա վկայությունը Հայաստանում բավականին տարածում գտած կրկնուսուցման երևույթն է, որը խոսում է բուհական կրթության պահանջներին հանրակրթական ուսումնական ծրագրերի, ավելի ճիշտ՝ դրանց իրականացման որոշ անհամապատասխանության մասին:

Գործող կրթական չափորոշիչները և մասնագիտական ուսումնական ծրագրերը կազմված են պահպանողական մոտեցումով: Հասկանալի է, որ կոնկրետ մասնագիտությամբ կրթության բովանդակությունն արտահայտում է գիտության, կառավարման և արտադրության առկա վիճակը, ընդհանրացնում դրանց նվաճումները՝ որոշ ուշացումով, ինչը թույլ չի տալիս շրջանառության մեջ դնել դեռևս չստուգված կամ չհաստատված տեսակետներ ու մեկնաբանություններ: Սակայն, մյուս կողմից, նման պահպանողականությունը գիտության և հասարակական կյանքի գնալով արագացող զարգացման պայմաններում որոշակիորեն իջեցնում է կրթության որակը, որը թի հասցնում արձագանքել հասարակության կյանքում արդեն տեղ գտած նոր երևույթներին և մոտեցումներին:

Այսպես, դեռևս 2001թ. հունվարի 16-ին ՀՀ կառավարությունն իր թիվ 24 որոշմամբ հաստատեց բարձրագույն կրթության չափորոշիչները, 2003թ. օգոստոսի 14-ի N 1079-Ն որոշմամբ դրանք հիմնավորապես փոփոխեց, իսկ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո կարիք զգացվեց դրանք կրկին վերանայել: Ըստ այդմ, ՀՀ կառավարության 14 ապրիլի 2005թ. N 449-Ն որոշմամբ հաստատվեց բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման նոր կարգը⁴⁸:

Մեր համոզմամբ, բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և ծրագրերը յուրաքանչյուր մասնագիտության գծով պետք է կառուցված լինեն առավել ճկուն, ներառեն ինչպես ավանդական, այնպես էլ նոր առարկաներ և դա-

⁴⁸ ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 14-ի N 449-Ն որոշման հավելված, www.arlis.am

սընթացներ: Դա հնարավորություն կտա բարձրագույն մասնագիտական կրթության տված որակավորումները մոտեցնել կյանքի պահանջներին: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին բարձրագույն կրթության չափորոշիչների մշակման հարցում այս միտումը հիմնականում նկատելի է: Սակայն նման մոտեցումը ոչ բոլոր դեպքերում է կիրառվում: Օրինակ՝ վերցնենք «իրավաբան» մասնագիտության որակավորման պետական կրթական չափորոշիչները: Ներկայումս տարատեսակ մասնագիտացման իրավաբանների մեծ պահանջարկ կա: Դա է վկայում գրեթե բոլոր ոչ պետական բուհերում «իրավաբանական» ֆակուլտետների առկայությունը: Մինչդեռ «իրավագիտություն» մասնագիտացումը՝ գործունեության բնագավառների տարաբաժանմամբ, հստակորեն իրականացվում է միայն Երևանի պետական համալսարանում⁴⁹: Մեր կարծիքով, ճյուղավորված մասնագիտացումը հասարակական առումով ավելի արդյունավետ կլիներ: Բացի դրանից, տեղին է նկատել, որ ոչ պետական բուհերում պետական կրթական չափորոշիչի պարտադիր լինելը նրանց ստիպում է կրկնել պետական բուհերի մասնագիտությունների որակավորումների վերաբերյալ նույն մոտեցումները: Այսինքն՝ ոչ պետական բուհերը տվյալ մասնագիտությամբ մասնագետներ պատրաստելիս գրեթե անփոփոխ որպես հիմք են վերցնում պետական բուհերի, տվյալ դեպքում՝ Երևանի պետական համալսարանի նույն առարկայացանկը և նույն ժամաքանակը: Այս իրավիճակը ոչ պետական բուհերին նույնպես հնարավորություն չի տալիս տարատեսակ այլ որակավորումներով իրավաբաններ պատրաստել: Մինչդեռ ոչ պետական բուհի առավելությունը կարող էր լինել հենց նրանում, որ այն պետական բուհերից շատ ավելի արագ կարողանար արձագանքել աշխատաշուկայի պահանջներին:

Կրթության համակարգի մյուս կարևոր բաղկացուցիչը հանդիսանում է բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը, որոնցում անմիջականորեն իրականացվում է քաղաքացիների բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը:

Հայաստանի բուհական կրթական ցանցն անկախության ձեռքբերումից ի վեր ոչ միայն պահպանվեց, այլ նույնիսկ ընդլայնվեց՝ շնորհիվ ուսուցման վճարովի համակարգի ներդրման: Այսպես, եթե 1990/1991թ. ուսումնական տարում Հայաստանում գործում էին

⁴⁹ Այսպես, Հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող «իրավագիտություն» մասնագիտացումն ունի մանկավարժական թեքում՝ պատրաստում է իրավագիտության ուսուցիչներ:

13 պետական բուհեր՝ 42505 ուսանողներով⁵⁰, ապա 2003/2004թ. ուսումնական տարում հանրապետությունում արդեն գործում էին 16 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ իրենց մասնաճյուղերով, որտեղ սովորում էր 55928 ուսանող, նրանցից 36739-ը կամ 65.7%-ը սովորում էր վճարովի ուսուցման, իսկ 19189-ը կամ 34. 3%-ը՝ պետպատվերով ուսուցման համակարգերում: 2003/2004թ. ուսումնական տարում հանրապետությունում գործել են նաև 73 բարձրագույն ոչ պետական ուսումնական հաստատություններ, որոնց ուսանողների թվաքանակը կազմել է 22016⁵¹: Ընդհանուր առմամբ 2003/2004թ. ուսումնական տարում Հայաստանում բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններ ընդունվել է 21475, սովորել՝ 77944, ավարտել՝ 11698 մարդ⁵²:

Ներկայումս Հայաստանում գործում են 71 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դրանցից միայն 17 են գործում մարզերում, մնացյալը տեղակայված են մայրաքաղաք Երևանում: Բացի դրանից, Հայաստանում գործում են արտասահմանյան 11 ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր (հիմնականում Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի), որոնց գործունեությունը նույնպես կարգավորվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքով: Եվս 4 բուհեր ստեղծվել են միջպետական համաձայնագրերի հիման վրա⁵³: Դրանք են՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանը (1991թ.), Հայաստանի Ֆրանսիական համալսարանը (2000թ.), Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանը (2001թ.), Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների եվրոպական տարածաշրջանային ինստիտուտը (2001թ.):

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման.

1) բակալավրի, 2) դիպլոմավորված մասնագետի, 3) մագիստրոսի աստիճանները:

Սկսած 2005/2006թ. ուսումնական տարվանից բուհերում ընդունելությունը կատարվում է որակավորման երկաստիճան համակարգով՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Մինչև 2009/2010թ. ուսումնական տարին, սակայն, գործելու է նաև միաստիճան որակա-

⁵⁰ Տես՝ ՀՀ ԿԳ նախարարության տեղեկագիր, Երևան, 2000:

⁵¹ Տես՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Երևան, 2004թ., էջեր 129-130:

⁵² Տես՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ սոցիալական վիճակը 2003թ.:

⁵³ Տես՝ ՀՀ ԿԳ նախարարության Տեղեկագիր, Երևան 2003թ., էջեր 79-157:

վորման համակարգը՝ դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ⁵⁴:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատ): Փաստացի ներկայումս գործում է բուհական ուսուցման երկու ձև՝ առկա (լրիվ ժամանակացույցով) և հեռակա (կարճված ժամանակացույցով): Վերջինս ունի անհամեմատ սեղմ ակադեմիական ժամաքանակ՝ առաջինի ընդամենը 50%-ը: Առկա ձևով սովորող ուսանողների ծանրաբեռնվածությունը բակալավրի և դիպլոմավորված մասնագետի համար ըստ ուսումնական ծրագրի կազմում է շաբաթական 28-36 ժամ: Մագիստրոսի ծրագրով սովորող ուսանողների ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 16-18 ժամ, իսկ ասպիրանտուրայում սովորողների՝ 4-8 ժամ: Բուհերին տրված են լայն ինքնավարություն և ակադեմիական ազատություններ:

Ըստ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը ներառում է «լիցենզավորված բարձրագույն ուսումնական հաստատությունները և համապատասխան հետբուհական ու լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունները» (հոդվ. 7.2): Այսինքն՝ օրենքն իրավական հավասարություն է սահմանում բոլոր տիպի ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց իրավական - կազմակերպական ձևից: Հատկանշական է, որ օրենքում «ոչ պետական ուսումնական հաստատություն» ձևակերպումը փոխարինված է «լիցենզավորված ուսումնական հաստատություն» ձևակերպումով, ինչը ձևականորեն հավասարեցնում է պետական և ոչ պետական բուհերի իրավունքները:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ *«Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերի ձևով (առկա, հեռակա, դրսեկություն), կազմակերպական-իրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ»* (հոդվ. 24): Այսինքն՝ օրենսդրությունը պետական և ոչ պետական բուհերի համար իրավական վիճակը կապում է նրանց կազմակերպական-իրավական ձևի հետ: Նման մոտեցումը ոչ պետական բուհերի համար ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կող-

⁵⁴ Տես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, 26-րդ հոդվածը:

մեր: Այսպես, օրինակ, եթե պետական ուսումնական հաստատությունը հիմնարկի կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն օրենքներին ու իրավական այլ ակտերին համապատասխան ձեռք է բերում իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ, ապա *«ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև»*: Այնուհետև, եթե պետական ուսումնական հաստատության հիմնադիրը համարվում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ նրա կողմից համապատասխան լիազորված պետական մարմինը, ապա *«ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք»*⁵⁵:

Օրենսդրությունը ոչ պետական բուհերը որոշ հարցերում հավասարեցնում է պետական բուհերի կարգավիճակին: Օրինակ, ուսումնական հաստատությունը, անկախ իր կարգավիճակից, ստեղծված է համարվում հիմնադրի կողմից դրա կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից: Այսինքն՝ ոչ պետական բուհի հիմնադիր փաստաթուղթը դրա հաստատված կանոնադրությունն է, որում պարտադիր նշվում են հաստատության կազմակերպական-իրավական ձևը, հաստատության գտնվելու վայրը, գործունեության առարկան և նպատակները (հոդվ. 30):

Պետական բուհերի հետ հավասար իրավունքներով՝ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը օտարերկրյա պետությունների կրթական կառավարման համապատասխան մարմինների հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով կարող է իրականացնել օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն, մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ինչպես նաև մասնագետների փոխանակում, համատեղ գիտական աշխատանքներ, ծրագրեր և այլն⁵⁶:

Եթե առանձին հարցերում օրենսդրությունը ոչ պետական բուհերին տալիս է նույնիսկ ավելի ինքնուրույնություն, քան պետական բուհերին, ապա ֆինանսական հարցերում պետական և ոչ պետական բուհերի կարգավիճակ, արմատապես տարբերվում է: Այսպես,

⁵⁵ Տես՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 27 և 29-րդ հոդվածները:

⁵⁶ Տես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը:

եթե «պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի, սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով, ապա՝ *ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության որևէ ֆինանսավորում պետության կողմից չի իրականացվում*: Ավելին, «ոչ պետական ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները մեկ սովորողի հաշվարկով չեն կարող ցածր լինել պետական համանման ուսումնական հաստատությունների համար պետական չափորոշիչով սահմանված ֆինանսավորման չափանիշներից»⁵⁷:

Փաստորեն, ոչ պետական բուհերը չեն առաջարկում լրացուցիչ մասնագիտական կրթություն՝ որակավորման բարձրացում, մասնագիտական վերապատրաստում, հարակից մասնագիտության յուրացում և այլն: Նմանօրինակ լրացուցիչ կրթություն իրականացվում է ոչ բոլոր պետական բուհերում, միջազգային կազմակերպությունների և որոշ հասարակական կազմակերպությունների կողմից⁵⁸: Մեր կարծիքով, լրացուցիչ կրթական ծրագրերը պետք է ազատել ավելացված արժեքի հարկից օժանդակելու համար նմանատիպ ծրագրերի կայացումը: Բացի դրանից, անհրաժեշտ է օրենսդրության մեջ լրացուցիչ մասնագիտական կրթությունն ավարտած անձանց համար իբրև ավարտական փաստաթուղթ սահմանել դիպլոմը, այլ ոչ թե հավաստագիրը կամ վկայականը:

Ոչ պետական բուհերից էականորեն տարբերվող կարգավիճակ ունեն միջպետական պայմանագրերով ստեղծված բուհերը: «Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և լիցենզավորվում, հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով... »:

Այսուհանդերձ, պետական և ոչ պետական բուհերի իրավական կարգավիճակի հիմնական տարբերությունը պայմանավորված է նրանց լիցենզավորման, ատեստավորման և հավատարմագրման գործընթացով:

Ուսումնական հաստատությունների կրթական գործունեության լիցենզավորմանն ու ատեստավորմանն ուղղված առանձին քայլեր բարեփոխումների ընթացքում արդեն կատարվում էին: Սակայն

⁵⁷ Տես՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 46 և 47-րդ հոդ:

⁵⁸ Տես՝ www.vet.am

հավատարմագրման գաղափարը որոշակի իրավական բովանդակություն ձեռք բերեց միայն 1999թ.՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո: Այս գործընթացի հիմնական հասկացությունների պաշտոնական սահմանումները տրված են «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում: Ըստ այդ հոդվածի՝ *լիցենզավորումը* ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթացն է, *ատեստավորումը*՝ ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատումն է՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան, իսկ *պետական հավատարմագրումը*՝ պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը:

Ուսումնական հաստատությունների լիցենզավորման, ուսուցման որակի պետական վերահսկողության և մասնագիտությունների հավատարմագրման համար եզրակացություն տալու նպատակով՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում էր ստեղծել լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն: Լիցենզավորման և հավատարմագրման սկզբունքները, նպատակները և կարգը ամրագրվեցին «Կրթության մասին» (41-43-րդ հոդվածներ) և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում (հոդվ. 13): Ըստ այդմ, ՀՀ կառավարության 2000թ. հունիսի 23-ի N 344 որոշմամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության կառուցվածքում ստեղծվեց «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն» պետական գործակալությունը (ԼՀԾ): Դրանից ոչ շատ անց՝ 2000թ. հուլիսի 7-ին ՀՀ կառավարության N 372 որոշմամբ հաստատվեց բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և նրանց մասնագիտությունների հավատարմագրման կանոնակարգը, իսկ արդեն 2008թ. նոյեմբերին կառավարության որոշմամբ ստեղծվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը⁵⁹:

Ուսումնական հաստատության լիցենզավորման համար հիմք են ծառայում «մանկավարժական և պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի, լաբորատոր բազայի և ուսումնական տարածքի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդա-

⁵⁹ Տես՝ ՀՀ կառավարության 27. 11. 08թ. թիվ 1486-Ն որոշումը:

կան ապահովումը»⁶⁰: Ուսումնական գործունեություն իրականացնելու համար պետական լիցենզիան տրվում է անժամկետ:

Բուհի և դրա մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է միայն լիցենզիայի առկայության դեպքում, ուսումնական հաստատության և դրա սովորողների ատեստավորման վերաբերյալ եզրակացության հիման վրա: Ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի լիցենզավորման և ուսումնական հաստատությունների հավատարմագրման չափորոշիչների մշակումը, լիցենզավորման և հավատարմագրման գործընթացի ուսումնասիրության կազմակերպումն իրականացնում է Կրթության ազգային ինստիտուտը: Պետական հավատարմագրման վկայականը տրվում է «ուսումնական հաստատության և դրա ուսանողների երկու տարվա շրջանավարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման վերաբերյալ դրական եզրակացության հիման վրա, ինչպես նաև այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայության դեպքում»⁶¹:

Պետական հավատարմագրումը հանդիսանում է ուսումնական հաստատության գործունեության, մասնագետների պատրաստման որակի, կրթության բովանդակության և մակարդակի գնահատականը՝ կրթության պետական չափորոշիչներին համապատասխան: Հավատարմագրված ուսումնական հաստատություններն ստանում են պետական հավատարմագրման վկայական, որը հավաստում է նրանց ուսումնական ծրագրերի մակարդակը, բովանդակությունը և շրջանավարտների պատրաստվածության որակը:

Այնուամենայնիվ, չնայած իրավական հիմքերի ստեղծմանն ու կատարված կազմակերպչական աշխատանքներին, ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը ներդրվեց զգալի թերություններով, կատարվեցին բազմաթիվ սխալներ, որի արդյունքում պետական հավատարմագրման գործընթացը միառժամանակ դադարեցվեց: 2003թ. դրությամբ ԼՀԾ-ի կողմից ոչ պետական բուհերից լիովին հավատարմագրված էին 18-ը, իսկ 11 այլ բուհեր հավատարմագրված էին մասնակիորեն՝ առանձին մասնագիտությունների գծով: Հավատարմագրված բուհերը լիազորված էին իրենց շրջանավարտներին տալու պետական նմուշի դիպլոմ⁶²:

ԼՀԾ-ն գործում է կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ, ներկայացնում է ուսումնական հաստատություն-

⁶⁰ Տես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

⁶¹ Տես՝ նույն տեղում:

⁶² Տես՝ ՀՀ ԿԳՆ տեղեկագիր, Երևան 2003թ., էջ 78:

ների հավատարմագրման մասին եզրակացություններ, իրականացնում է պետական վերահսկողություն ուսման որակի, մասնագիտությունների ու բուհերի հավատարմագրման նկատմամբ:

2006թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ բոլոր մասնագիտությունների գծով լիովին հավատարմագրված էին 29 ոչ պետական բուհեր: Եվս 8 բուհեր հավատարմագրված են մասնակիորեն՝ առանձին մասնագիտությունների գծով⁶³: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 42 հոդվածի 4-րդ կետի, եթե ԼՀԾ-ն հավատարմագրում է մասնավոր բուհի մասնագիտությունների 75%-ը, այն համարվում է լիովին հավատարմագրված հաստատություն:

Պետք է ասել, որ կառավարության կողմից լիցենզավորման և հավատարմագրման պարտադրանքն առաջ է բերում որոշ նրջակցություն մասնագիտական կրթության ոլորտում: Սակայն դեռ վաղ է ասել, որ պետական հավատարմագրման գործընթացում օրենքով նախատեսված հիմնական պահանջը՝ պետական չափորոշիչներին կրթության համապատասխանությունը, պահպանվում է, որ որակի ապահովման սահմանված չափորոշիչները և գործընթացն իրապես ծառայում են որպես համակարգի վերահսկողության միջոց և երաշխավորում են մասնավոր բուհերում ուսուցման որակի ապահովումը: Դեռևս առկա են իրավական, ֆինանսական, կադրային ու բովանդակային լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ, որոնք խաթարում են կրթության համակարգի բնականոն զարգացումը:

Այդ նկատառումների հաշվառմամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքը պետական և ոչ պետական բուհերի իրավահավասարության ճանաչման տեսանկյունից խիստ կարևորում է այն, որ

ա) պարտադիր հավատարմագրման գործընթաց պետք է անցնեն նաև պետական ուսումնական հաստատությունները և դրանց մասնագիտությունները (42-րդ հոդվ., 6-րդ մաս), և բ) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը (5-րդ հոդված, 9-րդ կետ):

Սակայն, այսօրվա դրությամբ դեռևս առկա են այդ իրավահավասարությունը խախտող մի շարք այլ հանգամանքներ, այդ թվում՝

1. օրենքի՝ պետական բուհերում ուսուցանվող մասնագիտությունների հավատարմագրման պահանջները չեն կատարվում: Պաշտոնական որևէ տեղեկություն, որ այդ գործընթացն սկսվել է, դեռևս առկա չէ,

⁶³ Տես՝ Տեղեկագիր Բարձրագույն կրթություն, պրակ 2, Երևան 2007թ. էջեր 203-211:

2. պետության միջոցներից նպաստներ և կրթաթոշակներ տրվում են բացառապես պետական բուհերում սովորող ուսանողներին,

3. հավատարմագրված ոչ պետական բուհերի գորակոչային տարիքի ուսանողները զինվորական ծառայությունից տարկետում չեն ստանում: Նման տարկետման իրավունք պետությունը վերապահում է միայն պետական բուհերի ընդունելության քննությունների ժամանակ բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

Հավատարմագրված ոչ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններին պետական բուհերի հետ լիիրավ հավասար կարգավիճակ ապահովելու համար անհրաժեշտ է՝ նախ, վերացնել վերոնշյալ բոլոր տարբերությունները և ապագայում պետության կողմից բարձրագույն կրթության ոլորտում տարվող քաղաքականության մեջ բացառել խտրականությունը ոչ պետական բուհերի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում պետական և մասնավոր բուհերի կարգավիճակը պետության վերաբերմունքի տեսանկյունից իրարից զգալիորեն տարբերվում է: Հասարակության մեջ դեռևս, ոչ անհիմն, վստահության պակաս կա ոչ պետական բուհերի տված կրթության որակի նկատմամբ: Չնայած Սահմանադրության 39-րդ - հոդվածում ամրագրված դրույթներին, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում տրված ձևակերպումներին, Հայաստանում գործող ոչ պետական բուհերը չեն օգտվում պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ հավասար իրավունքներից: Ոչ պետական բուհերի ուսանողների կարգավիճակի հարցում պետությունը փաստորեն վարած քաղաքականությունը խախտում է ուսանողների և դիմորդների որոշակի մասի բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքները:

Օրենսդրությամբ ամրագրված կրթության համակարգի վերջին բաղկացուցիչը *կրթության կառավարման մարմիններն են՝* իրենց ենթակառույցներով:

Կրթության ոլորտի կառավարման գործում գերադասելի դիրք ունի ՀՀ կառավարությունը: Կառավարությունն իր լիազորությունների զգալի մասը փոխանցում է ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, որը հանդիսանում է պետական կառավարման լիազորված մարմինը կրթության ոլորտում: Իր կանոնադրությանը համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը համակարգում է իր կառավարման ոլորտում գործող կազմում գործող մեկ գործակալության, երկու տեսչությունների և մեկ ինստիտուտի աշխատանքները: Դրանք են.

1. ՀՀ ԿԳՆ լեզվի պետական տեսչությունը,
2. ՀՀ ԿԳՆ –ի «ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալությունը,
3. ՀՀ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերությունը,
4. ՀՀ ԿԳՆ Կրթության պետական տեսչությունը,

Պետական կառույցներից բացի, բարձրագույն կրթության ոլորտի կառավարմանը որպես հիմնական շահառու ակտիվ մասնակցում են նաև ուսումնական գործունեության սուբյեկտները: Ուսումնական հաստատության կառավարմանը մասնակցելով՝ այդ սուբյեկտները ոչ միայն իրականացնում են կրթության իրենց իրավունքը, այլ նաև դառնում են կրթության գործընթացի ակտիվ մասնակից:

Բուհի կառավարման մարմիններից կարևորագույնը բարձրագույն ուսումնական հաստատության (կառավարման) **խորհուրդն** է: Այն ստեղծվում է 5 տարի ժամկետով, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան և բաղկացած է առնվազն 20 հոգուց: Խորհրդի գործունեության մեջ մտնում են հաստատության բյուջեի հաստատումը և դրա կատարողականի ընդունումը, ռազմավարական ծրագրերի հաստատումը, ռեկտորի ընտրությունը և այլն: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բուհի խորհրդի կազմի 25 %-ը պետք է լինեն ուսանողներ (հոդվ. 18):

Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարմանն ուսանողների մասնակցության նպատակահարմարության հարցը ընկալվում է ոչ միանշանակ: Այսպես, ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության հեղինակների կարծիքով՝ «Կարևորելով ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը, այնուամենայնիվ, այս դեպքում խախտվում է ոչ միայն կառավարման մարմնի ձևավորման հիմնական սկզբունքներից մեկը, այլ նաև դժվար է հիմնավորել մասնագիտական գիտելիքներ և կառավարչական փորձ չունեցող անձանց կառավարման բարձրագույն մարմնում գործելու նպատակահարմարությունը»⁶⁴:

Անշուշտ, բավականաչափ կառավարչական փորձառություն ունեցող ուսանողներ որևէ բուհում դժվար թե գտնվեն: Սակայն խնդիրը դա չէ: Ուսանողների մասնակցությունը խորհրդի կազմում, մեր կարծիքով, իսկապես հրամայական անհրաժեշտություն է մի քանի պատճառներով: Նախ, կրթության ոլորտի սուբյեկտները՝ մասնակցելով կրթական հաստատության կառավարման գործընթացին, մի կողմից, իրապես ներգործում են կրթության համակարգի վրա,

⁶⁴ ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն, 6-րդ հավելված, հղում 13:

մյուս կողմից՝ ինքնադաստիարակվում են և ձեռք բերում իրենց պակասող «կառավարչական փորձը»: Բնական է, որ խորհրդի կազմում եղած ուսանողների ներկայությամբ խորհրդի մյուս՝ դիրքով ավելի բարձր և հեղինակավոր անդամներն ստիպված են ավելի պատասխանատու լինել իրենց արտահայտած կարծիքների և որոշումների համար, նկատի ունենալով, որ այդ կարծիքները և որոշումները քիչ ժամանակ անց հայտնի կդառնան բոլորի ողջ ուսանողությանը: Բացի դրանից, խորհրդի կազմում ներկայացված ուսանողներն ավելի կամ պակաս չափով կարող են և պետք է արտահայտեն ուսանողության շահերը, կարծիքը և հուզող խնդիրները՝ հասցնելով դրանք բոլորի դեկավարությանը:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ «Հասարակական-քաղաքական, հասարակական, կրոնական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում չեն գործում, բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների»: Այդ հանգամանքը լայն հնարավորություններ է ստեղծում տարբեր տեսակի ուսանողական միությունների և միավորումների գործունեության համար, հնարավորություն է տալիս ուսանողությանը ձևավորել հասարակական կարծիք և այդպես ևս ներգործել բոլորի կառավարման համակարգի վրա: Տեղին է հիշատակել, որ համալսարանում գործող ուսանողական միությունների գործունեությունը, որոնք հաճախ հանդիպման են հրավիրում պետական գործիչների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, անց են կացնում քննարկումներ կարևոր հարցերի շուրջ, և որոնց հետ պարբերաբար հանդիպումներ են ունենում երկրի պետական այրերը:

§ 3. Բարձրագույն կրթության բնագավառում միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների իրացման երաշխիքները ՀՀ-ում

Երկրում ժողովրդավարական արժեքների արմատավորմանը և մարդու իրավունքների ու ազատությունների ընդլայնմանը զուգընթաց՝ գնալով մեծանում է պետության դերը թե՛ օրենսդրության մեջ դրանց ամրագրման և թե՛ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների երաշխավորման, դրանց իրականացման համար իրապես գործող կառուցակարգերի ու պայմանների ստեղծման գործում: Այս առումով, Հայաստանում բարձրագույն կրթության սահմա-

նադրական իրավունքի իրականացման պետական սկզբունքների և երաշխիքների հիմնախնդիրները կարևոր տեսական և գործնական նշանակություն են ստանում:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում կրթությունը սահմանվում է որպես անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն, իսկ կրթության բնագավառում պետական քաղաքականության «գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է» (3-րդ և 4-րդ հոդվածներ): Այս սահմանումները ենթադրում են պետության պատասխանատվությունը հասարակության առաջ ոչ միայն կոնկրետ քաղաքացու կողմից կրթության իրավունքի իրականացման, այլև կրթության գործընթացի կազմակերպման մակարդակի և որակի համար, ինչը, իր հերթին, պետության առջև պարտավորություն է դնում ապահովելու բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման իրական երաշխիքներ:

Բարձրագույն կրթության իրավունքի *երաշխիքները* հիմնվում են այդ իրավունքի իրականացման սահմանադրական և օրենսդրական *սկզբունքների* վրա: Սկզբունքների հիման վրա ձևավորվում են այն պայմանները և միջոցները, որոնց շնորհիվ բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը գործնական կիրառություն է ստանում:

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական սկզբունքներն այն առավել կարևոր նորմատիվ իրավական և այլ բնույթի դրույթներն են, որոնք արտացոլում են սոցիալ-քաղաքական օբյեկտիվ օրինաչափությունները կրթության և մանկավարժության մեջ: Տևական ժամանակ կիրառվելով՝ այդ սկզբունքերն ամրագրվել են պաշտոնական մի շարք փաստաթղթերում, որոնցով կանոնակարգվում են մասնակիցների միջև հարաբերությունները տվյալ ոլորտում:

Կրթության սկզբունքների հիման վրա այլևայլ պետությունների կողմից համատեղ ուժերով մշակվել և տարբեր համաձայնագրերում ամրագրվել են միջազգային ստանդարտներ/չափորոշիչներ/, որոնք սահմանում են կրթության համընդհանուր նպատակներն ու սկզբունքները, ինչպես նաև այն նվազագույն իրավական հնարավորությունները, որոնք պետությունը պարտավոր է ապահովել յուրաքանչյուր մարդու համար: Կրթության ոլորտը կանոնակարգող այդ չափորոշիչներն ամրագրված են *Կրթության բնագավառում խտրա-*

կանության դեմ պայքարի մասին կոնվենցիայում (1960), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին կոնվենցիայում (1966), Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիայում (1968), Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ծանաչման մասին դաշնագրում (1997), Բարձրագույն կրթություն XXI դարի համար համաշխարհային հռչակագրում(1998):

Միջազգային չափորոշիչները ներկայացնող այս միջազգային պայմանագրերը հիմք են ծառայել կրթության ոլորտում ՀՀ օրենսդրության մշակման, կատարելագործման և իրականացման համար: ՀՀ բարձրագույն կրթության հիմնական սկզբունքները ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում և այլ իրավական ակտերում:

Ամրագրելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ ՀՀ Սահմանադրությունը դրանով իսկ սահմանում է նաև կրթության ոլորտում առաջացող հարաբերությունների իրավական հիմքերը: Այս առումով Սահմանադրության նորմերը հանդես են գալիս որպես կրթության համակարգի համար հիմնարար *սահմանադրական սկզբունքներ*: Սահմանադրական սկզբունքները համընդհանուր նշանակություն ունեն և անուղղակիորեն հիմք են ծառայում նաև կրթության ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների նորմատիվ իրավական կարգավորման համար: Նման համընդհանուր սկզբունքների թվին պետք է դասել՝ օրենքի առջև բոլոր մարդկանց հավասարության (հոդվ. 14.1), մտքի, խղճի, կրոնի ազատության (հոդվ. 26) և այլ սկզբունքները:

Սահմանադրական սկզբունքներից կրթության համակարգի իրավական հիմնավորմանն ուղղակիորեն առընչվում են հիմնական սոցիալական, մշակութային և տնտեսական խնդիրներին վերաբերող նորմերը՝ կրթության իրավունքը (հոդվ. 39), գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական գործունեությամբ զբաղվելու իրավունքները (հոդվ. 40), աշխատանքի ընտրության ազատությունը (հոդվ. 32) և այլն:

Կրթության հիմնական սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածում: Նախ և առաջ դա բարձրագույն կրթության ընդհանուր մատչելիության սկզբունքն է: Սակայն կրթության նախորդ աստիճանների համեմատ այս սկզբունքն ունի շատ որոշակի տարբերություններ: Նախ՝ այն երաշխավորված է ոչ թե յուրաքանչյուրի համար, ինչպես նախորդ աստիճանների կրթությունը, այլ միայն ՀՀ քաղաքացիների համար: Բացի դրանից, բուհեր ընդունվելն իրականացվում է «մրցութային հիմունքներով»: Այս

դեպքում բարձրագույն կրթության մատչելիության սկզբունքը պետք է մեկնաբանել ոչ թե բառացիորեն, ոչ թե անհատական՝ բացարձակ մատչելի յուրաքանչյուրին, այլ սոցիալական իմաստով, մատչելի՝ անկախ մարդու սոցիալական վիճակից: Եթե այս իմաստով դիտարկենք՝ ստացվում է, որ բուհ ընդունվել և դրանով իր սահմանադրական իրավունքն իրականացնել կարող է յուրաքանչյուր ոք: Սահմանադրական այս սկզբունքի լիարժեք իրականացման համար պետությունը որոշակի կատեգորիաների դիմորդների համար (առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամներ, ծնողազուրկ, զոհված զինծառայողների երեխաներ և այլն) սահմանել է արտոնություններ⁶⁵:

Կրթության մատչելիության սկզբունքին սերտորեն առնչվում է և պետության կողմից երաշխավորված անվճար հիմունքներով բարձրագույն կրթություն ստանալու սկզբունքը: Պաշտոնական տվյալներով 2001/2002թ. ուսումնական տարում ՀՀ բուհերում (պետական և ոչ պետական) ուսանողների ընդհանուր քվի 73 %-ը սովորել է վճարովի հիմունքներով⁶⁶, իսկ առաջիկայում ուսանողական վարկերի և ուսումնական նպաստների համակարգին անցնելուց հետո անվճար կրթությունից կկարողանան օգտվել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի ուսանողների առնվազն 35 %-ը⁶⁷: Այսինքն՝ ուսանողության 65 %-ն ամեն դեպքում շարունակելու է սովորել վճարովի հիմունքներով⁶⁸:

Սահմանադրության 39-րդ հոդվածում ամրագրված՝ պետական բուհերում մրցույթային հիմունքներով անվճար կրթություն ստանալու իրավունքին համապատասխան 2006/2007թ. ուսումնական տարում առաջին անգամ ՀՀ պետական բուհերում գործադրվեց ռոտացիոն սկզբունքով վճարովի և անվճար տեղերի տեղակալման գործընթացը: Ըստ այդմ, վճարովի և անվճար հիմունքներով ընդունված ուսանողների միջև կայանում է մրցույթ և, ըստ նրանց ցուցաբերած տարեկան առաջադիմության, վճարովի համակարգում սովոր-

⁶⁵ Տես՝ ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. ապրիլի 12-ի N 280-Ն հրամանի 29-33-րդ կետերը:

⁶⁶ Տես՝ ՀՀ Բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարություն, Երևան, 2003, կետ 1.3:

⁶⁷ Տես՝ նույն տեղում, Հավելված 7:

⁶⁸ Սա բավականին տխուր իրողություն է: Համեմատության համար ասենք, որ Ռուսաստանի Դաշնությունում 2005թ. պաշտոնական տվյալներով բուհերում ուսումնառության ֆինանսավորման 80 %-ը կատարվել է պետության կողմից: Տես՝ Материалы Интернет-пресс-конференции РБК “Основные проблемы и конкурентные преимущества российской науки и образования”. Апрель 2005.

րող ուսանողը հնարավորություն է ստանում հաջորդ ուսուննական տարում ուսունը շարունակել անվճար համակարգում, իսկ անվճար համակարգ ընդունված ցածր առաջադիմություն դրսևորած ուսանողը տեղափոխվում է վճարովի համակարգ: Գործող օրենսդրությունը *(բացառությամբ սահմանված դեպքերի՝ բանակից զորացրվածներ, նպատակային տեղեր, հատուկ սոցիալական խմբեր)* այլևս չի երաշխավորում բուհում ուսանելու ամբողջ ընթացքում անվճար կրթություն, սրանով իսկ հնարավորություն տալով ավելի մեծ թվով քաղաքացիների օգտվելու վերը նշված իրենց սահմանադրական իրավունքից:

Ուշագրավ է, որ պետական բուհերում անվճար մասնագիտական կրթություն ստանալու իրավունքն արդեն իսկ ՀՀ Սահմանադրության մեջ սահմանափակված է միայն «մրցութային հիմունքներով»: Նույն ամրագրված է նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդվ. 6): Իսկ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ բուհի սովորողն իրավունք ունի «օգտվելու ուսման վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով» (17-րդ հոդվ., կետ 3.7): Պետությունն ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է ըստ ուսման առաջադիմության (մրցութային կարգով), վերն արդեն նշված որոշ սոցիալական խմբերի, և «պետության համար կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին»⁶⁹: Որևէ այլ սահմանափակում օրենքով նախատեսված չէ:

Սակայն ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված կարգը սահմանում է, որ «երկրորդ մասնագիտական կրթությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով»⁷⁰: Ավելին, «ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն պետական կամ հավատարմագրված բուհերում»⁷¹: Մեր կարծիքով, անհրաժեշտ է ՀՀ ԿԳ նախարարի 15 օգոստոսի 2006թ. N 671-Ն հրամանում կատարել համապատասխան փոփոխություններ՝ հեռակա համակարգում սովորող ուսանողներին ևս

⁶⁹ Տես՝ ՀՀ կառավարության 27 հուլիսի 2006թ. N 1183-Ն որոշման 1.2 կետերը:

⁷⁰ Տես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 15 օգոստոսի 2006թ. N 671-Ն հրամանը, 3-րդ կետ:

⁷¹ Տես՝ նույն տեղում, կետ 10:

ընձեռելով իրենց սահմանադրական իրավունքից օգտվելու հնարավորություն:

1991թ. սկսած գործող օրենսդրության մեջ առկա այս հակասությունն իրավական առումով որևէ կերպ հիմնավորված չէ: Միանշանակ անհասկանալի է նաև, թե ինչու ոչ պետական չհավատարմագրված բուհում, ոչ պետական միջոցների հաշվին կրթություն ստացած քաղաքացին չի կարող մրցութային հիմունքներով անվճար կրթություն ստանալ պետական բուհում: Տրամաբանորեն, տվյալ դեպքում պետք է գերակայեր ավելի բարձր համարվող օրենսդրական նորմը: Առավել ևս, որ տվյալ դեպքում քաղաքացու՝ չհավատարմագրված բուհում ստացած մասնագիտական կրթությունը պետության կողմից իրավական առումով այդպիսին չի ճանաչվում: Մեր կարծիքով, տվյալ դեպքում ակնհայտ է օրենսդրության անհամապատասխանությունն սահմանադրական նորմերին, ինչը դրանց ոչ միանշանակ մեկնաբանության տեղիք կարող է տալ:

Կրթության անընդհատության, շարունակականության և հաջորդականության սկզբունքը երաշխավորվում է մասնագիտական կրթության որակավորման մի քանի աստիճանով: ՀՀ-ում 2005/2006թ. ուսումնական տարվանից գործում է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման երկաստիճան համակարգ՝ բակալավր / մագիստրոս: Օրենքով նախատեսված է, որ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել անընդհատ և /կամ/ ընդհատումներով՝ ըստ աստիճանների: Բարձրագույն մասնագիտական կրթության այս աստիճաններից յուրաքանչյուրն ավարտուն է համարվում և իրավունք է տալիս զբաղվելու մասնագիտական աշխատանքային գործունեությամբ: Օրենքը չի նախատեսում ժամանակային որևէ սահմանափակում կրթության նախորդ աստիճանն ավարտելուց հետո՝ հաջորդին անցնելու համար: Իսկ դա էականորեն ընդլայնում է քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունները և հաստատում կրթության անընդհատության, շարունակականության և հաջորդականության սկզբունքը:

Սակայն, մեր կարծիքով, այստեղ օրենսդրության մեջ առկա է որոշակի հակասություն: Ճիշտ է, օրենքը հստակ սահմանում է, որ «այն անձինք, ովքեր ստացել են բարձրագույն մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով»: Ընդ որում, «բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագ-

րերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն»⁷²: Սակայն օրենքը չի սահմանում, թե բակալավրի որակավորում ստացած քաղաքացին կարող է, արդյոք, անվճար հիմունքներով (մրցութային կարգով) սովորել մագիստրատուրայում մեկ այլ՝ բակալավրի իր մասնագիտացումից տարբեր, մասնագիտական ծրագրով: Եվ եթե դա արգելվի, ապա այդպիսով կսահմանափակվի մասնագիտության ընտրության ազատության սկզբունքը:

Կրթության անընդհատության, շարունակականության և հաջորդականության սկզբունքը խախտելու փորձերն ավելի են ընդգծել դրա կարևորությունը և հասարակական նշանակությունը: Այսպես, 2004թ. հունվարին ՀՀ կառավարությունն Ազգային ժողով ներկայացրեց «Ուսանողների ժամկետային (պարտադիր) զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այն նախատեսում էր ուսանողներին ժամկետային զինծառայության տարկետում տալ ուսանելու ընթացքում միայն մեկ անգամ: Դա կնշանակեր, որ 4 տարի ուսանելով և բակալավրի դիպլոմ ստանալուց հետո շրջանավարտները մեկնեն պարտադիր զինծառայության (2 տարի) և դրանից հետո միայն կարող են իրենց կրթությունը շարունակել մագիստրատուրայում և ասպիրանտուրայում: Կրթության շարունակականությունն այսպիսով պետք է ընդհատվեր: Օրենքի նախագծի հասարակական քննարկումների ընթացքում ուսանողության ճնշող մեծամասնությունը դեմ արտահայտվեց նման մոտեցմանը: Երևանում տեղի ունեցան ուսանողական ցույցեր և բողոքի ակցիաներ: ՀՀ կառավարությունն ստիպված էր խորհրդարանից հետ վերցնել օրենքի նախագիծը՝ լրամշակման համար:

Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճանների կիրառումն աշխատանքի շուկայում առաջ է բերում լուծում պահանջող այլ խնդիրներ ևս: Հստակ սահմանված չէ, թե արտադրության մեջ բակալավրի որակավորում ունեցողն ինչ մակարդակի պաշտոններ կարող է զբաղեցնել և ինչ կարգի աշխատանքներ իրավունք ունի կատարել: Գործնականում հաճախ բակալավրը չի դիտարկվում որպես բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձ կամ էլ անհիմն հավասարեցվում է մագիստրոսի/դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցողին: Կարծում ենք, որ այս խնդիրը ևս կարիք ունի հետագա օրենսդրական կարգավորման: Այս առումով հարկ է փոփոխություն կատարել պետական, համայնքային, քաղաքացիական ծառայության և այլ

⁷² Տես՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5 կետը:

աշխատանքային հարաբերություններ ուրտները կարգավորող օրենսդրության մեջ՝ հստակորեն սահմանելով, թե բակալվրի աստիճան ունեցող անձը ինչ պետական կամ այլ պաշտոններ կարող է զբաղացնել և ինչ գործունեությամբ նա չի կարող զբաղվել: Նման օրինակ է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի առաջին կետը, որը սահմանում է իրավաբանի որակավորմամբ բակալվրի աստիճան ունեցող անձը կարող է անցնել աշխատանքի ՀՀ Դատախազությունում⁷³: Եվրոպական երկրներում դրանք հիմնականում առանձնանում են ուսման տևողությամբ (բակալվրի ծրագրեր 4-5 տարի, մագիստրական ծրագրեր 2-3 տարի) և մագիստրական ծրագրերի ավարտման ժամանակ պարտադիր թեզի ներկայացմամբ և պաշտպանմամբ, ինչը այն բարեհաջող ավարտողներին հնարավորություն է տալիս ուսումը շարունակել ավելի բարձր աստիճանում:

Կրթության մյուս հիմնարար սկզբունքը ժողովրդավարության, ակադեմիական ազատությունների և ինքնավարության ապահովումն է: Այս սկզբունքը հավասարապես տարածվում է մասնագիտական կրթության համակարգում ուսումնական գործունեության բոլոր սուբյեկտների վրա՝ սովորողներ, դասավանդողներ / գիտական աշխատողներ, և բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Սովորողների ազատությունը դրսևորվում է իրենց հայեցողությամբ մասնագիտության, բուհի տեսակի, ուսուցման ձևի ընտրության, կրթությունը շարունակելու կամ ընդհատելու և այլնի մեջ: Դասավանդողների / գիտական աշխատողների ազատությունն արտահայտվում է գիտաուսումնական պաշտոններում ընտրվելու, իրենց հայեցողությամբ ուսումնական առարկան ծրագրի շրջանակներում դասավանդելու, դասավանդման մեթոդները, դասագրքերն ու ձեռնարկներն ընտրելու, սովորողների գիտելիքները գնահատելու հարցում: Ուսումնական հաստատության ազատությունն ընկալվում է դրա ինքնավարության և ակադեմիական ազատության առումով: Այն օրենսդրորեն ամրագրված է «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդվ. 28) և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդվ. 6): Սակայն կրթության համակարգում վերոնշյալ սուբյեկտների ազատությունն անսահմանափակ չէ, և կարող է դրսևորվել օրենքով սահմանված շրջանակներում:

Կրթությունը գործունեության այնպիսի տեսակ է, որն իրականացվում է խմբակային ձևով և որը պահանջում է կազմակերպման և

⁷³ Տես՝ «Դատախազության մասին» ՀՀ Օրենք, ՀՕ-126, ընդունված 22 փետրվար 2007թ.:

համակարգման (կորդինացման) կոնկրետ ձևեր, և այս առումով ազատության որոշակի սահմաններ է դնում: Այսպես, ուսանողը, եթե նպատակ ունի իսկապես որակյալ կրթություն ստանալու, պետք է կարողանա իրեն ենթարկել ուսումնական գործընթացի պարտադիր պայմաններին՝ ունկնդրի դասախոսություններ, կատարի ընթացիկ հաշվետու աշխատանքները, մասնակցի գործնական պարապմունքներին, հանձնի ստուգարքները և քննությունները և այլն:

Դասավանդողներն իրենց մասնագիտական գործունեության համար ունեն պետության կողմից սահմանված ուղենիշներ՝ պետական կրթական չափորոշիչները, որոնք սահմանում են ուսումնական ծրագրերի բովանդակությունը: Սահմանափակ է նաև ուսումնական հաստատության ազատությունը, քանի որ դրա գործունեությունը կանոնակարգվում է պետության կողմից՝ պետական ատեստավորման և հավատարմագրման գործընթացով:

Ազատության տարատեսակներից մեկն էլ կրթության մեջ այլընտրանքայնությունն ու տարբերակվածությունն է: Ուսումնական հաստատությունների իրավունքը՝ ունենալու իրավաբանական անձի կարգավիճակ կամ ցանկացած այլ կազմակերպական-իրավական ձև, արդեն իսկ խոսում է այլընտրանքայնության գործնական կիրառության մասին: Ազատության և ինքնուրույնության առկայությունը հնարավորություն է տալիս ուսումնական հաստատությանն ավելի դյուրին և արագ հարմարվել իրավիճակին և առաջարկել ուսումնական ծառայությունների ավելի լայն սպեկտր: Այլընտրանքայնության շնորհիվ սովորողներն էլ հնարավորություն են ստանում լիարժեքորեն իրականացնելու իրենց հակումներն ու կրթության ձևի ընտրության ազատությունը:

Կրթության ազատության սկզբունքն ավելի լայն զարգացում է ստանում բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնավարության մեջ: Ինքնավարության ճանաչումը հստակ սահմանագծում է բուհի և պետական կառավարման մարմինների իրավասությունների շրջանակները: Դրանք մանրամասնորեն ձևակերպված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում: Նման կանոնակարգումը նպատակ ունի հստակ սահմանագծել բուհի ինքնավարության շրջանակները: Դրա նպատակը բնավ էլ բուհի ինքնավարության սահմանափակումը չէ, այլ՝ հակառակը, այն հանդես է գալիս որպես այդ ինքնավարության երաշխիք և կարող է բուհի իրավունքները պաշտպանել պետական կառավարման մարմինների անտեղի վարչարարական միջամտությունից:

Ինքնավարության և ակադեմիական ազատությունների սկզբունքը ոչ միայն բարձրագույն մասնագիտական ուսումնական

հաստատությանը տալիս է իրավունքներ, այլև սահմանում է բուհի պատասխանատվությունն իր գործունեության համար «անհատի, հասարակության և պետության առջև»:

Այսպիսով, օրենսդրության մեջ ամրագրված՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունն զգալիորեն ընդլայնում է նրանց իրավասությունը, մեծացնում ուսումնագիտական գործունեության կազմակերպման, ուսանողների կրթության ու դաստիարակության, պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման գործում, նրանց ինքնուրույնությունը ֆինանսանյութական խնդիրների լուծման գործում:

Ներկայումս կրթության առավել կարևորվող սկզբունքներից մեկը մասնագիտական կրթության օրավուր խորացող միջազգայնացումն է՝ ինտերնացիոնալացումը: Կրթության բովանդակությունը գնալով ավելի համապարփակ (ունիվերսալ) է դառնում: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում «նկատելի է դառնում ավելի սերտ մերձեցումը, եթե չասենք՝ խնդիրների, նպատակների, հիմնահարցերի և զարգացումների ընդհանրությունը, ստիպելով մոռանալ ազգային ու տարածաշրջանային յուրահատկությունների ու տարբերությունների մասին»⁷⁴: Նկատի ունենալով այս խնդրի կարևորությունը, մենք հիմա ձեռնպահ կմնանք այն վերլուծելուց և մանրամասն կանդրադառնանք դրան ուսումնասիրության հաջորդ գլխում:

Տեղին ենք համարում ընդգծել, որ հաճախ կրթության սկզբունքները նույնացվում են կրթության կազմակերպման սկզբունքների հետ: Մինչդեռ դրանք նույնական չեն: Կրթության սկզբունքները կարևորում և օրինականացնում են կրթության ներքին, իմանենտ հատկանիշները, իսկ կրթության կազմակերպման սկզբունքները բնորոշում են պետության տեղը, դերը և գործառույթները կրթության ոլորտում: ՀՀ Սահմանադրության մեջ, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում, ըստ էության, ամրագրված են կրթության կազմակերպման այն սկզբունքները, որոնց վրա հիմնվում է տվյալ ոլորտում պետական քաղաքականությունը: Այդ սկզբունքները նպատակաուղղված են կրթության զարգացմանը և ընդգծում են ժամանակակից պայմաններում բարձրագույն մասնագիտական

⁷⁴ Stu` Высшее образование в XXI веке: подходы и практические меры. Заключительный доклад ЮНЭСКО. ED. 98/CONF. 202/3, Париж, 9 октября 1998г.

կրթության կարևորությունն ու նշանակությունը որպես երկրում անցկացվող բարեփոխումների հիմք:

Կրթության սկզբունքների հետ սերտորեն առնչվում են դրանց *սահմանադրական իրավական երաշխիքները*: Լայն իմաստով «երաշխիքներ» հասկացությունը ներառում է օբյեկտիվ և սուբյեկտիվ այն գործոնների ամբողջությունը, որոնք նպատակաուղղված են քաղաքացիների իրավունքների ու ազատությունների կենսագործմանը և դրանց պաշտպանությանը խանգարող հանգամանքների ու արգելքների վերացմանը: Նեղ իմաստով՝ երաշխիքներն իրավական նորմերի, օրինականության և իրավական գործունեության այլ պրոցեսների ճիշտ կիրառման դրսևորումն են:

Քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացումը կախված է բազմաթիվ և տարաբնույթ գործոններից, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես երաշխիք: Այսինքն՝ *երաշխիքներ ասելով պետք է հասկանալ բոլոր այն պայմանները, մեթոդներն ու միջոցները, որոնք ապահովում են ամենքի և յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների լիարժեք պաշտպանությունը և դրանց փաստացի կենսագործումը*:

Մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և դրանց երաշխավորումն ամրագրված են սահմանադրական կոնկրետ նորմերում: Ըստ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են:..... Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Իսկ 14-րդ հոդվածում ասված է. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

Սահմանադրության հոդվածները, սակայն, չեն մանրամասնում այդ նորմերն ապահովող երաշխիքների կառուցակարգը: Սահմանադրական իրավունքների ու ազատությունների ավելի ընդարձակ և ավելի կոնկրետ բնորոշումը շարադրված է օրենքներում, որտեղ էլ ներկայացվում են այդ երաշխիքների ապահովման և պաշտպանության կառուցակարգերը:

Մասնագիտական գրականության մեջ պետական երաշխիքների ամբողջությունն ընդունված է ստորաբաժանել երկու տեսակի՝ ընդհանուր և առանձնահատուկ: *Ընդհանուր երաշխիքների* ներքո հասկացվում են անձի իրավունքների իրականացման ընդհանուր՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական և գաղափարական պայմանները: Իսկ օրենսդրորեն ամրագրված այն նորմերը, որոնք անմիջականորեն ապահովում են բարձրագույն կրթության ոլորտում մար-

դու իրավունքների իրականացման հնարավորությունը, ինչպես նաև անձի իրավունքների պաշտպանությունը, որոնք ընդունված է անվանել այդ իրավունքների *առանձնահատուկ (իրավաբանական) երաշխիքներ*⁷⁵:

Երաշխիքների այս ստորաբաժանումը, իհարկե, պայմանական է՝ այնպես, ինչպես և հիմնական իրավունքների ու ազատությունների դասակարգումը: Սակայն բարձրագույն մասնագիտական կրթության սահմանադրական իրավունքի իրագործման կառուցակարգը և դրա իրավաբանական երաշխիքներն ավելի քան կոնկրետ են:

Այսպես, ՀՀ Սահմանադրությունը (հոդվ. 39) չի երաշխավորում անխտիր յուրաքանչյուրի համար բարձրագույն կրթություն ստանալը: Ընդհակառակն, այն սահմանափակում է «մրցութային հիմունքներով»: Սակայն տվյալ դեպքում պետությունը ոչ թե սահմանափակում է բարձրագույն կրթություն ստանալը, այլ երաշխավորում է այդ իրավունքի իրականացման հավասար մատչելիության պայմաններ: Դա միանգամայն համահունչ է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին, որի համաձայն՝ «... բարձրագույն կրթությունը պետք է հավասարապես մատչելի լինի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների»⁷⁶ և եվրոպական երկրների վարած ընդհանուր քաղաքականությանը. «Յուրաքանչյուր ոք, ով ունակ է և ցանկանում է բարձրագույն կրթություն ստանալ, պետք է նման հնարավորություն ունենա՝ արդարացի և հավասար պայմաններով»⁷⁷: Այսպիսով, կրթության մատչելիության հավասար պայմաններ ապահովելը, որևէ խտրականություն բացառելը՝ հենց հանդիսանում են տվյալ իրավունքի իրականացման երաշխիքը:

«Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում սահմանադրական այս իրավունքն արդեն ընդունում է կոնկրետ պետական իրավական երաշխիքի տեսք. «Պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին *երաշխավորում է* պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար

⁷⁵ Стu` Конституционное право России: Учебник, под ред. Г. Н. Комковой. М., Юрист, 2005, էջ 183:

⁷⁶ Стu` Всеобщая декларация прав человека, հոդվ. 26:

⁷⁷ Стu` Рекомендация N R (98)3 Комитета Министров государствам – членам Совета Европы по проблеме доступности высшего образования, www.coe.int:

կրթություն ստանալու հնարավորություն»⁷⁸: Դա նշանակում է, որ պետությունն ստանձնում է որոշակի ֆինանսական պարտավորություններ քաղաքացիների այս իրավունքը երաշխավորելու առնչությամբ: Սակայն նշված օրենքների հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պետության տված երաշխիքն ունի ոչ թե բացարձակ, այլ հարաբերական բնույթ: Եթե կրթության մյուս մակարդակների դեպքում պետությունն ամբողջությամբ փոխհատուցում է ֆինանսական ծախսերը, ապա բարձրագույն մասնագիտական կրթության դեպքում անվճար կրթությունը՝ երաշխավորում է միայն պետական բուհերում⁷⁹:

Ներկայումս ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման համաձայն՝ պետությունը կառավարության կողմից յուրաքանչյուր տարվա համար սահմանված չափաքանակներով ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում է տրամադրում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին (մրցութային կարգով) և որոշակի սոցիալական խմբերի ու նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին: Տվյալ տարվա համար սահմանված նպաստների քանակը տեղափոխվում է կուրսից կուրս: Բացի դրանից, յուրաքանչյուր բուհ վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողների առնվազն 10%-ին (սահմանված կարգով) իր միջոցների հաշվին տալիս է ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ ուսանողական նպաստի ձևով⁸⁰: Պաշտոնական տվյալներով՝ 2007/2008 ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության կողմից հանրապետության բոլոր պետական բուհերի գծով հատկացվել է 4132 ընդունելության տեղ՝ ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և 5881 ընդունելության տեղ՝ բուհերի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով⁸¹:

Թեև այս կարգը տարածվում է միայն պետական բուհերի ուսանողների վրա, չի կարելի անտեսել պետության ձգտումն ընդլայ-

⁷⁸ Տես՝ «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 6.3., «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5.3:

⁷⁹ Ամեն դեպքում, նման սահմանափակումն օբյեկտիվ բնույթ ունի և չի կարելի այն դիտարկել որպես հետադիմություն տվյալ իրավունքի երաշխավորման հարցում:

⁸⁰ Տես՝ ՀՀ կառավարության 27 հուլիսի 2006թ. N 1183-Ն որոշումը, ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. ապրիլի 12-ի N 280-Ն հրամանը, Դիմորդ 2007, Երևան, «Մանկավարժ», էջեր 3-15:

⁸¹ Տես՝ ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 5-ի N 513-Ն որոշումը, տես նաև՝ Դիմորդ 2007, Երևան, «Մանկավարժ», էջ 16:

նելու բարձրագույն մասնագիտական կրթության մատչելիությունը և դրա հասանելիության ավելի լայն երաշխիքներ ապահովելու սոցիալապես անապահով խավերի համար:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը երաշխավորում է ՀՀ քաղաքացիների ազատությունն իրենց հայեցողությամբ, ընտրելու մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվելու բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը:

Այս երաշխիքն ավելի շուտ կարելի է դիտարկել որպես անձի ազատության սահմանադրական իրավունքի դրսևորումներից մեկը, տվյալ դեպքում՝ կրթության ոլորտում: Սակայն այս դեպքում երաշխիքի կառուցակարգը գործում է միջնորդավորված՝ որպես, առաջին հերթին, հնարավորության կառուցակարգ: Միայն ընդունելության մրցույթը հաղթահարելուց հետո ընտրության ազատության երաշխիքը կարող է երաշխավորել կրթություն ստանալու ազատությունը:

Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության մեջ և օրենքներում սահմանված բարձրագույն կրթության իրավունքի երաշխիքները ոչ միշտ է, որ կարող են պաշտպանել քաղաքացիներին դրանց խախտման հնարավորությունից: Նման դեպքում սկսում է գործել իրավաբանական երաշխիքների կառուցակարգը: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը երաշխավորում է, որ բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի «բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով» (հոդվ. 17.6), այսինքն՝ դատական կարգով պաշտպանել իր իրավունքները:

Այսպիսով, վերլուծելով ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության սահմանադրական իրավական երաշխիքների կառուցակարգերի ինստիտուտը, կարելի է առանձնացնել այդ երաշխիքների երկու հիմնական խումբ՝ բարձրագույն կրթության իրավունքի իրականացման երաշխիքներ և կրթության որակի երաշխիքներ, ընդ որում, վերջիններս հիմք են հանդիսանում ընդհանրապես տվյալ իրավունքի իրագործելիության համար:

Երաշխիքների առաջին խմբին կարելի է դասել հիմնական իրավունքներից և ազատություններից օգտվելու համար բարենպաստ միջավայրի ստեղծմանն ուղղված *իրավական երաշխիք-պայմանները*՝ այն է՝ կրթության ոլորտի իրավահարաբերությունները

կարգավորող սահմանադրական և օրենսդրական ամրագրված նորմերի առկայությունը և այդ նորմերի կենսագործման նորմատիվ իրավական բազան: Երկրորդ խմբին կարելի է դասել այն երաշխիքները, որոնք հանդես են գալիս որպես անձի իրավունքներն ու ազատությունները պաշտպանող միջոցներ և ձևեր: Դրանք կոչվում են *իրավական պաշտպանվածության երաշխիք-միջոցներ*⁸²:

Եթե տվյալ խնդիրը դիտարկենք սահմանադրաիրավական երաշխիքների կիրառման հաջորդականության տեսանկյունից, իհարկե, առաջնային պետք է համարել երաշխիք-պայմանները: Սակայն, մեր կարծիքով, իրավական երաշխիքների նման ստորաբաժանումը՝ երաշխիք-պայմանների և երաշխիք-միջոցների, խիստ պայմանական բնույթ է կրում, քանզի այդ երկու տարատեսակներն էլ շատ փոփոխական են և կախված կոնկրետ հանգամանքներից, այս կամ այն երաշխիքը կարող է հանդես գալ և (կամ) որպես պայման, և (կամ) որպես միջոց: Այսպես, օրինակ, բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների կիրառումը, մի կողմից, կարելի է դիտարկել որպես բուհում ուսումնական գործընթացի կազմակերպման պարտադիր նախապայման, մյուս կողմից՝ որպես որակյալ կրթություն ստանալու՝ ուսանողի իրավունքների պաշտպանության միջոց: Ամեն դեպքում, մարդու և քաղաքացու իրավունքների իրավաբանական պաշտպանության համակարգի գլխավոր սկզբունքն օրենքին չհակասող բոլոր օրինական միջոցներով իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն է: Ահա թե ինչու երաշխիք-պայմանների և երաշխիք-միջոցների համալիր կիրառումը միայն կարող է հնարավորություն տալ առավելագույնս լիարժեք բավարարել քաղաքացիների բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի երաշխիքները չեն սահմանափակվում միայն սահմանադրական-օրենսդրական նորմերով: Դրանց իրականացման համար անհրաժեշտ երաշխիք է նաև երկրի կրթական համակարգը, որը ներառում է բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունները, ուսումնական ծրագրերը, ուսումնական գործընթացի կազմակերպումը և նյութատեխնիկական ապահովումը, բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմի առկայությունը և այլն: Այս տարրերից յուրաքանչյուրն իր գոյությամբ և

⁸² Стu` Никитина И. Ф. Конституционно-правовые основы высшего профессионального образования в Российской Федерации // Автореферат канд. дисс. Екатеринбург, 2005, т2 10:

գործունեությամբ երաշխավորում է քաղաքացիների բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի իրականացումը: Երաշխիքների այս խումբը կարելի է պայմանականորեն անվանել **«կրթության կազմակերպման երաշխիքներ»:**

Կրթության կազմակերպման երաշխիքներից էական նշանակություն ունի բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների անցկացման կարգը: Ընդունելության քննությունների միջոցով է, որ կրթության իրավունքն ստանում է իրականացման երաշխիքներ:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, ըստ կրթական ծրագրերի (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի), սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի՝ մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ» (հոդվ. 14.5):

Համաձայն այդ կարգի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվում են պետական և հավատարմագրված ոչ պետական միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնները⁸³:

Բուհերի ընդունելության կանոնները կանոնակարգում են ընդունելության գործընթացը և այդ իմաստով գործում են որպես սահմանափակող միջոց: Դրանք կոչված են ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված «մրցութային հիմունքներով» ընդունելությունը: Այս առումով ընդունելության կանոնները չեն կարող դիտարկվել որպես սահմանադրաիրավական երաշխիք, քանի որ հենց դրանք ինքնին սահմանափակում են այդ իրավունքը: Սակայն ընդունելության կարգի նորմատիվ մասի ավելի խոր վերլուծության պարագայում կարելի է նկատել որոշ դրույթներ, որոնք թույլ են տալիս ընդունելության կանոնները բնորոշել որպես պետական երաշխիք:

Նախ, ընդունելության կանոնները սահմանում են բոլոր դիմորդների համար միասնական չափորոշիչներ և պահանջներ, առանձին բացառություններով: Կանոնները հրատարակվում են ըն-

⁸³ ՀՀ կրթության և գիտության նախարարի 09.04.2008թ. N 211-Ն հրամանը, տես՝ Դիմորդ 2008, Երևան, «Մանկավարժ» հրատարակչություն, էջ 15:

դունելության քննություններից շատ առաջ՝ դրանով ապահովելով ընդունելության գործընթացի հրապարակայնությունը և թափանցիկությունը: Այս ամենը թույլ է տալիս բացառել խտրականությունը: Հետևաբար, ընդունելության կանոնների միջոցով քաղաքացիների՝ մրցութային հիմունքներով բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական նորմը կազմակերպական-իրավական ձևակերպում է ստանում:

Երկրորդ, բուհի ընդունելության կանոնները երաշխիք են հանդիսանում ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնած քաղաքացիների/դիմորդների համար հրամանագրվելու, որպես բուհի ուսանող: Հրամանագրումից հետո քաղաքացին ձեռք է բերում *ուսանողի կարգավիճակ*՝ որոշակի իրավական բովանդակությամբ⁸⁴:

Նշենք նաև, որ բուհերի ընդունելության կանոնները հանդիսանում են ոչ միայն կրթության իրավունքի իրականացման երաշխիքներ, այլ նաև իրավական երաշխիքների պաշտպանության միջոց: Ընդունող հանձնաժողովը, առարկայական հանձնաժողովները, բողոքարկման հանձնաժողովը և այլն, կոչված են պաշտպանելու դիմորդների քաղաքացիական իրավունքները ընդունելության քննությունների ընթացքում:

Բուհերի ընդունելության կանոնները նաև քաղաքացիների սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիք են: Անգամ հավասար մրցութային պայմանների դեպքում կան սոցիալական խավեր (հաշմանդամներ, չքավորներ, ծնողազուրկներ, կերակրողին կորցրածներ և այլն), որոնք ի վիճակի չեն մասնագիտական կրթություն ստանալու, քանի որ օբյեկտիվ պատճառներով հնարավորություն չունեն ընդունելության քննությունների արդյունքում գոնե վճարովի հիմունքներով ուսանող դառնալու: Այս հանգամանքը նկատի առնելով՝ պետությունը պարտավոր է օժանդակել, որպեսզի այդ անապահով խավերի դիմորդները նույնպես կարողանան կենսագործել մասնագիտական կրթություն ստանալու իրենց սահմանադրական իրավունքը: Տեղին է ընդգծել, որ սա միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառում գտած մոտեցում է, և որ Եվրոպայի ու ԱՄՆ-ի շատ համալսարաններ այսօր կիրառում են սոցիալապես անապահով խավերին տարբեր արտոնություններ տրամադրելու մոտեցու-

⁸⁴ Ուսանողի իրավունքները մանրամասն սահմանված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ում:

մը⁸⁵: Նման սոցիալական խավերի համար ՀՀ կառավարությունը նախատեսում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար մրցույթից դուրս (պետական բյուջեի միջոցների հաշվին) ընդունելության տեղերի նախապես սահմանված որոշակի չափաքանակ⁸⁶: Բացի դրանից, սովորողների մտավոր և ստեղծագործական ակտիվությունը խրախուսելու համար կառավարությունն արտոնություններ է սահմանել միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսում ստացած բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ նույն մասնագիտության գծով բուհ ընդունվելու համար⁸⁷:

Ընդունելության քննությունների ընթացքում օրենսդրորեն ամրագրված են նաև այլ արտոնություններ առանձին կատեգորիաների դիմորդների համար: Օրինակ, սահմանամերձ, բարձր լեռնային և տուժած շրջաններն ուսուցչական և մասնագիտական այլ կադրերով ապահովվելու համար սահմանված են նպատակային ընդունելության տեղեր՝ պետական մանկավարժական բուհերում, մարզիչներ պատրաստելու ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտում, պետական ագրարային համալսարանում⁸⁸: Այդ դիմորդները կարող են ընդունվել բուհ ընդհանուր մրցույթից դուրս, սակայն տվյալ կատեգորիայի համար ներքին մրցույթի արդյունքում:

Արդարության համար ասենք, որ նման արտոնությունների և նպատակային ընդունելության պրակտիկան գալիս է դեռևս խորհրդային ժամանակներից⁸⁹: Սակայն նման արտոնությունների կիրառումն էականորեն չի ազդում ընդունելության քննությունների նպատակի կամ իրավական կարգավիճակի վրա: Այդ արտոնությունների սահմանումն ամբողջովին կառավարության իրավասությունների

⁸⁵ D. Watson & R. Taylor. Lifelong Learning and the University: a post – Dearing agenda. «Taylor and Francis Group. London, 1998; K Mazure, M. A. Winser, C. Majorek. Higher Education in global society (a comparative perspective), Boston – London. 2000.

⁸⁶ Տես՝ ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. ապրիլի 12-ի N 280-Ն հրամանը, Տես՝ «Դիմորդ 2007», Երևան, «Մանկավարժ», էջ 13:

⁸⁷ Տես՝ ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 20-ի N 589 որոշմամբ հաստատված կարգը: ԲԿ II, էջեր 152-155:

⁸⁸ Տես՝ ՀՀ կառավարության 2007թ. ապրիլի 5-ի N 513-Ն որոշումը: «Դիմորդ 2007», Երևան, «Մանկավարժ», էջ 17:

⁸⁹ Տես՝ Постановление Совета Министров СССР от 31 августа 1989 г. N 708 “Об участии государственных, кооперативных и других общественных предприятий, организаций и учреждений в комплектовании высших и средних специальных учебных заведений и в подготовке специалистов”, Москва, Мысль, 1990.

շրջանակում է, և արվում է պետության ու հասարակության շահերից ելնելով:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ բուհերի ընդունելության քննությունների կանոններն ապահովում են բուհեր քաղաքացիների ընդունելության կարգը և հանդիսանում են նրանց կրթության իրավունքի ակտիվ իրականացման սկզբնափուլը: Ընդունելության քննությունների կանոնները փաստորեն հանդես են գալիս որպես տվյալ սահմանադրական իրավունքի իրականացման երաշխիք:

Ամփոփելով բարձրագույն կրթության երաշխիքների վերլուծությունը՝ ասենք, որ այդ երաշխիքների թվին պետք է դասել նաև բարձրագույն մասնագիտական կրթության որակի ապահովման երաշխիքները: Դրանց վերլուծությանը և ընդհանրապես կրթության որակի ապահովման խնդիրներին մենք մանրամասն կանդրադառնանք ուսումնասիրության հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԲԱՐՃՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

**§ 1. Բարձրագույն կրթության իրավունքի ապահովման
համակարգային զարգացման միտումները եվրոպական երկրներում**

1993թ. եվրոպական 15 պետությունների միավորումով կազմվեց եվրոպական Միությունը: Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված եվրոպական պետությունների տնտեսական և քաղաքական միավորման առաջին փուլն ավարտվեց: Ներկայումս եվրոպական միության անդամ են արդեն 27 պետություններ և ապագայում այն միտում ունի ընդլայնվելու՝ ընդգրկելով եվրոպայի խորհրդի անդամ մյուս երկրները: Արդեն իրողություն են դարձել անդամ երկրների մեծ մասի մաքսային ընդհանուր սահմանները, բնակչության և աշխատուժի ազատ տեղաշարժը, երկրների մեծ մասում դրամական ընդհանուր միավորը՝ եվրոն: Տնտեսական և քաղաքական միավորումն օրակարգի հարց դարձրեց նաև օրենսդրական, կրթական և մշակութային ընդհանուր տարածք ստեղծելու անհրաժեշտությունը:

Եվրոպական ընդհանուր կրթական և մշակութային տարածք ստեղծելու գաղափարը հասունանում էր վաղուց: Դրան ուղղված առաջին քայլերն արվել էին դեռևս անցյալ դարի կեսերին՝ Եվրոպայի խորհրդի և Միավորված ազգերի կազմակերպության կողմից: 1954թ. դեկտեմբերի 19-ին Փարիզում Եվրոպայի խորհրդի երկրների կառավարություններն ստորագրեցին Եվրոպական մշակութային կոնվենցիան, որի նպատակն էր եվրոպական պետությունների և նրանց քաղաքացիների միջև «խրախուսել միմյանց լեզուների, պատմության, մշակույթների և նրանց բոլորի համար ընդհանուր հանդիսացող քաղաքակրթության ուսումնասիրությունը»¹:

Անցյալ դարի վերջին տասնամյակներին ծավալված տնտեսության գլոբալացման և արագընթաց անցումը դեպի գիտելիքների վրա հիմնված հասարակություն՝ արմատական փոփոխություններ էր առաջ բերել եվրոպական երկրներում: Եվրոպայի բնակչությունը գնալով «ծերանում էր», աշխատաշուկայի պահանջներն այլևս կայուն և լրիվ կանխատեսելի չէին և շուկան այլևս չէր առաջարկում ե-

¹ Եվրոպական մշակութային կոնվենցիա, ներածություն: (Բարձրագույն կրթություն, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2005, պրակ 1, էջ 232): Հայաստանի Հանրապետությունն այս կոնվենցիային միացել է 1997թ. ապրիլի 25-ին:

րաշխավորված աշխատատեղեր անփոփոխ, կայուն չափորոշիչներով, ինչպես որ նախկինում էր: Արտադրության առանձին ճյուղերում զգացվում էր որակյալ աշխատուժի պակաս, ինչը մեծացնում էր ժողովրդագրական և սոցիալական լարվածությունը որոշ երկրներում:

Տնտեսության աճի և տեխնոլոգիական արագընթաց զարգացման հետևանքով զգացվում էր բարձր որակավորում ունեցող աշխատուժի պակաս, իսկ, մյուս կողմից, գնալով աճում էր բարձրագույն կրթության հասարակական պահանջը: Բնակչության ավելի ու ավելի լայն խավեր էին ձգտում բարձրագույն կրթություն ստանալ, աճում էր ուսանողների թվաքանակը, ինչն, իր հերթին, նպաստում էր բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակի ավելացմանը, դրանց կառավարման ժողովրդավարացմանը, նոր մասնագիտությունների սկզբնավորմանը:

Բուհական կրթությունը, հասարակական արժեք մնալով հանդերձ, սկսեց առավելապես ընկալվել որպես անձնական հաջողության հասնելու միջոց: Դա նկատի առնելով՝ կառավարություններն սկսեցին կրճատել բուհերի պետական ֆինանսավորումը: Սակայն դա միայն նպաստեց համալսարանների ինքնուրույնության ավելացմանը: Բուհերն սկսեցին կիրառել ուսման վարձավճարների համակարգը: Համալսարանական կրթությունն ավելի մեծ ինքնուրույնություն ստացավ, պետությունը պատվիրատուից վերածվեց վերահսկողի և վերջնական արդյունքը գնահատողի²:

Անցյալ դարի վերջին տասնամյակներին բուհական կրթությունն արդեն վերածվել էր եկամտաբեր գործարարության: Այն ժամանակ, երբ եվրոպական համալսարանները զիջում էին իրենց գրավչությամբ, ԱՄՆ-ի, Կանադայի և Ավստրալիայի համալսարանները հաջողությամբ իրականացնում էին «ուղեղների ներհոսք» ասիական երկրներից, շահավետ վաճառում էին իրենց բուհական կրթությունը՝ դրանով իսկ նպաստելով իրենց երկրների գիտական, տեխնոլոգիական և մտավոր ներուժի զարգացմանը:

Թեև բարձրագույն կրթությունը շարունակում էր ֆինանսավորվել հիմնականում հասարակական միջոցներից, կառավարություններն սկսեցին խրախուսել բուհերին՝ փնտրելու ֆինանսավորման այլ աղբյուրներ ևս: Համալսարանները վերածվում էին գործարար կառույցների: Համալսարանական կրթությունն սկսեց ակադեմիականից վերափոխվել ավելի գործնականի՝ տալով միջին մասնագիտական կարգի գիտելիքներ ևս, որոնք կարելի էր անմիջապես

² Տես՝ Scott P. The Meaning of Mass Higher Education, Buckingham, 1995, էջ 80:

կիրառել թե՛ կյանքում և թե՛ աշխատանքում³: Ընդհանուր տարածում ստացան «ուսուցանելու ազատություն» և «ուսանելու ազատություն» արտահայտությունները: Դրանք սկսեցին ընկալվել որպես համալսարանական ազատության իրավական երաշխիքներ: Ուսումնառության տևողությունը դարձավ անսահմանափակ, ուսանողը կարող էր ավարտել համալսարանը երբ դա հարմար գտներ:

Տնտեսական և սոցիալական նման փոփոխությունների լայնածավալ մասշտաբը կրթության նկատմամբ նոր մոտեցումների որդեգրման պատճառ հանդիսացավ հանգեցնելով կրթական քաղաքականության մեջ ընդգրկուն բարեփոխումների:

1976թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան (վեհաժողովն) ընդունեց «Մեծահասակների կրթության մասին» հանձնարարականը, որով կոչ էր ուղղվում բոլոր երկրների կառավարություններին նպաստել մեծահասակների որակավորումների լրացմանը և մասնագիտական վերապատրաստմանը, մասնավորապես նրանց, ում գիտելիքները հնացել են գիտատեխնիկական առաջընթացի կամ սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխման բերումով:

1989թ. նոյեմբերի 10-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր խորհրդաժողովի 25-րդ նստաշրջանն ընդունեց Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիան: Փաստաթղթում հատուկ ընդգծվում էր, « որ տեխնիկական, սոցիալական և տնտեսական զարգացման արագ տեմպերն էապես սրել են ինչպես երիտասարդությանը, այնպես էլ մեծահասակներին տրամադրվող տեխնիկական և մասնագիտական կրթության ընդլայնման ու բարելավման անհրաժեշտությունը» և առաջ են բերել շուտափույթ լուծում պահանջող կրթական բազմաթիվ հիմնախնդիրներ⁴: Դրանով մարդու ողջ կյանքի ընթացքում ուսումնառության գաղափարը դարձավ ընդհանուր հետաքրքրության և օրակարգային քննարկումների թեմա:

Արձագանքելով այս նախաձեռնությանը՝ 1996թ. փետրվարի 2-3-ին Եվրոպական միության 15 անդամ պետությունների և Եվրախորհրդի երկրների Վենետիկի խորհրդաժողովը Եվրոպայում «կրթվող հասարակություն» ձևավորելուն նպաստելու համար որոշում կայացրեց 1996 թվականը հայտարարել «Հարատև կրթության տարի»: Այսօրինակ որոշման նպատակն էր խթանել մարդկանց «անհատական զարգացումը և նախաձեռնություն դրսևորելու կարողությունը, նրանց ներգրավվածությունը հասարակական և աշխատանքային կյանքում»:

³ Steu` Teichler U. Structures of Higher Education Systems in Europe. In: Gellert C. Higher Education in Europe, London, 1993.

⁴ Steu` «Բարձրագույն կրթություն», Երևան, կրթության ազգային ինստիտուտ, 2005, պրակ 2, էջեր 435-449:

քային կյանքին, նրանց մասնակցությունը որոշումներ կայացնելու ժողովրդավարական գործընթացին և ունակությունը՝ հարմարվելու տնտեսական, տեխնոլոգիական և սոցիալական փոփոխություններին»⁵: Հարատև կրթությունը (Lifelong Learning)⁶ սկսեց ընկալվել որպես «ողջ կյանքի ընթացքում իրականացվող ցանկացած տեսակի կրթական գործընթաց, որի նպատակն է կատարելագործել մարդկանց գիտելիքները, հմտությունները և ունակությունները, անձնական, քաղաքացիական, սոցիալական և կամ աշխատանքային նկատառումներով»:

Հարատև կրթության նպատակն էր որակյալ կրթության հավասար հնարավորություններ ապահովելը բոլորի համար, կրթության և ուսուցման տրամադրման ձևերն այնպես համապատասխանեցնելը, որ մարդիկ կարողանան մասնակցել դրանց իրենց ողջ կյանքի ընթացքում, ձգտեն կրթության ու որակավորման ավելի բարձր մակարդակների՝ համապատասխանելու աշխատանքի շուկայի արագ փոփոխվող պահանջներին, քաջալերել և նախապատրաստել մարդկանց ավելի ակտիվ մասնակցելու սոցիալական և քաղաքական կյանքին՝ բոլոր մակարդակներում⁷:

Բարձրագույն կրթության առանձնահատուկ դերն այս ռազմավարության մեջ պետք է լիներ պայթարն ընդդեմ մեկուսացման և ներփակման (մարգինալացման)՝ երաշխավորելով կրթության հավասար հնարավորություններ բոլորի համար, բավարարելով հասարակության առաջ քաշած քաղաքական, տնտեսական և սոցիալական նոր պահանջները, որոնք հետևանք էին Եվրոպայում տեղի ունեցող խոր վերափոխումների: Հատուկ ընդգծվում էր, որ հարատև կրթությունը պետք է նպաստի Եվրոպայում գիտելիքների հասարակություն ձևավորելուն և ամրապնդի բարձրագույն կրթության երեք հիմնական գործառույթները՝ անձնական զարգացում, նախապատրաստում աշխատանքային գործունեության համար և ակտիվ մասնակցություն ժողովրդավարական հասարակության կենսագործունեությանը⁸:

⁵ Stu` Decision 2493/95/EC, OJ No L 256, 26. 10. 95, p. 45 (hereinafter Decision 2493/95/EC):

⁶ Հայերեն մասնագիտական գրականության մեջ Lifelong Learning եզրույթի տարբեր թարգմանություններ կան: Տես՝ «Կրթական քաղաքականությունը և Lifelong Learning-ը Հայաստանում. ռազմավարության հիմնադրույթների և շարունակական քննարկումների ձևակերպում», Երևան 2005, էջեր 105-106:

⁷ Տես՝ “A Memorandum on Lifelong Learning”, *Commission Staff Working Paper*, Brussels, 30. 10. 2000, SEC(2000) 1832 par. 5

⁸ Stu` Report on Final Conference, Paris, 15 -17 November 2001.

Չետագա տարիներին բարձր մակարդակով անցկացված խորհրդաժողովների որոշումները, տարբեր պետությունների կրթական ծրագրերում կատարված կառուցվածքային փոփոխությունները և զբաղվածության ազգային ծրագրերի ընդունումը վկայում են, որ հարատև կրթությունը (Lifelong Learning) ընդունվել է որպես հիմնական բաղադրիչ եվրամիության ռազմավարության մեջ՝ ընդդեմ այն մարտահրավերների, որոնց հասարակությունն ստիպված է դիմակայել երրորդ հազարամյակի շեմին⁹:

Եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններն ակտիվորեն ներգրավվեցին գիտելիքների հասարակություն ձևավորելու գործում իրենց վերապահված խնդիրների լուծմանը:

1988թ. սեպտեմբերի 18-ին Իտալիայի Բոլոնիա քաղաքում Եվրոպայի հնագույն համալսարանի հիմնադրման 900-ամյա հոբելյանին մասնակցող մի քանի տասնյակ համալսարանների ռեկտորներն ստորագրեցին Չամալսարանական ազատությունների խարտիան (Magna Charta Universitatum), որում շարադրված էին եվրոպական համալսարանների գործունեության հիմնարար սկզբունքները և դրանց հասնելու միջոցները: Խարտիայի հիմքում ընկած էր դեռևս միջնադարում ձևավորված համաեվրոպական ընդհանուր կրթական տարածքի գաղափարը, երբ ուսանողները և դասախոսները գիտելիքներ որոնելով ազատ տեղաշարժվում էին երկրից երկիր, և երբ պետությունների սահմանները չէին խոչընդոտում գիտելիքների ու սովորողների ազատ տեղաշարժին, իսկ դասավանդման լեզուն՝ լատիներենը, հավասարապես հասկանալի էր բոլոր կրթված մարդկանց և կիրառվում էր ուսուցման բոլոր մակարդակներում:

Խարտիայի մասնակիցները վստահություն էին հայտնում, որ պետություններն ու ազգերը կգիտակցեն, որ «համալսարանը երաշխավորը և կրողն է եվրոպական մարդասիրական ավանդույթների, համընդհանուր գիտելիքների և իր գործունեությամբ, վերացնելով աշխարհագրական և քաղաքական սահմանները, ստանձնում է տարբեր մշակույթների մերձեցման և փոխազդեցության առաքելությունը»¹⁰: Բացի դրանից՝ «համալսարանները պետք է խրախուսեն դասախոսների և ուսանողների շարժունությունը և դրա հետ մեկտեղ ընդունեն օտաերկրյա դասախոսների և ուսանողների հավասար

⁹ Տես՝ «Կրթական քաղաքականությունը և Lifelong Learning-ը Չայաստանում. ռազմավարության հիմնադրույթների և շարունակական քննարկումների ձևակերպում», Երևան 2005, էջեր 18-75:

¹⁰ Տես՝ Չամալսարանական ազատությունների խարտիայի 4 –րդ հոդվածը: Տես՝ «Բարձրագույն կրթություն», Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2005, պրակ 1, էջ 186:

կարգավիճակը, գիտական աստիճանները, քննությունների արդյունքները և իրականացնեն համալսարանի կարևորագույն առաքելությունը՝ ուսուցանեն»¹¹:

Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ստեղծելու ուղղությամբ կարևոր քայլ հանդիսացավ 1997թ. ապրիլի 11-ին Լիսաբոնում Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համատեղ կոնվենցիայի ստորագրումը¹²: Այս քայլը նապատակաուղղված էր ինչպես Եվրոպական երկրներում գործող, այնպես էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված փաստաթղթերի միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունների վերացմանը և աստիճանների ճանաչման միասնական համակարգի ստեղծմանը¹³:

Դրանից զատ, տարբեր երկրների ուսանողներին այլ երկրների համալսարաններում ուսանելու հնարավորություն ընձեռելու նպատակով Եվրոպական պետությունների միջև նախորդ դարի երկրորդ կեսի ընթացքում ստորագրվել էին մի շարք համաձայնագրեր, այդ թվում՝ համալսարաններ ընդունվելու հնարավորություն ընձեռող վկայագրերի համարժեքության մասին Եվրոպական դաշնագիրը¹⁴, և դրա լրացուցիչ արձանագրությունը¹⁵, համալսարանական ուսուցման ժամանակաշրջանների համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան¹⁶, Համալսարանական որակավորումների ակադեմիական ճանաչման մասին Եվրոպական¹⁷, Եվրոպական տարածաշրջանին պատկանող պետություններում բարձրագույն կրթության ուսուցման, վկայագրերի և գիտական աստիճանների ճանաչման մասին կոնվենցիան¹⁸, Համալսարանական ուսուցման ժամանակաշրջանների ընդհանուր համարժեքության մասին Եվրոպական կոնվենցիան¹⁹:

¹¹ Տես՝ նույն տեղում:

¹² Տես՝ <http://unesdoc.unesco.org/images/0011/001112/111236mb.pdf>

¹³ Տես՝ նույն տեղում:

¹⁴ Տես՝ 1953, ETS հմ. 15 <http://www.enicnarc.net/index.aspx?s=n&r=ena&d=legal>

¹⁵ Տես՝ 1964, ETS հմ. 49

<http://www.enicnarc.net/index.aspx?s=n&r=ena&d=legal>

¹⁶ Տես՝ 1956, ETS հմ. 21 <http://www.enicnarc.net/index.aspx?s=n&r=ena&d=legal>

¹⁷ Տես՝ 1959, ETS հմ. 32

<http://www.enic-narc.net/index.aspx?s=n&r=ena&d=legal>

¹⁸ Տես՝ «Բարձրագույն կրթություն» պրակ 1, Երևան 2005թ., էջ 239:

¹⁹ Տես՝ 1990, ETS հմ. 138: <http://conventions.coe.int/.Treaty/Commun/QueVoulezVous.asp?NT=138&CM=8&DF=4/10/2009&CL=ENG>

Հասարակական կյանքում տեղ գտած արագընթաց փոփոխությունների արդյունքում համալսարանական կրթության փոխճանաչման տարբեր ուղղություններին վերաբերող և տարբեր ժամանակ ընդունված այս փաստաթղթերն անհրաժեշտ էր համապատասխանեցնել նոր իրողություններին, լրամշակել և ամփոփել մեկ ընդհանուր փաստաթղթում: Երկարատև քննարկումների արդյունքում ընդունվեց Լիսաբոնյան կոնվենցիան և ուժի մեջ է սկսած 1999թ. փետրվարի 1-ից:

Լիսաբոնի 1997թ. կոնվենցիայի հիմնական նպատակն էր աջակցել մեկ երկրում ստացված բարձրագույն կրթության որակավորումների ճանաչմանն այլ երկրներում: Կոնվենցիան պարունակում էր մտադրությունների հռչակագրեր և հանձնարարականներ անդամ երկրների իշխանություններին: Միևնույն ժամանակ, ճանաչվում էր համալսարանների ինքնավարությունը և հաշվի էր առնվում երկրների կրթության կառավարման ինքնուրույնությունը, մասնավորապես՝ սեփական հայեցողությամբ որոշելու սեփական կրթական համակարգը:

Կոնվենցիան նախատեսում էր, որ կողմերը պետք է գործընկերներին տեղեկացնեն իրենց երկրների բարձրագույն կրթության համակարգերի և ծրագրերի մասին: Նշվում էր ակադեմիական փոխճանաչման ազգային տեղեկատվական կենտրոնների (ENIC) դերը անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու գործում: Բոլոր անդամակցող երկրները պարտավորվում էին ստեղծել նման տեղեկատվական կենտրոններ:

Լիսաբոնի կոնվենցիան առաջարկում է մի շարք սկզբունքներ, որոնցից կարևորներն են՝

ա) որակավորումների ճանաչման գործընթացում չպետք է լինի որևէ խտրականություն՝ պայմանավորված դիմորդի սեռով, ռասայով, մաշկի գույնով, լեզվով, կրոնով, քաղաքական հայացքներով, ազգային, սոցիալական կամ էթնիկ պատկանելությամբ,

բ) փոխադարձ ճանաչման մասին որոշումը պետք է լինի թափանցիկ, տրամաբանական: Արտասահմանում ստացած որակավորումների ընդունման սկզբունքների համաձայն՝ կողմերը պետք է ապացուցեն դիպլոմի համարժեքությունը: Արդյունքում, յուրաքանչյուր երկիր պետք է ճանաչի մյուսի որակավորումները՝ բացառությամբ, եթե բացահայտվում են ակնհայտ տարբերություններ իր երկրում գործող որակավորումների հետ,

գ) արտասահմանյան դիպլոմների հնարավոր մերժումները պետք է հաստատված լինեն իրավասու մարմինների կողմից, ապացուցելով, որ դրանք հիմնավոր են, չեն պարունակում խտրականություն և համապատասխանում են Կոնվենցիայի ոգուն,

դ) որակավորումների չափանիշների անհամապատասխանության որոշման պատասխանատվությունը կրում է ճանաչման գործընթացն իրականացնող մարմինը,

ե) յուրաքանչյուր երկիր հնարավորություն ունի ինքնուրույն որոշելու ստացած արտասահմանյան որակավորումների հիմնարար տարբերությունները սեփական կրթական համակարգի համեմատ (բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելության կարգը, ուսման ժամկետները, ստացած բարձրագույն կրթության ծրագրային բովանդակությունը, մասնագիտությունները և այլն) և իրավունք ունի պահանջելու որոշակի լրացում,

զ) կիրառության մեջ է դրվելու Դիպլոմի ներդիրը (Diploma's Supplement), որպես յուրաքանչյուր համալսարանական կամ բարձրագույն մասնագիտացված հաստատության դիպլոմին կից որակավորումների նկարագրություն, որը հանդիսանում է նաև որպես գործընկեր երկրների գրանցման մարմինների կողմից որակավորումների գնահատմանը նպաստող տեղեկատվություն: Դիպլոմի ներդիրը մշակվում է Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից՝ որակավորումները և կրթական համակարգերը համընթեռնելի և փոխադարձ ճանաչելի դարձնելու նպատակով: Բոլոր երկրները պետք է աջակցեն բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ դիպլոմի եվրոպական տիպի ներդիրի տրամադրման հարցում, ինչը դյուրացնի որակավորումների ճանաչման գործընթացը:

Բարձրագույն կրթության եվրոպական համակարգի կառուցվածքային ներդաշնակեցման նպատակով 1998թ. մայիսի 25-ին, Փարիզի համալսարանի հիմնադրման 800-ամյակի տոնակատարությունների ընթացքում, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարներն ստորագրեցին Սորբոնի հռչակագիրը:

Չռչակագրում ընդգծվում էր, որ «երկփուլ կրթական համակարգը պետք է լայնորեն կիրառվի միջազգային համեմատելիության և համարժեքության ճանաչման համար», իսկ դրան «կարելի է հասնել օգտագործելով կրեդիտների (եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ /ECTS/ համակարգը: Նշվածը հնարավորություն կընձեռի նախնական փուլերում ստացած կրեդիտները փոխան-

ցել այլ եվրոպական երկրների համալսարաններ՝ որակավորում ստանալու նպատակով»²⁰:

Նախարարներն ընդգծում էին, որ բացառիկ հնարավորություն է ի հայտ եկել «ստեղծելու բարձրագույն կրթության եվրոպական տարածք, որտեղ ազգային ինքնությունը և ընդհանուր շահերը կարող են փոխազդել և ամրապնդել մեկը մյուսին՝ ի շահ եվրոպայի, դրա ուսանողների և հատկապես քաղաքացիների» և պարտավորություն էին ստանձնում «ստեղծել միասնական համակարգ՝ նպատակաուղղված բարձրագույն կրթության արտաքին ճանաչման, ուսանողների շարժունության, ներառյալ աշխատանք գտնելու հնարավորությունների բարելավմանը»²¹:

Սորբոնի հռչակագրի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ Բոլոնիայի հռչակագիրը, որի ընդունումով վճռորոշ քայլ կատարվեց համաեվրոպական կրթական և մշակութային տարածք ստեղծելու ուղղությամբ:

1999թ. հունիսի 19-ին Բոլոնիայում Եվրոպայի 29 պետությունների կրթության նախարարներն ստորագրեցին հռչակագիր՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ստեղծելու վերաբերյալ: Հինք ընդունելով Սորբոնի հռչակագրի հիմնական սկզբունքները՝ նախարարները պարտավորվում էին համակարգել իրենց քաղաքականությունն այնպես, որ մինչև 2010 թվականն ստեղծվի բարձրագույն կրթության համաեվրոպական տարածք, ինչպես նաև եվրոպական բարձրագույն կրթության համակարգը տարածվի ողջ աշխարհում²²:

Բոլոնիայի հռչակագիրը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնական խնդիրներն իրագործելու համար, բարձրագույն կրթական համակարգերը վերակառուցելու և համապատասխանեցնելու ծրագիր է: Նախանշված նպատակներին հասնելու համար Հռչակագրում առաջ են քաշվում հետևյալ հիմնախնդիրները, որոնց լուծմանը պետք է նպատակաուղղվի ողջ գործընթացը.

ընդունել դյուրընթեռնելի և համեմատելի կրթական աստիճանների համակարգ,

ընդունել երկու փուլով կառուցված բուհական կրթության համակարգ,

²⁰ Տես՝ http://www.bologna-berlin2003.de/pdf/Sorbonne_declaration.pdf Սորբոնի Հռչակագիր - Բարձրագույն կրթության եվրոպական համակարգի կառուցվածքային ներդաշնակեցման՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր:

²¹ Տես՝ նույն տեղում:

²² Տես՝ Բոլոնիայի Հռչակագիր - Եվրոպայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր, <http://www.bologna-bergen2005.no/>

հիմնել կրեդիտային համակարգ, ինչպիսին է եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը (ECTS),

նպաստել ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի շարժունությանը,

նպաստել որակի ապահովման հարցում համագործակցությանը,

նպաստել բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական չափանիշների կիրառմանը:

Համոզված լինելով, որ եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծումը (ԵԲԿՏ) պահանջում է մշտական աջակցություն և աջալուրջ ղեկավարում, նախարարները պայմանավորվեցին, որ կհանդիպեն երկու տարին մեկ անգամ՝ առաջընթացը գնահատելու և ծագող նորանոր խնդիրներին լուծում տալու համար:

Բոլոնիայի հռչակագրով փաստորեն սկիզբ դրվեց լայնորեն հայտնի և այսօր արդեն մոտ հինգ տասնյակ երկրներում իրականացվող Բոլոնիայի գործընթացին: Ակնկալվում է, որ Բոլոնիայի գործընթացի արդյունքը պետք է լինի, մի կողմից, եվրոպայի երկրների քաղաքացիների համար աշխատատեղեր ապահովելը և, մյուս կողմից՝ եվրոպայի բարձրագույն կրթության համակարգը միջազգային առումով մրցունակ դարձնելը:

2001թ. մարտի 29-30-ին, նախքան Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների նախարարների հաջորդ գագաթնաժողովը, Իսպանիայի Սալամանկայի համալսարանում կայացավ եվրոպական ավելի քան 300 բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հանդիպումը: Մասնակիցներն ստորագրեցին «Սալամանկայի դաշնագիրը»՝ հիմնադրելով եվրոպական համալսարանական ասոցիացիան (ընկերակցությունը) (EUA):

Հավաստելով իրենց աջակցությունը Բոլոնիայի հռչակագրի սկզբունքներին՝ մասնակիցները բուհերի ղեկավարության, ուսանողության և դասախոսների անունից անհանգստություն էին հայտնում, որ Բոլոնիայի գործընթացը, գտնվելով պետական մարմինների անմիջական վերահսկողության տակ, կարող է որոշակիորեն սահմանափակել համալսարանների ակադեմիական ազատությունները: «... համալսարանները պետք է իրավունք ունենան ձևավորել իրենց ռազմավարությունը, ընտրել ուսուցման և գիտական հետազոտությունների իրենց գերակայությունները, տնօրինել միջոցները, ինքնուրույն մշակել ուսումնական պլաններն ու ծրագրերը, սահմանել պրոֆեսորների և ուսանողների ընդունելության իրենց չափանիշները»:

րը:..... Հակառակ դեպքում նրանք չեն ունենա համագործակցության և մրցակցության հնարավորություն»²³:

Ուղերձում շարադրված էին նաև Եվրոպական համալսարանական ասոցիացիայի տեսանկյունից կարևոր այն առանցքային սկզբունքները, որոնց ապահովումը պարտադիր է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ձևավորման համար. որակը՝ որպես հիմնաքար, վստահության ձևավորում, համապատասխանություն, շարժունություն, գրավչություն²⁴:

Մասնակիցները կոչ էին անում կառավարություններին նպաստել և շարունակել բարեփոխումները, հայտնում էին իրենց հաստատակամությունը համալսարանների ինքնավարության շրջանակներում վերակազմակերպելու ուսումնական գործընթացը:

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների նախարարների երկամյա պարբերականությամբ հրավիրվող առաջին գագաթնաժողովը տեղի ունեցավ 2001թ. մայիսին Պրահայում: Բոլոնիայի հռչակագիրն ստորագրած արդեն 32 երկրների կրթության նախարարները հանդիպեցին գնահատելու ձեռք բերված նվաճումները և ճշտելու գործընթացի առաջիկա տարիների ուղղություններն ու գերակայությունները: Մասնակիցները լսեցին Բոլոնիայի գործադիր խմբի զեկույցը, նշեցին, որ հռչակագրում ամրագրված նպատակներն ընդունվել և սկսել են լայնորեն իրականացվել Եվրոպական երկրների մեծ մասի կողմից: Նախարարները հաստատեցին իրենց վճռակամությունը շարունակելու ջանքերը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ստեղծելու ուղղությամբ՝ նկատի ունենալով Սալամանկայի ուղերձում արժարժված սկզբունքները: Նախարարները վերահաստատելով Բոլոնիայի հռչակագրում ամրագրված 6 հիմնախնդիրները, դրանց ավելացրին 3 հիմնախնդիր ևս.

հարատև կրթությունը (Lifelong Learning), որպես Եվրոպական բարձրագույն կրթության կարևոր բաղադրիչ,

բարձրագույն ուսումնական հաստատությունների և ուսանողների ներգրավումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ձևավորելու գործընթացում,

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքը (EHEA) հրապուրիչ դարձնելու գործընթացի խթանում:

Նախարարները հավաստեցին նաև, որ Բոլոնիայի գործընթացին կարող են անդամակցել Եվրոպական մշակութային կոնվենցիա-

²³ Տես՝ Message from Salamanca. «Ուղերձ Սալամանկայից. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ձևավորումը»:

²⁴ Տես՝ նույն տեղում:

յին անդամակցած բոլոր երկրները: Գազաթնաժողովի արդյունքներն ամփոփվեցին «Պրահայի կոմյունիկե. դեպի Եվրոպական բարձրագույն կրթության տարածք» փաստաթղթում²⁵:

Պրահայի գազաթնաժողովում վերջնական ձևավորում ստացան նաև Բոլոնիայի գործընթացն իրականացնող կառույցները.

Բոլոնիայի գործադիր խումբը կոչված է հետևելու գազաթնաժողովներում արված հանձնարարականների իրականացման գործընթացին: Խումբը կազմում է համաեվրոպական ընդգրկումով (մասշտաբով) միջոցառումների և նախագծերի աշխատանքային ծրագիրը, պլանավորում է աշխատանքային խմբերի գործունեությունն առանձին ուղղություններով: Խմբի անդամ են բոլոր մասնակից երկրների նախարարությունների, Եվրամիության, Եվրահանձնաժողովի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական համալսարանական ասոցիացիայի, Ուսանողների եվրոպական միության, Բուհերի եվրոպական ասոցիացիայի ներկայացուցիչները: Նախագահում է Եվրամիության ներկայացուցիչը:

Բոլոնիայի խորհուրդը մշակում է Բոլոնիայի գործընթացի հետագա քայլերը, իրականացնում է գործընթացի աշխատանքային ծրագրերի վերահսկողությունը: Խորհուրդը ղեկավարում է այդ պահին Եվրամիությունը նախագահող երկրի ներկայացուցիչը: Խմբի անդամ են Եվրամիությունը նախորդ և հաջորդ նախագահող երկրների ներկայացուցիչները և Գործադիր խմբի կողմից մեկ տարի ժամկետով ընտրված ևս երեք մասնակից երկրների ներկայացուցիչներ:

Բոլոնիայի քարտուղարությունը հանդիսանում է հաջորդ գազաթնաժողովը նախապատրաստող խումբ: Այն գործում է հաջորդ գազաթնաժողովը հյուրընկալող երկրում և այն նախագահում է հյուրընկալող երկրի ներկայացուցիչը: Խումբն ապահովում է գործընթացի զարգացումների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, համակարգումը և տարածումը, կոորդինացնում (համակարգում) է Բոլոնիայի խորհրդի և Բոլոնիայի գործադիր խմբի աշխատանքները:

Ավանդաբար, նախարարների հաջորդ գազաթնաժողովից առաջ, եվրոպական համալսարանների ներկայացուցիչները հավաքում և մշակում են են իրենց դիրքորոշումները և ակնկալիքները Բոլոնիայի գործընթացի հաջորդ փուլի մարտահրավերների վերաբերյալ: 2003թ. մայիսի 28-30-ին Ավստրիայի Գրացի համալսարանում կայացավ Եվրոպական համալսարանների ասոցիացիայի համաժո-

²⁵ Տես՝ Պրահայի կոմյունիկե. դեպի Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (2001),

<http://www.armenic.am/index.php?page=prahacommuniqu2332001>

ղովը, որի արդյունքում ընդունվեց Գրացի հռչակագիրը. Բեռլինի մեկնակետից՝ համալսարանների դերը:

Հռչակագիրն արտահայտում էր Եվրոպական համալսարանների դիրքորոշումը Բոլոնիայի գործընթացի հիմնախնդիրների առնչությամբ, նախանշում համալսարանների ապագա դերը, սահմանում գերակայությունները, պետություններից ակնկալիքը և համալսարանների հիմնական դերակատարությունը Եվրոպական բարձրագույն կրթության զարգացման գործընթացում: Այն համալսարանների ասոցիացիայի համար 2004-2005թթ. գործողությունների ծրագիր էր:

Մեկ անգամ ևս ընդգծելով համալսարանների կարևոր դերը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ձևավորելու գործում՝ Գրացի հռչակագիրը կառավարություններին կոչ էր անում սոցիալական և վարչական տեսանկյունից խթանել և աջակցել ուսանողների ու հետազոտողների շարժունությանը²⁶:

Եվրոպական համալսարանների ասոցիացիան հանդես էր գալիս նախարարների գագաթնաժողովին ուղղված երկու կարևոր նախաձեռնությամբ. գիտահետազոտական աշխատանքները դիտարկել որպես բարձրագույն կրթության անքակտելի մասը՝ Եվրոպայի գիտական ներուժի հզորացման և բարձրագույն կրթության գրավչության բարձրացման համար, և առաջարկում էր ստեղծել անկախ «Եվրոպայի բարձրագույն կրթության որակի հանձնաժողով»:

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների նախարարների երկրորդ գագաթնաժողովը կայացավ 2003թ. սեպտեմբերին՝ Բեռլինում: Հանդիպման արդյունքներն ամփոփվեցին նախարարների ընդունած «Բեռլինի կոնյունիկե. Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի կառուցումը» փաստաթղթում:

Հաշվի առնելով Գրացի հռչակագրի ուղերձը՝ նախարարները որոշեցին բարձրագույն կրթության երկաստիճան համակարգն այսուհետ դիտարկել որպես եռաստիճան և Բոլոնիայի գործընթացի արդեն ինը հիմնախնդիրներին ավելացնել ևս մեկը՝

²⁶ Stu՝ Graz Declaration 2003. Forward from Berlin: the Role of the Universities,

http://www.eua.be/eua/jsp/en/upload/COM_PUB_Graz_publication_final.1069326105539.pdf

դոկտորական ծրագիր և համագործակցություն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ու Եվրոպական հետազոտական տարածքի միջև²⁷:

Բեռլինի գազաթնաժողովի ընթացքում Բոլոնիայի գործընթացին անդամակցեցին ևս 7 երկրներ, այդպիսով, անդամների ընդհանուր թիվը հասավ 40-ի: Որոշվեց, որ մինչև հաջորդ գազաթնաժողովը բոլոր բուհերում պետք է ներմուծվի դիպլոմի միասնական հավելվածը, և որ անդամ երկրներում պետք է ստեղծվեն որակի գնահատման ու որակավորումների ճանաչման ազգային կենտրոններ: Նշվեց, որ Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգը դառնում է ազգային կրեդիտային համակարգերի ընդհանրացված հիմքը:

Եվրոպայի կրթության նախարարների հերթական գազաթնաժողովի նախօրեին կայացավ Եվրոպական համալսարանների ասոցիացիայի Գլազգոյի համաժողովը (2005թ. փետրվար-մարտ), որը քննարկեց Բոլոնիայի գործընթացի ընթացքը և նոր առաջարկություններով դիմեց գազաթնաժողովին²⁸: Հիմնական շեշտադրումն արվում էր դոկտորական մակարդակի որակավորումների ծրագրերի վրա և առաջարկվում էր, որ դրանք համապատասխանեցվեն ԵԲԿՏ որակավորումների ընդհանուր չափանիշներին: Նշվում էր, որ կրթության երրորդ աստիճանի՝ դոկտորական ուսուցման բնականոն բեռնվածքը պետք է լինի 3-4 տարի: Դոկտորական ուսուցման ծրագրերը պետք է ներառվեն բուհերի ուսումնական ծրագրերում և վերափոխվեն այնպես, որ ներառեն կարիերայի զարգացման հնարավորություններ, շարժունության և համատեղ ծրագրերի ու համագործակցության ավելի լայն հնարավորություններ: Դոկտորական հետազոտողների անհատականացված ուսուցման ուրվագիծը (սխեման) պետք է զուգորդվի դոկտորական ուսուցման ծրագրերի ընդհանուր կրթական մոդուլների կիրառմամբ: Դոկտորական աստիճանը պետք է շնորհի համալսարանը, ինչը կբարձրացնի աստիճանի սոցիալական արժեքը: Բուհը պետք է պատասխանատվություն կրի ապագա դոկտորների համար՝ գիտական հետազոտությունների ա-

²⁷ Տես՝ “Berlin Communique: Realising the European Higher Education Area”. Communique of the Conference of Ministers responsible for Higher Education in Berlin on 19 September 2003,

http://www.eua.be/fileadmin/user_upload/files/Quality_Assurance/OFFDOC_BP_Berlin_communique_final.1066741468366.pdf

²⁸ Տես՝ Glasgow Declaration, EUA Glasgow Convention, 31 March – 2 April, 2005,

http://bologna.mgimo.ru/files/EAU_Publications/EUA_annual_report_2005.pdf:

վելի գրավիչ պայմաններ ստեղծելու, ֆինանսական հիմնադրամների (ֆոնդերի) տրամադրման, հավանական (պոտենցիալ) գործատուների հետ հետազոտական համագործակցության հաստատման հարցերում:

Ինչպես և նախատեսվել էր, Բոլոնիայի գործընթացի երրորդ զագաթնաժողովը գումարվեց 2005թ. մայիսի 19-20-ին՝ Նորվեգիայի Բերգեն քաղաքում:

Լսելով Աշխատանքային խմբի ներկայացրած զեկույցը 2003-2005թթ. ընթացքում կատարված աշխատանքների մասին և այլ հարակից զեկույցներ՝ զագաթնաժողովն արձանագրեց, որ նախանշված երեք գերակա ոլորտներում առկա է զգալի առաջընթաց: Նախարարները ողջունեցին Որակի ապահովման եվրոպական ցանցի ստեղծումը (ENQA) և հանձնարարեցին Աշխատանքային խմբին մինչև 2010 թվականն ավարտել համադրելի որակավորումների ազգային համակարգերի համապատասխանեցումը Ցանցի կողմից առաջարկված եվրոպական բարձրագույն կրթության տարածքում որակի ապահովման չափորոշիչներին: Նախարարները հատուկ ընդգծեցին, որ որակավորումների եվրոպական և ազգային շրջանակների մշակումը դիտարկում են որպես բարձրագույն կրթության մեջ հարատև կրթության ներառման հնարավորություն:

Գագաթնաժողովն ուրվագծեց Բոլոնիայի գործընթացի հիմնական գերակայությունները հաջորդ երկու տարիների համար.

ա) ներդնել որակի վերահսկման ներքին մեխանիզմներ Բուհերում, ստեղծել Որակի ապահովման եվրոպական ցանկ / ռեգիստր,

բ) ապահովել որակավորումների աստիճանների և ուսուցման ժամկետների փոխճանաչումը,

գ) ուժեղացնել բարձրագույն կրթական և գիտահետազոտական հատվածների միջև փոխկապվածությունը, դոկտորական մակարդակի որակավորումները լիովին համապատասխանեցնել եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների շրջանակին,

դ) ուժեղացնել սոցիալական ուղղվածությունը՝ ապահովել որակյալ բարձրագույն կրթության մատչելիությունը բոլոր քաղաքացիների համար, վերացնել դրան խանգարող սոցիալական և տնտեսական բոլոր խոչընդոտները, տրամադրել մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ,

ե) նպաստել շարժունության ընդլայնմանը՝ վերացնելով դրա զարգացմանը խոչընդոտող բոլոր արգելքները՝ կապված վիզաների և աշխատանքի թույլտվություն ստանալու ընթացակարգերի հետ, ընդլայնել վարկերի և դրամաշնորհների տրամադրումը,

զ) նպաստել Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի գրավչությանը և համագործակցությանը մյուս աշխարհամասերի հետ, մշակել արտաքին ուղղվածության ռազմավարություն,

է) 2010թվականին Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ստեղծումից հետո դրա հետագա զարգացմանը նպաստող համաձայնությունների ուրվագծում²⁹:

Նախարարները պարտավորություն ստանձնեցին նաև աջակցել այն սկզբունքին, որ պետությունը պատասխանատու է բարձրագույն կրթության համար, և որ անհրաժեշտ է ապահովել բարձրագույն կրթական հաստատությունների կայուն ֆինանսավորումը: Բերգենի գագաթնաժողովում Բոլոնիայի գործընթացին միացան հինգ պետություններ ևս, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը:

Բոլոնիայի գործընթացի արդեն 46 անդամ երկրների կրթության նախարարների հինգերորդ գագաթնաժողովը կայացավ 2007թ. մայիսի 16-18-ին Լոնդոնում: Ծանոթանալով Գործադիր խմբի հաշվետու զեկույցին և գնահատելով նախորդ գագաթնաժողովից հետո անցած ժամանակաշրջանում Բոլոնիայի գործընթացի արդյունքները՝ նախարարներն զգալի առաջընթաց արձանագրեցին գործընթացի բոլոր 10 ուղղություններով: Հատկապես նկատելի է առաջընթացը բարձրագույն կրթության եռաստիճան համակարգին անցման, որակավորումների ազային հենքերի մշակման, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգերի օգտագործման, դիպլոմի եվրոպական նմուշի հավելվածի ներդրման և որակի ապահովման եվրոպական չափորոշիչների ներդրման ուղղությամբ: Մյուս կողմից, կատարված աշխատանքները դեռ բավարար չեն ուսանողների և դասախոսների շարժունության, որակի ապահովման միջազգային համագործակցության, հարատև կրթության ներդրման, բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների միահյուսման ուղղություններով:

Գագաթնաժողովում ընդունվեց Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրի (EQAR) ստեղծման նախագիծը, որը պետք է ուղղորդի որակի ապահովման ազգային գործակալությունների գործունեությունը: Նախարարներն ընդունեցին «Եվրոպական բարձրագույն կրթության տարածքը գլոբալ համատեքստ»

²⁹ Stu` The European Higher Education Area – Achieving the Goals. Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19-20 May, 2005, <http://www.armenic.am/index.php?page=bergen>

տում» ռազմավարությունը, որը պետք է նպաստի ԵԲԿՏ-ի մրցունակության և գրավչության բարձրացմանը, միջազգային համագործակցության զարգացմանը: Գազաթնաժողովի կոմյունիկեում հատուկ ընդգծվեց բարձրագույն կրթության սոցիալական ուղղվածության կարևորությունը և հանձնարարվեց հաջորդ գազաթնաժողովին զեկույց պատրաստել այս ասպարեզում կատարված աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Գործադիր խումբը հանձնարարական ստացավ մինչև 2009թ. հաջորդ գազաթնաժողովը ամփոփ զեկույց պատրաստել գնահատելով՝ Բոլոնիայի գործընթացի բոլոր 10-ը ուղղություններով կատարված բարեփոխումների առաջընթացը, ինչպես նաև ուրվագծել 2010թվականը սահմանված վերջնաժամկետից հետո Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի զարգացման հեռանկարները: Որոշվեց նախարարների հաջորդ գազաթնաժողովն անցկացնել Բեռլինի Եվրոպայի երկրներում³⁰:

Հանրագումարի բերելով կատարված վերլուծությունը՝ Եվրոպական երկրներում բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի զարգացման տեսանկյունից, պետք է արձանագրել այն հսկայական առաջընթացը, որը ձեռք է բերվել այդ ոլորտում Եվրոպական միության ստեղծումից հետո անցած մեկուկես տասնամյակի ընթացքում:

Ներկայումս Բոլոնիայի գործընթացին անդամակցել են նաև Եվրոպական մի շարք հասարակական կառույցներ ու կազմակերպություններ, որոնք հանդիսանում են Բոլոնիայի գործադիր խմբի խորհրդակցական անդամներ: Դրանք են.

- ա) Եվրոպական համալսարանական ասոցիացիան (EUA),
- բ) Բարձրագույն կրթության հաստատությունների Եվրոպական ասոցիացիան (EURASE),
- գ) Ուսանողների Եվրոպական միությունը (ESU),
- դ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարձրագույն կրթության Եվրոպական կենտրոնը (UNESCO-CEPES)
- ե) Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական ասոցիացիան (ENQA),
- զ) Միջազգային կրթության համաեվրոպական կառույցը,
- է) Եվրոպայի Արդյունաբերողների և գործատուների համադաշնությունների միությունը:

³⁰ Stu` Towards the European Higher Education Area: responding to challenges in a global world. London Communique, 18 May, 2007.

<http://www.cicic.ca/docs/bologna/2007LondonCommunique.en.pdf>

Այս շահառու կազմակերպությունների մասնակցությունն էապես նպաստում է Բուլոնիայի գործընթացի գործնական ուղղվածության բարձրացմանը:

Ակնհայտ է, որ Բուլոնիայի գործընթացի բոլոր 10 ուղղություններն էլ ավելի կամ պակաս չափով ընդլայնում և երաշխավորում են Եվրոպական երկրների քաղաքացիների՝ առանց որևէ խտրականության բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը: Այս հանգամանքն ավելի գրավիչ է դարձնում Եվրոպական բարձրագույն կրթության ընդհանուր տարածքը՝ այն լուրջ մրցակից դարձնելով ԱՄՆ-ի, Կանադայի և Ավստրալիայի բարձրագույն կրթության համակարգին:

Բուլոնիայի գործընթացին միանալը բաց է Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունների համար: Միանալով այս գործընթացին՝ պետությունները պարտավորություն են ստանձնում իրենց երկրների կրթական օրենսդրությունը համապատասխանեցնել Եվրոպական բարձրագույն կրթության ընդհանուր տարածքում գործող չափանիշներին, այդպիսով օրենսդրորեն երաշխավորելով և փաստացի ապահովելով իրենց քաղաքացիների բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը:

Հակառակ այն հանգամանքին, որ ընդունվել են վերոնշյալ փաստաթղթերը, Եվրոպական մի շարք առաջատար երկրներում (Անգլիա, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա, Ռումինիա և այլն) դեռ ամբողջովին չեն ներդրված Բուլոնիայի հռչակագրով նախատեսված 6 դրույթները: Մասնավորապես, անգլիական կրթական համակարգը դեռ ամբողջությամբ ընդգրկված չէ գիտելիքների գնահատման համաեվրոպական չափանիշներում: Դեռևս կա անհամապատասխանություն համընդհանուր Եվրոպական և ֆրանսիական, իտալական կրթական համակարգերի առաջին երկու աստիճանների ուսումնառության տևողության միջև:

Չնայած այն փաստին, որ կրեդիտային համակարգը կոչվում է (European Credit Transfer System) Եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ, և որ համակարգը ձևականորեն գործում է Բուլոնիան գործընթացի մասնակից բոլոր երկրներում, սակայն կրեդիտների փոխանցումը կիրառվում է հիմնականում Արևմտյան Եվրոպայի համալսարանների միջև՝ դուրս թողնելով անգամ Եվրամիության անդամ հանդիսացող Արևելյան Եվրոպայի երկրների համալսարաններին: Սա գալիս է Եվրոպական երկրներում գործող բուհերի միջև գոյություն ունեցող կրթական մակարդակների հսկայական տարբերությունից և խոչընդոտում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունությանը:

§ 2. ՀՀ անդամակցումը Բոլոնիայի գործընթացին: Բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները և հեռանկարային զարգացումները Հայաստանի Հանրապետությունում

Անկախության առաջին տասնամյակի ընթացքում ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում արդեն իրականացվում էին առանձին քայլեր միջազգայնորեն ընդունված կառուցվածքային, որակական և սոցիալական չափորոշիչների ներդրման ուղղությամբ: Այսպես, դեռևս 1992թ. Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում (պոլիտեխնիկական ինստիտուտ) ներդրվեց բարձրագույն կրթության երկաստիճան համակարգը՝ բակալավրիատ/մագիստրատուրա, իսկ 1994թ.՝ եռաստիճան համակարգը³¹: Երկաստիճան համակարգը հետագայում ներդրվեց նաև ԵՊՀ-ում (1995) և ԵԳԱ-ում (1998): Սակայն ՀՀ բուհական կրթության ոլորտում տեղ գտած այս բարեփոխումները չհամակարգված բնույթ էին կրում և ռազմավարական ընդհանուր նպատակներ չէին հետապնդում:

Միջազգային կրթական համակարգին ինտեգրացումը՝ որպես կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունք, ամրագրվեց 1999թ. ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում (հոդվ. 5.4): Օրենքում ամրագրվեց նաև, որ «Ուսումնական հաստատություններն իրավունք ունեն համագործակցել օտարերկրյա ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ...» (հոդվ. 51, մաս 2-րդ):

«Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագրում» նույնպես ընդգծվեց միջազգային կրթական կառույցներին ինտեգրվելու կարևորությունը՝ որպես հանրապետության բարձրագույն կրթության համակարգը բարելավելու միջոց³²: Սակայն կոնկրետ գործնական քայլեր այս ուղղությամբ ծրագիրը չէր նախանշում: Չպետք է մոռանալ նաև, որ Բոլոնիայի գործընթացը դեռ նոր էր ծավալվում և այդ մասին մեր հասարակության գրեթե անտեղյակությունը չէր նպաստում այն դիտարկելու որպես հեռանկարային գործընթաց: Միջազգային առումով ուշադրության կենտրոնում Բոլոնիայի գործընթացը հայտնվեց միայն առաջին գագաթնաժողովներից հետո արձանագրված ակնհայտ հաջողությունների արդյունքում, ինչը

³¹ Տես՝ Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: Վերլուծական զեկույց, «Բարձրագույն կրթություն», Երևան 2007, հատ. 4, էջ 188:

³² Տես՝ Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիր, 4-րդ հոդվ.:

նպաստեց Արևելյան Եվրոպայի երկրների արագ անդամակցությանն այդ գործընթացին:

Առաջին անգամ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին՝ Բոլոնիայի գործընթացին միանալը որպես Հայաստանի համար գերակա նպատակ ամրագրվեց 2003թ. ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության մեջ: Փաստաթղթում առանձին պարագրաֆով ներկայացված էին Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին միանալու ռազմավարությունը և հետագա գործողությունները³³: Ընդգծելով Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին ինտեգրվելու անհրաժեշտությունը՝ դրանում սահմանվում էին ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարական նպատակները և դրանցից բխող ավելի քան երկու տասնյակ խնդիրներ:

Ռազմավարության 3-րդ հավելվածում մանրամասն ներկայացված էին Բոլոնիայի գործընթացի էությունը, նպատակներն ու խնդիրները: Պետք է նկատել, որ առաջին անգամ էր լայն հասարակությանը ներկայացվում Բոլոնիայի հռչակագրի և Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Սակայն այդ տեղեկատվությունն ի սկզբանե թերի էր, ներկայացված էին միայն Բոլոնիայի հռչակագրի 6 հիմնախնդիրները. Պրահայի և Բեռլինի զագաթնաժողովներում կատարված հավելումները արտացոլված չէին: Դրա հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ «փաստաթուղթն իր եվրահիմնագրման մասով զգալիորեն հնացել է և հարցերի ընդգրկումով ի համապատասխանում Բոլոնիայի գործընթացի Եվրոպական վերջին զարգացումներին, քանի որ Բոլոնիայի գործողությունների ուղղությունների (խնդիրների) ցանկն զգալիորեն ընդլայնվել է՝ հասնելով 10-ի»³⁴: Դրա պատճառը հավանաբար այն էր, որ այս փաստաթուղթը մշակվել էր Ռուսաստանի Դաշնության համապատասխան փաստաթղթի հիման վրա, որն արդեն 2 տարվա վաղեմություն ուներ:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը (2004թ. դեկտեմբեր) անհրաժեշտ հիմքեր ստեղծեց բարձրագույն կրթության ոլորտի արդի բարեփոխումների համար: Օրենքում Հայաստանի բուհական կրթության համակարգի ինտեգրման մասին ուղղակիորեն չէր խոսվում, սակայն Բոլոնիայի

³³ Տես՝ ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարությունը, «Բարձրագույն կրթություն» պրակ 1, Երևան, 2003, էջեր 78-129:

³⁴ Տես՝ Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում: Վերլուծական զեկույց, Բարձրագույն կրթություն, Երևան 2007, հատ. 4, էջ 190:

գործընթացի սկզբունքներն արտացոլված էին կրթության եվրոպական չափանիշների ներդրմանն ուղղված առաջարկներում: Այդ առաջարկներն էին՝

ա) բարձրագույն կրթության համակարգի ներքին և արտաքին արդյունավետության խթանում,

բ) ուսումնական ծրագրերի վերակառուցում, ներառյալ կրթության բարձր որակի ապահովման և հավատարմագրման գործընթացները,

գ) բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատության երաշխավորում,

դ) ուսանողների շարժունության, բուհից բուհ տեղափոխման գործընթացի պարզեցում,

ե) բուհական կրթության ողջ համակարգի անցումը բակալավր-մագիստրոս երկաստիճան կրթակարգի սկսած՝ 2005/2006թ. ուսումնական տարուց:

Բոլոնիայի գործընթացին միանալու Հայաստանի մտադրության մասին պաշտոնապես հայտարարվեց 2004թ. մայիսի 17-ին Ստրասբուրգում, երբ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կրթության նախարարներն այդ մասին համատեղ հայտարարություն ստորագրեցին: Հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր, որ «Ընթրնելով կրթության համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը, մասնավորապես ընդգծելով ազգային մակարդակներում ներկայումս ընթացող բարեփոխումների գործընթացի անհրաժեշտությունը, նախարարները կարևոր նշանակություն են տալիս հետևյալ առաջնահերթություններին. ա) Եվրոպական նորմերին և չափորոշիչներին / ստանդարտներին համապատասխան բարձրագույն կրթության ոլորտի նոր օրենսդրության մշակում և ընդունում, բ) բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան, գ) օժանդակություն տեղեկատվության և փորձառության փոխանակմանն իրենց երկրների միջև վերոնշյալ ոլորտներում, նպաստել իրենց երկրների ինտեգրմանը Եվրոպական ընդհանուր կրթական տարածքին³⁵:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի համար շրջադարձային նշանակություն ունեցավ Լիսաբոնում 2004թ. դեկտեմբերի 14-ին ստորագրված Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորում-

³⁵ Տես՝ Statement of the Minister of Education of Armenia, Azerbaijan and Georgia, Council of Europe Headquarters, Strasbourg, 17-18 May, 2004, http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/links/National-reports2005/National_Report_Armenia_05.pdf

ների ճանաչման մասին կոնվենցիային միանալը: Սա Բոլոնիայի գործընթացին անդամակցելու պարտադիր նախապայման էր:

Նախապատրաստվելով Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես անդամակցելուն՝ ՀՀ կառավարությունն սկսեց որոշակի քայլեր իրականացնել բուհական կրթության ոլորտում Բոլոնիայի սկզբունքների և պահանջների ներդրման ուղղությամբ: 2005թ. մարտի վերջին ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամը, ինչը Բեռլինի գազաթնաժողովի ընդունած գերակայություններից էր: Հիմնադրամի գործունեության նպատակներն էին հանդիսանալու՝ որակավորումների, կրթական համակարգերի և փոխճանաչման գործընթացների մասին համարժեք, հուսալի, ճշգրիտ տեղեկատվության և եզրակացության տրամադրումը. Եվրոպական միության շրջանակներում մասնագիտական փոխճանաչման համապատասխան մարմինների հետ համագործակցությունը. բարձրագույն կրթության քաղաքականության և օրենսդրության մշակմանը մասնակցությունը. ENIC/NARIC ցանցերի շրջանակներում՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի որակավորումների համընդգրկուն կառուցվածքի մշակմանը նպատակաուղղված համագործակցությունը. դիպլոմի ներդրում ներառվող ազգային կրթական համակարգի բնութագրի մշակումը. Որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) հետ համագործակցության խթանումը և այլն³⁶:

2005թ. ապրիլին ՀՀ կառավարության N 449-Ն որոշմամբ հաստատվեց Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը: Ըստ այդ որոշման՝ չափորոշիչն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝ շրջանավարտին շնորհվող մասնագիտական որակավորումը, շրջանավարտի մասնագիտական կարողությունները և բարձրագույն մասնագիտական կրթությամբ շրջանավարտի հետագա կրթության հնարավորությունը³⁷:

Հայաստանի Հանրապետությունը Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես միացավ 2005թ. մայիսին Նորվեգիայի Բերգեն քա-

³⁶ Տես՝ ՀՀ կառավարության 2005թ. մարտի 31-ի N 699 – Ն որոշումը «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամ ստեղծելու մասին, www.aws.am

³⁷ Տես՝ ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 14-ի N 449-Ն որոշումը «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին», www.laws.am

ղաքում կայացած Նախարարների գագաթնաժողովի ընթացքում, երբ ՀՀ կրթության և գիտության նախարարը, իթիվս այլոց, ստորագրեց գագաթնաժողովի հուշագիրը:

Գագաթնաժողովին ներկայացվեց Հայաստանի ազգային զեկույցը, որը 13 կետից բաղկացած տեղեկատվական փաստաթուղթ էր: Բոլոնիայի քարտուղարության կողմից կազմված հարցաշարին տրված պատասխանները պետք է պատկերացում տային նոր անդամակցող երկրի կրթական համակարգի կառուցվածքի և գործունեության, բուհական կրթության ոլորտում գործող օրենսդրության մասին, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի 10 հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված քայլերի մասին (որակի ապահովում, երկաստիճան համակարգ, որակավորումների և կրթության փուլերի փոխճանաչում, դոկտորական կրթություն և հետազոտություն, ուսանողների և աշխատակիցների շարժունություն, բուհերի ինքնավարություն և ուսանողների ներգրավվածություն, սոցիալական ուղղվածություն, հարատև կրթությունը, Եվրոպական ուղղվածության զարգացում և այլն):

Այս առաջին զեկույցի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը դեռևս լիովին պատրաստ չէր այն արմատական կառուցվածքային, ծրագրային, կազմակերպական փոփոխությունների իրականացմանը, որոնք անհրաժեշտ են Բոլոնիայի գործընթացի սկզբունքների արդյունավետ և լիարժեք իրականացման համար: Բոլոնիայի սկզբունքների իրականացումը պահանջում է որոշակի օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության լրամշակում՝ ելնելով Բոլոնիայի գործընթացի նոր մարտահրավերներից և գերակայություններից:

Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես անդամակցելուց հետո արդեն ՀՀ կառավարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը որոշակի քայլեր ձեռնարկեցին Բոլոնիայի սկզբունքների և պահանջների շուտափույթ ներդրման ուղղությամբ:

2005թ. հուլիսին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու մասին»³⁸: Սա կապված էր Բոլոնիայի գործընթացի պահանջներից բխող ուսանողների շարժունությունը բարձրացնելու խնդրի հետ: Սակայն տեղափոխման գործընթացը, անգամ հանրապետության ներսում մեկ բուհից

³⁸ Տես՝ ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի N 1112 Ն որոշումը «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու մասին»:

մյուսը, ավելորդ տեղը բարդացված էր, կապված էր բյուրոկրատական քաջքշուկի հետ և ենթարկված էր որոշակի սահմանափակումների: Այսպես, օրինակ, ուսանողի փոխադրումը մեկ բուհից մյուսը կատարվում էր ՀՀ կրթության և գիտության նախարարի թույլտվությամբ՝ 2 բուհերի ռեկտորների համաձայնությամբ, շատ սեղմ ժամանակամիջոցում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթների ընթացքում: Ուսանողների փոխադրումն առաջին և ավարտական կուրսերում չէր թույլատրվում: Ավելին, ուսանողների փոխադրումը թույլատրվում էր, եթե առարկաների ժամաքանակների 25 տոկոսից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, չէր գերազանցում 8-ը: Մասնագիտության փոփոխմամբ թույլատրվող փոխադրումների նպատակահարմարությունը հիմնավորվում և համաձայնեցվում էր ընդունող բուհի կողմից: Հավատարմագրված ոչ պետական բուհից ուսանողի փոխադրումը պետական բուհ կատարում էր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ ընդունող բուհի ռեկտորի ներկայացմամբ: Հետագայում ընդունվեց այլ կարգ, որով հեշտացվում էր բուհից բուհ տեղափոխումը՝ զուտ երկու ռեկտորների փոխհամաձայնությամբ (ՀՀ կառ. 16.08.07թ. N 921-Ն որոշում):

Բուհից բուհ, ինչպես նաև նույն բուհում մասնագիտությունից մասնագիտություն ուսանողների, նրանց կրթական արդյունքների (կրեդիտների) տեղափոխումներն ու միջազգային շարժունությունը դյուրացնելու համար անհրաժեշտ է մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ առկա օրենսդրական և կանոնակարգային խոչընդոտների վերացման նպատակով: Դիտարկենք այս ասպարեզում առկա օրենսդրական դաշտը: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, որը վերաբերում է բարձրագույն կրթության համակարգում համակարգում պետական քաղաքականության սկզբունքներին, կարևորում է նաև եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում ՀՀ բարձրագույն եւ հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիության և դիպլոմների ճանաչելիության ապահովումը (կետ 5) և ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը (կետ 6): Նույն օրենքի 5-րդ հոդվածը, որը նվիրված է ԲՀՄԿ բնագավառում պետական քաղաքականության խնդիրներին, դրանց թվում նշում է նաև միջազգային գիտակրթական համագործակցության զարգացումը և դրան ինտեգրմանը նպաստելը (կետ 3): Օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ «*Բուհի ուսանողները և ասպիրանտները... կարող են իրենց հայեցողությամբ... տեղափոխվել այլ բուհ*

(ներառյալ՝ օտարերկրյա պետությունների)... » (մաս 1) և «... յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բուհում» (մաս 3, կետ 3): Սակայն օրենքի նշված դրույթները կրում են դեկլարատիվ / հռչակագրային բնույթ և ամրապնդված չեն համապատասխան կազմակերպական մեխանիզմների, անհրաժեշտ կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերի առկայությամբ: Ավելին, հարցին վերաբերող առկա համակարգային փաստաթղթերը և ներբուհական կարգերը հաճախ հակասում են օրենքում հռչակված սկզբունքներին:

ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 14-ի թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված՝ *Ուսանողներին մեկ բուհից մեկ ուրիշը փոխադրելու վերաբերյալ կարգը* կանոնակարգում է ուսանողների ՀՀ-ում բուհից բուհ և օտարերկրյա բուհերից ՀՀ բուհեր փոխադրումները: Կարգում ոչինչ ասված չէ ՀՀ բուհերից օտարերկրյա բուհեր ուսանողների տեղափոխման, օտարերկրյա բուհերում սահմանափակ ժամանակաշրջաններով (կիսամյակ, ուստարի) նրանց ուսումնառության հնարավորության և դրա արդյունքների պաշտոնական ճանաչման, այսինքն՝ օրենքով սահմանված միջազգային շարժունության հնարավորությունների մասին:

Ըստ էության, այս կարգը պետք է սահմաներ նաև ԲՀՄԿ օրենքի հիշատակված կետերով արտոնված տեղափոխման և շարժունության իրականացման կառուցակարգերը, մինչդեռ այն կոշտ սահմանափակումներ է դնում ուսանողների՝ բուհից բուհ տեղափոխումների վրա և դրանց վերաբերյալ որոշումների ընդունումը թողնում առնչվող բուհերի ղեկավարության հայեցողությանը:

Մեկ տարի անց ընդունվեց ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի մասին»: Նշված ակտում, բարեփոխումների ընդհանուր համատեքստում, առանձնահատուկ տեղ էր հատկացվում մրցակցային կրթությանը և ըստ առաջադիմության՝ ուսանողների փոխատեղման գաղափարին³⁹:

Դեռևս 2005թ. վերջին ՀՀ կառավարությունը խիստ կարևոր որոշում էր ընդունել՝ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին, որը նախատեսում էր. 2006/2007թ. ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսել ուսման կազմակերպման կրեդիտային համակարգի ներդրման գործըն-

³⁹ Տես՝ ՀՀ կառավարության 2006թ. հուլիսի 27-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1183-Ն որոշումը:

թացը: Այդ կապակցությամբ սահմանվում է ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը՝ հավասար 60 ակադեմիական կրեդիտի: Ընդ որում, բակալավրի աստիճան ստանալու համար սահմանվում է առնվազն 240, բժշկական մասնագիտությունների համար՝ առնվազն 300 կրեդիտ, մագիստրոսի աստիճան ստանալու համար սահմանվում է 60-120 կրեդիտ, բժշկական մասնագիտությունների համար՝ մինչև 180 կրեդիտ: Որոշմամբ նախատեսվում է 2005/2006թ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից կրեդիտային համակարգը կրթափորձի կարգով մասնակիորեն կիրարկել Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, Հայաստանի պետական ագրարային համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում: Նախատեսվում էր նաև կրթափորձի արդյունքներն ամփոփել 2005/2006թ. ուսումնական տարվա ավարտին: Բացի դրանից, նախատեսվում է հաստատել նոր կրթական չափորոշիչները և դրանց հենքի վրա իրականացնել գործող ուսումնական պլանների արմատական վերակառուցում՝ ուղենիշ ունենալով դրանց մոդուլացումը և արտահայտումը ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն արտահայտող կրեդիտային արժեքներով՝ պարտադիր և կամընտրային դասընթացների և ուսումնական մոդուլների ցանկով և դրանց ամրագրված կրեդիտների չափաբաժիններով: Նորացված ուսումնական ծրագրերն ու դրանց բովանդակությունը մերձեցնել եվրոպական չափանիշներին և մասնագիտական աշխատանքային շուկայի առկա պահանջներին՝ շնորհվող կրեդիտների և որակավորումների ճանաչելիությունը և կրեդիտների կուտակման և տեղափոխման եվրոպական համակարգի հետ (ECTS) դրանց համադրելիությունն ապահովելու նպատակով⁴⁰:

Այդ որոշման տրամաբանական շարունակությունը հանդիսացավ ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 43 որոշումը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին»: Կառավարությունը որոշեց մինչև 2006թ. դեկտեմբերի 15-ը հաստատել Բոլոնիայի գործընթացի սկզբունքների գործողությունների պլանները յուրաքանչյուր բուհի համար և մինչև 2007թ. մարտի 20-ը՝ Բոլոնիայի գոր-

⁴⁰ Տես՝ ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի N 2307-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին»:

ծընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցից բխող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկները: Բացի դրանից, յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 1-ը կառավարություն պետք է ներկայացվեր Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացման մասին տեղեկատվություն⁴¹:

ՀՀ կառավարության հաստատած ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցը միտված էր ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում կոնկրետ նպատակների սահմանմանը, այդ նպատակների իրականացման համար անհրաժեշտ քայլերի ձեռնարկմանը և դրանց համար անհրաժեշտ ժամկետների սահմանմանը: Ժամանակացույցով սահմանված նպատակների իրագործման համար նախատեսված էր.

ա) որակավորումների ազգային համակարգի (ՈԱՀ) մշակում (2006թ. - 2009թ. մայիս), բ) եռաստիճան համակարգի ներդրում (2006թ. դեկտեմբեր - 2008թ. մարտ),

գ) ավարտական փաստաթղթի (Դիպլոմի) միասնական հավելվածի մշակում և ներդրում (2007թ. մարտ),

դ) կրեդիտային համակարգի ներդրում (2006թ. դեկտեմբեր – 2010թ.),

ե) կրթության որակի ապահովում (2007թ. ապրիլ – 2008թ.),

զ) բարձրագույն կրթության բնագավառում հետազոտական աշխատանքների խթանում (2006թ. դեկտեմբեր – 2008թ.),

է) շարժունության և ՀՀ կրթական համակարգի գրավչության խթանում (2006 – 2008թթ.),

ը) ավարտական փաստաթղթերի փոխճանաչում, համարժեքություն (2007 – 2008թթ.),

թ) բուհերը և ուսանողները (2006 – 2007թթ.),

ժ) կայուն ֆինանսավորում (2006– 2010թթ.)⁴²:

Ժամանակացույցը կազմված էր իրատեսական մոտեցումով և Բերգենի գազաթնաժողովի սահմանած առաջնահերթություններին համահունչ: Այն պետք է ուղղորդեր ձեռնարկվող միջոցառումների կատարման ընթացքը և վերահսկողություն ապահովեր դրանց իրականացման նկատմամբ: Նախանշված գործողությունների և միջոցա-

⁴¹ Տես՝ ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 43 որոշումը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին»:

⁴² Տես՝ ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 43 որոշման հավելվածը:

ռունների իրականացման հիմնական պատասխանատուն ՀՀ կրթության և գիտության նախարարությունն էր:

Ժամանակացույցով առաջադրված նպատակներից առաջինն ընթացք ստացան կառուցվածքային խնդիրները: Ի կատարումն կառավարության որոշման՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. դեկտեմբերի 20-ի N996 -Ա/Ք հրամանով գործողության մեջ դրվեց Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման ծրագիրը:

Ծրագիրը, նախ և առաջ, արձանագրում էր, որ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում գործող 17 պետական, 3 միջպետական և 72 մասնավոր բուհերում (28-ը հավատարմագրված, 8-ը՝ մասնակի) մասնագետներ են պատրաստվում շուրջ 200 մասնագիտությունների գծով, ընդ որում, պետական բուհերում 2006թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ սովորում է 72630 ուսանող, որից 15143-ը՝ հեռակա համակարգում, ոչ պետական բուհերում՝ 25214 ուսանող, իսկ մագիստրոսական կրթական ծրագրով սովորում են 1668 ուսանող, հետբուհական կրթությունն իրականացվում է երկաստիճան՝ ասպիրանտուրայի կրթական և դոկտորանտի գիտաստեղծագործական ծրագրերով⁴³:

Ընդգծելով, որ Հայաստանի բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում արդեն որոշակի քայլեր ձեռնարկված են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ) ինտեգրվելու համար, 2004/2005թ. ուսումնական տարվանից կառավարության որոշմամբ ՀՀ բոլոր պետական բուհերում և ոչ պետական բուհերի մի մասում ընդունելությունը կատարվել է միայն երկաստիճան համակարգով, հանրապետության 6 բուհերում սկսած 2005 թվականից իրականացվում է կրթափորձ՝ կրեդիտային համակարգին անցնելու կապակցությամբ, ծրագիրը բոլոր բուհերում եռաստիճան համակարգի ներդրման նպատակով պահանջում էր՝ բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման ապահովում, հետբուհական գիտակրթական ծրագրի/ 3-րդ աստիճան - ասպիրանտուրա/ վերակազմակերպում՝ այն համապատասխանեցնելով Եվրոպայում գործող կրթական 3-րդ աստիճանին, թվարկված կրթական աստիճաններում կրեդիտների կուտակման և փոխանցման ընդհանուր Եվրոպական համակարգի, ինչպես նաև ըստ կրթական աստիճանների, որակի գնահատման համակարգի ներդրում:

Բոլոր գործառույթները և դրանց ներդրման ժամանակացույցը կազմված էին ՀՀ կառավարության հաստատած՝ Բոլոնիայի գործըն-

⁴³ Տես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 դեկտեմբերի 20-ի N 996 -Ա/Ք հրամանը:

թացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին համապատասխան: Եռաստիճան համակարգի ներդրման ծրագիրը հաշվարկված էր 4-ամյա հեռանկարով և դրա հիմնական միջոցառումները պետք է իրականացվեին 2007/2008թ. ուսումնական տարվա ընթացքում՝ հաստատվեն մասնագիտությունների նոր ցանկերը և դրանց համապատասխան կրթական նոր չափորոշիչները:

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների կրթության նախարարների՝ Լոնդոնում 2007թ. մայիսի հերթական գագաթնաժողովին ներկայացված Հայաստանի երկրորդ ազգային զեկույցը գնահատվեց դրական, մասնավորապես առաջընթաց արձանագրելով եռաստիճան համակարգի ներդրման, որակավորումների ազգային համակարգի մշակման, կրեդիտային համակարգի ներդրման, դիպլոմի միասնական հավելվածի ազգային նմուշօրինակի մշակման հարցերում: Արձանագրելով առաջընթացը, միաժամանակ նշվեց, որ անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, բարեփոխումների ընդունված ռազմավարության լրամշակում՝ ելնելով գործընթացի նոր գերակայություններից:

Լոնդոնյան գագաթնաժողովը արձանագրեց, որ անբավարար են աշխատանքները որակավորումների ազգային հենքերի մշակման ու լիարժեք իրականացման, ինչպես նաև եվրոպական կայուն համագործակցության որակի ապահովման ասպարեզում: Այդ առնչությամբ նախարարներին առաջարկվեց առաջիկա երկու տարիների ընթացքում ուշադրությունը կենտրոնացնել հետևյալ հիմնախնդիրների վրա.

ա) ընդունելության և փուլերի միջև անցման խոչընդոտները վերացման, ինչպես նաև ուսումնական արդյունքների և ուսանողի ծանրաբեռնվածության վրա հիմնված ECTS-ի պատշաճ կիրառման,

բ) լրիվ գործողության մեջ դնել այնպիսի ազգային որակավորումների համակարգեր, որոնք մինչև 2010թ. կվկայագրվեն Եվրոպական համընդհանուր որակավորումների համակարգի միջոցով,

գ) որակավորումների համակարգերը պետք է կառուցվեն այնպես, որպեսզի խթանեն ուսանողների և դասախոսների ավելի մեծ շարժունությունը և բարելավեն զբաղվածությունը,

դ) շարունակել համագործակցությունը որակի ապահովման գործակալությունների միջև հավատարմագրման և որակի ապահովման որոշումների հարցում,

ե) ձգտել, ստեղծել և կիրառել ԵԲԿՏ-ի համընդհանուր որակավորումների համակարգի հետ կապված դոկտորական ծրագրերի լայն բազմազանություն՝ միաժամանակ խուսափելով գերկարգավորումից,

զ) մինչև 2010թ. ավարտել ելքային կրթական արդյունքների վրա կառուցված որակավորումների ազգային հենքերի ստեղծումը⁴⁴:

Գագաթնաժողովի նշած նոր գերակայություններին համապատասխան ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 19-ի N 588 Ա/Ք հրամանով հաստատվեց «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը»: Օրինակելի կարգի նպատակն էր բուհերում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման համար միասնական կանոնակարգային և կազմակերպական հենքի ձևավորումը՝ միասնական չափորոշիչներով, ընթացակարգերով, գործառույթներով դրանց, բնութագրիչներով և իրականացման հնարավոր լուծումներով: Այն բուհերին պետք է տրամադրեր ուղեցույցներ կրեդիտային համակարգով իրենց սեփական կարգերը մշակելու համար և համահունչ լինել ECTS համաեվրոպական կրեդիտային համակարգի պահանջներին: Օրինակելի կարգում մանրամասն պարզաբանված էին կրեդիտային համակարգի հիմնական դրույթները, կրթական մոդուլների կառուցման տարրերը, ուսումնական բեռնվածքի թափերը և այլն⁴⁵:

Օրինակելի կարգը պարունակում էր նաև Մեթոդական ուղեցույց ուսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման համար: Այն պետք է օգներ ճիշտ հաշվարկելու ուսանողի բեռնվածության չափը, ուսումնական ծրագրի կառուցման ճիշտ ձևը, կրեդիտների հատկացման ձևերը՝ ըստ ուսանողի դրսևորած կրթական արդյունքների և կարողությունների: Կցված էին առանձին մասնագիտությունների համար օրինակելի ուսումնական պլաններ և դասընթացների կազմման ծրագրեր:

Կրեդիտային համակարգի ներդրման կապակցությամբ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է կատարել որոշակի լրացումներ և հասկացությունների վերաձևակերպումներ: Այս առումով անհրաժեշտ է.

⁴⁴ Stu` Towards the European Higher Education Area: responding to challenges in a global world. London Communique, 18 May, 2007.

⁴⁵ Տես՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ», հաստատված՝ ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 19-ի N 588- Ա/Ք հրամանով:

1. Ներկայացնել Բոլոնիայի գործընթացի եզրույթների և հասկացությունների հստակ սահմանումները և դրանց մեկնաբանությունները,

2. օրենքում սահմանել յուրաքանչյուր որակավորման համար ECTS կրեդիտային միավորների ընդհանուր թիվը:

2007թ. ամռան ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ լայն քննարկումներ ծավալվեցին Հայաստանի հաջորդ՝ «Կրթության զարգացման 2008-2015թվականների պետական ծրագրի» շուրջ, որի հիմքում դրվել էր Հայաստանի կրթության զարգացման տեսլականը (ռազմավարական հայեցակարգը): Հայեցակարգի նախագիծը մշակել էր ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատանքային խումբը, որում ներգրավված էին տարբեր կառույցների, Կրթության ազգային ինստիտուտի, հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթության բնագավառում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հայեցակարգի հիմնական նպատակն էր սահմանել «մրցունակ կրթության» գաղափարը, որին պետք է միտված լինի կրթության բնագավառում 2008-2015թթ. իրականացվող քաղաքականությունը: Որպես մրցունակության ապահովման հիմնական ուղիներ նախանշվում էին գլոբալ գործընթացներին մեր երկրի մասնակցությունը և միջազգային չափանիշներին համապատասխանող գիտակրթական և մասնագիտական կադրերի պատրաստման կարողությունը:

Կրթության զարգացման 2008-2015 թվականների նոր ծրագրի համաձայն Հայաստանի բարձրագույն և հետբուհական կրթության առաջիկա զարգացումը պետք է ուղղված լինի այդ ոլորտում երկրի առջև դրված մի շարք նպատակների իրականացմանը: Այդ կապակցությամբ առաջին պլան է մղվում եվրոպական որակավորումների համատեքստում համապատասխան որակավորումների ազգային շրջանակի ձևավորումը և ապահովումը, անցումը բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի, բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի փոխճանաչման և համարժեքության ապահովումը և այլն:

Ըստ ներկայացված ծրագրի՝ բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի հիմնախնդիրներն են ճանաչվում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան բարձրորակ կադրերի պատրաստումը, բուհերում ներդրվող խոշորացված մասնագիտությունների ցանկի մշակումը, դրանց կառավարման և ֆինանսավորման ինքնավարության ընդլայնումը և կրթության մատչելիության ապահովումը:

«Կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիրը» ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը պետք է ներկայացվեր դեռևս 2007թ. վերջին: Սակայն ՀՀ կառավարությունում նախագծի քննարկման ընթացքում որոշվեց այն հիմնավորապես լրանշակել:

Շարունակելով Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցով նախատեսված ծրագրերի իրականացումը՝ 2007թ. հոկտեմբերի 1-ին ստեծվեց ՀՀ գիտության պետական կոմիտեն՝ որպես ՀՀ կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին⁴⁶: Միաժամանակ, հաստատվեցին նաև կոմիտեի գործունեության հայեցակարգային դրույթները, որոնց արդյունքում կոմիտեն կոչված է իրականացնելու ՀՀ պետական քաղաքականության մշակումը գիտության ոլորտում, այդ առնչությամբ գիտության ոլորտի կառուցվածքային բարեփոխումները, հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի վերարտադրության և զարգացման ապահովումը, գիտական աստիճանաշնորհման համակարգի բարեփոխումների մշակումը, գիտական արդյունքի ապրանքայնացմանը և ներքին ու արտաքին շուկայում ներդրմանն աջակցելը, գիտության ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծումը և այլն:

Գիտության պետական կոմիտեի գործունեության հայեցակարգը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանվելու է գիտական աստիճանաշնորհման նոր՝ երկմակարդակ համակարգ: Այդ համակարգի ներդրման հիմնական նպատակն է համալսարանների և գիտական կազմակերպությունների ինքնավարության և ինքնուրույնության ապահովումը, միաժամանակ պահպանելով գիտական աստիճանաշնորհման գործընթացում որակի նկատմամբ պետական վերահսկողությունը: Դրանով նախատեսվում է ասպիրանտուրայի հետբուհական գիտակրթական ծրագրում ընդլայնել կրթական բաղադրիչը՝ այն դարձնելով արտերկրում գործող հետբուհական կրթական երրորդ աստիճանի հետ համադրելի և համընթեռնելի: Ասպիրանտուրայի կրթական ծրագիրը հաջողությամբ ավարտած և ատենախոսություն պաշտպանած անձին սահմանված կարգով ստեղծված մասնագիտական խորհուրդները կշնորհեն համապատասխան մասնագիտության դոկտորի գիտական աստիճան⁴⁷:

⁴⁶ Տես՝ ՀՀ Նախագահի 2007թ. հոկտեմբերի 1-ի թիվ ՆՀ-231-Ն հրամանագիրը, www.laws.am

⁴⁷ Տես՝ Գիտության պետական կոմիտեի հայեցակարգ, կետ 4 <http://www.edu.am/index.php?id=1149&topMenu=1&menu1=97&menu2=157&arch=0>

Յետդոկտորական շրջանի գիտական ստեղծագործական ծրագրի պահանջները կատարելուց հետո, սահմանված կարգով հաստատված չափանիշներին համապատասխանելու դեպքում, տվյալ մասնագիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող գիտնականին կշնորհվի գիտական երկրորդ՝ գիտությունների դոկտորի աստիճան⁴⁸:

Գիտական աստիճանաշնորհման այդ համակարգում իբրև սկզբունք ամրագրվելու է գիտական աստիճանների շնորհումը համալսարանների և գիտական կազմակերպությունների կամ դրանց միավորումների կողմից: Աստիճանաշնորհման գործընթացում որակի վերահսկողությունը և անկախ փորձաքննությունն իրականացնելու է որակի ապահովման պետական մարմինը:

Մեր կարծիքով, անհրաժեշտ է օրենքով սահմանել թեկնածուի գիտական աստիճանի համարժեքությունը եվրոպական «դոկտոր» որակավորմանը (PhD), բարձրագույն կրթության որակավորումների ԵԲԿՏ-ի հենքին համապատասխան: Դրա համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել «Կրթության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում և «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածում՝ ձևակերպելով այդ համարժեքությունը:

Գիտության և կրթության ինտեգրումն անհրաժեշտ է կրթությունը մրցունակ և հրապուրիչ դարձնելու, գիտության վերարտադրությունը և տնտեսության կայուն զարգացումն ապահովելու համար: Գիտության և կրթության ինտեգրումն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել գիտության և բարձրագույն դպրոցի ինտեգրման ծրագիր: Այդ ծրագրում անհրաժեշտ է նախատեսել համապատասխան գիտական կենտրոններում բուհերի ամբիոններ և ամբիոնների մասնաճյուղերի ստեղծում, պայմանագրային հիմունքներով դրանցում մագիստրատուրայի դասընթացների, ուսանողների պրակտիկայի կազմակերպում: Միաժամանակ, անհրաժեշտ է մշակել և ներդնել հետազոտական համալսարանների չափանիշները, առաջատար բուհերը վերափոխել հետազոտական համալսարանների: Այդ նպատակով անհրաժեշտ է որոշ գիտական կազմակերպություններ միավորել համալսարանների հետ:

Ակնհայտ է, որ Գիտության հայեցակարգում տեղ գտած այս բոլոր դրույթները միանգամայն համահունչ են Բոլոնիայի գործընթացի 10-րդ հիմնախնդրի գործառույթներին:

⁴⁸ Տես՝ նույն տեղում:

Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում վերջին զարգացումների, Բոլոնիայի գործընթացի հիմնախնդիրների և գերակայությունների կատարման ընթացքի մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել 2007թ. վերջին Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնի կազմած «Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում» վերլուծական զեկույցից⁴⁹:

Վերլուծական զեկույցի հեղինակներ Յու Լ. Սարգսյանը և Ա. Ս. Բուդաղյանն այս փաստաթուղթը պատրաստելիս անդրադարձել են հետևյալ խնդիրներին.

Հիմնավորապես ուսումնասիրելով Բոլոնիայի գործընթացին վերաբերող բոլոր փաստաթղթերը, ազգային զեկույցները և անդամ երկրների օրենսդրությունը՝ զեկույցի հեղինակներն ամբողջական ձևով ներկայացրել և գնահատել են ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության առկա վիճակը Բոլոնիայի գործընթացի համատեքստում, ինչպես նաև մշակել են առաջարկություններ ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի բարեփոխումների նորացված ռազմավարության և օրենսդրական աջակցության վերաբերյալ՝ Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքներին և խնդիրներին համահունչ: Բոլոնիայի 10 հիմնախնդիրներից յուրաքանչյուրն առանձին վերլուծության ենթարկելով՝ հեղինակները մանրամասն անդրադառնում են դրանց խոչընդոտող գործոններին և ծագող խնդիրների հնարավոր լուծումներ են առաջարկում: Վերլուծական զեկույցին կցված են օգտագործված գրականության ամփոփ ցանկ և հինգ հավելված՝ Բոլոնիայի գործընթացի եզրույթների բառարան, որակավորման աստիճանների բնութագրիչների և որակավորումների հենքի կազմման օրինակներ, ինչպես նաև որակի ապահովման չափորոշիչներ, ուղենիշներ և այլն:

Ամփոփելով Բոլոնիայի գործընթացին Հայաստանի անդամակցության և դրանից բխող բարձրագույն կրթության առկա իրավիճակի ուսումնասիրությունը, կարելի է փաստել, որ չնայած ազգային մտածողության վերափոխման դժվարությանը և պահպանողական

⁴⁹ Տես՝ Յու. Լ. Սարգսյան, Ա. Ս. Բուդաղյան, «Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում»: Վերլուծական զեկույց: «Բարձրագույն կրթություն», պրակ 3, Երևան, 2007, էջեր 186-397:

մոտեցումների հարուցած խոչընդոտներին, Բոլոնիայի գործընթացի 10 ուղղություններից մի քանիսում նկատելի է որոշակի առաջընթաց, ինչը կնպաստի Հայաստանի բարձրագույն կրթության որակական վերափոխմանը մոտակա տարիներին:

Սակայն Հայաստանի ինտեգրումը Բոլոնիայի գործընթացին՝ հրամայական պահանջ է առաջացնում ապահովելու նաև այդ գործընթացի հետևյալ սկզբունքների իրականացումը:

Առաջնահերթ խնդիր է Կրթության որակի ապահովումը: 2008թ. նոյեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը: Այս կապակցությամբ արմատական վերանայման և լրանշակման կարիք ունեն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 42 և 43-րդ և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածները, քանզի որ նշված հոդվածները վերաբերում են լիցենզավորման և հավատարմագրման գործող ծառայությանը: Պետք է վերանայել և ճշգրտել ՀՀ ԿԳՆ իրավասությունը որակի ապահովման և հավատարմագրման ոլորտում, մասնավորապես ամրագրելով, որ այլևս որակի հսկողությունը և բուհերի հավատարմագրումը կատարվում է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից, ինչպես նշված է Կենտրոնի կանոնադրության 3-րդ կետում⁵⁰:

Կարևոր նշանակություն ունի Հարատև կրթության հիմնախնդիրը: Անհրաժեշտ է բարձրագույն կրթության որակավորումների ազգային հենքը ձևավորել նկատի ունենալով հարատև կրթության հեռանկարը: Մասնավորապես, պետք է հնարավորություն ստեղծել յուրաքանչյուր քաղաքացու համար, ցանկացած տարիքում, ըստ նախասիրության մեկ այլ մասնագիտություն կամ որակավորում ձեռք բերելու, ունեցած որակավորումը բարձրացնելու առումով, առանց ուսումնառության ձևի և տևողության սահմանափակման: Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ - հոդվածում կատարել լրացում՝ սահմանելով հարատև կրթության գաղափարը: Տվյալ փոփոխությունը հասարակության համար կլուծի սոցիալական հիմնախնդիրներ և բնակչության կրթական մակարդակի բարձրացման հնարավորություն կստեղծի:

⁵⁰ Տես՝ ՀՀ կառավարության 27. 11. 2008թ. թիվ 1486-Ն որոշումը, www.laws.am

§ 3. Բարձրագույն կրթության բնագավառում ՀՀ միջազգային գործակցության ակտիվացման հիմնախնդիրները

1991թ. անկախության ծեռք բերումից ի վեր Հայաստանի Հանրապետությունն սկսեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանձին պետությունների հետ, անդամակցել միջազգային կառույցներին, վավերացնել միջազգային համաձայնագրեր և կնքել միջպետական պայմանագրեր⁵¹: Տարբեր պետությունների հետ ՀՀ ստորագրած պայմանագրերի մի զգալի մասը վերաբերում է կրթության և գիտության, մասնավորապես՝ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում հարաբերությունների հաստատմանը: ՀՀ կնքված միջազգային պայմանագրերն իրենց նպաստն են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի ընդլայնմանը, քանի որ նոր և ավելի լայն հնարավորություններ են ստեղծում այլ երկրների բուհերում բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար: Այդ պայմանագրերի միջոցով հնարավորություն է ստեղծվում գիտական և կրթական ուղղակի կապեր ու հարաբերություններ հաստատել այլ երկրների գիտնականների և կրթօջախների հետ, ծեռք բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք ներկայացված չեն մեր երկրի բուհերում: Նման փոխանակությունները, ուղղակի համագործակցությունը գիտնականների, ուսանողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և երկրների միջև բխում է Բոլոնիայի գործընթացի ոգուց և հանդիսանում է դրա կարևոր նպատակներից մեկը:

Նախորդ ենթագլխում ավելի մանրամասն առիթ ունեցանք անդրադարձնալու գիտության և կրթության ոլորտին առնչվող միջազգային այն պայմանագրերին, որոնց Հայաստանի Հանրապետությունն արդեն միացել է: Առավել հիշարժանը, սակայն, «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին» Լիսաբոնի կոնվենցիան էր, որը ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց 2004թ. դեկտեմբերի 14-ին: Լիսաբոնի կոնվենցիային միանալով՝ Հայաստանը հնարավորություն ստացավ ոչ միայն անդամակցել Բոլոնիայի գործընթացին, այլև գործընկերային հարաբերությունների մեջ մտնել և երկկողմ պայմանագրեր

⁵¹ Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 153 պետությունների հետ, լիիրավ ադամի կամ դիտորդի կարգավիճակով անդամակցում է մոտ 70 միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների:

Տես՝ www.armeniaforeignministry.am

ստորագրել այդ կոնվենցիայի անդամ բազմաթիվ երկրների հետ, ինչը լայն հեռանկարներ է բացում մեր երկրի բարձրագույն կրթության զարգացման համար:

Կրթության ու գիտության ոլորտում և բարձրագույն կրթության խնդիրներին առնչվող ՀՀ կնքած միջպետական ավելի քան հինգ տասնյակ պայմանագրերը պայմանականորեն կարելի է խմբավորել ըստ կնքող սուբյեկտների`

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ երկրների հետ, անմիջական և ոչ անմիջական հարևան պետությունների հետ, եվրոպական պետությունների հետ, աշխարհի այլ պետությունների հետ:

ԱՊՀ անդամ երկրների (նախկին ԽՍՀՄ հանրապետություններ) հետ Հայաստանի Հանրապետությունն անցել է ընդհանուր պատմական ուղի, ունեցել է գիտական և կրթական ընդհանուր համակարգ: Նախկին խորհրդային հանրապետություններում կիրառվել են ընդհանուր կրթական աստիճաններ, դասավանդման ընդհանուր մոտեցումներ, սկզբունքներ և չափորոշիչներ, նույնատիպ գիտական աստիճաններ և գիտական կոչումներ: ԽՍՀՄ փլուզումից հետո անհրաժեշտություն առաջացավ կարգավորել կրթական աստիճանների և ավարտական փաստաթղթերի փոխձանաչման հետ կապված բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջացել էին բնակչության հոծ զանգվածների բռնի և ինքնական տեղաշարժերի հետևանքով, պահպանել կամ վերականգնել նախկին գիտական և կրթական կապերը:

Հայաստանը բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող առաջին միջպետական պայմանագրերը կնքել է Ռուսաստանի Դաշնության հետ: Դեռևս 1993թ. հունվարի 11-ին Մոսկվայում ՀՀ և ՌԴ - կառավարությունների միջև կնքվեց համաձայնագիր բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության վերաբերյալ: Այդ համաձայնագրով կողմերը հաշվի առնելով բարձրագույն կրթության և գիտության ոլորտում իրավահավասար համագործակցության հարցում փոխադարձ շահագրգռվածությունը` պայմանավորվում են կողմերից մեկի տարածքում մշտապես բնակվող և մյուս կողմի քաղաքացիություն ունեցող անձանց իրավունք վերապահել այդ տարածքում ստանալու բարձրագույն կրթություն բոլոր մակարդակներում, ինչպես նաև գիտական աստիճաններ և կոչումներ` այն պետության քաղաքացիների համար սահմանված պայմաններով, որի տարածքում նրանք մշտապես բնակվում են: Բացի դրանից կողմերը պայմանավորվում են աջակցել միմյանց բարձրագույն ուսումնական հաստատությունների և բարձրագույն դպրոցի գիտական կազմակերպությունների միջև ուղղակի կապերի հաստատման և զարգացման, գիտական տեղեկության ստացման և փոխանակման, բարձրա-

գույն կրթության բնագավառում համատեղ գիտական ծրագրերի մշակման, ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպման ոլորտում հարաբերությունների հաստատման և ծավալման, դասախոսություններ կարդալու և գիտական աշխատանք ղեկավարելու համար մասնագետներ հրավիրելու հարցում⁵²:

1995թ. նոյեմբերի 13-ին Երևանում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրվեց մեկ այլ՝ Մշակույթի, գիտության և կրթության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր: Համաձայնագրի 14-րդ կետով նախատեսվում էր, որ կողմերը կշարունակեն զարգացնել համագործակցությունը կրթության ոլորտում և այդ նպատակով կօժանդակեն ուսումնական հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը, սովորողների, ուսանողների, ասպիրանտների, մասնագետների և դասախոսների փոխանակմանը՝ ուսուցման, գիտական ստաժավորման, դասախոսություններ կարդալու և որակավորման բարձրացման նպատակով, գիտական, գիտամեթոդական խորհրդատուների, համաժողովների, գիտաժողովների և համատեղ գիտական ծրագրերի մասնակցության համար: Իսկ համաձայնագրի 18-րդ կետով կողմերը փոխադարձորեն ճանաչում էին երկու երկրների միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթության պետական նմուշի փաստաթղթերի համարժեքությունը, պայմանավորվում էին առանձին համաձայնագիր կնքել բարձրագույն կրթության փաստաթղթերի, գիտական կոչումների և աստիճանների փոխճանաչման վերաբերյալ: Համաձայնագիրը կնքվում էր 5 տարով և ինքնաբերաբար կարող էր երկարաձգվել նույն ժամկետով, եթե կողմերից որևէ մեկը չցանկանար այն դադարեցնել⁵³:

Այս և նախորդ համաձայնագրերի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ Մոսկվայում 1997թ. օգոստոսի 29-ին կնքված՝ Երևան քաղաքում ռուս – հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին համաձայնագիրը:

Համալսարանը հանդիսանալու էր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համատեղ վարման պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, օգտվելու էր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության պետա-

⁵² Տես՝ ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության վերաբերյալ 11 հունվարի 1993թ. համաձայնագրի 3-րդ և 7.1 հոդվածները:

⁵³ Տես՝ ՌԴ կառավարության և ՀՀ կառավարության միջև մշակույթի, գիտության և կրթության բնագավառում համագործակցության մասին 13 նոյեմբերի 1995 թ. համաձայնագրի 14-րդ կետը:

կան համալսարանների կարգավիճակից: Կրթական գործունեությունը համալսարանում իրականացվելու էր բարձրագույն մասնագիտական կրթության ռուսական պետական կրթական ստանդարտի և հայկական Կողմի հաստատած ազգային-տարածաշրջանային բաղադրիչների հիման վրա: Գործավարությունը համալսարանում պետք է իրականացվեր ռուսերեն:

Համալսարան ընդունվելու իրավունքից կարող էին օգտվել ընդհանուր միջնակարգ կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող և ռուսաց լեզվին տիրապետող անձինք՝ անկախ ազգությունից, սեռից, տարիքից, դավանանքից, սոցիալական դրությունից և քաղաքական հայացքներից: Ուսանողների ընդունելությունը համալսարան պետք է իրականացվեր մրցութային ընտրության հիման վրա՝ ընդունելության քննությունների արդյունքներով: Համաձայնագիրը կնքվում էր 10 տարի ժամկետով և կարող էր երկարաձգվել՝ կողմերի համաձայնության դեպքում:

Հայ-ռուսական համատեղ համալսարանի հիմնադրումն էլ ավելի մեծացրեց երկու երկրների միջև կրթության և գիտական աստիճանների մասին փաստաթղթերի փոխադարձ ճանաչման նորմեր հաստատելու անհրաժեշտությունը: Այս նպատակով և առաջնորդվելով փոխադարձ ակադեմիական շարժունակությունը կրթության ու գիտության բնագավառում փոխադարձ համագործակցությունն ուժեղացնելու ցանկությամբ, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև 2001թ. սեպտեմբերի 15-ին կնքվեց Կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիր: Համաձայնագրի թիվ 1 հոդվածով սահմանվում էր, որ այն տարածվում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների վերաբերյալ պետական նմուշի փաստաթղթերի վրա, որոնք տրվում են ՀՀ կրթության կառավարման պետական լիազոր մարմնի և ՌԴ կրթության կառավարման դաշնային մարմնի, ինչպես նաև պետական հավատարմագրում ունեցող կրթական հաստատությունների կողմից: Համաձայնագրի դրույթները տարածվում են նաև կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների պետական նմուշի փաստաթղթերի վրա, որոնք տրվել են ՀՀ և ՌԴ - տարածքներում մինչև այդ համաձայնագրի ուժի մեջ մտնելը:

Ճանաչվում էին նաև միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության ատեստատը / վկայականը և նախնական մասնագիտական կրթության դիպլոմը, միջին մասնագիտական կրթության դիպլոմները՝ որպես փաստաթղթեր, որոնք իրավունք են տալիս շարունակելու կրթությունը Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապե-

տության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ այդ փաստաթղթերում նշված մասնագիտությանը և որակավորմանը համապատասխան, ինչպես նաև աշխատանքի ընդունվելիս⁵⁴:

Բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմները, որոնք վկայում են բակալավրի աստիճան շնորհելու մասին, ճանաչվում են, համապատասխանաբար, Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում, և դրանք ունեցողներին իրավունք են տալիս շարունակելու բարձրագույն մասնագիտական կրթությունը մագիստրոսի և մասնագետի պատրաստման ծրագրերով: Աշխատանքի ընդունվելիս այդ դիպլոմներ ունեցողների մասնագիտական պատրաստությունը ճանաչվում է այդ փաստաթղթերում նշված մասնագիտության ուղղությանը և որակավորմանը համապատասխան: Նույնը տարածվում էր նաև դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի դիպլոմ ունեցողների վրա, ինչպես նաև բժշկական կրթություն ստացած անձանց վրա, որոնց թույլատրվում էր զբաղվել մասնագիտական գործունեությամբ:

Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսվում էր, որ Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում տրվող գիտությունների թեկնածուի և գիտությունների դոկտորի դիպլոմների, դոցենտի և պրոֆեսորի ատեստատների համարժեքության ճանաչումը և հաստատումը կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգի հիման վրա: Այդ կապակցությամբ, իրագործման համար կողմերը միմյանց տրամադրում են կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների պետական փաստաթղթերի նմուշները, ինչպես նաև՝ դրանց ձևակերպման և հանձնման ընթացակարգի կանոնները կարգավորող ազգային իրավական ակտերը:

2004թ. հուլիսի 13-ին երկու երկրների կրթության և գիտության նախարարությունների միջև ևս մեկ նոր համաձայնագիր ստորագրվեց, որով Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը պայմանավորվում էին զարգացնել համագործակցությունը ընդհանուր, նախնական մասնագիտական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառներում: Համաձայնագիրը նպաստելու էր Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ընդհանուր, նախնական մասնագիտական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատման:

⁵⁴ Տես՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածը:

նը և զարգացմանը՝ ըստ համագործակցության մասին նրանց միջև կնքված պայմանագրերի, ինչպես նաև նպաստելու էր սովորողների, ուսանողների, ասպիրանտների, մասնագետների և դասախոսների փոխանակմանը՝ ուսուցման, գիտական ստաժավորման, դասախոսությունների ընթերցման, դասախոսական աշխատանքի և որակավորման բարձրացման նպատակով:

Համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսվում էր, որ Ռուսական կողմը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ամեն տարի տրամադրելու է մինչև 40 կրթաթոշակ (մինչև 30 կրթաթոշակ՝ ուսուցման լրիվ դասընթացի համար, մինչև 10-ը՝ ասպիրանտուրայում ուսանելու համար)՝ ենթագերատեսչական ուսումնական հաստատություններում դաշնային բյուջեի միջոցների հաշվին սովորելու և որակավորումը բարձրացնելու նպատակով: Դրա դիմաց Հայկական կողմը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին ամեն տարի պետք է տրամադրի մինչև 15 կրթաթոշակ (մինչև 10 կրթաթոշակ՝ ուսուցման լրիվ դասընթացի համար, մինչև 5 կրթաթոշակ՝ ասպիրանտուրայում ուսանելու համար)՝ ենթագերատեսչական ուսումնական հաստատություններում պետական բյուջեի հաշվին սովորելու և որակավորումը բարձրացնելու նպատակով: Բացի դրանից, կողմերը պարտավորվում էին աջակցել Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի հետագա զարգացմանը, և որ առաջիկայում կքննարկեն այդ համալսարանին կից ռուսաց լեզվով ուսուցմամբ ճեմարանի, հումանիտար ուղղվածության միջին մասնագիտական ուսումնական հաստատության (քոլեջի), տնտեսագիտական, իրավաբանական և լեզվաբանական ուղղություններով երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթության կազմակերպման, գիտակրթական և մշակութային Հայ-ռուսական կենտրոնների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի մասնաճյուղերի բացման հարցերը:

Այս համաձայնագրով կողմերը խրախուսում էին իրենց ուսումնական հաստատությունների միջև ուսանողների, դասախոսների և գիտնականների փոխանակման վերաբերյալ ուղղակի պայմանագրերի կնքումը՝ ուսուցման որակը բարձրացնելու, համատեղ հետազոտություններ անցկացնելու, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտական հետազոտությունների բնագավառներում փորձի փոխանակման նպատակով⁵⁵: Համաձայնագիրը պետք է գործեր 5 տարի ժամկետով և կարող էր ինքնաբերաբար երկարաձգվել ևս 5 տարով:

Այս համաձայնագրի հիման վրա 2006թ. ապրիլի 17-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՌԴ Կրասնոդարի երկրա-

⁵⁵ Տես՝ Համաձայնագրի 14-րդ հոդվածը:

մասի Սոչի քաղաքի հետ ստորագրվեց՝ Կրթության և գիտության ոլորտում բարեկամական հարաբերությունների և համագործակցության ամրապնդման մտադրությունների մասին հուշագիր: Կրասնոդարի երկրամասում և հենց Սոչի քաղաքում բնակվում էր սովոր թվով հայություն, ինչը հիմք էր ծառայել նման պայմանավորվածությունների համար:

Այսպիսով, Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի մանրամասն մշակված լայնածավալ համագործակցության հիմքեր բարձրագույն կրթության զարգացման և որակավորումների փոխադարձ ճանաչման ուղղությամբ:

ՌԴ-ի հետ կնքված համաձայնագրերի և այլ փաստաթղթերի արդյունքում վերջին տարիներին ռուսաստանյան բուհերում սովորում են զգալի թվով հայ ուսանողներ և ասպիրանտներ, մասնավորապես միջպետական պայմանագրերով Ռուսաստան գործուղվել և սովորում էին՝ 2006-2007թ. ուս. տարում՝ 88 ուսանող բուհերում, 24 անձ՝ մագիստրական ծրագրերով, 30 մարդ՝ ասպիրանտուրայում, 2007-2008թ. ուս. տարում 42 ուսանող՝ բուհերում, 7՝ մագիստրատուրայում, 22-ը՝ ասպիրանտուրայում, 2008-2009թ. ուս. տարում 46 ուսանող՝ բուհերում, 10-ը՝ մագիստրատուրայում, 23-ը՝ ասպիրանտուրայում⁵⁶:

ԱՊՀ պետություններից Հայաստանի Հանրապետությունը բարձրագույն կրթության ոլորտի կարգավորման ուղղությամբ ստորագրել է մի շարք համաձայնագրեր նաև Ուկրաինայի հետ:

1996թ. մայիսի 14-ին ՀՀ և Ուկրաինայի կառավարությունների միջև կնքվեց Բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր: Համաձայնագրով կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման պետական համակարգերում ապահովել գիտական աստիճաններ հայցողներին առաջադրվող հիմնական պահանջների համադրելիությունը, ստեղծել համարժեք պայմաններ մի կողմի հայցողների ատենախոսությունները մյուս կողմի տարածքում գործող գիտական աստիճան շնորհող խորհուրդներում պաշտպանելու համար, նպաստել մյուս պետության գիտական աստիճան շնորհող խորհուրդների աշխատանքում իր պետության առաջատար գիտնականների և մասնագետների մասնակցությանը, ինչպես նաև ատենախո-

⁵⁶ Վերոնշյալ տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ԿԳՆ միջազգային կապերի վարչության կողմից և ներառում են միայն միջպետական պայմանագրերի շրջանակներում սովորողներին:

սուբյեկտի պաշտպանությանը որպես ընդդիմախոս նրանց մասնակցությանը, անցկացնել համատեղ միջոցառումներ՝ բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման ընթացքի կառավարման փորձի փոխանակման նպատակով՝ ուղղված դրա կատարելագործմանը, և այլն⁵⁷։

Ուկրաինայի կառավարության հետ ՀՀ կառավարությունը նաև համաձայնագիր է ստորագրել գիտատեխնիկական համագործակցության մասին։ Համաձայնագրով նախատեսվում է, որ երկու պետությունների գիտատեխնիկական համագործակցությունը կիրականացվի նախարարությունների, գերատեսչությունների, գիտությունների ակադեմիաների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, առանձին գիտնականների և մասնագետների միջոցով՝ նրանց միջև ուղիղ համաձայնագրերի և պայմանագրերի հիման վրա⁵⁸։

1999թ. դեկտեմբերի 23-ին Ուկրաինայի հետ մեկ այլ համաձայնագիր է կնքվել կրթության բնագավառում համագործակցության մասին։ Համաձայնագրով կողմերը պայմանավորվել են համագործակցել ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և ստաժյորների համարժեք փոխանակումների առումով, անցկացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառներում համատեղ գիտական հետազոտություններ, հատկապես երկու ժողովուրդների պատմական անցյալին վերաբերող հարցերի շուրջ, փոխանակել գիտական տեղեկատվություն և մշակել միասնական ուսումնական ծրագրեր, ընդլայնել գիտնականների համատեղ մասնակցությունը կրթության բնագավառի միջազգային ծրագրերում և նախագծերում, դասախոսություններ կարդալու հումանիտար գիտությունների բնագավառի այլ միջոցառումներում և այլն⁵⁹։

Բոլոնիայի գործընթացի սկզբունքների ներդրման տեսանկյունից չափազանց կարևոր էր, որ կողմերը պայմանավորվում էին զարգացնել ուսումնամեթոդական ու գիտական փորձի և նյութերի փոխանակումը, ակտիվացնել համագործակցությունը կրթության որակի բարձրացման բնագավառում, աջակցել բոլոր մակարդակի կրթական հաստատությունների միջև ուղիղ կապերի զարգացմանը, գիտության և կրթության ոլորտի մասնագետների անձնական շփումների ամրապնդմանը, մասնագետների փոխանակմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ մանկավարժական աշ-

⁵⁷ Տես՝ Համաձայնագրի 3, 4 և 6-րդ հոդվածները։

⁵⁸ Տես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև 1997թ. հուլիսի 22-ին կնքված գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի 3-րդ հոդվածը։

⁵⁹ Տես՝ Համաձայնագրի 2-րդ հոդվածը։

խատանքի և տարբեր գիտությունների բնագավառներում, Հայաստանի և Ուկրաինայի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Կողմերը նաև երաշխավորում են երկու պետություններում մինչև 1992թ. հունվարի 1-ը տրված պետական նմուշի կրթական փաստաթղթերի անժամկետ ճանաչումն իրենց տարածքներում:

ԱՊՀ անդամ երկրներից Հայաստանի Հանրապետությունը նմանատիպ երեք համաձայնագիր է ստորագրել նաև Բելառուսի Հանրապետության հետ.

Բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին (2000թ.),

Գիտատեխնիկական համագործակցության մասին (2000թ.),
Կրթության բնագավառում համագործակցության մասին (2001թ.):

Ինչպես Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի հետ կնքված համաձայնագրերում, այստեղ ևս նախատեսվում է երկու երկրների միջև զարգացնել ուսումնամեթոդական նյութերի և գիտական փորձի փոխանակումը, ակտիվացնել համագործակցությունը կրթության որակի բարձրացման բնագավառում, աջակցել բոլոր մակարդակի կրթական հաստատությունների միջև ուղիղ կապերի զարգացմանը, գիտության և կրթության ոլորտի մասնագետների անձնական շփումների ամրապնդմանը, մասնագետների փոխանակմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատանքի և տարբեր գիտությունների բնագավառում:

Կողմերը նաև երաշխավորում են երկու պետություններում մինչև 1992թ. հունվարի 1-ը տրված պետական նմուշի կրթական փաստաթղթերի անժամկետ ճանաչումն իրենց տարածքներում և պայմանավորվում մշակել համաձայնագրեր հետագայում տրված պաշտոնական փաստաթղթերի ճանաչման վերաբերյալ:

ԱՊՀ մյուս երկրներից Հայաստանի Հանրապետությունը նմանատիպ մեկական համաձայնագիր ունի կնքված նաև Թուրքմենստանի (1993թ. օգոստոսի 24), Ղրղզստանի (1997թ. ապրիլի 21) և Տաջիկստանի (2003թ. նոյեմբերի 25) հետ: Կարևոր է այն, որ այս համաձայնագրերով ևս երաշխավորվում է մինչև 1992թ. հունվարի 1-ը տրված պետական նմուշի կրթական փաստաթղթերի անժամկետ ճանաչումը: Բարձրագույն կրթության ոլորտում կողմերը պարտավորվում են աջակցել բարձրագույն ուսումնական հաստատությունների և բարձրագույն դպրոցի, գիտական կազմակերպությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը, գիտական տեղեկատվության ստացմանը և փոխանակմանը, բարձրագույն

կրթության բնագավառում համատեղ գիտական ծրագրերի մշակմանը, դասախոսություններ կարդալու և գիտական աշխատանք ղեկավարելու համար մասնագետների հրավիրմանը: Առանձնակի շեշտվում է, որ կողմերը կզարգացնեն ուսումնամեթոդական և գիտական փորձի փոխանակումը, կակտիվացնեն համագործակցությունը կրթության որակի կառավարման բնագավառում:

Առանձին երկրների հետ կնքված միջպետական պայմանագրերից բացի, Հայաստանի Հանրապետությունը միացել է նաև ԱՊՀ անդամ երկրների միջև կնքված մի շարք ընդհանուր համաձայնագրերի: Դրանք են՝

ա) կրթության բնագավառում համագործակցության մասին (1992թ.),

բ) Անկախ պետությունների համագործակցության միասնական կրթական տարածքի ձևավորման գործում համագործակցության մասին (1997թ.),

գ) Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հումանիտար համագործակցության մասին (2006թ.) և այլն:

ԱՊՀ երկրների միջև կնքված այս և նման համաձայնագրերը հաշվի են առնում այդ երկրների ժողովուրդների ավանդական կապերը, դրանց զարգացման և ամրապնդման կարևորությունը՝ մշակույթի, կրթության, գիտության, տեղեկատվության և զանգվածային լրատվության, սպորտի, զբոսաշրջության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառներում: Միևնույն ժամանակ, այս համաձայնագրերում արտացոլում են գտել նաև ընդհանուր կրթական տարածք ստեղծելու, կրթության որակի ապահովման, դյուրընթեքների և փոխարկելի գնահատման համակարգեր ունենալու Բոլոնիայի գործընթացի պահանջները: Ուստի պատահական չէ, որ ԱՊՀ երկրների ընդհանուր համաձայնագրերում հատուկ շեշտադրվում էին ուսումնական բնագավառում համատեղ նախագծերի իրականացումը, կրթական հաստատություններում սովորողների և դասավանդողների փոխանակումը, կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման խնդիրը, համատեղ համալսարանների ստեղծումը, կրթության բոլոր մակարդակներում պետական կրթական չափորոշիչների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման և ատեստավորման պահանջների համաձայնեցումը, գիտական աստիճանների և գիտական կոչումների շնորհման գործընթացի ներդաշնակեցումը, երկկողմ և բազմակողմ պայմանագրերի հիման վրա՝ կրթության վերաբերյալ փաստաթղթե-

րի, գիտական աստիճանների և կոչումների համարժեքության ճանաչման բնագավառում փոխգործակցությունը և այլն⁶⁰:

ԱՊՀ երկրների կրթության նախարարների՝ 2007թ. հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած հերթական խորհրդակցության ժամանակ 2008թ. համար գործունեության գերակա ոլորտ հայտարարվեց կրթության որակի կառավարման համակարգերի զարգացման ուղղությամբ համագործակցությունը: Խնդիր դրվեց ԱՊՀ անդամ պետությունների միջև կնքված՝ Կրթական հաստատությունների գործունեության լիցենզավորման, ատեստավորման և հավատարմագրման գործընթացի կորդինացման վերաբերյալ, համաձայնագրի հիման վրա աշխատանքներ տանել բոլոր երկրների կրթության որակի վերահսկողության համաձայնեցված չափորոշիչների, մոնիտորինգի անցկացման տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ⁶¹:

ԱՊՀ երկրների շարքում առանձնանում են Վրաստանի հետ բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանի ավանդական կապերը, քանի որ վերջինս միևնույն ժամանակ հանդիսանում է նաև Հայաստանին անմիջական հարևան պետություն: Դեռևս 1997թ. մայիսի 3-ին ՀՀ և Վրաստանի կառավարությունների միջև ստորագրվեց համաձայնագիր գիտատեխնիկական համագործակցության մասին, որով կողմերը պարտավորվում էին համագործակցել գիտությունների ազգային ակադեմիաների, բուհերի, գիտահետազոտական հաստատությունների միջև ընդհանուր ծրագրերի և նախագծերի ոլորտում:

Մեկ տարի անց Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրվեց բարձրագույն համաձայնագիր որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին: Կողմերը պայմանավորվեցին ստեղծել համարժեք պայմաններ ամեն կողմի հայցորդների ատենախոսությունները մյուս կողմի գիտական աստիճաններ շնորհող խորհուրդներում պաշտպանելու, մյուս կողմի տված գիտական աստիճանե-

⁶⁰ Տես՝ Համաձայնագիր Անկախ պետությունների համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական տարածքի կազմավորման ուղղությամբ համագործակցության մասին, 17 հունվարի 1997թ., 3-րդ հոդվ.:

⁶¹ Տես՝ Конференция министров образования государств - участников СНГ. Решение «О сотрудничестве в области развития систем управления качеством образования государств - участников СНГ» от 26 октября 2007 года, город Ереван.

րի շնորհման մասին պետական նմուշի որակավորման փաստաթղթերը ճանաչելու համար⁶²:

Նախորդ համաձայնագրերի հիման վրա 2004թ. հուլիսի 26-ին ստորագրվեց երկու երկրների միջև կրթության ոլորտում համագործակցության քառամյա ծրագիր: Կողմերը պարտավորվում էին փոխադարձաբար ամեն տարի 10 ուսանողական և 5 ասպիրանտական կրթաթոշակներ հատկացնել մյուս կողմի համար առաջնահերթություն ներկայացնող մասնագիտությունների գծով: Բացի դրանից, կողմերը պայմանավորվեցին քայլեր ձեռնարկել ուղղակի կապեր հաստատելու իրենց երկրների չորս առաջատար բուհերի միջև՝ մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության ամրապնդման համար, ինչպես նաև մշակել համատեղ ուսումնական դասընթացներ և ծրագրեր, այդ թվում և հեռավար կրթության վերաբերյալ:

Բարձրագույն կրթության ոլորտում համագործակցության այս քառամյա ծրագրի ժամկետը լրանալուց հետո, Հայաստանի կրթության և գիտության նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև ստորագրվեց նոր ծրագիր՝ 2008-2011թթ. կրթության և գիտության ոլորտում համագործակցության վերաբերյալ: Այն հիմնականում կրկնում էր նախորդ քառամյա ծրագրի բոլոր սկզբունքային դրույթները:

Հարևան երկրներից Հայաստանը կրթության և գիտության ոլորտում սերտ հարաբերություններ է հաստատել նաև Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Դեռևս 1994թ. ՀՀ-ն Իրանի հետ ստորագրել է համապատասխան համաձայնագիր⁶³: Իսկ, արդեն, 2001թ. հունվարի 31-ին երկու պետությունների համապատասխան նախարարությունների միջև ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր գիտության, կրթության և հետազոտությունների բնագավառներում համագործակցության վերաբերյալ: Փորձագետների կողմից կա-

⁶² Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին, 20 նոյեմբերի 1998թ.:

⁶³ Տես՝ Համաձայնագիր ՀՀ կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև մշակույթի, գիտության, կրթության, սպորտի, զբոսաշրջության և զնագվածային լրատվության միջոցների բնագավառում համագործակցության մասին, 27.11.1994թ., ՀՀ ԱԳՆ ՊՏ 28.12.05. /8(16):

տարված հետազոտության և որոշակի նախապատրաստական աշխատանքներից հետո երկու երկրների միջև 2001թ. դեկտեմբերի 27-ին ստորագրվեց համաձայնագիր բարձրագույն կրթության և գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձաբար ճանաչման մասին: Կողմերը փոխադարձաբար ճանաչում են բակալավրի փորձագետի, մագիստրոսի/ավագ փորձագետի, գիտությունների թեկնածուի/ փիլիսոփայության դոկտորի պետական մոնիշի կրթական, գիտական կոչումների և գիտական աստիճանների փաստաթղթերի համարժեքությունը և համաձայնում են երկու երկրների ուսումնառողների համար ստեղծել մշակութային նպաստավոր պայմաններ:

2005թ. Հայաստանի և Իրանի միջև 2005-2008թթ. համար ստորագրվեց մեկ այլ Փոխըմբռնման հուշագիր կրթական համագործակցության մասին: Ելնելով կրթության բնագավառում փոխհամագործակցության խորացման անհրաժեշտությունից, կողմերը համաձայնում են միջոցներ ձեռնարկել միմյանց կրթական փաստաթղթերի որակավորման և փոխճանաչման ուղղությամբ, ինչպես նաև գիտելիքների գնահատման բնագավառում:

Անմիջական հարևաններից բացի, Հայաստանը բարձրագույն կրթության ոլորտին առնչվող համաձայնագրեր է ստորագրել նաև Մերձավոր Արևելքի մի շարք երկրների հետ:

Մշակույթի, կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր է կնքվել Եգիպտոսի Արաբական Հանրապետության հետ: Եգիպտոսի և Հայաստանի կառավարությունների միջև 2005թ. դեկտեմբերի 6-ին ստորագրվել է նաև 2006-2009թթ. կրթության և գիտության ոլորտում համագործակցության մասին ծրագիր, որի համաձայն երկու երկրները պետք է փոխանակեն երկուական դասախոսներ՝ տեղական համալսարաններում դասախոսելու համար, աշխատանքներ տանեն վկայագրերի, դիպլոմների, գիտական աստիճանների փոխադարձ ճանաչման ուղղությամբ: Ընդ որում, Եգիպտական կողմը պարտավորվում է տրամադրել տարեկան 5 կրթաթոշակ ասպիրանտների և հետազոտողների գիտական հետազոտությունների համար, իսկ Հայկական կողմը պարտավորվում է դոկտորական 3 կրթաթոշակ տրամադրել՝ յուրաքանչյուրը 4 տարի ժամանակով⁶⁴:

⁶⁴ Տես՝ Համագործակցության ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի արաբական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության ոլորտներում 2006-2009 թվականների համար, 6 դեկտեմբերի 2005թ.:

Լիբանանի Հանրապետության հետ Հայաստանը պայմանագիր է ստորագրել կոնկրետ բարձրագույն կրթության ոլորտում հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Կողմերը հայտարարում են, որ կխրախուսեն գիտնականների, դասախոսների և ուսանողների փոխայցելությունները, կոյուրացնեն հետազոտական ծրագրերի և նախագծերի համատեղ մշակումն ու իրագործումը, կրթաթոշակներ կտրամադրեն իրենց երկրների բարձրագույն ուսումնական և գիտական հաստատություններում ուսումնառության և գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով, բանակցություններ կվարեն իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան շնորհված գիտական աստիճանները և ակադեմիական կոչումները փոխադարձ հավասարազոր ճանաչելու հարցերի շուրջ և այդ նպատակով կկնքեն համապատասխան համաձայնագրեր, միջոցներ կձեռնարկեն Լիբանանի համալսարաններից մեկում հայագիտական ֆակուլտետի հիմնադրման համար⁶⁵:

Սիրիայի Արաբական Հանրապետության հետ Հայաստանի Հանրապետության ստորագրած համաձայնագիրը նույնպես վերաբերում է կրթության, մասնավորապես՝ բարձրագույն կրթության, բնագավառում գործնական համագործակցությանն առաջիկա չորս տարիների կտրվածքով: Բարձրագույն կրթության մասով, կողմերը պայմանավորվել են «եղբայրացման պայմանագրեր» ստորագրել իրենց երկրների գյուղատնտեսական ակադեմիաների և ինստիտուտների միջև, տեղեկություններ փոխանակել իրենց երկրներում գործող գիտական աստիճանների և կոչումների վերաբերյալ՝ նկատի ունենալով դրանց համարժեքության ճանաչման խնդիրը, փոխանակել պատվիրակություններ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Սիրիայի բուհերի միջև գիտատեխնիկական համագործակցությունը զարգացնելու նպատակով: Կողմերից յուրաքանչյուրը սահմանում է 8-ական կրթաթոշակ հետբուհական (մագիստրատուրա) կրթության համար⁶⁶:

⁶⁵ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության Կառավարության միջև բարձրագույն կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին, 16 սեպտեմբերի 1998թ.:

⁶⁶ Տես՝ Գործնական համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության կառավարության միջև 2008-2009, 2009-2010, 2010-2011թ., ուսումնական տարիների համար կրթության, բարձրագույն կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին:

Հայաստանի Հանրապետությունը միջպետական համաձայնագրեր է կնքել նաև Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության անդամ մի շարք երկրների հետ:

Բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանը առավել սերտ հարաբերություններ է հաստատել Ֆրանսիայի հետ: Դեռևս 1995թ. Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրվեց Մշակութային, գիտական և տեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր: Մի քանի տարի անց Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության միջև ստորագրվեց Ֆրանս – հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու մասին համաձայնագիր⁶⁷:

Այս պայմանավորվածությունների հիման վրա 2001թ. փետրվարի 15-ին՝ Լիոնի առևտրաարդյունաբերական պալատի և 2001թ. մայիսի 15-ին Լիոն-III-ժան-Մուլեն համալսարանի հետ ստորագրված համաձայնագրերին համապատասխան ստեղծվեց «Հայաստանում Ֆրանսիական համալսարան» ՓԲԸ-ն:

Ֆրանսիական համալսարանի ստեղծման նպատակն է Հայաստանում ներդնել բարձրագույն կրթական ծրագրերի իրականացման ոլորտում Ֆրանսիայի հարուստ փորձը, նորագույն ծրագրերը և չափանիշները: Այն կոչված է նպաստելու Հայաստանի տնտեսական բարգավաճմանը և պատրաստելու աշխատանքի շուկայի պահանջարկին համարժեք բարձրակարգ մասնագետներ: Համալսարանի շրջանավարտներն ստանում են եվրոպական չափանիշներին համապատասխանող պետական 2 դիպլոմ՝ ֆրանսիական և հայկական: Համալսարանն արդեն տվել է 500-ից ավելի շրջանավարտներ, որոնց մեծ մասն աշխատում է հանրապետության առաջատար ձեռնարկություններում: Ներկա դրությամբ համալսարանում սովորում է ավելի քան 700 ուսանող⁶⁸:

Հաշվի առնելով Հայաստանի կրթական համակարգի բարելավման անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարության որոշմամբ 2003թ. Ֆրանսիական Համալսարան ՓԲԸ վերափոխվեց «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամի, որը կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված, անդամություն չունե-

⁶⁷ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության միջև՝ Ֆրանս–հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու մասին, 22 հոկտեմբերի 1998թ.:

⁶⁸ Տես՝ <http://www.ufar.am>

ցող, ոչ առևտրային կազմակերպություն է և հետապնդում է բացառապես կրթական, գիտական նպատակներ⁶⁹:

Բարձրագույն կրթության ոլորտում Բուլոնիայի գործընթացի սկզբունքների և չափորոշիչների ներդրման ուղղությամբ զգալի առաջընթաց է առկա Հայաստանի և Ավստրիայի Հանրապետության փոխհարաբերություններում: Մի քանի տարի առաջ երկու երկրների միջև ստորագրվեց փոխընթացման հուշագիր բարձրագույն կրթության որակավորումների փոխադարձաբար ճանաչման վերաբերյալ: Հիմք ընդունելով Լիսաբոնի կոնվենցիան՝ համապատասխան նախարարները համաձայնեցին իրենց երկրների բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման համար պատասխանատու մարմիններին ներկայացնել մի շարք դրույթներ, որոնց շուրջ անհրաժեշտ է ձեռք բերել հստակ պայմանավորվածություններ⁷⁰:

Բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական երկրների հետ համագործակցության հաստատման ուղղությամբ որոշակի առաջընթաց է արձանագրվել Բուլղարիայի և Ռումինիայի հետ:

Բուլղարիայի Հանրապետության հետ դեռևս 1994թ. ՀՀ կառավարությունն ստորագրել էր Կրթության, մշակույթի և գիտության բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր: Այս համաձայնագրի հիման վրա արդեն 2006թ. երկու երկրների միջև ստորագրվեց Կրթության և գիտության բնագավառում համագործակցության ծրագիր՝ 2007-2009թթ. ժամանակահատվածի համար⁷¹: Կողմերը պայմանավորվեցին իրականացնել կրթական ծրագրերի փոխանակում կրթության բոլոր մակարդակներում, օժանդակել համատեղ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը, աջակցել երկու երկրների բարձրագույն կրթական և հետազոտական ինստիտուտների միջև ուղղակի կապերի հաստատմանը: Կողմերը պայմանավորվեցին յուրաքանչյուր տարվա համար տրամադրել երկուսկան ուսանողական կրթաթոշակներ, ինչպես նաև խրախուսել

⁶⁹ Տես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 10 հուլիսի 2003թ. N 861-Ա որոշումը Երևանում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ հիմնադրամ ստեղծելու մասին»:

⁷⁰ Տես՝ Փոխընթացման հուշագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի և Ավստրիայի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի դաշնային նախարարի միջև բարձրագույն կրթության որակավորումների փոխադարձաբար ճանաչման համար խորհրդակցությունների մասին, 13 դեկտեմբերի 2005թ.:

⁷¹ Տես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության ծրագիր 2007-2009թթ. ժամանակահատվածի համար, 1 նոյեմբերի 2006թ.:

համալսարանի դասախոսների և գիտնականների փոխանակումը՝ բարձրագույն կրթության բնագավառում իրենց փորձի և իրենց հաստատությունների նվաճումների ներկայացման և գիտական համատեղ նախագծերում իրենց մասնակցության համար:

Ռուսիցների հետ ևս Հայաստանի Հանրապետությունը 1994թ. կնքել էր Համաձայնագիր գիտության, կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում համագործակցության մասին: Կողմերը համաձայնել են ճանաչել այն վկայականները, վկայագրերը, կոչումներն ու ակադեմիական աստիճանները, որ տրվել են մյուս կողմի հաստատություններում իրենց կադրերի պատրաստման, կատարելագործման կամ մասնագիտացման շնորհիվ, ինչպես նաև խրախուսել մասնագետների, դասախոսների, գիտնականների, ուսանողների փոխանակումը, տեղեր ու կրթաթոշակներ հատկացնելով ուսանողների, ասպիրանտների ու դոկտորանտների համար:

Վերջին տարիներին Հայաստանի կառավարությունը Ռուսիցների հետ հնգամյա ծրագիր է կազմել մշակույթի, կրթության և գիտության ոլորտում համագործակցության վերաբերյալ: 35 հոդվածից բաղկացած այս ծավալուն փաստաթղթի երկրորդ բաժինը նվիրված է կրթության ոլորտում համագործակցության խնդիրներին: Կողմերը պարտավորվել են օժանդակել երկու երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ուղղակի պայմանագրերի կնքմանը՝ փոխշահավետ համագործակցության նպատակով, ինչպես նաև խրախուսել իրենց մասնագետների մասնակցությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման որակի բարելավմանն ուղղված համատեղ ծրագրերին: Կողմերը պայմանավորվում են, որ կիրականացնեն ուսանողների, դոկտորանտների և փորձնականների փոխանակումներ, ինչի համար փոխադարձորեն միմյանց տրամադրում են՝

ա) 5 կրթաթոշակ՝ բակալավրիատի կամ մագիստրատուրայի համար,

բ) 3 կրթաթոշակ՝ դոկտորական ուսուցման համար,

գ) 27 ամիս (կրթաթոշակ)՝ փորձնակության համար:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում Երևանի պետական լեզվաբանական համալսարան է գործուղվել ռուսիցներենի դասախոս⁷²:

⁷² Տես՝ Ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսիցների կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին (2006-2010թթ.):

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպական մի շարք այլ պետությունների՝ Միացյալ Թագավորության⁷³, Իտալիայի⁷⁴, Լեհաստանի⁷⁵, Հունաստանի⁷⁶, Կիպրոսի⁷⁷ հետ և ստորագրել է համաձայնագրեր կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին:

Այդ համաձայնագրերում կողմերի փոխադարձ պայմանավորվածության որոշ դրույթներ առնչվում են նաև Բուլղարիայի գործընթացից բխող բարձրագույն կրթության հիմնախնդիրներին.

Ընդհանուր կարգի այս տիպային համաձայնագրերը բովանդակությամբ քիչ են իրարից տարբերվում և ավելի շուտ հանդիսանում են մտադրությունների ձևակերպում: Սակայն, մյուս կողմից, նման կարգի համաձայնագրերը հիմք են ծառայում, երկրների միջև որոշակի շահագրգռության առկայության դեպքում, բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության պայմանագրերի կնքման համար:

Հայաստանի Հանրապետությունը կրթության և գիտության ոլորտում համագործակցության համաձայնագրեր է ստորագրել աշխարհի մի շարք այլ պետությունների հետ, որոնք վերը թվարկված կառույցների (Եվրախորհուրդ, ԱՊՀ) անդամ չեն, սակայն ազդեցիկ դերակատարություն ունեն կրթության և գիտության ոլորտի զարգացման համաաշխարհային գործընթացներում: Այդ համաձայնագրե-

⁷³ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին, 9 փետրվարի 1994թ.:

⁷⁴ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև մշակութային, կրթական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին, 15 ապրիլի 2003թ.:

⁷⁵ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային և գիտական համագործակցության մասին, 27 հունվարի 1998թ.:

⁷⁶ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում համագործակցության մասին, 16 դեկտեմբերի 1994թ.:

⁷⁷ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին, 11 սեպտեմբերի 1998թ.:

րում ևս առկա են Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ մոտեցումներ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության հետ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեռևս 1997թ. փետրվարի 28-ին Վաշինգտոնում ստորագրել էր գիտության և տեխնոլոգիայի բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր: Կողմերը պարտավորվում էին աջակցել համալսարանների, գիտական և հետազոտական կենտրոնների, ինստիտուտների և ձեռնարկությունների միջև համագործակցության զարգացմանը:

2006 թվականին Երևանում ստորագրվեց Փոխըմբռնման հուշագիր ԱՄՆ կառավարության կրթական փոխանակման ծրագրերին հայ ուսանողների մասնակցության մասին: Կարևորելով կրթական փոխանակման ծրագրերի դերն իրենց երկրների միջև՝ կողմերը պայմանավորվեցին այդ ծրագրերին մասնակից դարձնել ՀՀ միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների ՀՀ քաղաքացի հանդիսացող՝ ազգությամբ հայ աշակերտներին և ուսանողներին: Ծրագրի մասնակից ուսանողները ԱՄՆ-ում ուսումը կշարունակեն տեղի կրթական հաստատության այն կուրսերում, որտեղ նրանք կսովորեին՝ եթե մնային Հայաստանում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները ԱՄՆ-ից վերադառնալուց հետո շարունակում են իրենց կրթությունը հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունների այն կուրսերում, որտեղ նրանք փոխադրվել են ԱՄՆ-ում ուսումնառությունն ավարտելու արդյունքում⁷⁸:

Հուշագիրն ստորագրվել է 5 տարի ժամկետով և կարող է նույնքան երկարաձգվել կողմերի համաձայնությամբ: Ավելացնենք նաև, որ ԱՄՆ ուսանելու մեկնելու համար ուսանողների ընտրությունը կատարվում է ամեն տարի, մրցութային հիմունքներով՝ ԱՄՆ կառավարության հատկացրած տեղերի քանակին և մասնագիտություններին համապատասխան:

Հայաստանը կրթության բնագավառում համագործակցության համաձայնագիր է կնքել նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ: Կողմերը պայմանավորվել են իրականացնել կրթաթոշակների ամենամյա փոխանակումներ՝ 10 ուսանողական և 5՝ ասպիրանտական: Նախատեսվում է, որ գործընկեր կողմերը կա-

⁷⁸ Տես՝ Փոխըմբռնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ԱՄՆ կառավարության կրթական փոխանակման ծրագրերին հայ ուսանողների մասնակցության մասին, 3 մարտի 2006թ.:

րող են աշխատանքի հրավիրել լեզվի և այլ մասնագիտությամբ դասախոսների՝ մինչև 2 տարի ժամկետով⁷⁹:

Վերջերս՝ 2008 մարտի 7-ին, Չինաստանի կառավարության նախաձեռնությամբ ստորագրվեց համաձայնագիր «Կոնֆուցիոսի ինստիտուտի» համատեղ հիմնադրման վերաբերյալ, որը նախատեսում է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի բազայի վրա Հայաստանում հիմնել չինարենի, Չինաստանի պատմության և մշակույթի կենտրոն: «Կոնֆուցիոսի ինստիտուտը» սկսել է գործել 2009թ. մարտից⁸⁰: Այն իր նախատիպը չունի կովկասյան տարածաշրջանում և հանդիսանալու է ուսանողների և հետազոտողների փոխանակման կամուրջ երկու երկրների միջև: Նշենք, որ սկսած 2004թ. ԵրՊԼՀ-ում դասավանդում է չին դասախոս:

Հայաստանը մշակույթի և կրթության բնագավառում համագործակցության պայմանագիր է կնքել Արգենտինայի հետ: Կողմերը պայմանավորվել են իրականացնել մանկավարժների և մշակույթի ու կրթության բնագավառների այլ մասնագետների փոխանակում, կրթաթոշակների տրամադրում՝ կրթական հաստատություններում ուսանելու և հետազոտական աշխատանքներ կատարելու համար: Կողմերը պարտավորվել են ուսումնասիրել միմյանց տարածքում ստացած կրթության փաստաթղթերի փոխադարձաբար ճանաչման պայմանները⁸¹:

Համագործակցության նմանատիպ համաձայնագիր Հայաստանը կնքել է նաև Մեքսիկայի հետ: Կողմերը պայմանավորվել են համագործակցել բարձրագույն կրթության ոլորտներում երկու երկրների համակարգերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով և խրախուսել իրենց համալսարանների և այլ բարձրագույն ուսումնական, մշակութային և հետազոտական հաստատությունների միջև անմիջական հարաբերությունների հաստատումն ու պահպանումը՝ գործնական համաձայնագրերի, համագործակցության

⁷⁹ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթության նախարարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին, դեկտեմբեր, 2000թ.:

⁸⁰ Տես՝ http://www.brusov.am/arm/news_and_events.asp#News

⁸¹ Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Արգենտինայի Հանրապետության միջև մշակույթի և կրթության բնագավառում համագործակցության մասին, 30 հուլիսի 1998թ.:

ծրագրերի իրականացում, համատեղ նախագծերում մասնակցություն և փորձագետների փոխանակում ապահովելու նպատակով⁸²:

Ամփոփելով բարձրագույն կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերի վերլուծությունը, կարող ենք արձանագրել, որ մեր երկրին ներկա դրությամբ հաջողվել է լայն համագործակցություն հաստատել աշխարհի տարբեր երկրների հետ և ակտիվորեն ներգրավվել բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ընթացող միջազգային զարգացումներին: Հայաստանցի ուսանողները վերոնշյալ միջազգային պայմանագրերի շնորհիվ հնարավորություն են ստացել իրենց կրթությունը շարունակել արտասահմանյան երկրների բուհերում: Սակայն շարժունությանը խոչընդոտում են մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են.

– ոլորտի օրենսդրական հակասությունները և օրենսդրության անկատարությունը,

– բարձրագույն կրթության բնագավառի ոչ բավարար ֆինանսավորումը,

– պայմանագրի կողմ հանդիսացող մի շարք երկրներում կրթության ոչ բավարար որակը, տեղեկատվության և ճգրիտ հաշվառման անբավարարությունը:

Չնայած կրթության ոլորտում համաձայնագրերի, հուշագրերի, պայմանագրերի⁸³ առատությանը՝ խիստ սակավաթիվ հայ ուսանողներ են ուսանում արտերկրներում՝ միջպետական համագործակցության շրջանակներում, մասնավորապես⁸⁴:

⁸² Տես՝ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև կրթության և մշակույթի բնագավառում համագործակցության մասին, 22 օգոստոսի 2002թ.:

⁸³ Տես՝ <http://www.edu.am/index.php?id=-153&topMenu=8&menu1=1&menu2=8&arch=0>:

⁸⁴ Տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ԿԳ նախարարության միջազգային կապերի վարչության կողմից:

	2006/2007 ուս. տարի			2007/2008 ուս. տարի			2008/2009 ուս. տարի		
	բուհ	մագիս. կլին. օրդ.	ասպ.	բուհ	մագիս. կլին. օրդ.	ասպ.	բուհ	մագիս. կլին. օրդ.	ասպ.
Հունաստան	-	-	2	-	-	-	-	-	-
Չեխիա	2	-	-	-	-	-	-	-	-
Սլովակիա	-	-	-	-	-	-	-	1	-
Ռումինիա	-	-	-	3	1	3	1	4	1
Չինաստան	3	3	3	3	3	4	3	4	1
Իրան	2	-	-	-	-	-	-	-	-
Բուլղարիա	-	-	-	1	1	-	1	1	-
Եգիպտոս	-	-	-	-	-	-	1	-	-
Սիրիա	-	-	-	-	-	-	-	28	-

Վերոգրյալ աղյուսակից կարելի է եզրակացնել, որ պայմանագրերի հնարավորությունները լիովին չեն օգտագործվում և դրանց մեծ մասն այդպես էլ կյանքի չի կոչվել: 2004 թվականի տվյալներով 2428 հայաստանցի ուսանող տարբեր ծրագրերով (միջպետական և մասնավոր) ուսանում էր արտերկրներում որոնց գերակշիռ մասը՝ ՌԴ-ում, ԱՄՆ-ում և Եվրոպայում⁸⁵: Վերջին տարիներին արտերկրում ուսանող հայաստանցիների վերաբերյալ ճշգրիտ հաշվառում չի տարվել, սակայն ըստ ՀՀ ԿԳՆ կողմից միջազգային կառույցներին ներկայացված տվյալների յուրաքանչյուր տարի մոտ 600 հայ ուսանողներ տարբեր ծրագրերով մեկնում են արտերկիր ուսանելու հիմնականում՝ ԱՄՆ, ՌԴ, Գերմանիա և Միացյալ Թագավորություն, իսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության միայն 10%-ն է յուրաքանչյուր տարի ընդգրկվում բազմազան ծրագրերում⁸⁶: Ներկայումս այս իրավիճակը շտկվելու միտում ունի, քանի որ վերջերս ՀՀ Նախագահի և վարչապետի նախաձեռ-

⁸⁵ Տես՝ http://aea.am/files/data/enrollments_abroad.xls

⁸⁶ Տես՝ Բոլոնիայի բարեփոխումների վերաբերյալ 2009թ. Հայաստանի ազգային զեկույցը, http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/links/National-reports2009/National_Report_Armenia_2009.pdf

նությամբ ստեղծվել է «Լույս» հիմնադրամը, որի նպատակն է օժանդակել հայ ուսանողների ուսումնառությունը աշխարհի լավագույն համալսարաններում⁸⁷: Վերոնշյալ թվային տվյալների վերլուծությունը, ինչպես նաև դրանց համադրումը ՀՀ կողմից կնքված պայմանագրերի հետ՝ ցույց է տալիս, որ այդ պայմանագրերի ամենաակնառու և հեշտ վերահսկելի մասը՝ սովորողների փոխանակմանն ուղղված միջոցառումները հեռու են բավարար լինելուց, քանի որ ամբողջությամբ օգտագործված չեն պայմանագրերից բխող հնարավորությունները: Հայաստանի Հանրապետության բուհերում 2007 թվականի ընթացքում ուսանել են 4230 օտարերկրյա քաղաքացիներ: Համեմատելով 2003 թվականի տվյալների հետ (3035 ուսանող)՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի գրավչությունը մեծացել է: Հայաստանում օտարերկրյա ուսանողներ են ժամանում հիմնականում Ռուսաստանից, Վրաստանից, Իրանից, Հնդկաստանից, Սիրիայից և այլ երկրներից⁸⁸: Բոլորնիայի գործընթացի հիմնական սկզբունքներից մեկը հանդիսանում է հենց ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի շարժունությունը: Այդ սկզբունքը որդեգրվել է Եվրոպական ողջ կրթական տարածքի համար, սակայն ներկայումս անգամ Հայաստանում գործող բուհերում մասնագիտությունից մասնագիտություն կամ բուհից բուհ տեղափոխումը բավական դժվար է, քանի որ ըստ գործող օրենսդրության, տեղափոխման դեպքում թույլատրվող առարկայական տարբերությունների քանակը չպետք է գերազանցի 8-ը⁸⁹: 2009թ. հունվարին ՀՀ ԿԳՆ կողմից շրջանառության մեջ դրվեց կառավարության որոշման մի նախագիծ, որը թույլատրելի տարբերությունների քանակը ավելացնում է երկուսով՝ հասցնելով այն 10-ի, սակայն այն հաջողություն չունեցավ ՀՀ կառավարության 16.07.2009 թիվ 938-Ն որոշմամբ տարբերությունների քանակը թողնվեց անփոփոխ⁹⁰: Դրանից բացի, չկան սահմանված հստակ կառուցակարգեր, որոնք կսահմանեին «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընտրած մասնագիտությունից բացի այլ դասընթաց յուրացնելու հնարավորությունը: Օրենքի

⁸⁷ Տես՝ ՀՀ կառավարության 27.11.2008թ. նիստի արձանագրությունը <http://www.gov.am/am/news/item/6737/>

⁸⁸ Տես՝ ՀՀ 2007 թվականի վիճակագրական տարեգիրք, <http://www.armstat.am/file/doc/99456298.pdf>

⁸⁹ Տես՝ ՀՀ կառավարության 16.08.07թ. N 921-Ն որոշումը:

⁹⁰ Տես՝ ՀՀ կառավարության 16.07.2009 թիվ 938-Ն որոշման հավելվածի 7-րդ կետը, ՀՀՊՏ 2009.08.26/43(709):

տրամաբանական շարունակությունը կլիներ այն, որ ՀՀ կառավարությունը իր որոշմամբ կամ ԿԳ նախարարը իր համապատասխան հրամանով կարգավոր էին հիշյալ խնդիրը: ՀՀ կառավարությունը որոշ քայլեր է ձեռնարկել ինչպես ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ավելի գրավիչ դարձնելու, այնպես էլ հայ ուսանողների շարժունությանը նպաստելու նպատակով: Հարկավոր է նաև ստեղծել համապատասխան օրենսդրական հիմքեր, ինչպես Հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան բուհերի հետ համատեղ որակավորումներ ու դիպլոմներ տալու համար (joined degree):

2008թ. նոյեմբերին ՀՀ կառավարության որոշմամբ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի ստեղծման նպատակն էր⁹¹ կրթության որակի բարձրացման միջոցով ՀՀ բարձրագույն կրթությունը օտարերկրացիների համար գրավիչ դարձնելն է, ինչպես նաև Հայաստանի ընդհանուր միջազգային վարկանիշի բարձրացումը:

Բուհական համակարգը գրավիչ դարձնել համար, բացի ձեռնարկված քայլերից, նախ հարկավոր է ուշադրություն դարձնել կրթության որակի ապահովման բուհերի ներքին կառուցակարգերի վրա և կապ ստեղծել գործատուների ու բուհերի միջև, ինչը հնարավորություն կտա օտարերկրյա ուսանողներին այնպիսի մասնագիտություններ ու մասնագիտացումներ առաջարկել, որոնք պահանջված են աշխատաշուկայում, սակայն կան կամ ավելի ցածր մակարդակի վրա են գտնվում իրենց երկրում:

⁹¹ Տես՝ ՀՀ կառավարության 27.11.08թ. թիվ 1486-Ն որոշումը, www.laws.am

ՎԵՐՋԱԲԱՆ - ԱՄՓՈՓՈՒՄ

Մարդու և քաղաքացու կրթությունն ստանալու իրավունքը սահմանադրական մակարդակի բարձրացավ միայն 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ այն ի վերջո ամրագրվեց աշխարհի շատ պետությունների սահմանադրություններում:

Կրթության սահմանադրական իրավունքն *ու՛նի համընդհանուր բնույթ*: Այն առանձին հնարավորությունների հանրագումար չէ, այլ սեփական գիտելիքներն ուսու՛ննառության բոլոր մատչելի ձևերով մշտապես կատարելագործելու հնարավորություն: ՀՀ Սահմանադրությունը ճանաչում էյուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը:

Կրթության իրավունքի ոլորտից ՀՀ Սահմանադրությունն առանձնացնում է *բարձրագույն կրթության իրավունքը*: Բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի դրսևորումներն են «մատչելիությունը մրցութային հիմունքներով», «մրցութային հիմունքներով անվճար լինելը», «կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ» և այլն: Հանդիսանալով կրթության իրավունքի կառուցվածքային տարրերից մեկը՝ բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքը հանդիսանում է կրթական իրավահարաբերությունների ինքնուրույն բնագավառ և այլևս կարող է դիտարկվել որպես առանձին իրավական ինստիտուտ:

Բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի նորմատիվ իրավական բովանդակությունը ձևավորվում է տվյալ ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության հիման վրա, ինչը թույլ է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հիմնականում ձևավորված են բարձրագույն մասնագիտական կրթության օրենսդրական հիմքերը, ինչը դրական նշանակություն ունի բուհական կրթության իրավահարաբերությունների զարգացման համար: Սակայն սահմանադրական և օրենսդրական գործող նորմերի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր նորմատիվ փաստաթղթերում առկա են տվյալ իրավունքի սահմանադրական առանձին դրույթների մեկնաբանման ու օրենսդրորեն երաշխավորման որոշակի հակասություններ:

1. Հայաստանում բարձրագույն կրթության իրավունքը հստակ ձևակերպում է ստացել Առաջին Հանրապետության տարիներին, իսկ խորհրդային տարիներին այն զարգացել է երկրում գործող

կարգերի ներքո և միայն 20-րդ դարի 60-80-ական թվականներին այն հասանելի է դարձել բնակչության բոլոր խավերին:

1991թ. Հայաստանի Հանրապետության պետական անկախության վերականգնումից հետո, կրթության ոլորտում էական բարեփոխումներ սկսվեցին միայն 90-ական թվականների երկրորդ կեսից: Դրանք աստիճանաբար ներառեցին ոլորտի կառավարումը, կառուցվածքը և բովանդակությունը.

- վերջին տասնամյակի ընթացքում այն ստանում է համակարգված բնույթ՝ առանձին խնդիրներ կարգավորող օրենքների ընդունումից դեպի կրթության ողջ ոլորտը համակարգող հիմնարար, մարտավարական և ռազմավարական իրավական փաստաթղթերի ընդունումը,

- բնութագրվում է ներքին միասնությամբ և դրա հիմքում ընկած սահմանադրական ընդհանուր սկզբունքներով,

- երաշխավորում է ՀՀ քաղաքացիների բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքը և կարգավորում դրա իրականացման ձևերը:

2. Սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքներն ունեն ընդհանուր մի հատկանիշ՝ դրանք բոլորը սուբյեկտիվ են, այսինքն՝ անհատական են, պատկանում են ոչ միայն բոլոր քաղաքացիներին, այլև յուրաքանչյուր անհատի: Յուրաքանչյուր սուբյեկտիվ իրավունք բաղկացած է բաղադրյալներից, որոնք անվանում ենք իրավագործություններ: Բարձրագույն կրթություն ստանալու սահմանադրական իրավունքի նման *իրավագործությունների* թվին կարելի է դասել.

- *բարձրագույն ուսումնական հաստատություն ընտրելու իրավունքը,*

- *բուհ ընդունվելու մրցույթին այլ դիմորդների թվում հավասար պայմաններով մասնակցելու իրավունքը,*

- *ուսումնառության ձևի ընտրության իրավունքը,*

- *մի քանի բուհերում ուսումնառություն անցնելու իրավունքը,*

- *ուսանողի կարգավիճակով բուհում սովորելու իրավունքը,*

- *բարձրագույն մասնագիտական պետական կրթական չափորոշչին համապատասխան գիտելիքներ ստանալու իրավունքը,*

- *ուսումնառության տեսակը փոխելու իրավունքը,*

- *ցանկացած պահին ուսումնառությունը դադարեցնելու և հետագայում իր ուսանողական իրավունքները վերականգնելու հնարավորության իրավունքը,*


- *մի քանի տեսակի բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը,*

- բարձրագույն կրթության իր իրավունքը սահմանափակող գործողությունները և որոշումները դատարանում բողոքարկելու իրավունքը:

Այս բոլոր իրավագործությունների ամբողջությունը կազմում է բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի բովանդակությունը, ինչը սահմանված կարգով կարող է իրականացվել յուրաքանչյուր անհատի կողմից:

3. «Կրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրված սահմանումները ենթադրում են պետության պատասխանատվությունը հասարակության առաջ ոչ միայն կոնկրետ քաղաքացու կողմից կրթության իրավունքի իրականացման, այլև կրթության գործընթացի կազմակերպման մակարդակի և որակի համար, ինչը, իր հերթին, պետության առջև պարտավորություն է դնում ապահովելու բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման իրավական երաշխիքները:

Բարձրագույն կրթության իրավունքի *երաշխիքները* կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Գծապատկեր 1. Բարձրագույն կրթության իրավունքի երաշխիքներ

4. Հայաստանի Հանրապետությունում *բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում առկա են պետական* և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններ: Պետական և ոչ պետական բուհերի իրավահավասարության ճանաչման տեսանկյունից շատ կարևոր է, որ պետությունը երաշխավորում է պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակը: Միևնույն ժամանակ, առկա են այդ իրավահավասարությունը խախտող մի շարք հանգամանքներ: Այսպես.

Օրենքով նախատեսված է, որ պարտադիր հավատարմագրման գործընթաց պետք է անցնեն նաև պետական ուսումնական հաստատությունները և դրանց մասնագիտությունները, սակայն օրենքի այդ պահանջը դանդաղ է կատարվում, պետության միջոցներից նպաստներ և կրթաթոշակներ տրվում են բացառապես պետական բուհերում սովորող ուսանողներին, ֆինանսական որևիցե օժանդակություն պետությունից մասնավոր բուհերը չեն ստանում, հավատարմագրված ոչ պետական բուհերի զորակոչային տարիքի ուսանողները զինվորական ծառայությունից տարկետում չեն ստանում, նման տարկետման իրավունք պետությունը վերապահում է միայն պետական բուհերի բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

Հավատարմագրված ոչ պետական բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններին պետական բուհերի հետ հավասար կարգավիճակ ապահովելու համար անհրաժեշտ է նախ վերացնել վերոնշյալ բոլոր տարբերությունները, ոչ պետական բուհերում ապահովել կրթության որակի համեմատելի եզրեր պետական բուհերի հետ:

Բարձրագույն կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կնքած միջազգային պայմանագրերի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ ներկա դրությամբ մեր երկրին հաջողվել է լայն համագործակցություն հաստատել աշխարհի տարբեր պետությունների հետ և ակտիվորեն ներգրավվել բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ընթացող միջազգային զարգացումներին: Հայաստանցի ուսանողները վերոնշյալ պայմանագրերի շնորհիվ հնարավորություն են ստացել կրթություն ստանալ կամ այն շարունակել արտասահմանյան տարբեր երկրների բուհերում:

Բարձրագույն կրթության սահմանադրական իրավունքի իրականացման տեսանկյունից ՀՀ բուհական կրթության ոլորտի և գործող օրենսդրության մեր կատարած հետազոտության և արված եզ-

րահանգումների արդյունքում վեր են հանվում ոլորտում առկա մի շարք *հիմնախնդիրներ*, որոնց լուծում տալու համար անհրաժեշտ է.

1. Լրամշակել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի գործող օրենսդրությունը:

Սահմանադրության նորմերից բացի, բարձրագույն կրթության իրավահարաբերությունների ոլորտը կարգավորվում է երկու հարյուրից ավելի օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Իրավական պրակտիկայում բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի իրավահարաբերությունները պետք է կանոնակարգվեն ինչպես «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ կրթական համակարգի ընդհանուր օրենսդրությամբ, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերով: Սակայն ենթաօրենսդրական ակտերի ընդունումը շատ հաճախ ձգձգվում է, ինչն օրենսդրությունը տևական ժամանակով դարձնում է անկատարելի: Անհրաժեշտ ենք համարում յուրաքանչյուր օրենքում նախատեսել օրենքի կիրառումն ապահովող և ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի ընդունման ժամանակացույց:

Առաջիկա տարիներին կրթության ոլորտում շարունակվող բարեփոխումներն ապահովելու համար դեռ ընդունվելու են նոր օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Ոչ հեռու ապագայում կրթության ոլորտի օրենսդրությունն այնքան է ուռճանալու, որ անհրաժեշտություն է առաջանալու կրթական ոլորտի իրավահարաբերություններն առանձնացնել որպես հասարակական հարաբերությունների մի հատուկ տեսակ, որպես օրենսդրության յուրօրինակ ինքնուրույն ճյուղ և մշակել այդ հարաբերությունների իրավական կարգավորման համապատասխան մեթոդներ: Այսինքն՝ խնդիր է առաջանալու ստեղծել *Կրթական օրենսգիրք*՝ Քաղաքացիական օրենսգրքի նմանությամբ, ինչը թույլ կտա ապահովել իրավունքի գործող նորմերի համակարգի համապատասխանությունը կրթական իրավահարաբերությունների ներկա իրավիճակին և վերացնել թերությունների մեծ մասը, որոնք առկա են գործող օրենքներում և կրթությանը վերաբերող այլ ենթաօրենսդրական ակտերում:

Համոզված ենք, որ Կրթական օրենսգրքի ստեղծումը և ընդունումը կնպաստի՝

- կրթության հաջորդական բոլոր աստիճանների հասարակական դերի և նշանակության բարձրացմանը,
- կրթության իրավունքի և իրավունքի այլ ճյուղերի հարաբերակցության կարգավորմանը,
- կրթության ոլորտում գործող բազմաթիվ նորմատիվ իրավական ակտերի թվաքանակի կրճատմանը, դրանց միջև գոյություն

ունեցող հասկացությունների և անհամապատասխանությունների վերացմանը:

«Օրենսգիրք» հասկացությունն ինքնին ենթադրում է տվյալ կոնկրետ ոլորտում ձևավորված, զարգացած և ճյուղավորված օրենսդրական բազայի առկայություն, որը կարող է ծառայել որպես կողիֆիկացման օբյեկտ: Նկատի ունենալով կրթական իրավունքի բավականին բարդերի բարդությունը, կողավորված մեծ փաստաթղթի ընդունումից առաջ անհրաժեշտ է՝

ա/ ստեղծել արդեն ձևավորված և արդյունավետ գործող կրթական օրենսդրության ինստիտուտների իրավական կարգավորման միասնական մեխանիզմ և այդպիսով ապահովել կրթության ոլորտի հարաբերությունների լիարժեք և համակարգային կարգավորումը,

բ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին,

գ/ ստեղծագործաբար կիրառել այլ երկրների օրենսդրական փորձը՝ տեղայնացնելով և համապատասխանեցնելով ՀՀ կրթության ոլորտի իրավահարաբերությունների յուրահատկությանը:

2. Հայաստանի բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում իրականացվող արագընթաց բարեփոխումներն անհրաժեշտ է նպատակաուղղել Հայաստանի բուհական կրթության վարկանիշի՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս բարձրացմանը: Մեր երկիրը բավարար գիտակրթական ներուժ ունի ապահովելու որակյալ բարձրագույն մասնագիտական կրթություն մի շարք մասնագիտությունների գծով և դրանով իսկ մեր կրթական համակարգը գրավիչ դարձնելու հարևան երկրների համար՝ ինչպես կրթական ծառայություններ մատուցելու, այնպես էլ կրթության ոլորտում ներդրումներ կատարելու առումով: Մեր երկրում արդեն գործող բուհերի, ինչպես նաև միջպետական չորս բուհի (*«Հայաստանում Ամերիկյան համալսարան, Հայաստանի Ֆրանսիական համալսարան» հիմնադրամ, Հայ-ռուսական /սլավոնական/ համալսարան, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների եվրոպական տարածաշրջանային ինստիտուտ Հայաստանում*) առկայության շնորհիվ Հայաստանը կարող է դառնալ տարածաշրջանային նշանակության գիտակրթական կենտրոն:

Բոլոնյայի գործընթացին ՀՀ միանալը պարտադիր պահանջ է առաջադրում վերակառուցել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը և ոլորտի օրենսդրությունը՝ դրանք համապատասխանեցնելով եվրոպական և միջազգային չափորոշիչներին / ստանդարտներին: Այս գործընթացն ինքնին ստեղծում է բարենպաստ իրավիճակ մեր երկրի կրթական համակարգի վարկանիշը

բարձրացնելու առումով՝ նպատակաուղղված հեռանկարային քաղաքականություն վարելուն:

3. Բուհից բուհ, ինչպես նաև նույն բուհում մասնագիտությունից մասնագիտություն ուսանողների, նրանց կրթական արդյունքների (կրեդիտների) տեղափոխումներն ու միջազգային շարժունությունը դյուրացնելու համար անհրաժեշտ է մշակել օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ առկա օրենսդրական և կանոնակարգային խոչընդոտների վերացման նպատակով:

4. Հայաստանի Հանրապետությունում պետական և մասնավոր բուհերի կարգավիճակը՝ պետության վերաբերմունքի տեսանկյունից, միմյանցից զգալիորեն տարբերվում է: Հասարակության մեջ դեռևս, ոչ անհիմն, վստահության պակաս կա ոչ պետական բուհերի տված կրթության որակի նկատմամբ: Չնայած Սահմանադրության 39-րդ հոդվածում ամրագրված դրույթներին, «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում տրված ձևակերպումներին, ոչ պետական բուհերի ուսանողների կարգավիճակի հարցում պետության վարած քաղաքականությունը խախտում է ուսանողների և դիմորդների որոշակի մասի բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը: Եղած ոչ իրավահավասարությունը վերացնելու համար, հեղինակի կածիքով, անհրաժեշտ է.

ա/ սկսել պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների հավատարմագրման օրենքով նախատեսված գործընթացը, ինչը, մի կողմից, հավասարություն կնտցնի պետական և ոչ պետական բուհերի իրավական կարգավիճակում, մյուս կողմից՝ կպարտադրի ոչ պետական բուհերին ավելի մեծ պատասխանատվություն դրսևորել իրենց կողմից տրամադրվող կրթության որակի նկատմամբ,

բ/ Սահմանադրությամբ ամրագրված խտրականությունն արգելող (հոդվ. 14.1) և մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն կրթական հաստատություններում սովորելու իրավունքի (հոդվ. 39) դրույթների թերընկալումից խուսափելու նպատակով առաջարկում ենք օրենսդրորեն սահմանել ոչ պետական բուհերում սովորողների համար ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տեղեր և զինվորական ծառայությունից տարկետում տրամադրել ոչ պետական բուհերի զորակոչային տարիքի, իրապես բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին,

գ/ ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված կարգը սահմանում է, որ «երկրորդ մասնագիտական

կրթությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով»¹: Ավելին, «ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն պետական կամ հավատարմագրված բուհերում»: Անհրաժեշտ է ՀՀ ԿԳ նախարարի 15 օգոստոսի 2006թ. N 671-Ն հրամանում կատարել համապատասխան փոփոխություններ երկրորդ մասնագիտական կրթությամբ սովորող ուսանողներին ևս ընձեռելով իրենց սահմանադրական իրավունքից օգտվելու հնարավորություն, այդ իրավունքը վերապահելով նաև հավատարմագրում չանցած, սակայն ժամանակին գործունեություն ծավալած բուհերի շրջանավարտներին:

5. Հայաստանի Հանրապետությունում առկա է սոցիալական որոշակի լարվածություն՝ կապված բուհերում ուսման վարձի վճարման ժամկետների և կարգի հետ:

Բուհերում ուսման վարձը գանձվում է ըստ կիսամյակների, ուսանողի հետ կնքած պայմանագրին համապատասխան սահմանված անխախտ չափաբաժիններով: Շատ ուսանողներ վարձը վճարում են դժվարությամբ՝ կապված ընտանեկան բյուջեի հետ: Պետք է ուսանողին հնարավորություն տալ ինքնուրույն որոշելու ուսումնական կիսամյակի/տարվա ընթացքում քանի առարկայի (կրթական մոդուլի) համար է նա ի վիճակի վճարելու: Անշուշտ, դա կերկարած՝ գի ուսման տևողությունը տվյալ ուսանողի համար, սակայն ուսումնառությունը ֆինանսական ծանր բեռ չի լինի նրա ընտանեկան բյուջեի համար: Նման մոտեցում կիրառվում է արևմտյան շատ բուհերում:

Խնդրին լուծում տալու համար անհրաժեշտ է.

- 1) օրենսդրորեն սահմանել ուսման վարձն ըստ կիսամյակային կրեդիտների (կրթական մոդուլների),
- 2) յուրաքանչյուր մասնագիտության գծով հնարավորինս ազատականացնել ուսումնառության ժամկետները,
- 3) թույլատրել սահմանված չափաքանակից ավելի կրթական մոդուլների ուսումնասիրություններ կիսամյակի/տարվա ընթացքում՝ ըստ ուսանողի ցանկության:

6. Նորագույն ուսումնասիրությունների ընթացքում արված սոցիոլոգիական հարցումների, խմբային քննարկումների և խորաց-

¹ Տես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 15 օգոստոսի 2006թ. N 671-Ն հրամանը, 3 և 10-րդ կետեր:

ված հարցազրույցների արդյունքները վկայում են, որ բարձրագույն կրթության ոլորտում առկա են կոռուպցիոն ռիսկեր²:

Կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ կատարել կիսամյակային քննությունների վերահանձնման գործընթացում: Որոշ բուհեր կիսամյակի ընթացքում «անբավարար» ստացած ուսանողներին թույլատրում են վերահանձնել քննությունը մինչև իսկ 5-6 անգամ: Բարենպաստ միջավայրը վերացնելու նպատակով նպատակահարմար է.

ա/ կիսամյակային քննություններից ակադեմիական պարտքերի վերահանձնումը թույլատրել միայն մեկ անգամ, բացասական արդյունքի դեպքում ուսանողին հաշվարկել ակադեմիական պարտք, սակայն թույլատրել շարունակել կրթությունը, ակադեմիական պարտքի նոր վերահանձնումը նշանակել մեկ տարի հետո նույն ժամանակ՝ հաջորդ կուրսի ուսանողների նույն առարկայից քննություն հանձնելու ընթացքում,

բ/ քննության ընդունումը և գործնական կամ տեսական պարապմունքների անցկացումը կազմակերպել տարբեր դասախոսների միջոցով, իսկ միատեսակ առարկաների քննությունները կազմակերպել հանձնաժողովի միջոցով, կիսամյակի վերջի ամփոփիչ գնահատականի համար սահմանելով միայն 10%՝ քննություններն անցկացնելով միայն գրավոր,

գ/ բուհական կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը մեծապես կնպաստի նաև պետության կողմից բարձրագույն կրթության ոլորտի ֆինանսավորման ավելացումը և դասախոսների աշխատավարձի բարձրացումը: Այս առումով հարկ է մշակել և ներդնել բազմաթիվ արտասահմանյան բուհերում գործող աշխատավարձի վճարման վարկանիշային համակարգը, ինչը մեծապես կնպաստի նաև կրթության որակի բարձրացմանը:

7. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և լեռնային շրջանների բնակավայրերում զգացվում է մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների զգալի պահանջ: Եթե այս բնակավայրերում աշակերտների պակասը բացատրվում է ժողովրդագրական և այլ օբյեկտիվ պատճառներով, ապա ուսուցիչների պակասի խնդիրը Հայաստանում մանկավարժական կադրերի գերարտադրության պայմաններում հետևանք է նախ գյուղական բնակավայրերում սոցիալ-կենցաղային վատ պայմանների, բայց առավելապես ուսուցիչների աշխատանքի անբավարար վարձատրության պայ-

² Հարություն Ալեքսանյան, Կոռուպցիոն երևույթները Հայաստանի կրթական համակարգում և դրանց կանխարգելման ուղիները, Երևան, 2007, էջեր 29-30:

մանների: Ինչպես պետք է լրացվի որևէ առարկայի /օրինակ՝ ֆիզիկայի/ ուսուցչի դրույքաչափը նրան լիարժեք աշխատավարձ վճարելու համար, եթե գյուղական դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորում է ընդամենը հինգ-վեց աշակերտ: Այս խնդիրը կարելի է լուծել, եթե համապատասխան բուհերում իրականացվի **կրկնակի մասնագիտացմամբ ուսուցիչների պատրաստում** (մաթեմատիկայի - ֆիզիկայի, քիմիայի - կենսաբանության, պատմության - աշխարհագրության, ռուսերենի և անգլերենի), ովքեր կարող են գյուղական դպրոցում դասավանդել 2-3 հարակից առարկաներ և այդպիսով լրացնել պահանջվող դրույքաչափը:

Կրկնակի մասնագիտացմամբ ուսուցիչների պատրաստումն իրականացնելու համար անհրաժեշտ է.

- բուհական մասնագիտությունների կրթական չափորոշիչներում նախատեսել կրկնակի մասնագիտացման հնարավորությունը,

- պատկան մարմիններում քննարկել նման մասնագիտացման արդյունավետության խնդիրը և դրական գնահատականի դեպքում կրթության վերաբերող օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

Այս հարցին դրական ընթացք տալը կլուծի գյուղական բնակավայրերն ուսուցչական կադրերով ապահովելու խնդիրը:

Գյուղական բնակավայրերի սովորողների որակյալ կրթություն ստանալու իրավունքի երաշխավորման տեսանկյունից նպատակահարմար է նաև լուրջ ուշադրություն դարձնել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսված (3.10 և 9.6-րդ հոդվածներ) **հեռավար կրթության** ներդրմանը, զարգացմանը և տարածմանը: Հանրապետության բոլոր դպրոցները համակարգիչներով ապահովվելու և համացանցին միացնելու՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տարվող քաղաքականությունը համապատասխան տեխնիկական հիմքեր է ստեղծում հեռավար կրթության ներդրման համար: Կարելի է Կրթության ազգային ինստիտուտում կազմակերպել հեռավար կրթության աշխատանքային խումբ և տեղադրել համապատասխան սարքավորում՝ հեռավոր բնակավայրերի համար հեռավար կրթություն և ուսուցիչների հեռավար վերապատրաստում իրականացնելու նպատակով:

Գյուղական դպրոցի կապը համացանցին միևնույն ժամանակ լավ հնարավորություն կարող է ընձեռել գյուղի չափահաս բնակչությանը՝ **հեռավար ձևով բարձրագույն կրթություն ստանալու** համար: Նման փորձառություն վաղուց արդեն կա եվրոպական, ասիական, ամերիկյան, աֆրիկյան որոշ երկրներում:

8. Կրթության շարունակականության և հաջորդականության սկզբունքը, որն իրագործվում է կրթության եռաստիճան համակարգի միջոցով, անհրաժեշտաբար պահանջում է բակալավրի կրթական աստիճանի տեղի և նշանակության հստակեցում աշխատանքային ոլորտում, իսկ պետական հիմնարկությունների համար՝ նաև զբաղեցնելիք պաշտոնի և աշխատավարձի նվազագույն չափի հստակեցում: Անորոշության հետևանքով բակալավրի կրթական աստիճանը Հայաստանի հասարակության մեծամասնության կողմից չի ընկալվում որպես բարձրագույն կրթության աստիճան:

Այս խնդրին լուծում տալու համար հնարավոր է երկու մոտեցում.

- ՀՀ կառավարությունը պետք է մշակի և ընդունի կառավարության որոշում՝ ՀՀ աշխատանքային ոլորտում բակալավրի կրթական աստիճանի տեղի և նշանակության կոնկրետ սահմանումով,

- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում պետք է կատարել համապատասխան փոփոխություն՝ հստակ պարզաբանելով, թե որտեղ կարող է օգտագործվել բակալավրի աստիճան ունեցող շրջանավարտների աշխատանքը:

9. Հայաստանում գործազրկության և աշխատուժի մեծ առաջարկի պայմաններում, առաջարկում ենք, իրավական ակտերի մակարդակով խրախուսել՝ ընդհուպ մինչև հարկային բեռի թեթևացում և/կամ արտոնությունների սահմանում, այն գործարարներին, ովքեր ներդրումներ կկատարեն Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում՝ կրթական հաստատությանը ֆինանսական աջակցության կամ ուսանողների ուսման վարձի վճարմանն աջակցության ձևով:

Կրթության ոլորտում առաջացել է լրացուցիչ մասնագիտական կրթության (որակավորման բարձրացում, մասնագիտական վերապատրաստում, հարակից մասնագիտության յուրացում և այլն) պահանջարկ: Լրացուցիչ կրթությունն իրականացվում է մի քանի պետական բուհերի, միջազգային կազմակերպությունների և որոշ հասարակական կազմակերպությունների կողմից³: Հարկավոր է լրացուցիչ կրթական ծրագրերն ազատել ավելացված արժեքի հարկով զանձումից՝ օժանդակելու համար նմանատիպ ծրագրերի կայացումը: Բացի դրանից անհրաժեշտ է օրենսդրության մեջ լրացուցիչ մասնագիտական կրթություն ստացած անձանց համար իբրև ավարտական փաստաթուղթ սահմանել դիպլոմը, այլ ոչ թե հավաստագիրը կամ վկայականը, ինչը կօգնի նրանց աշխատանք գտնել անընդհատ փոփոխվող աշխատաշուկայի պայմաններում:

³ Տես՝ www.vet.am

Դիտարկված հիմնախնդիրներին շուտափույթ լուծումներ տալը, անշուշտ, կնպաստի բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումների գործընթացին և ՀՀ քաղաքացիների բարձրագույն կրթության իրավունքի լիարժեք երաշխավորմանն ու ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

1. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության 1922թ. Սահմանադրություն:
2. Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության 1937թ. Սահմանադրություն:
3. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության 1978թ. Սահմանադրություն (Հիմնական օրենք):
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 1995թ.:
5. Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրություն (2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով):
6. «Զինապարտության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998թ.):
7. «Կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1999թ.):
8. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001թ.):
9. Կրթության զարգացման ՀՀ պետական ծրագիր (2001–2005թթ. համար) (ընդունվել է 2001թ.):
10. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-320-Ն (ընդունվել է 2002թ.):
11. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2003թ.):
12. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ.):
13. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ.):
14. Конституция СССР, М., 1937. Известия ЦИК СССР и ВЦИК. 1936. N 283 -362с.
15. Конституция (Основной Закон) Союза Советских Социалистических Республик. М., 1977. – 62с.
16. Декреты Советской власти. М., 1980. т. 10. - 412с.
17. “Об обучении подростков, работающих на предприятиях”. Постановление СНК СССР, 15 июля 1943. См. Народное образование в СССР. Сборник документов. М., 1974, с. 389-390.
18. “Об организации вечерних школ сельской молодежи”. Постановление СНК СССР, 6 июля 1944. См. Народное образование в СССР. Общеобразовательная школа. М., 1974, с. 391-393.

19. *Основы законодательства Союза ССР и союзных республик о народном образовании*. Ведомости Верховного Совета СССР N 48 от 27 ноября 1985. ст. 918.

20. Программа Коммунистической партии Советского Союза. (Новая редакция). М., 1986. -88с.

բ) ՀՀ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ

21. ՀՀ Նախագահի 2001թ. սեպտեմբերի 7-ի ՆՀ 174-Ն հրամանագիրը «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետություններում բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծման և գործառնության մասին համաձայնագիրը վավերացնելու մասին»:

22. ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի ՆՀ 1064 հրամանագիրը «ՀՀ կառավարության գործունեության կարգի մասին»:

23. ՀՀ Նախագահի 2007թ. հոկտեմբերի 1-ի ՆՀ 174-Ն հրամանագիրը «ՀՀ Կրթության և գիտության նախարարության կառավարման ոլորտում գործող ՀՀ գիտության պետական կոմիտե» պետական մարմին ստեղծելու մասին»:

24. ՀՀ կառավարության 29 մայիսի 1997թ. N 154 որոշումը «ՀՀ - բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին»:

25. ՀՀ կառավարության հունիսի 23-ի 2000թ. N 344 որոշումը «ՀՀ կրթության և գիտության նախարարության կառուցվածքում Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն պետական գործակալություն ստեղծելու մասին»:

26. ՀՀ կառավարության 10 հուլիսի 2003թ. N 861-Ա որոշումը Երևանում «Հայաստանի Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամ ստեղծելու մասին:

27. ՀՀ կառավարության 21 հոկտեմբերի 2004թ. N 1476-Ն որոշումը «Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ձևով ուսուցանվող մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին»:

28. ՀՀ կառավարության 2005թ. մարտի 31-ի N 699 – Ն որոշումը «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն հիմնադրամ ստեղծելու մասին»:

29. ՀՀ կառավարության 2005թ. ապրիլի 14-ի N 449-Ն որոշումը «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը հաստատելու մասին»:

30. ՀՀ կառավարության 2005թ. 14 հունիսի 2005թ. N 1112 Ն «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու մասին»:
31. ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 22-ի N 2307-Ն որոշումը «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին»:
32. ՀՀ կառավարության 9 նոյեմբերի 2005թ. N 1933-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու մասին»:
33. ՀՀ կառավարության 31 մարտի 2005թ. N 699 – Ն որոշումը «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն հիմնադրամ ստեղծելու մասին»:
34. ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի թիվ 1183-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը» հաստատելու մասին»:
35. ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 43 որոշումը «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցին հավանություն տալու մասին» և հավելված:
36. ՀՀ կառավարության 5 ապրիլի 2007թ. N 513-Ն որոշումը «ՀՀ - պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2007/2008 ուսումնական տարվա պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ ընդունելության տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին»:
37. ՀՀ կառավարության 30 օգոստոսի 2007թ. N 1038-Ն որոշումը «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկը հաստատելու մասին»:
38. ՀՀ կրթության և գիտության նախարարի 15 օգոստոսի 2006թ. N 671-Ն հրամանը «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը»:
39. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 դեկտեմբերի 20-ի N 996 -Ա/Ք հրամանը «Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման ծրագիրը»:
40. ՀՀ կրթության և գիտության նախարարի 12 ապրիլի 2007թ. N 280-Ն հրամանը «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաս-

տատությունների 2007թ. առկա ուսուցման ընդունելության կանոնները հաստատելու մասին»:

41. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ. հունիսի 19-ի N 588- Ա/Ք հրամանը «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգը»:

42. ՀՀ կրթության և գիտության նախարարի 09.04.2008թ. N 211-Ն հրամանը «ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2008թ. առկա ուսուցման ընդունելության կանոնները»:

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ա) ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ (ՈՒՆԻՎԵՐՍԱԼ) ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

43. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Միջազգային իրավական փաստաթղթեր կրթության վերաբերյալ, Երևան, 2005թ.:

44. Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, ընդունվել է 26 հունիսի 1945թ.:

45. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին, ՄԱԿ:

46. Կոնվենցիա կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին, ընդունվել է 1960թ. դեկտեմբերի 14-ին:

47. Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր ձևերի արգելման մասին, ընդունվել է 1965թ. դեկտեմբերի 21-ին:

48. Միջազգային կոնվենցիա Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, ընդունվել է 1966թ. դեկտեմբերի 19-ին:

49. Հելսինկիի 1975թ. կոնվենցիան Եզրափակիչ ակտ, ընդունվել է 1975թ. օգոստոսի 1-ին:

50. Կոնվենցիա Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, ընդունվել է 1979թ. դեկտեմբերի 18-ին:

51. Կոնվենցիա Երեխայի իրավունքների մասին, ընդունվել է 1989թ. նոյեմբերի 20-ին:

52. Կոնվենցիա Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին, ընդունվել է 1989թ. նոյեմբերի 10-ին:

53. Համաշխարհային կոնֆերենցիա մարդու իրավունքների գծով, Վիեննայի հռչակագիր և գործողությունների ծրագիր, հունիս 1993թ.:

54. ՄԱԿ-ի Տնտեսական և Սոցիալական խորհրդի նստաշրջանի մասնակիցների հայտարարություն A/57/3 (Part I), 19:

բ) ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

55. Եվրոպական մշակութային կոնվենցիա, ընդունվել է 1954թ. դեկտեմբերի 19-ին, Փարիզ:

56. Համալսարանական ազատությունների խարտիա / Magna Charta Universitatum, ընդունվել է 1988թ. սեպտեմբերի 18-ին, Բոլոնիա:

57. Լիսաբոնի կոնվենցիա, Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին, ընդունվել է 1997թ. ապրիլի 11-ին:

58. Սորբոնի հռչակագիր / Sorbonne Declaration - Բարձրագույն կրթության եվրոպական համակարգի կառուցվածքային ներդաշնակեցման՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր, ընդունվել է 1998թ. մայիսի 25-ին:

59. Բոլոնիայի հռչակագիր / Bologna Declaration - Եվրոպայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր, ընդունվել է 1999թ. հունիսի 19-ին:

60. Պրահայի կոմյունիկե / Praha Communiqué - Դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք, ընդունվել է 2001թ. մայիսի 19-ին:

61. Ուլերձ Սալամանկայից / Message from Salamanca - Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ձևավորումը, ընդունվել է 2001թ. մարտի 30-ին:

62. Բեռլինի կոմյունիկե / Berlin Communiqué - Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի կառուցումը, ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 19-ին:

63. Գրացի հռչակագիր / Graz Declaration - Բեռլինի մեկնակետից: Համալսարանների դերը, ընդունվել է 2003թ. մայիսի 30-ին:

64. Լոնդոնի կոմյունիկե / London Communiqué - Դեպի եվրոպական բարձրագույն կրթության ոլորտ. պատասխանելով գլոբալ աշխարհի մարտահրավերներին, ընդունվել է 2007թ. մայիսի 18-ին:

65. Բերգենի կոմյունիկե / Bergen Communiqué - Բարձրագույն կրթության եվրոպական տարածք. նպատակների նվաճում, ընդունվել է 2005թ. մայիսի 20-ին:

66. Գլազգոյի հռչակագիր / Glasgow Declaration - Եվրոպական համալսարանական ասոցիացիայի համաձայնագիր, ընդունվել է 2005թ. ապրիլի 2-ին:

67. Եվրոպայի խորհրդի որոշումը՝ «1996 թվականը «Հարատև կրթության տարի» հռչակելու մասին», ընդունվել է 1995թ. հոկտեմբերի 10-ին: Decision 2493/95/EC, OJ No L 256, 26.10.95.

68. Рекомендация N R (98)3 Комитета Министров государствам – членам Совета Европы по проблеме доступности высшего образования.

69. Высшее образование в XXI веке: подходы и практические меры. Заключительный доклад ЮНЭСКО. ED. 98/CONF. 202/3, Париж, 9 октября 1998г.

70. “A Memorandum on Lifelong Learning”, *Commission Staff Working Paper*, Brussels, 30.10.2000, SEC(2000) 1832, par. 5.

71. Statement of the Minister of Education of Armenia, Azerbaijan and Georgia, Council of Europe Headquarters, Strasbourg, 17-18 May, 2004.

գ) ՀՀ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

72. Համաձայնագիր Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կրթության բնագավառում համագործակցության մասին, 15 մայիսի 1992թ.:

73. Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության վերաբերյալ, 11 հունվարի 1993թ.:

74. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի Հանրապետության կառավարության միջև բարձրագույն կրթության բնագավառում համագործակցության մասին, 24 օգոստոսի 1993թ.:

75. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին, 9 փետրվարի 1994թ.:

76. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության, մշակույթի և գիտության բնագավառում համագործակցության մասին, 25 ապրիլի 1994թ.:

77. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև գիտության, կրթության,

մշակույթի և սպորտի բնագավառներում համագործակցության մասին, 20 սեպտեմբերի 1994թ.:

78. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում համագործակցության մասին, 16 դեկտեմբերի 1994թ.:

79. Համաձայնագիր ՌԴ կառավարության և ՀՀ կառավարության միջև մշակույթի, գիտության և կրթության բնագավառում համագործակցության մասին, 13 նոյեմբերի 1995թ.:

80. Համաձայնագիր Անկախ պետությունների համագործակցության միասնական (ընդհանուր) կրթական տարածքի կազմավորման ուղղությամբ հնագործակցման մասին, 17 հունվարի 1997թ.:

81. Համաձայնագիր Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև գիտության և տեխնոլոգիայի բնագավառում համագործակցության մասին, 28 փետրվարի 1997թ.:

82. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության, և գիտության բնագավառում համագործակցության մասին, 17 մարտի 1997թ.:

83. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղրղզստանի Հանրապետության կառավարության միջև գիտության, տեխնիկայի և տեղեկատվության բնագավառում համագործակցության մասին, 21 ապրիլի 1997թ.:

84. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին, 3 մայիսի 1997թ.:

85. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի կառավարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին, 22 հուլիսի 1997թ.:

86. Համաձայնագիր ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս – հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին, 29 օգոստոսի 1997թ.:

87. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև մշակութային և գիտական համագործակցության մասին, 27 հունվարի 1998թ.:

88. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Արգենտինայի Հանրապետության միջև մշակույթի և կրթության բնագավառում համագործակցության մասին, 30 հուլիսի 1998թ.:

89. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Կիպրոսի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում համագործակցության մասին, 11 սեպտեմբերի 1998թ.:

90. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև բարձրագույն կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին, 16 սեպտեմբերի 1998թ.:

91. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության միջև Ֆրանս – հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունը ստեղծելու մասին, 22 հոկտեմբերի 1998թ.:

92. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի գործադիր իշխանության միջև բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին, 20 նոյեմբերի 1998թ.:

93. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի նախարարների կաբինետի միջև կրթության բնագավառում համագործակցության մասին, 23 դեկտեմբերի 1999թ.:

94. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Բելառուսի Հանրապետության կրթության նախարարության միջև բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության մասին, 19 հուլիսի 2000թ.:

95. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Բելառուսի Հանրապետության կրթության նախարարության միջև գիտատեխնիկական համագործակցության մասին, 31 հոկտեմբերի 2000թ.:

96. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթության նախարարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին, դեկտեմբեր, 2000թ.:

97. Փոխընթացման հուշագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության գիտության, կրթության և տեխնոլոգիայի նախարարության միջև գիտության, կրթության և հետազոտությունների բնագավառում համագործակցության վերաբերյալ, 31 հունվարի 2001թ.:

98. Հանաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Բելառուսի Հանրապետության

կրթության նախարարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին, 26 մայիսի 2001թ.:

99. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև կրթության գիտական աստիճանների և գիտական կոչումների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին, 15 սեպտեմբերի 2001թ.:

100. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև բարձրագույն կրթության և գիտական աստիճանների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձաբար ճանաչման մասին, 27 դեկտեմբերի 2001թ.:

101. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև կրթության և մշակույթի բնագավառում համագործակցության մասին, 22 օգոստոսի 2002թ.:

102. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի հանրապետության կառավարության միջև մշակութային, կրթական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին, 15 ապրիլի 2003թ.:

103. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Տաջիկստանի Հանրապետության կառավարության միջև գիտության, տեխնիկայի և տեղեկատվության բնագավառում համագործակցության մասին: 25 նոյեմբերի 2003թ.:

104. Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարության միջև կրթության ոլորտում համագործակցության մասին, 13 հուլիսի 2004թ.:

105. Համագործակցության ծրագիր Հայաստանի կրթության և գիտության նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև կրթության ոլորտում 2004-2007թթ. համար, 26 հուլիսի 2004թ.:

106. Փոխընթացնման հուշագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և դաստիարակության նախարարության միջև կրթական համագործակցության մասին 2005-2008թվականների համար, 16 հունիսի 2005թ.:

107. Համագործակցության ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության ոլորտներում 2006-2009թվականների համար, 6 դեկտեմբերի 2005թ.:

108. Փոխընթացն ան հուշագիր Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի և Ավստրիայի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի դաշնային նախարարի միջև բարձրագույն կրթության որակավորումների փոխադարձաբար ճանաչման համար խորհրդակցությունների մասին, 13 դեկտեմբերի 2005թ.:

109. Փոխընթացն ան հուշագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ԱՄՆ կառավարության կրթական փոխանակման ծրագրերին հայ ուսանողների մասնակցության մասին, 3 մարտի 2006թ.:

110. Համաձայնագիր Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հունանիտար համագործակցության մասին, 26 օգոստոսի 2006թ.:

111. Ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի Հանրապետության կառավարության միջև կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին (2007-2009թթ.), 1 նոյեմբերի 2006թ.:

112. Ծրագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև մշակույթի, կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին (2006-2010թթ.):

113. Конференция Министров образования государств – участников СНГ. РЕШЕНИЕ от 26 октября 2007 года, город Ереван, «О сотрудничестве в области развития систем управления качеством образования государств - участников СНГ».

114. Համագործակցության ծրագիր Հայաստանի կրթության և գիտության նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև կրթության և գիտության ոլորտում 2008-2011թթ. համագործակցության վերաբերյալ, 27 հունիսի 2008թ.:

4) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

117. КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК. 8-ое издание. М., 1978, т. 11. -551с.

118. КПСС в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК. 8-ое издание. М., 1981, т. 13. -654с.

119. Перепись населения СССР, М., 1940, -118 с.

120. Народное образование в СССР. Сборник документов. М., 1974. – 560с.

121. Народное образование, наука и культура в СССР, Статистический сборник ЦСУ. М., 1977. – 448с.
122. О реформе общеобразовательной и профессиональной школы. Сб. Документов и материалов. М., 1984. – 112с.
123. Высшая школа. Сборник основных постановлений, приказов и инструкций. / Под ред. В. И. Войленко, М., 1978. – 400с.

5. ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐ

124. Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Երևան, 2002: - 672 էջ:
125. Ալեքսանյան Հ., Կոռուպցիոն երևույթները Հայաստանի կրթական համակարգում և դրանց կանխարգելման ուղիները, Երևան, 2007, - 43 էջ:
126. Եգանյան Ռ., Կուլյունջյան Կ., «Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Երևան, 2004: - 62 էջ:
127. Թորես Կ. Ա., ժողովրդավարություն, կրթություն և բազմամշակութայնություն. քաղաքացիության երկրնորանքները գլոբալ աշխարհում, Երևան, 2005թ.: - 392 էջ:
128. Երիցյան Ս., ճուղուրյան Ա., Բոլոնիայի գործընթացը և կրթության որակի հիմնախնդիրները, Էդիթ Պրինտ, Երևան, 2008: - 192 էջ:
129. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., «Բոլոնիայի գործընթացով դեպի եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ): Բոլոնիայի գործընթացի առկա վիճակը, զարգացման միտումներն ու հիմնախնդիրները ԵԲԿՏ-ում և Հայաստանում»: Վերլուծական զեկույց: Տեղեկագիր. Բարձրագույն կրթություն, պրակ 3, Երևան, 2007: - 400 էջ:
130. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց: Երևան, Անտարես, 2008: - 74 էջ:
131. Մաշկին Ն. Ա., Հին Հռոմի պատմություն, Պետական համալսարանի հրատ., 1951: - 1001 էջ:
132. Կրթական քաղաքականությունը և Lifelong Learning-ը Հայաստանում. ռազմավարության հիմնադրույթների և շարունակական քննարկումների ձևակերպում, Երևան, 2005թ. - 134 էջ:
133. 1997թ. Լիսաբոնի եվրոպական տարածաշրջանի բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման կոնվենցիայի դրույթներին Հարավային Կովկասի երկրների ինտեգրման և ներդաշնակության մակարդակի գնահատումը, Երևան, 2005թ.: - 156 էջ:

134. Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, Երևան, Հայ-պետհրատ, 1958: -595 էջ:
135. Մանկավարժություն, դասագիրք բուհերի համար, Երևան, Լույս, 1969: -759 էջ:
136. Հայ ժողովրդի պատմություն, Լույս, Երևան, 1970, հատ. 4: - 524 էջ:
137. Հին Հունաստանի պատմություն, Երևանի համալսարանի հրատ., 1982: -584 էջ:
138. Анисов М. И., Источники изучения истории советской школы и педагогики. Москва, Просвещение, 1986. 224 с.
139. Бондарь Н. С., Гражданин и публичная власть: Конституционное обеспечение прав и свобод в местном самоуправлении: Учебное пособие, М., 2004. 352 с.
140. Бондарь Н. С., Права человека и Конституция России: трудный путь к свободе. Ростов-на-Дону, 1996. 239 с.
141. Булат С. А., В термине «негосударственный вуз» заложена дискриминация. // Право и образование, 2000, N 1.
142. <http://www.edit.muh.ru/content/mag/magcontent.php?link=pr0100>
143. Вениаминов А., Негосударственные вузы накануне третьего тысячелетия. <http://www.javascript:selflocation.ru>
144. Воеводин Л. Д., под редакцией Богданова Н. А. Юридический статус личности в России, М., 1997. 304 с.
145. Воеводин Л. Д., Индивидуальное и коллективное в конституционном статусе личности // Вестник МГУ, серия 11, Право, 1996, N 4., стр. 3-20.
146. Вопросы истории школы и педагогики на этапе зрелого социализма. М., 1985. 160с.
147. Гордон Л. А., Социально-экономические права человека: своеобразие, особенности, значение для России // Общественные науки и современность, 1997, N 3., стр. 5-14.
148. Глухарева Л. И., Современные проблемы теории прав человека, М., 2004. С. 216–219.
149. Гулиев В. Д., Рудинский Ф. М., Демократия и достоинство личности, М., 1983. 167 с.
150. Жедрин А. В., Государство и образование: Теоретический-юридический аспект. Автореферат дисс. на канд. Юрид. наук, Волгоград, 2003. 22 с.

151. Защита прав человека в условиях перехода к рынку. Круглый стол // Государство и право, 1993, N 6. - С. 15-45.
152. "Известия", 1960, 4 февраля.
153. Институт прав человека в России / под ред. Г. Н. Комковой, Саратов, 1998. С. 216.
154. История политических и правовых учений XIX века, Под ред. В. С. Нерсисянца, М., 1993. - 388 с.
155. Кистяковский Б. А., Социальные науки и право, М., 1916, - 499с.
156. Колотова Н. В., Права человека // Государство и право, 2001, N 5. (Материалы "круглого стола", проведенного сектором прав человека Института государства и права РАН) стр. 89-102.
157. Комкова Г. Н., Конституционный принцип равенства прав и свобод человека в России, Дисс. ... докт. юрид. наук. Саратов, 2002, с. 384.
158. Комментарий к Закону об образовании / Отв. ред. В. И. Шкатулла. М., 1998. -17с.
159. Комментарий к Федеральному Закону РФ "О высшем и послевузовском профессиональном образовании", Издательство Филин М.,1998. 368 с.
160. Конституционное право России в вопросах и ответах: Учебно-методическое пособие / Под ред. А. В. Малько, Изд. 3-е, М., 2005. 272 с.
161. Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации: Учебник для вузов / Под ред. О. И. Тиунова, М., 2005. 608 с.
162. Конституционное право России: Учебник / под ред. Г. Н. Комковой. М., Юрист, 2005. 399 с.
163. Куин Ф. Права человека и ты. Варшава, ОБСЕ/БДИПЧ, 1997 г. – С. 288.
164. Курскова Г. Ю., Право на образование // Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации: Учеб. для вузов/Под ред. О. И. Тиунова, М., 2005. 608 с.
165. Материалы Интернет-пресс-конференции РБК "Основные проблемы и конкурентные преимущества российской науки и образования". 12 апрель, 2005 <http://www.rbc.ru/pressconf/2005/04/12/>

166. Матузов Н. И., Актуальные проблемы теории права, Саратов, 2003. – 510 с.
167. Матющева Т. Н., Правовой статус гражданина Российской Федерации в сфере образования // Автореферат дисс. канд. юрид. наук. Волгоград, 1999. – 24 с.
168. Мордовец А. С., Социально-юридический механизм обеспечения прав человека и гражданина, Саратов, 1996. 286 с.
169. Мюллерсон Р. А., Права человека: идеи, нормы, реальность, М., 1991. – 160 с.
170. Мюллерсон Р. А., Права человека: итоги века, тенденции, перспективы, / Отв. ред. Е. А. Лукашева, М., 2002. 448 с.
171. Никитина И. Ф., Конституционно-правовые основы высшего профессионального образования в Российской Федерации // Автореферат дисс. канд. юрид. наук. Екатеринбург, 2005. – 25 с.
172. Общая теория прав человека. Под ред. Е. А. Лукашевой, М., 1996. – 509 с.
173. Очерки истории школы и педагогической мысли народов СССР. 1917-1941 гг. М., 1980. – 455 с.
174. Образование в современном мире: состояние и тенденции развития / Под. ред. М. И. Кондакова. М., 1986. – 248 с.
175. Рекрут О. А., Административно-правовой статус негосударственных высших учебных заведений в России. Автореферат дисс. канд. юрид. наук. Саратов, 2002. – 23 с.
176. Рыбакова В. В., Конституционное право на общее образование в Российской Федерации (проблемы теории и практики). Автореферат дисс. на канд. юрид. наук. -Екатеринбург, 2005. -23с.
177. Сангаджиева К. В., Судебная защита конституционных социально-экономических прав граждан Российской Федерации. Автореферат дисс. канд. юрид. наук. Саратов, 2002. – 22 с.
178. Фарбер И. Е., Свобода и права человека в Советском государстве, Саратов, 1974. - 187 с.
179. Хачикян Э. Г., Обучение трудящейся молодежи общеобразовательным знаниям в Армении (1941-1975), Автореферат, дисс. канд. ист. наук. Ереван 1984. - 25с.
180. Шварц Г., Экономические и социальные права // Российский бюллетень по правам человека, 1995, N 6. С. 143.

181. Эбзеев Б. С., Конституция. Демократия. Права человека. Москва-Черкесск, 1992, с. 228.
182. Эбзеев Б. С., Соблюдение и защита прав человека – обязанность государства// Теория государства и права. Саратов, 1995. С. 560.
183. Descriptive Analysis of Tertiary Education and Innovation Systems in Armenia (Part I of the Country Policy Report), The World Bank, June, 2004, par. 5.
184. Education for all: A Global Commitment. Report of the U. S. to the International Consultative Forum on Education for All, Washington DC, AED, 2000. – 112 p.
185. K Mazure, M. A. Winser, C. Majorek. Higher Education in global society (a comparative perspective), Boston – London. 2000. – 218 p.
186. MacMillan Margaret, Paris 1919: six months that changed the world, New York, 2003. – 570 p.
187. Scott P., The Meaning of Mass Higher Education, Buckingham, 1995. – 226 p.
188. Teichler U., Structures of Higher Education Systems in Europe. In: Gellert C. Higher Education in Europe, London, 1993. – 278 p.
189. The heritage of European universities, eds. Nuria Sanz & Sjur Bergen, Strasbourg Cedex, 2006. – 255 p.
190. Watson D. & Taylor R., Lifelong Learning and the University: a post –Dearing agenda. «Taylor and Francis Group. London, 1998. – 159 p.

5. ՏԵՂԵԿԱԳՐԵՐ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

1. ՀՀ կառավարության տեղեկագիր, 1997 - 2008թթ.:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկագիր, 2000-2007թթ.:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1998թ. - 315 էջ:
4. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1999թ. - 520 էջ:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001թ. - 537 էջ:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002թ. - 582 էջ:
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003թ. - 581 էջ:
8. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2004թ. - 582 էջ:
9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005թ. - 574 էջ:

10. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006թ. - 579 էջ:
11. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2007թ. - 550 էջ:
12. Տարեկան վիճակագրություն. Խորհրդային Հայաստանը 1989, Երևան, 1991:
13. ՀՀ սոցիալական վիճակը 2003թ., ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն <http://www.armstat.am/am/?nid=82&id=193>
14. Կրթությունը Հայաստանում: Կազմեցին Կ. Հարությունյանը, Ն. Դավթյանը, Աստղիկ, Երևան, 2003: - 68 էջ:
15. Կրթությունը Հայաստանում: Կազմողներ Կ. Հարությունյան, Ն. Դավթյան, Ջանգակ 97, Երևան, 2004: - 76 էջ:
16. Կրթությունը Հայաստանում: Կազմողներ Կ. Հարությունյան, Ն. Դավթյան, Էդիթ Պրինտ, Երևան, 2006: - 72 էջ:
17. Մարդու իրավունքները և մարդկային զարգացումը: Գործողություն հանուն առաջընթացի: Մարդկային զարգացման ազգային զեկույց 2000թ., Հայաստան, 2000: - 180 էջ:
18. Կրթական վերափոխումները Հայաստանում: Մարդկային զարգացման ազգային զեկույց 2006, Երևան, 2007: - 126 էջ:
19. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2006թ. տարեկան զեկույցը, Երևան, 2007: - 192 էջ:
20. Կոռուպցիայի ընկալումը Հայաստանում 2006, Թրանսփարենսի ինտերնեշնլ - Հայաստան, Երևան, 2006: - 85 էջ:
21. ՀՀ Պառլամենտի օրենքները (1918-1920թթ.), Երևան, 1998: - 506 էջ:
22. Երևանի համալսարան 1918-1920թթ.: Վավերագրերի ժողովածու: Կազմողներ՝ Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան, Երևան 1995: - 336 էջ:
23. Հայաստանի համալսարան, հունվարի 31, 1920. Տես՝ Երևանի համալսարան 1918-1920թթ.: Վավերագրերի ժողովածու, Երևան 1995: - 336 էջ:

6. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔ ԷՋԵՐ

1. ՀՀ Նախագահ // <http://president.am/president/cover/eng/>
2. ՀՀ Ազգային ժողով // <http://www.parliament.am/>
3. ՀՀ սահմանադրական դատարան // <http://www.concourt.am>
4. ՀՀ կառավարություն // <http://www.gov.am>
5. ՀՀ արտաքին գործերի նախարարություն // www.armeniaforeignministry.com
6. ՀՀ կրթության և գիտության նախարարություն <http://www.edu.am/>
7. ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտ // <http://www.aniedu.am/>
8. ՀՀ ԿԳՆ թեսթավորման և գնահատման կենտրոն // www.atc.am

9. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն // www.armstat.am
10. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն, (ArmEnic) // www.armenic.am
11. Եվրոպայի խորհուրդ Council of Europe // www.coe.int
12. Եվրոպական համալսարանական ասոցիացիա, (EUA) // www.eua.eu
13. Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա, (ENQA) // www.enqa.eu
14. Ուսանողների եվրոպական միություն, (ESU) // www.esib.org
15. ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն կրթության եվրոպական կենտրոն, (UNESCO-CEPES) // www.cepes.ro
16. Բոլոնիայի գործընթացը Բեռլինից Բերգեն, <http://www.bolognabergen2005.no>
17. Բոլոնիայի գործընթացը Լոնդոնից - Բենիլյուքս, <http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/>
18. Բոլոնիայի գործընթացի պաշտոնական փաստաթղթեր, <http://www.ond.vlaanderen.be/hogeronderwijs/bologna/documents/>
19. Միավորված ազգերի կազմակերպություն, <http://www.un.org/>
20. ՄԱԿ-ի զարգացման ծրագիր Հայաստանում, <http://undp.am>
21. ՄԱԿ-ի դաշնագրերի ժողովածու / United Nations Treaty Collection // <http://untreaty.un.org/>
22. «Հայաստանում Ֆրանսիական Համալսարան» հիմնադրամ, <http://www.ufar.am>
23. Федеральный Центр образовательного законодательства, // <http://www.lexed.ru/>
24. Высшее образование в России. Научно-педагогический журнал Министерства образования и науки РФ, // <http://www.vovr.ru/>
25. Learning & Life - «Կրթություն և կյանք» Էլեկտրոնային ամսագիր <http://www.learningandlife.com>
26. Համաշխարհային կրթական ծառայություններ, www.wes.org
27. Հայկական տնտեսական ընկերակցություն, www.aea.am

ԳԱՐՐԻԵԼ ԲԱԼԱՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԱՊԱՅՈՎՄԱՆ
ՉԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չամակարգչային ձևավորումը՝ Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ-ի էլեկտրոնային ուսուցման, հրատարակման, թեստավորման և ռեսուրսների կենտրոն /ղեկավար՝ Ս. Առաքելյան, էջավորումը՝ Գ. Նշանյան, Կ. Խաչատրյան /

Տպաքանակ՝ 300

«Լինգվա» հրատարակչություն
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան
Չասցեն՝ Երևան, Թումանյան 42
Չեռ.՝ 53-05-52
Web: <http://www.brusov.am>
E-mail: yslu@brusov.am

Գաբրիել Կիմի Բալայանը ծնվել է 1977 թվականին, Երևանում:

1944-1999թթ. սովորել է Երևանի Պետական Համալսարանի Պատմության ֆակուլտետում՝ ավարտելով ստացել պատմաբանի մասնագիտություն: 1999-2000թթ. ծառայել է հայկական բանակում: 2001-2005թթ. սովորել է ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետում՝ ստանալով իրավաբանի որակավորում: 2009թ. պաշտպանել է «Մարդու բարձրագույն կրթության իրավունքի Սահմանադրական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով գիտական թեզ՝ ստանալով իրավաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: Ունի ավելի քան 10 գիտական հրապարակումներ՝ Հարկային հետքննության, Մարդու իրավունքների, Կրթության իրավունքի և Պետական վերահսկողություն հիմնախնդիրների վերաբերյալ:



2001-2005թթ. Գ.Բալայանը աշխատել է Հարկային պետական ծառայության օպերատիվ հետախուզության վարչությունում, ունի հարկային ծառայության ավագ լեյտենանտի կոչում:

2005 թվականից հանդիսանում է ԵրՊԼՀ-ի պրոռեկտոր վարչատնտեսական աշխատանքների գծով:

Դասավանդում է Կրթության օրենսդրություն և Կրթություն քաղաքացիական հասարակության համար/Մարդու իրավունքների կրթություն առարկաները:

2009թ. ՀՀ Հանրային խորհրդի Պետական իրավական հարցերի հանձնաժողովի, սահմանադրակաիրավական հարցեր ենթահանձնաժողովի ղեկավարն է: ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի /կրթության իրավունք/ մեկնաբանությունների հեղինակ: 2010թ. քաղաքացիական հասարակության կողմից ընտրվել է «Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան» հիմնադրամի կառավարման խորհրդի անդամ: 2010թ. ստացել է քաղաքացիական գործերով փաստաբանի վկայագիր: